




THE UNIVERSITY OF MICHIGAN
LIBRARIES



ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅՈՑ ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

№ 163


ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԼԷՕ

ԳԼԱԴՍՏՕՆ

ԹԻՖԼԻՍ
ՏՊԱՐԱՆ Մ. Դ. ՌՕՏԻՆԵԱՆՑԻ
1899





ԳԼԱԴՍՏՕՆ

Գ Լ Ա Դ Ս Տ Օ Ն




ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅՈՑ ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

№ 163

ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԼԷՕ

ԳԼԱԴՍՏՕՆ



ԹԻՖԼԻՍ
ՏՊԱՐԱՆ Մ. Դ. ՌՕՏԻՆԵԱՆՑԻ
Типографія М. Д. Ротиніанца, Гол. пр., д. № 41.
1899

Дозволено Цензурою, 6 Октября, 1898 г. Тифлисъ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ա.

Բ.

Գ.

Բ.

Դ.

Ե.

Զ.

Է.

Ը.

Ա.

Գլադստոն։—Նրա ծնունդը։—Անգլիայի դրութիւնը։—Գլադստոնի ծնողները։—Ընտանեկան կրթութիւնը։-Իտոնի դըպրոցում։—Գրական փորձեր։—Օքսֆորդ։—Կղերամիտ պահպանողականը։

Տասնիններորդ դարում համաշխարհային հըռչակ ստացան շատ պետական գործիչներ. բայց դրանց մէջ միայն Գլադստոնն է, որ իր գործունէութեամբ ու դաւանած սկզբունքներով վաստակեց մարդկութեան բարեկամի մեծ անունը։ Նա ցոյց տուեց ամբողջ աշխարհին, որ կարելի է լինել իր երկրի մարդ, իր կառավարութեան պաշտօնեայ, նուիրուել իր հայրենիքի բարօրութեան, և միևնոյն ժամանակ մնալ մարդասէր, տանջուածների պաշտպան, համամարդկային առաջադիմութեան, ազգերի եղբայրակցութեան հզօր ախոյեան։ Գլադստոն հասաւ փառքի գագաթնակէտին, բայց միշտ մնաց ժողովրդական մարդ. քրիստոնէական գաղափարը ժամանակակից քաղաքական գործիչների շրջանում նրա պէս մի անձնուէր զինուոր

չէ գտնել։ Չորս անգամ գտնուելով Անգլիայի նման մի հզօր պետութեան առաջին մինիստր՝ նա երբեք չօգտուեց ամենայն իրաւունքից, այլ, ընդհակառակն, ցոյց տուեց, թէ ինչպէս ամենքն էլ պիտի հպատակուին արդարութեան օրէնքին։ Նա իր անձով մի գեղեցիկ օրինակ դարձաւ՝ որ քաղաքական գործիչը նախանձով չը պիտի նայէ օտարին, միջոցներ չը պիտի որոնէ օտարի բարիքը խլելու համար, այլ պիտի ուրախ լինի, տեսնելով օտարի առաջադիմութիւնը և ինքն էլ իր երկրի համար պիտի աշխատէ իր բոլոր ուժերով։ Գլադստոնին չը զարդարեցին իշխանական տիտղոսները. վաթսուն երկու տարի անխոնջ ծառայելով իր հայրենիքին՝ նա մեծ հարստութիւնների, լայնատարած կալուածների տէր չը դարձաւ։ Այդ բոլորի փոխարէն ամբողջ աշխարհը պատուեց նրան «Մեծ ծերունի» անունով։ Այդպիսի մեծ անունների արժանացած մարդիկ մի ազգի, մի տեղի չեն պատկանում։ Նրանք ընդհանուր մարդկութեան պարծանքն են...

Ուիլիամ-Էվարտ Գլադստոն ծնուել է Անգլիայի Լիվերպուլ քաղաքում 1809 թուի դեկտեմբերի 17-ին։ Նա իր հօր երրորդ արու զաւակն էր։

Ի՞նչ էր այդ ժամանակ Անգլիայի դրութիւնը։

Ամբողջ Եւրոպան հեծում էր Ֆրանսիական լծի տակ։ Նապոլէոն Ա յամառութեամբ ձգտում էր տիրապետել ամբողջ աշխարհի վրայ և այդ պատճառով ամբողջ միջին Եւրոպան դարձրել էր

մի հսկայական սպանդանոց. պատերազմները անդադար էին, արիւնն ու կոտորածը—համատարած։ Եւրոպական ամեն մի պետութեան առաջ դրուած էր լինելու կամ չը լինելու հարցը։ Բայց Նապոլէօնի ամենաոխերիմ, անհաշտ թշնամին Անգլիան էր. Նրա հանճարեղ ծրագիրներից մէկն էր ոչնչացնել ծովերի այդ թագուհուն։ Բայց ծրագիրը չաջողուեց։ Անգլիան երկար տարիներ մաքառում էր Նապոլէօնի դէմ, ցամաքային պետութիւններից դաշնակցութիւններ էր կազմում, աշխատում էր խորտակել ֆրանսիական զէնքի բռնապետութիւնը։ Երկարատև պատերազմների մէջ նրան աջողուեց պահպանել իր ամբողջութիւնը, և երբ Նապոլէօն ընկաւ՝ Անգլիան ոչ միայն մի նուաճուած երկիր չէր, այլ և ձեռք էր բերել ուրիշ երկիրներ, իսկ նրա նաւատորմը տիրապետում էր բոլոր ծովերի վրայ։

Բայց այս աջողութիւնը էժան չէր նստել Անգլիային։ Մաքառումը սպառել էր պետութեան ամբողջ կարողութիւնը. Անգլիան թաղուած էր անհագին պարտքերի տակ. Նրա ներքին գործերը գտնւում էին ողբալի դրութեան մէջ. ժողովուրդը տառապում էր աղքատութիւնից, առևտուրը, արդիւնաբերութիւնը ընկած էին. մոռացուել էին ներքին բարեկարգութիւնները։ Նապոլէօնի հասցրած հարուածները առաջ էին բերել Եւրոպայում մի սաստիկ յետադիմական շարժում։ Ռուսաց, աւստրիական և պրուսական թագաւորնե-

րը կազմեցին մի դաշնադրութիւն, որ կոչուեց «սրբազան դաշինք»։ Նա ուղղուած էր յեղափոխութիւնների դէմ և նպատակ ունէր պահպանել եղած դրութիւնը, բոլոր այն կարգերը, որոնց վրայ հիմնուած էր միապետութիւնը։ Անգլիան չը միացաւ այդ դաշնադրութեան, բայց արտաքին գործերի մինիստր Կէսլրի, մի գոռոզ, փառամոլ մարդ, աշխատում էր Անգլիայում մտցնել սրբազան դաշինքի ոգին և կառավարութեան այն ձևը, որին հետևում էր աւստրիական մինիստր Մետտերնիխ, Եւրոպայի այդ յետադէմ, խաւարամիտ պահապանը։ Կէսլրիին աջակցում էր անգլիական թագաւորի որդին։ Ինքը թագաւորը, Գէորգ Գ, խելագարուած էր, և նրա անունից կառավարում էր նրա որդին, վերին աստիճանի փչացած, անբարոյական մի մարդ։ Հետևելով իր հօր օրինակին՝ խնամակալը ձգտում էր հաստատել բռնապետական կարգեր։ Եւ դիմադրող չը կար։ Նապօլէօնի արշաւանքները, ներքին յեղափոխութիւնների երկիւղը ստիպում էին նոյն-իսկ ազատամիտ գաղափարների տէր մարդկանց՝ հետևել պահպանողական ուղղութեան։ Պահպանել հինը, թոյլ չը տալ որ եղած կարգերը վտանգուեն և դրա համար գործադրել ամենախիստ զսպողական միջոցներ—ահա ինչն էր մարդկանց իդէալը ամբողջ Եւրոպայում։

Այդ տեսակ մարդկանցից մէկն էր և Գլադստոնի հայրը, Ջօն Գլադստօն, որ ծագումով շոտ-

լանդացի էր և Լիվերպուլում ունէր առևտրական խոշոր գործ։ Ամերիկայում նրան պատկանում էին շաքարեղէնի մեծ տնկարաններ, ուր գործում էին ստրուկ նեգրերը. նա մեծ առևտուր ունէր Ռուսաստանի և Հնդկաստանի հետ։ Բայց Ջօն Գլադստօն միայն իբրև վաճառական չէր յայտնի։ Լինելով խելօք, կրթուած մարդ՝ նա մասնակցում էր և քաղաքական գործերին. 9 տարի շարունակ նա պատգամաւորների ժողովի անդամ էր և պատկանում էր պահպանողական կուսակցութեան։ Նա ընդունում էր, որ ներքին գործերի մէջ շատ չափաւոր բարեկարգութիւններ մտցնուեն, իսկ արտաքին քաղաքականութեան վերաբերմամբ պահանջում էր, որ Անգլիան իր պաշտպանութեան տակ առնէ հարստահարուած ազգութիւնները։ Այն ժամանակուայ պետական գործիչներից Ջօն Գլադստօնի առանձին յարգանքն ու սերտ բարեկամութիւնը վայելում էր Գէորգ Կաննինգ։ Այս տաղանդաւոր մարդը ամեն անգամ, երբ գնում էր Լիվերպուլ, Գլադստօնի մօտ էր իջնում և միշտ նրա տան պատուաւոր հիւրն էր. նա ազդում էր ոչ միայն Ջօնի, այլ և նրա որդու, մանկահասակ Ուիլիամի վրայ, որ մի շատ ընդունակ երեխայ էր։ Մի քանի կենսագիրներ հաւատացնում են, որ Կաննինգի ազդեցութիւնը նկատելի էր դեռ այն ժամանակ՝ երբ Ուիլիամ երեք տարեկան էր։ Եւ դա անհաւանական չէ։ Գլադստօնի երեխաները սովորել էին

արտասանել Կաննինգի անունը մի առանձին յարգանքով և տեսնել նրա մէջ բարձրագոյն իմաստութեան մի օրինակ, որին պէտք էր հետևել։ Կաննինգ նրանց համար մի փայլուն աստղ էր, որ երբեմն լուսաւորում էր իրանց տունը։ Այդ էր պատճառը, որ Ուիլլիամ Գլադստօն իր քաղաքական գործունէութեան սկզբից հետևեց Կաննինգի հայեացքներին, և մինչև վերջը նրա մէջ մնացին այդ մարդու բնաւորութեան մի քանի գծերը։

Ինքը, Ջօն Գլադստօն, նոյնպէս մեծ ազդեցութիւն էր անում որդու կրթութեան վրայ։ Ընտանեկան շրջանում նա մի վերին աստիճանի դիւրամատչելի, սրտաբաց հայր էր։ Նա սիրում էր ամեն ինչ ենթարկել բազմակողմանի քննութեան և նոյնը սովորեցնում էր իր երեխաներին։ Նոյնիսկ ամենաչնչին բաների վերաբերմամբ էլ նա երկար վիճաբանութիւններ էր սկսում։ Այդ վիճաբանութիւնների մէջ ամենափոքր հասակից նշանաւոր հանդիսացաւ Ուիլլին—այսպէս էին տնեցիները անուանում Ուիլլիամին։ Հայրը միշտ ասում էր. «Այդպէս, Ուիլլի, այդպէս. դու լաւ ասացիր, դու ճարտարութեամբ արտայայտեցիր քո միտքը»։ Ահա այդտեղ, ընտանիքի ծոցում, հաստատ հիմք ստացաւ ապագայ հռետորի ատենաբանական խօսքի տաղանդը։ Բայց հայրը այդքանով չէր բաւականանում։ Նա սովորեցնում էր որդուն աշխատել, ընդունութիւն ունենալ նպատակին հասնելու հա-

մար։ Ցաճախ նա կրկնում էր իր երեխաներին. «Մի գործ, երբ մի անգամ սկսուած է՝ պէտք է տանել մինչև վերջը. լաւ թէ վատ՝ բայց պէտք է վերջացնել։ Եթէ լաւ ես տարել գործը՝ մեծ բաւականութիւն կը զգաս, երբ նա կը վերջանայ, իսկ վատ տանելը խրատ կը լինի, որ միւս անգամ չը կըրկնես նորից»։

Եւ ահա այդպիսի կրթութեան հետևանքը։ Երբ Ուիլիամ դպրոցում գիշերօթիկ էր՝ իր համար սովորութիւն էր դարձրել ամեն օր ոտով 8 մղոն տարածութիւն անցնել, և երբէք չէր վերադառնում մինչև որ չէր անցնում այդ տարածութեան գոնէ կէսը, յաճախ անձրևի, ձիւնի և քամու ժամանակ։ Մի այլ օրինակ։ Պատանեկութիւնից մինչև խոր ծերութիւնը նա առաւօտեան ժամի 11-ից մինչև 2-ը զբաղւում էր իր գրքերով. և ոչ ոք չէ տեսել, որ այդ ժամերին նա պարապ լինի, եթէ, իհարկէ, տանն էր գտնւում և հիւանդ չէր։ Եւ զարմանալին այն է, որ այդ աշխատասիրութիւնը միմիայն կրթութեան հետևանք էր և ոչ թէ անհրաժեշտ կարիքի պահանջ. որովհետև Գլադստոն իր ամբողջ կեանքում ապահովուած էր և չը գիտէր թէ ինչ է չքաւորութիւնը։ Հարկաւոր էր այդ յամառ, տոկուն աշխատութիւնը, որ նրա մէջ հաստատուէր երկաթի կամք, մի անխախտելի հաւատ դէպի իր ուժերը, իր մտքի անկախութիւնը, որը չէր թոյլ տալիս նրան են-

թարկանել ընդհանուր հասանքին կամ փոխել իր սրած ըմբռնումն, նույն-իսկ փիլիսոփայական քայլերից փոխել, երբ նրա բոլոր համոզմունքները դրված էին: Թուլութիւնն և ընկնածութիւնն: Այդպիսի դեպքերում նա լաւ էր համարում բոլորովին հեռանալ գործերից, բայց երբեք ձեռք չը փրցնել իր ծրագիրներից, մինչև որ յարմար առիթը թոյլ տար նորից ասպարէզ գալ:

Գլադստոնի արիստոկրատ հակառակորդները սիրում էին կծու ակնարկութիւններ անել նրա հասարակ ծագման մասին (վաճառականի որդի): Բայց նա ոչինչ ուշադրութիւն չէր դարձնում այդ ակնարկութիւնների վրայ և միշտ հպարտութեամբ էր խօսում այն մարդկանց մասին, որոնք կեանքի մէջ առաջնակարգ տեղ են գրաւում իրանց անձնական աշխատանքով, և ոչ թէ ծագման, կապերի շնորհիւ, կամ խղճի հետ սակարկութիւններ անելու միջոցով. Նրա մայրը, Աննա Ռոբերտսոն, շօտլանդացի էր, լեռնականների մի նշանաւոր ընտանիքից: Դա մի խելօք, լաւ կրթութիւն ստացած կին էր, որ կրում էր իր մէջ շօտլանդական տաք, ազատասիրող բնաւորութիւնը: Երկու ամուսիններն իրանց որդու ընտանեկան կրթութեան մէջ պակաս տեղ չէին թողնում: Մինչդեռ հայրը իր զրոյցներով տասներկու տարեկան երեխայի մէջ վառ էր պահում հետաքրքրութիւն դէպի քաղաքական և հասարակական հարցերը՝ մայրը կրօնական զգաց-

մուտք էր ներշնչում նրան և զարգացնում էր նրա մէջ սէր դէպի բանաստեղծութիւնը։ Գլադստոն մօրից ստացաւ այն կրակը, այն անսովոր երևակայութիւնը և դիւրազգած, տպաւորուող բնաւորութիւնը, որոնք նրա երկար կեանքում այնքան նպաստում էին նրա քաղաքական գործունէութեան։

Սկզբնական ուսում Գլադստոն ստացաւ տանը, մի քահանայից։ Իսկ 1821 թուին նրան ուղարկեցին Իտօն, որ Լօնդօնից 30 մղոն հեռու էր գտնւում, Վինձօրի ամրոցի մօտ։ Այդտեղ էր այն դպրոցը, ուր ուսում էին ստանում բարձր դասակարգի զաւակները։ Ուիլիամ իսկոյն ընդունուեց առաջին բարձր դասարանում։

Դպրոցի կարգերը հին էին։ Աշակերտների մեծամասնութիւնը յաճախում էր այնտեղ ոչ թէ ուսում ստանալու համար, այլ ցոյց տալու թէ եղել է դպրոցում։ Դասերի ժամանակ աշակերտները ենթարկուած էին հին մեթօդի բոլոր խստութիւններին, իսկ ազատ ժամերին նուիրւում էին ամեն-տեսակ խաղերի և առհասարակ սանձարձակ վարք ու բարքի տէր էին։ Անգլիական հին սովորութիւնները, որոնք դեռ թագաւորում էին այդտեղ՝ նոյն-իսկ բարբարոսական կարգեր էին նուիրագործել։ Այսպէս, դպրոցը բացարձակ կերպով թոյլ էր տալիս, որ հինգերորդ և վեցերորդ դասարանների իւրաքանչիւր աշակերտ վերցնէ ստորին դասարան-

նորեկից մի աշակերտ և պահէ նրան իբրև ծառայ։ Ծառայող աշակերտը կոչւում էր սոֆտա. նա պար-տաւոր էր կատարել իր մեծաւորի բոլոր քմահա-ճոյութիւնները, բացի միայն խոհարարութիւնից։ Դա մի անտանելի կարգ էր։ Փոքր աշակերտները, պաշտօնավարելով փոխ՝ ենթարկւում էին մեծերի բռնա-կալական քմահաճութիւններին, իսկ երբ իրանք էլ հասնում էին բարձր դասարանները՝ ամէնի խիստ և անխիղճ մեծեր էին դառնում և սաստիկ տանջում էին իրանց փոքրաւորներին։

Ռուփլեան Խանի դպրոցի մէջ այն սակաւա-թիւ աշակերտներից էր, որոնք սովորել, կրթուել են ուսում։ Նրա բախտից նրա երկու եղբայրները բարձր դասարաններում էին. Նրանց փոքրը պար-ծառ Ռուփլեամ. եղբայրները սիրում էին նրան, սա-րի և չէին չարչարում։ Ի՞նչ կարելի էր սովորել մի այդպիսի դպրոցում, ուր ուսումը մատուցւում, երեւի վրայ ընկած բան էր, մինչդեռ ամենից շատ ուշադրութիւն դարձնում էր խաղերի և զւար-ճութիւնների վրայ։ Ցերեկախառաբար, դասերից դուրս աշակերտներին թոյլատրւած էին մի քա-նի զբաղմունքներ, որոնք կրթական մեծ նշանա-կութիւն ունէին։ Օրինակ, կային աշակերտական թատրոն, մի ժողովարան վիճաբանութիւնների համար, այլ և ամսագիր։ Ուսուցիչները բոլորովին չէին խառնւում այդ բաների մէջ, լիազօր տէրերը և կարգադրիչները բացառապէս աշակերտներն էին։

Ահա այդտեղ էր Ուիլյամ Գլադստոն կատարելագործւում։ Նա իր ընկերների քէֆերին ու զուարճութիւններին չէր մասնակցում և միշտ պախարակում էր նրանց։ Ինքը վարում էր համեստ կեանք, աշխատասէր էր։ Մի քանի .ընկերներից կազմեց մի շրջան, որ դասերից ազատ ժամերին ուսումնասիրում էր հին կլասիկներին, անգլիական գրականութիւնը, պատմութիւնը և այլն։ Սկզբում աշակերտները ծուռ էին նայում այդ փոքրիկ, ջանասէր խմբին. բայց երբ սա ցոյց տուեց, թէ ինչեր կարող է անել սովորելու տենչանքը՝ այն ժամանակ դարձաւ ընդհանուր յարգանքի առարկայ։

1825 թուին Գլադստոն, դառնալով աշակերտական ժողովարանի անդամ, այնքան կենդանութիւն մտցրեց այնտեղ, այնպիսի կշիռ ու համարում ստացաւ, որ քիչ անցած՝ ընտրուեց նախագահ։ Իր առաջին ճառը նա արտասանեց այդտեղ։ Ճառը սկսւում էր այսպիսի խօսքերով. «Տարածուած և տարածուող քաղաքակրթութեան մեր դարը...»։ Այդ քաղաքակրթութեան անունից էլ նա խօսում էր տասնեակ տարիների ընթացքում իբրև պետական գործիչ։ Աշակերտական ճառերը, վիճաբանութիւնները շուտով յայտնի դարձրին Իտօնի դպրոցական ժողովարանը նոյն-իսկ հեռաւոր տեղերում։ Դպրոցի վարչութիւնը երբէք չէր խառնւում ժողովարանի գործերի մէջ և միայն արգելում էր զբաղուել օրուայ քաղաքական հարցերով։

Բայց և այնպէս, դոկտոր Կիտ, դպրոցի տեսուչը, յայտնում էր որ ինքը շատ կը կամենար գտնէ մի անգամ լսել Գլադստոնին, որովհետև գիտէր որ անպատճառ մի հետաքրքրական բան պիտի լսէր։

1827 թուին Գլադստոնի խումբը վճռեց հրատարակել սեփական ամսագիր։ Այդպիսի փորձ նոյն այդ դպրոցում մի ժամանակ արել էր Գէորգ Կաննինգ, որ այժմ մինիստր էր։ Ինչպէս և նրա ժամանակ՝ այժմ էլ վճռուեց որ ամսագրի աշխատակիցներ պիտի լինէին դպրոցի ամենալաւ աշակերտները։ Գլադստոն խմբագիր ընտրուեց Բարթօլօմէյ Բուվէրի կեղծ անունով։ Ամսագրի անունն էր «Խառնուրդ»։ Կանոնաւոր կերպով նա հրատարակուեց եօթն ամիս. եօթը բաւական ստուար հատորների մէջ զետեղուեցին այնպիսի յօդուածներ, որոնց այժմ էլ կարելի է կարդալ հետաքրքրութեամբ։ Գլխաւոր աշխատակիցը, ի հարկէ, Գլադստոնն էր։ Նա գրում էր առաջնորդող յօդուածներ, պատմական տեսութիւններ, երգիծաբանական պատմուածքներ, նոյն-իսկ ծաղրական ոտանաւորներ, թարգմանութիւններ էր անում։ «Erin» վերնագրով ոտանաւորի մէջ նա երիտասարդական աւիւնով պախարակում էր Իրլանդիայի դարաւոր ստրկութիւնը։ «Գերճախօսութիւն» յօդուածի մէջ նա գրում էր. «Առաջին ճառի աջողութիւն՝ և մինիստրի պաշտօն է առաջարկւում, այնուհետև գուցէ և առաջին մինիստրի պաշտօնը... Ահա այն

ցնորքները, որոնց շուրջը սիրում է պտտել երիտասարդի երևակայութիւնը»։ Դեռ 17 տարեկան էր Գլադստոն, երբ գրեց այս տողերը...

Բայց այն ժամանակուայ նրա բոլոր գրուածքների մէջ ամենալաւը մի յօդուած է – «Համեմատութիւն հին և նոր հանճարների» վերնագրով։ Դա մի գովասանական ճառ է, նուիրուած Կաննինգին, որ նոր էր մեռել, անկեղծ ցաւ պատճառելով ամբողջ աշխարհին։ Յիշենք թէ ինչպէս էր Գլադստոն սիրում այդ տաղանդաւոր գործիչին, և հասկանալի կը լինի, թէ որպիսի վառ զգացմունքով գրուած պիտի լինի այդ յօդուածը։ Մահից երեք տարի առաջ Կաննինգ գնաց Իտոն՝ իր բարեկամին տեսնելու համար։ Մանաւանդ այս անգամ նա խոր տպաւորութիւն գործեց Գլադստոնի վրայ։ Իր մտերմական խօսակցութիւնը, կարծես, այժմ այն մտքով էր վարում, որ պատանի դպրոցականի մէջ զարթեցնէ սէր դէպի քաղաքական գործունէութիւնը. կարծես նա ուզում էր հաղորդել նրան իր ձգտումների այն մասը, որ անկատար պիտի մնար իր մահուան պատճառով։ Դպրոցական պարապմունքների մասին մի քանի բարեկամական խորհուրդներ տալուց յետոյ՝ Կաննինգ ասաց. «Շուտով պարլամենտների ընդհանուր թագաւորութիւնը կը հարկադրէ բոլոր ազգերի սրտերը՝ համերաշխութեամբ բաբախել. նա բաց կանէ ամենքի լեզուն։ Երևակայիր պարլամենտ մի Պէրուի մէջ կամ մի նոր

արէոպագոս Աթէնքում. լոյները՝ Փրակ հագած, մորթու գտակներ ծածկած. մի Եպամինոնդ՝ պատգամաւոր Թեբէից, կամ մի Ալկիբիադ՝ ներկայացուցիչ Աթէնքի, և այլն *)։ Այս բոլորը տարօրինակ է թւում, բայց կը լինի. և որ ամենից տարօրինակն է՝ անգլիական մինիստրը այնուհետև յարաբերութիւն կունենայ ոչ թէ դիւրագրգիռ Թագաւորների պալատականների հետ, այլ բուն ազգերի հետ։

Եւ այսպէս, «Խառնուրդը», շնորհիւ իր պատանի խմբագրի ջանքերին՝ դպրոցական կեանքի մէջ մի զարմանալի երևոյթ էր կազմում, պարունակելով այնպիսի նիւթեր, որոնք աւելորդ չէին լինի նոյն իսկ մի հասարակական ամսագրի հա-

*) 1822 թուին լորդ Կէսլրի, որ, ինչպէս ասացինք, արտաքին գործերի մինիստր էր և աշխատում էր Մետտերնիխի վարչական խաւար սիստեմը մտցնել Անգլիայում, խելագարուեց և ինքն իրան սպանեց։ Նրա տեղը բռնեց Կաննինգ, որի առաջին գործը եղաւ ազատել Անգլիան Մետտերնիխի ամօթալի խնամակալութիւնից։ Հարստահարուած ազգերի պաշտպան կանգնելով, նա օգնեց պորտուգալացիներին և ճանաչեց Հարաւային Ամերիկայի հանրապետութիւնների անկախութիւնը։ Բայց աւելի մեծ եռանդով նա աշխատեց Յունաստանի համար։ Յոյները 1821 թուականին ապստամբեցան Թիւրքիայի դէմ. անհաւասար պատերազմը երկու կողմերի մէջ շարունակւում էր տարիներով, իսկ Եւրոպան չէր միջամտում, որովհետև Մետտերնիխ կատաղի թշնամի էր ամեն մի ազգութեան, որ յեղափոխական միջոցներով ուզում էր ազատութիւն ձեռք բերել։ Կաննինգ անտես արաւ Մետտերնիխին և 1826 թուին

մար։ Գլադստօն դեռ այն ժամանակ ցոյց էր տալիս իր սէրը դէպի հարստահարուած մարդիկ. իր մի գրուածքի համար, որ պարունակում էր անկեղծ համակրանք դէպի ժողովրդական մի ապստամբութեան պարագլուխը՝ նա ծաղրի և հեգնութիւնների առարկայ դարձաւ։ Առաջին անգամն էր նա զգում հակառակորդների ույժը. բայց և այնպէս, պարտք համարելով առանձին ուշադրութեամբ վերաքերուել հակառակ կարծիքին՝ նա շարունակեց իր գործը զարմանալի տոկունութեամբ։ 17 տարեկան պատանին ձեռագիրների ահագին կապոցներ էր կարդում, խմբագրում էր, կարգադրութիւններ անում և միևնոյն ժամանակ, իհարկէ, աչքա-

---

համաձայնութիւն կայացրեց Ռուսաստանի հետ այն մըտքով, որ Անգլիան ու Ռուսաստանը սկզբունքով ընդունում են Յունաստանի անկախութիւնը և միասին պիտի պահանջեն սուլթանից՝ վերջ տալ իր բարբարոսութիւններին Յունաստանում։ Մետտերնիխ, չը նայած իր գործ դրած մեքենայութիւններին՝ չը կարողացաւ խանգարել Կաննինգի գործը և վերջիվերջոյ ինքը միայն մնաց Թիւրքիայի բարեկամ։ Անգլօ-ռուսական համաձայնութեան 1827 թուին միացաւ և Ֆրանսիան. երեք պետութիւնների նաւատորմը Նաւարինում ոչնչացրեց թիւրքաց նաւերը և հարկադրեց թիւրքերին հեռացնել իրանց զօրքը արիւնալուայ և աւերակ Յունաստանից։ Այդ ժամանակից Յունաստանի ազատութիւնը ապահովուած էր։ Բայց Կաննինգ չը տեսաւ իր գործի աջողութիւնը. Նա մեռաւ 1827 թուին, Նաւարինի պատերազմից երկու ամիս ու կէս առաջ։

թող չէր անում դպրոցական պարապմունքները։ Այդտեղ նա ցոյց տուեց, թէ աշխատելու, գործելու ինչ հսկայական կարողութիւն ունի։

Վերջացնելով Իտոնի դպրոցը՝ Գլադստոն երկու տարի աշակերտեց դոկտոր Տերնէրին, ուսումնասիրելով գլխաւորապէս մաթեմատիական գիտութիւնները, և ապա մտաւ Օքսֆորդի համալսարանը։ Այդտեղ էլ նա ամբողջապէս նուիրուեց գիտութեան. Իտոնի ջանասէր դպրոցականը Օքսֆորդում դարձաւ ջանասէր ուսանող։ Հեռու մնալով գիշերային արկածների և զուարճութիւնների սիրահար ընկերներից՝ նա մօտեցաւ այն ուսանողներին, որոնք ընթերցասիրական շրջաններ էին կազմում արձակուրդներին և հէնց այդ պատճառով էլ գիւղ էին գնում։ Բացի դրանից նա կազմեց մի գրական ընկերութիւն, որ իր անուան ու ազգանուան սկզբնատառերով կոչւում էր «Ուէգ»։ Գլադստոն երբէք չէր մոռանում, որ ամեն մի մարդ պարտաւոր է խստապահանջ լինել իր վերաբերմամբ, և բարեխղճութեամբ էր կատարում իր բոլոր պարտաւորութիւնները։ Մի կիրակի օր նա եկեղեցի չը գնաց և այդ պատճառով ենթարկուեց սովորական պատժին. եկեղեցում նա պիտի գրէր հարիւր տող լատինական ոտանաւոր։ Սովորութիւն էր, որ այդպիսի դէպքերում պատժուած ուսանողին օգնութիւն էր հասցնում վերակացուն, բերելով պատրաստ ոտանաւորը, որը ծախում էր էժան գը-

նով։ Բայց Գլադստոն հրաժարուեց գնել ոտանաւորը և ինքը դրեց մի կարճ միջոցում։ Բացի դրանից՝ նրա ընդդիմութեան մէջ կար և մի այլ անձին յատկութիւն։ Նա մաքառում էր հակառակ կարծիքի դէմ ամենայն սաստկութեամբ. բայց հէնց որ հակառակորդը տրամաբանօրէն ջախջախում էր նրա կարծիքը՝ նա բարեխղճութեամբ ընդունում էր հակառակորդի ասածները։ Նոյն բարեխղճութիւնը մինչև վերջը մնաց նրա մէջ։

Օքսֆորդի համալսարանում գոյութիւն ունէր ուսանողական պարլամենտ, որ կոչւում էր «Միութիւն» (Union)։ Գլադստոն այդ հիմնարկութեան նուիրեց իր ուշադրութեան մեծ մասը և շուտով յայտնի դիրք գրաւեց նրա մէջ։ Պէտք է ասել, որ օրուայ դէպքերը միշտ արձագանք էին տալիս այդ ժողովում։ Իսկ այն տարիները, երբ Գլադստոն գտնւում էր Օքսֆորդում՝ յուզմունքի, ներքին խռովութիւնների ժամանակներ էին։ Ժողովուրդը աղքատ էր և անբաւական, կուսակցութիւնները կռւում էին միմեանց դէմ, պահանջւում էր դասակարգային և կրօնական իրաւունքների հաւասարութիւն։

Համալսարանում կուսակցութիւնների պայքարը նոյնպէս ծայրայեղութեան էր հասել։ Տիրապետող ուղղութիւնը պահպանողական էր։ Ուսանողները երեխայական պարզամտութեամբ երկըր-

պագում էին տիրողներին, ընդունում էին որ արիւնը լինում է և մաքուր ու ազնիւ, իսկ երկրի կառավարութիւնը համարում էին փոքրաթիւ արտօնուածների բնական իրաւունք. ուստի ամեն մի փորձ, որ ժողովրդի կողմից ուղղւում էր այդ իրաւունքների դէմ՝ երիտասարդութեան մէջ զզուանքի և ատելութեան փոթորիկներ էր յարուցանում։ Կային և փոքր թուով ազատամիտներ։ Ահա այս երկու հակառակ ուղղութիւնների ընդհարման ասպարէզ էր դարձել համալսարանական պարլամենտը։ Այնտեղ արտասանում էին ճառեր, բորբոքւում էին վիճաբանութիւններ ճիշդ այնպէս՝ ինչպէս իսկական պարլամենտում։ Իւրաքանչիւր կուսակցութիւն ունէր իր պարագլուխը. հարցերը վճռւում էին ձայների մեծամասնութեամբ, բայց, ինչպէս այդ յատուկ է անգլիական ազգին՝ անկարգութիւններ երբէք տեղի չէին ունենում։

Ուսանողական երկրորդ տարին Գլադստօն մի նշանաւոր ճառ արտասանեց և այդ պատճառով պարլամենտի քարտուղար ընտրուեց։ Իսկ կէս տարուց յետոյ նա արդէն բազմած էր նախագահական բազկաթոռի վրայ և հմտութեամբ ղեկավարում էր վիճաբանութիւնները։ Նա ինքն էլ պահպանողական կուսակցութեան էր պատկանում և 1831 թուին մի հռչակաւոր ճառ արտասանեց, որ ուղղուած էր ազատամիտների պահանջած բա-

րենորոգութիւնների դէմ *)։ Երբ նա վերջացրեց ատենաբանութիւնը, որի մէջ ապացուցանում էր, թէ րէֆօրմները վերջը կը հասցնեն կառավարութեան ձևի փոփոխութեան և կը խախտեն հասարակական կարգի հիմքերը՝ տպաւորութիւնը այնքան սաստիկ էր, որ մի քանիսները իսկոյն հեռացան ազատամիտներից և նստեցին պահպանողականների շարքում. համարեա ամենքը զգում էին որ իրանց առաջ կանգնած է Անգլիայի ապագայ առաջին մինիստրը։ Նրա մօտիկ ընկերակիցներից մէկը, լօրդ Լինկօլն, Նիւ-Կէստլի դուքսի որդին, նամակ գրեց իր հօրը և հիացած գովում էր Գլադստօնին։ «Մարդ է ծնուել Իսրայէլի մէջ», ասում էր նա այդ նամակում։ Եւ դուքսը, ինչպէս յետոյ կը տեսնենք՝ մի տարուց յետոյ յիշեց իր որդու տաղանդաւոր ընկերին։ Հասկանալի է որ այդպիսի փայլուն ճառերից յետոյ Գլադստօն դիւթում էր բոլոր ուսանողներին և վայելում էր ընդհանուր յարգանք։ Մինչև անգամ զուարճասէր ուսանողները սկսեցին ուղղուել։

Գլադստօնի ստացած կրթութեան յատկութիւնները պարզելու համար մնում է ասել այն, որ Օքսֆորդի համալսարանը այդ ժամանակ աւելի մի հոգևոր ճեմարանի էր նման։ Եկեղեցական ո-

---

*) Այդ ճառը Գլադստօն յետոյ անուանեց «երիտասարդութեան սխալ»։

գին բռնացած էր այնտեղ. եկեղեցին համարւում էր ամենագլխաւոր հիմնարկութիւնը երկրում. ամենքը գլուխ էին խոնարհեցնում եկեղեցական հեղինակաւոր գործիչների գրութիւնների առաջ և սարսափով էին արտասանում պապականութեան անունը։ Գլադստոն, մի առանձին հակում ունենալով դէպի կրօնագիտութիւնը՝ այցելում էր աստուածաբանութեան բոլոր պրօֆէսօրների դասախօսութիւնները, լսում էր ուշադրութեամբ, թէև վրդովւում էր օտար դաւանութիւնների թէօրիաներից։ Ամենքը վկայում են, որ ամբողջ համալսարանում ոչ ոք նրա պէս չը գիտէր Աստուածաշունչը։

Համալսարանը նա վերջացրեց 1832 թուին, ստանալով առաջնակարգ վկայական։ Ոգևորուած կրօնական ուսմունքներով՝ նա ուզեց հոգևորական դառնալ, բայց հայրը սաստիկ ընդդիմացաւ։ Եւ կղերամիտ պահպանողականի գաղափարով էլ նա մտաւ քաղաքական գործունէութեան ասպարէզը, ուր այնքան հռչակ ստացաւ։ Շատ տարիներից յետոյ, յիշելով Օքսֆորդը՝ նա ասում էր. «Օքսֆորդից ես դուրս չբերի այն, ինչ յետոյ միայն ձեռք բերի, այն է՝ գիտենալ գնահատել մարդկային ազատութեան յաւիտենական և անգնահատելի ըսկզբունքները։ Ակադեմիական շրջանում չափազանց գերակշիռ էր մի տեսակ կասկածոտ վերաբերմունք դէպի ազատութիւնը»։

Համալսարանը, այո՛, չը սովորեցրեց նրան սիրել ազատութիւնը, բայց տուեց այն ամենը, ինչ պատրաստած ունի յամառ աշխատասիրութեամբ սովորողի համար—լայն և բազմակողմանի գիտութիւն, սէր դէպի գրականութիւնը, մանաւանդ կլասիկ գրականութիւնը։

Բ.

Նոր դարագլուխ Անգլիայում։—Հին Անգլիան։—Կենտրոնական կառավարութիւն. թագաւոր, լօրդերի պալատ, համայնքների ժողով։—Պատասխանատու մինիստրութիւն։—Ինչ է պարլամենտական կառավարութիւնը։ Գէորգ Գ։—Տօրի և Վիգ։—Ընտրութիւնների ձևը։—Հոգևորականութիւն։—Կաթոլիկութիւն։—Ժողովրդի դրութիւնը։—Իրլանդիա։—Շարժում յօգուտ բարենորոգութիւնների. մամուլ, հասարակական կարծիք։—Արմատականները։—«Պետերլօօի կոտորածը»։—Զիջումներ։—Կաթոլիկների յաղթութիւնը։—1832 թուի րէֆօրմը։

—

1832 թուականը, երբ սկիզբ առաւ Գլադստօնի գործունէութիւնը՝ մի շատ նշանաւոր դարագլուխ է կազմում Անգլիայի համար։ Այդ ժամանակից մահուան դատապարտուեց հին Անգլիան և ծնունդ առաւ նոր Անգլիան։

Կերպարանափոխութիւնը, ի հարկէ, ինքն իրան չը կատարուեց, կախարդական գաւազանի մի հարուածով։ Ոչ մի տեղ, ոչ մի ազգի մէջ վերածնութիւնը գլուխ չէ գալիս հեշտութեամբ, մի անգամից, առանց ծանր մաքառումների, առանց այն կատաղի կռուի, որ հինը յայտարարում է նորին՝

նախ քան իր խորտակուելը։ Այդպէս էր և Անգլիայում։ 1832 թուից նորը սկսեց նուաճումներ անել միմեանց ետևից, անընդհատ, գեղեցիկ յաղթութիւններ տարաւ, բայց հիմա էլ դեռ վերջնական նպատակին չէ հասել։ Այդ յաղթութիւնները, որոնք ժամանակակից քաղաքակրթութեան փառքն ու պարծանքն են՝ ունեցել են իրանց առաջնակարգ հերոսը և դա — Գլադստոնն է։ Ջենք ասում թէ մենակ նա էր, որ արաւ ամեն ինչ. ոչ, անգլիական ազգը հանճարի պակասութիւն չէ զգացել և, երևի, այսուհետև էլ չի զգայ։ Բայց որ առանց Գլադստոնի շատ և շատ բան չէր գլուխ գայ այդ կարճ ժամանակամիջոցում՝ դա անուրանալի է։ Գլադստոնի կենսագրութիւնը Անգլիայի նորագոյն պատմութիւնն է, մի պատմութիւն, որ կուլտուրական յաղթանակների մի երկար շարք է։ Եւ որպէսզի կարողանանք գնահատել այդ յաղթանակների չափն ու նշանակութիւնը՝ մենք նախ քան նոր Անգլիան տեսնելը պիտի իմանանք, թէ ինչ էր հին Անգլիան։ Ճանաչենք այն ասպարէզը, ուր հերոսութիւններ արաւ Գլադստոն, և այն հանգամանքները, որոնց դէմ ուղղուած էր նրա երկարամեայ գործունէութիւնը։

Հնումն էլ Անգլիան առաջաւոր, լուսատու երկիր էր։ Առաջին անգամ այդտեղ հաստատուեց

ազգերի բարօրութեան հիմնաքարը — անհատի ազատութիւնը։ Դեռ 1215 թուականին ժողովուրդը կռիւ մղեց իր անբարոյական, վատ և բռնակալ թագաւոր Յովհաննէս Անհողի դէմ և զէնքի ոյժով հարկադրեց նրան՝ սահմանափակել իր իրաւունքները։ Հրատարակուեց «Ազատութիւնների մեծ հրովարտակը», որ ասում էր, թէ ոչ ոք չէ կարող ձերբակալուել, բանտարկուել, պատժի և տուգանքի ենթարկուել առանց դատարանի և օրինական վճռի։ Այդպիսով անհատի անձնաւորութիւնը ազատւում էր տիրողի, բռնաւորի կամայականութիւններից։ Բացի դրանից նոյն հրովարտակը սահմանում էր և այն կարգը, որ թագաւորը իրաւունք չունի ժողովրդից ծախսերի փող պահանջել առանց ժողովրդի ներկայացուցիչների համաձայնութեան։ Այստեղից առաջ եկաւ պարլամենտը։ Սկզբում, ի հարկէ, իշխանները ու ազնուականներն էին կազմում այն ժողովը, որից թագաւորը ծախսերի թոյլտուութիւն էր ստանում։ Բայց հետզհետէ ժողովուրդն էլ մասնակցութիւն էր ընդունում այդ սահմանափակող ժողովներում։ Սակայն անգլիական թագաւորները հեշտութեամբ չը համաձայնուեցան զրկուել իրանց իրաւունքներից. շնորհուած արտօնութիւնները մի քանի անգամ ջնջուեցան, բայց ժողովուրդը չը զիջեց իր իրաւունքները։ 1264 թուին Հենրիկոս Գ թագաւորը, որ չէր ուզում տեսնել իր իշխանութիւնը սահմանափակուած՝ կռիւ մղեց իր հպատակնե-

րի դէմ, որոնց առաջնորդում էր Սիմոն Մոնֆորթեանց յաղթուեց, գերի ընկաւ Մոնֆորի ձեռքը և հնազանդուեց ժողովրդի կամքին։ Յաջորդ տարին Մոնֆոր ժողով գումարեց, որին առաջին անգամ մասնակցում էին քաղաքներից ընտրուած պատգամաւորները։ Դա համայնքների առաջին ժողովն էր։ Եւ այնուհետև անգլիական պարլամենտը աւելի հաստատուն մի հիմնադրութիւն դարձաւ, թէև դեռ դրանից յետոյ էլ երկար ժամանակ կռիւ էր մղում թագաւորի դէմ իր իրաւունքները պաշտպանելու համար։

Եւ այսպիսով մի քանի անգլիական ժողովուրդը անում էր այն ժամանակ, երբ ամբողջ Եւրոպայում տիրում էր միջնադարեան խաւարը, երբ կղերական բռնապետութիւնը աշխարհական բռնապետութեան հետ ձեռք ձեռքի տուած՝ արևելքում քայքայում, ոչնչացնում էր Բիւզանդական ահագին կայսրութիւնը, ճանապարհ բաց անելով Միջին Ասիայի վայրենի ցեղերի համար, իսկ արևմուտքում հաւատաքննութեան խարոյկներն էր վառում՝ ամեն մի նոր միտք, ամեն մի ազատական շարժում խեղդելու համար։ Անգլիական ազգի հանճարը միահեծան բռնակալութեան դէմ հանեց ժողովրդական իրաւունքը. երկրի կառավարութիւնը յանձնեց ժողովրդին, տալով նրան՝ հաշիւ պահանջելու, օրէնքներ հրատարակելու իշխանութիւն։ Պարլամենտը որոշ ձևակերպուած սահմանադրութիւն չունէր։ Նա-

կազմւում էր երեք տարրից. 1) հոգեւորականութիւն, 2) աշխարհական ազնուականութիւն և 3) համայնքներ։ Երկար ժամանակի ընթացքում կարգերը բարեփոխուեցան. ազնուականութիւնը այնքան թուլացաւ, որ հասարակ ժողովրդի չափ իշխանութիւն ունէր։ Պարլամենտը մի շարք սովորութիւններ նուիրագործեց, որոնք դարձան աւանդական օրէնքներ։ Պարլամենտական կառավարութիւնը մտաւ անգլիացու արեան մէջ։

Բայց իւրաքանչիւր հիմնարկութիւն, որքան և գեղեցիկ լինի իր էութեամբ, չէ կարող բաւարար համարուել՝ եթէ անշարժանայ և չկատարելագործուի ժամանակի պահանջների համաձայն։ Ներկայ դարի սկզբում անգլիական պարլամենտը այդպիսի անշարժութեան մատնուած մի հիմնարկութիւն էր, ուր տիրում էին ԺԸ դարի կարգերը։ Այդ բաւական չէ. Գէորգ Գ, որ թագաւորում էր 1760 թուից՝ միշտ ձգտում էր միահեծան իշխանութեան, որ սահմանափակումներ չէ ճանաչում, և պահանջում էր որ իր անձնական կամքը կատարուի։

Մի քանի խօսքով բացատրենք Անգլիայի այն ժամանակուայ պետական կազմակերպութիւնը։

Կենտրոնական կառավարութիւնը բաղկացած էր երեք իշխանութիւններից. 1) թագաւորը իր մինիստրների հետ, 2) լորդերի ժողովը (վերին պալատ) և 3) համայնքների (պատգամաւորների)

ժողովը։ Թագաւորը պետութեան գլուխն էր. նա էր պատերազմ հրատարակում, հաշտութիւն կընքում, դաշնագրեր ստորագրում։ Ամեն ինչ կատարւում էր նրա անունից, և նրան օգնում էին մինիստրները, որոնց նա ինքն էր ընտրում։ Լորդերի պալատը բաղկացած էր ժառանգական լորդերից և նոր լորդերից, որոնց նշանակում էր թագաւորը։ Այստեղ հաւաքուած էր երկրի ազնուականութիւնը, մի պահպանողական տարր, որի շահերը միշտ կապուած են եղել թագի շահերի հետ։ Իսկ համայնքների ժողովը կազմուած էր պատգամաւորներից, որոնք ընտրւում էին եօթը տարուայ ժամանակով։ Այստեղ ժողովրդի ներկայացուցիչներն էին։ Երկու ժողովները նիստեր էին կայացնում մի շինութեան մէջ և միասին կազմում էին անգլիական պարլամենտը։

Բայց որքան և անկախ ու բարձր լինէր թագաւորի իշխանութիւնը՝ կային երեք սովորութիւններ, որոնք սահմանափակում էին այդ իշխանութիւնը։ 1) Իւրաքանչիւր թուղթ, որ ստորագրում էր թագաւորը՝ անպատճառ պիտի վաւերացուէր և մինիստրի ստորագրութեամբ։ 2) Մինիստրները գործում էին ոչ թէ առանձին-առանձին, այլ միասին, խորհրդակցութեամբ։ Ուրեմն նրանք համերաշխ, համախոհ մարդիկ պիտի լինէին, որպէսզի ընդհանուր համերաշխութեամբ գործէին, ուրիշ խօսքերով—նրանք մի կուսակցութեան մարդիկ

պիտի լինէին։ Մինիստրներից մէկը գլուխ էր համարւում և խօսում էր իր ընկերների անունից. Նա կոչւում էր առաջին մինիստր։ 3) Թագաւորը անձեռնմխելի անձ էր և ոչ մի բանի համար պատասխանատու չէր։ Անգլիացիները ընդունում էին այն պայմանական հասկացողութիւնը, թէ «թագաւորը չէ կարող որևէ ապօրինութիւն գործել», չէ կարող վարուել օրէնքի դէմ, գործել անարդարութիւն, և եթէ նա վատ բան է անում՝ նշանակում է, որ նորան վատ խորհուրդ են տուել, հետևաբար պատասխանատու են թագաւորի խորհրդականները։ Այստեղից առաջ եկաւ այն համոզմունքը, որ մինիստրները, լինելով թագաւորի խորհրդականներ՝ պատասխանատու են ազգի առաջ։ Եւ որովհետև ազգի ներկայացուցիչը համայնքների ժողովն է, ուստի մինիստրութիւնը պաշտօնում մնալ կարող է միայն այն ժամանակ, երբ այդ ժողովի մեծամասնութիւնը նրա կողմն էր։ Թագաւորը անտես չը պիտի անէր մեծամասնութիւնը, և մինիստրութիւնը պիտի յանձնէր այն մարդկանց, որոնք այդ մեծամասնութեան համակրութիւնն էին վայելում։

Այստեղից պարզ երևում է, որ կառավարութեան ղեկը իսկապէս համայնքների ժողովի ձեռքումն էր։ Օրէնքը այդ ժողովին իրաւունք էր տալիս միայն հաստատել պետական նախահաշիւը և լորդերի ժողովի հետ օրէնքներ մշակել։ Բայց եթէ համայնքների ժողովը մնար միայն այդ սահմաննե-

րի մէջ՝ նա կլինէր իշխանութեան ստորադրուած մի երկրորդական հիմնարկութիւն։ Եւ ահա սովորութիւնը, պատասխանատու դարձնելով մինիստրներին՝ այդ միջոցով թագաւորի իշխանութիւնը յանձնեց պատգամաւորների ժողովին։ Թագաւորը պետութեան մէջ մի պատուաւոր գլուխ է, ուրիշ ոչինչ։ Այս է պարլամենտական կառավարութիւնը։ «Թագաւորը թագաւորում է, բայց չէ կառավարում» —ահա այս տեսակ կառավարութեան նշանաբանը։

Բայց Գէորգ Գ չը կամեցաւ հետեւել այն սովորութեան, որով մեծամասնութեան ներկայացուցիչն էր կազմում մինիստրութիւն։ Նա ինքն էր մինիստրներ հրաւիրում՝ ինչպէս կամենում էր. Նա իր սեփական կամքն էր թելադրում ոչ միայն մինիստրներին, այլ և պարլամենտին, որի իրաւունքները շատ սահմանափակել էր։ Եւ այդ բանի մէջ նրան օգնում էր ինքը պարլամենտը, կամ ճիշդն ասած՝ այն կուսակցութիւնը, որ կոչւում է «տօրի» կամ պահպանողական։ Տօրիները, որոնք մեծ մասամբ բաղկացած էին ազնուականներից և հոգեւորականներից՝ միշտ պաշտպանում էին թագաւորի իրաւունքները, մինչդեռ հակառակ կուսակցութիւնը—«վիգ» կամ ազատամիտ—ձգտում էր ուժ տալ ժողովրդի իրաւունքներին։ Տօրիների և վիգերի կուսակցութիւնները գոյութիւն ունէին անգլիական պարլամենտում ԺԷ դարի երկրորդ կէսից։ Թագաւորը տօրիների հետ էր և այդ պատճառով

ամբողջ 50 տարի մինիստրութիւնը տօրիների ձեռքումն էր։ Կար և երրորդ կուսակցութիւն—արմատականների կուսակցութիւնը, որ կազմակերպուել էր ԺԸ դարի վերջերում և որ բարենորոգութիւններ էր պահանջում, գլխաւորապէս ընտրողական գործի մէջ։

Եւ իրաւ, եթէ համայնքների ժողովը չէր կարողանում դիմադրել թագի ոտնձգութիւններին, եթէ ոչ մի նոր հոսանք չէր կարողանում մտնել անգլիական հիմնարկութիւնների մէջ՝ դրա պատճառն այն էր, որ ընտրողական կարգերը սաստիկ հնացած էին։ Պատգամաւորները պիտի լինէին բուն ժողովրդի ներկայացուցիչներ. բայց իրապէս նրանք, աննշան բացառութեամբ, դարձեալ ազնուականների ընտրածներն էին։ Ահա թէ ինչպէս։ Ազգաբնակութեան մեծ մասը զրկուած էր ընտրողական ձայնից. մինչդեռ շատ քաղաքներ և արդիւնագործական խոշոր կենտրոններ պատգամաւոր չունէին՝ կային բազմաթիւ աննշան տեղեր, մեծ մասամբ ազնուականների կալուածներ, որոնք մի կամ երկու պատգամաւոր էին ընտրում պարլամենտի համար։ 34 տեղեր կատարեալ ոչնչութիւն էին ներկայացնում. այսպէս, Բիրալստօնում մնացել էր միայն մի տուն. Դեօվնիչ անունով տեղը դարերի ընթացքում ծածկուած էր ջրերի տակ, բայց և այնպէս, սրանց անունից պատգամաւորներ էին ընտրում։ Այդպիսի տեղերը անուանւում էին

«փտած տեղեր»։ Կային և այնպիսի տեղեր, ուր ընտրողների թիւը 50-ից աւել չէր. դրանք անուանում էին «գրպանի տեղեր», որովհետև ամբողջապէս գտնւում էին կալուածատէրերի ձեռքում. ընտրողները ապրում էին կալուածատիրոջ չինած տներում, ուստի և ընտրում էին նրա առաջարկած մարդուն։ Շատ տեղեր էլ գտնւում էին կառավարութեան ազդեցութեան տակ։ Հաշւել են, որ 658 պատգամաւորներից 424-ը վաղօրօք նշանակւում էին մինիստրութեան կամ 252 կալուածատէրերի ձեռքով։ Ամեն մի ընտրութեան ժամանակ հազիւ հազ 50 պատգամաւոր էին ընտրում այնպէս՝ ինչպէս հարկաւոր էր։ Անարդարութիւնը մանաւանդ սարսափելի էր ընտրողական իրաւունքի (ցէնզի) սահմանափակման մէջ։ 14000 բնակիչ ունեցող մի շրջանում ընտրողական իրաւունք ունէին միայն 21 հոգի։ Այդտեղ պատմում էին, որ մի անգամ ընտրութիւն կատարեց մի հատ մարդ. նա ինքը իրան ընտրողական ժողով յայտարարեց, մի քանի թեկնածուների անուններ տուեց, որոնց մէջ, ի հարկէ, և իր անունը. ընտրեց իրան նախագահ, ճառ ասաց յօգուտ իր թեկնածութեան, ինքը ձայն տուեց իրան և յայտնեց որ ինքը ընտրուած է միաձայն։ Քուէարկութիւնը բաց էր, իւրաքանչիւր քուէարկողի անունը արձանագըրւում էր. ուստի հեշտ էր ընտրողներին կամ կաշառել կամ վախեցնել սպառնալիքներով։ Ձայնե-

րը վաճառւում էին բացարձակ կերպով. կային կալուածներ՝ որոնք ուղղակի վաճառւում էին իրանց պատգամաւորական տեղը. այդպիսի կալուածները ծախւում էին մեծ գնով։ Խոշոր կալուածատէրերը բռնութիւն էին գործ դնում. 1829 թուին Նիւ-Կէստլի դուքը 587 մարդ հեռացրեց իր կալուածներից այն պատճառով, որ նրանք համարձակուել էին ձայն տալ նրա առաջարկած թեկնածուի հակառակորդին։

Եւ այդպէս, համայնքների ժողովը միայն անունով էր ազգային։ Այստեղ չը կար ժողովուրդ, կային միայն ազնուականներ և միլիօնատէրեր. իշխանութիւնը պատկանում էր թագաւորին և նրանց։ Ահա թէ որտեղից պիտի սկսուէր բարենորոգումը։ Մինչև որ ժողովուրդը չը տիրանար իր իրաւունքին, մինչև որ նա օրէնսդրական ժողովում իր տեղը չունենար՝ Անգլիան կը մնար արտօնուած դասակարգերի ստրուկ։

Այդ դասակարգերի մէջ զօրեղ էր մանաւանդ անգլիկան հոգևորականութիւնը, որ ազնուականներից պակաս եռանդ չէր ցոյց տալիս ժողովրդի վրայ բռնանալու գործում։ Անգլիայում գոյութիւն ունէին երեք գլխաւոր եկեղեցիներ. անգլիկան եկեղեցի՝ բուն Անգլիայում, երիցական եկեղեցի՝ Շօտլանդիայում և կաթոլիկ եկեղեցի՝ Իրլանդիայում։ Պետական եկեղեցին անգլիկանն էր, որ մեծամեծ արտօնութիւններ էր ձեռք բերել։ Շօտլանդա-

Ձկան եկեղեցին չունէր այդ իրաւունքները և աղքատ էր, բայց գոնէ պաշտօնապէս ճանաչուած եկեղեցի էր, այն-ինչ կաթոլիկութիւնը արգելուած կրօն էր։ Ոչ մի կաթոլիկ չէր ընդունւում պետական ծառայութեան մէջ, մինչև որ պաշտօնապէս չէր հրաժարւում պապականութիւնից և չէր հաղորդւում անգլիկան եկեղեցու ծէսով։ Երկու անգամ մինիստրները խնդրեցին Գէորգ Գ-ից՝ օֆիցերի աստիճան տալ մի քանի կաթոլիկների, բայց երկու անգամն էլ թագաւորը մերժեց այդ խնդիրքը։ Միևնոյն ժամանակ անգլիկան եկեղեցին ունէր իր սեփական դատարանները և ահագին եկամուտները։ Եկեղեցական լաւ պաշտօնները ստանում էին դարձեալ ազնուականները։ Հոգևորականութեան ձեռքին էր և կրթութեան գործը։

Մի երկրում, ուր հնարաւոր են այսպիսի անարդարութիւններ՝ հասարակ ժողովրդի դրութիւնը չէր կարող նտանելի չը լինել։ Եւ իրաւ, հին Անգլիան, որ ոտով գլխով վաճառուած էր անկուշտ ազնուականութեան՝ ժողովրդական դժբախտութիւնների մի սարսափելի տեսարան էր ներկայացնում։ Օրէնքի առաջ հաւասար էին բոլոր անգլիացիները. այդպէս գրուած էր, այդպէս ենթադրւում էր։ Բայց իրականութեան մէջ ժողովուրդը բաժանուած էր երկու մասի—ունևոր և չքաւոր։ Ունևորը վայելում էր քաղաքական բոլոր իրաւունքները, մինչդեռ չքաւորը արտաքսուած էր

հասարակական կեանքից, զուրկ նոյն-իսկ անձնական ազատութիւնից։ Նրան զօռով զինուոր էին տանում, թէև դա արգելուած էր։ Պարլամենտում նստած կալուածատէրերը և հարուստ արդիւնագործները հրատարակել էին օրէնքներ, որոնցով բանուոր դասակարգը բոլորովին ենթարկուած էր վարձողների կամայականութեան։ Կալուածատէրը իրաւունք ունէր օրէնքով սահմանուած վարձը տալ և բանեցնել բանուորին. եթէ վերջինս ընդդիմանար՝ պիտի բանտարկուէր։ Ով չունէր պարապմունք՝ նա պահւում էր ծուխի հաշուով և յանձնւում էր «աղքատախնամ վերակացուներին»։ Այսպիսի վերակացուներ կային ամեն տեղ և իրաւունք ունէին աշխատեցնել իրանց հսկողութեան տակ գտնուողներին՝ ինչպէս կը կամենան. դա նշանակում էր, թէ բանուորը վաճառուած է գործատէրերին։ Չքաւորը իրաւունք չունէր հեռանալ իր բնակութեան տեղից։ Անհող մնացած գիւղացիները չքաւորների դասն էին մտնում։ Աղքատութիւնը աճում էր ահռելի չափերով։ Բանուորներին արգելուած էր ընկերակցութիւններ կազմել, գործադուլ անել՝ օրավարձը աւելացնել տալու նպատակով։ Գիւղական հողերը համարեա ամբողջովին անցել էին ազնուականների ձեռքը։ Եւ ահա անգործ մնացած ահագին բազմութիւնը անդադար կեղեքւում էր երկու տեսակ արիստոկրատիայի ձեռքով. մէկը կալուածատէր արիստոկրատիան էր, միացած հո-

գեորականութեան հետ,—նա բունացած էր գիւղերում,—իսկ միւսը՝ խոշոր դրամատէրերի և արդիւնագործների արիստոկրատիան, որ թագաւորում էր քաղաքներում։ Մինչդեռ այս վերջինը կողոպտում էր բանուոր դասակարգը իր ձեռքով հրատարակած անարդար օրէնքների միջոցով՝ կալուածատէրերը հարստանում էին առհասարակ ամբողջ ազգաբնակութեան հաշուով։ Որպէսզի հացի գինը միշտ բարձր լինի, հետևաբար և հողերը լաւ արդիւնք տան՝ այդ մարդիկ միջնորդեցին և կարողացան իրանց բազմաթիւ կողմնակիցների օգնութեամբ հրատարակել տալ օրէնք, որ ծանր մաքս էր դնում օտար երկիրներից բերած հացահատիկների վրայ, այնպէս որ այդ ամենաանհրաժեշտ մթերքի ներմուծումը կարելի էր արգելուած համարել։ Անգլիայում մշտական էր հացի արհեստական թանգութիւնը. ամենից շատ վնասուողը, ի հարկէ, էլի չքաւոր դասակարգն էր, իսկ հողատէրերը ոսկի էին հնձում։

Դժբախտութեան, կատարեալ անտէրութեան մատնուած ժողովուրդը հասել էր անդունդի ծայրին։ Ոճրագործութիւնների թիւը մեծանում էր. շատ էին մանաւանդ գողութիւնները։ Պարլամենտը փոխանակ թշուառներին օգնելու՝ անգութ պատիժներ էր սահմանում, կարծելով թէ կարելի է սարսափահար միջոցներով մի քաղցած ժողովրդի բարոյականութեան դասեր տալ։ Այսպէս, եթէ մէկը ուրիշի կալուածում մի նապաստակ սպանէր

կամ խանութից մի քանի գողանար՝ դատապարտւում էր մահուան պատժի։

Անգլիայի այս ներքին խոցերի՝ վրայ դարերից ի վեր աւելացած էր և իրլանդական հարցը։ Գլադստոնի անունը անմահացնողներից մէկն էլ այս հարցն է։ Որպէսզի մեր ընթերցողները մի ամփոփ հասկացողութիւն կազմեն այն մեծ պայքարի մասին, որ վարում էր Գլադստոն իր կեանքի վերջին տասնամեակի ընթացքում՝ մենք այստեղ կը դնենք իրլանդական հարցի անցեալի պատմութիւնը՝ որքան այդ կը ներեն մեր աշխատութեան սահմանները։

Իրլանդիան, կամ ինչպէս անուանում են իրլանդացիները, «Կանաչ Էրինը», մի մեծ կղզի է Անգլիայի արեւմտեան կողմում։ Հին ժամանակներից նա ունէր իր անկախութիւնը, բաժանուած լինելով մանր թագաւորութիւնների։ Իրլանդացիները պատկանում են կել'տական ցեղին։ Դա մի ընդունակ, հայրենասէր, կրակոտ ազգութիւն էր, որի պակասութիւնը սկզբից եղել է անմիաբանութիւնը։ Ընդունելով քրիստոնէութիւնը՝ Իրլանդիան, թէև դաւանութեամբ կաթոլիկ՝ երկար ժամանակ անկախ մնաց Հռոմի աթոռից։ Քրիստոնէութեան առաջին դարերը քաղաքակրթութեան և լուսաւորութեան ոսկեդար էին Իրլանդիայում. հիմնուեցան բազմաթիւ վանքեր, որոնց դպրոցները այնպիսի հռչակ էին վայելում արեւմուտքում, որ նոյն-իսկ

օտար երկրներից մարդիկ գնում էին այնտեղ ուսում և գիտութիւն ստանալու։

Հռոմի Ադրիանոս Դ պապը, որ անգլիացի էր, ամէն կերպ աշխատում էր հպատակեցնել Իրլանդիան ս. Պետրոսի աթոռին։ Վերջը նա հասաւ այն եզրակացութեան, որ այդ միտքը շատ հեշտ կարելի է իրագործել Անգլիայի միջոցով. ուստի 1156 թուին նա, իբրև հոգևոր գլուխ արևմըտեան եկեղեցու՝ յորդորեց անգլիական Հենրիկոս Բ թագաւորին միացնել Իրլանդիան Անգլիային։ Հենրիկոս սկսեց նուաճումը 1169 թուին։ Բայց գործը այնքան հեշտ չէր, ինչպէս թւում էր առաջին անգամ։ Իրլանդիայի նուաճումը վերջացաւ միայն 1603 թուին։ Ամբողջ չորս ու կէս դար Իրլանդիայի և Անգլիայի մէջ մղւում էր արիւնահեղ պատերազմ։ Հեշտութեամբ ձեռք բերելով Իրլանդիայի մի մասը՝ անգլիացիները մտցրին այնտեղ իրանց վարչական կարգերը, հաստատեցին պարլամենտ։ Ցենուելով այդ գրաւած մասի վրայ՝ նրանք սկսեցին դանդաղ կերպով տարածել իրանց իշխանութիւնը կղզու զանազան կողմերում։ Իրլանդիայի վայրենի բնութիւնը, անբարեհաճ կլիման, միացած ժողովրդի բիրտ, արիական յատկութիւնների հետ՝ անխորտակելի խոչընդոտներ էին դնում նուաճողների առաջ։ Կռիւը երկու ցեղերի մէջ էր. կել՛տական ցեղը կատաղի դիմադրութիւն էր ցոյց տալիս անգլօ-սաքսոն ցեղին. դա մի ա-

րիւնահեղ պայքար էր, երկու կողմից էլ անգութ, աւերիչ։ Իրլանդիան քարուքանդ էր դառնում. աջողութիւնը նուաճողների կողմն էր միշտ։

Կռիւը անհնարին կատաղութեան հասաւ մանաւանդ այն ժամանակ, երբ երկու ցեղերի մէջ եղած թշնամական պատճառների վրայ աւելացաւ և կրօնական ֆանատիկոսութիւնը։ Դա սկսուեց այն ժամանակ, երբ Անգլիան, ԺԶ դարի առաջին կիսում թօթափելով Հռոմի աթոռի գերիշխանութիւնը՝ բռնեց բողոքականութեան կողմը և հիմնեց իր եկեղեցին, որ անուանւում է անգլիկան։ Եկեղեցու գլուխ համարւում էր թագաւորը։ Ազնուականութիւնը տիրացաւ եկեղեցու կալուածներին և սեփականացրեց եկեղեցական բարձր պաշտօնները։ Կաթոլիկութիւնը վնասակար և արգելուած հերձուած հրատարակուեց. նրա դէմ հալածանքներ սկսուեցան։ Իրլանդիան կաթոլիկ մնաց և իր ազգային անկախութեան գաղափարին միացրեց նաև մայրենի եկեղեցին պաշտպանելու գաղափարը։ Ապստամբութիւնները, արիւնահեղ ընդհարումները ան պակաս էին. անգլիացիները եռանդով հետևում էին ոչնչացնող քաղաքականութեան։ Իրլանդացիներին հայրենի երկրից դուրս քշելու և վերջին ծայր աղքատութեան հասցնելու համար նրանք հնարեցին ամեն տեսակ արգելքներ, խստութիւններ։ Պէտք էր Իրլանդիան դարձնել բողոքական, պէտք էր հարկադրել, որ նա ճանաչէ անգլիական

Թագաւորին երկրի տէր և եկեղեցու գլուխ։ Այդ նպատակին անգլիացիները ձգտում էին հասնել՝ զրկելով կաթոլիկներին իրաւունքներից, կողոպտելով նրանց, պահելով նրանց խոր տգիտութեան մէջ։ Դրա հետեւանքներից առաջինն այն եղաւ, որ կաթոլիկ կղերը բոլորովին տիրեց ժողովրդի խելքին ու մտքին, դարձաւ նրա միակ լոյսը. նա էր, որ գրագիտութիւն էր տարածում, նա էր, որ սովորեցնում էր հալածանքներին դիմադրել. իրլանդացին, որ առանց այդ էլ պինդ կպած էր իր եկեղեցուն՝ ոտով գլխով թաղուեց կոյր ֆանատիկոսութեան մէջ։ Թէև այդպէս՝ բայց կղզեցիները հարկադրուած էին քայլ առ քայլ նահանջել նուաճողների առաջ։ Ոյժը կոտրում էր նրանց։ Եւ, վերջապէս, դարաւոր կռիւների հետեւանքն այն եղաւ, որ իրլանդական պարլամենտը, բաղկացած կառավարութեան կողմնակիցներից՝ ընդունեց անգլիական հպատակութիւնը, և անգլիկան եկեղեցին հռչակուեց տիրապետող, պետական։

Բայց արիւնահեղ պայքարը դրանով չը վերջացաւ։ Ընդ միշտ խաղաղացնել Իրլանդիան անհնարին եղաւ։ Անգլիական կառավարութիւնը իւրացրեց սանձարձակ բռնակալութեան քաղաքականութիւնը։ Ամեն անգամ, երբ իրլանդացիների մէջ խլրտում էր սկսւում՝ անգլիացիները իսկոյն ապըստամբութիւն անուանում էին տալիս այդ շարժման և շտապում էին ճնշել նրան։ Այդ ժամանակ էլ նը-

բանք իրլանդական հողերը յարքունիս էին գրաւում և տալիս էին բողոքականներին։ Առաջին քայլը արաւ Եղիսաբեթ թագուհին, որի ժամանակ մանաւանդ սաստկացան կրօնական հալածանքները. Նա խլեց 600 հազար ակր հող և բաժանեց իր սիրելիներին, պայման դնելով որ երբէք կաթոլիկներին վարձով չտրուի այդ հողերից և ոչ մի կտոր։ Թագուհու այդ յափշտակութիւնը սիստեմ դարձաւ նրա յաջորդների համար։ 1610 թուին Յակոբ Թագաւորի կառավարութիւնը իրլանդական ազգը կողոպտելու մի անհագին ծրագիր կազմեց։ Հիւսիսային Իրլանդիայի հողերի երկու երրորդական մասը յարքունիս գրաւուեց. որովհետև այնտեղի հողատէրերը ապստամբութեան փորձ էին արել։ Կազմուեց Ուլ՚ստէր նահանգը, ուր բնակութիւն հաստատեցին Անգլիայից և Շօտլանդիայից դաղթած բողոքականները։ Իրլանդացիները հեռացան այդ տեղերից, բնակութիւն հաստատեցին այնպիսի անմատչելի տեղերում, ուր չէր կարող հասնել անգլիացի կողոպտողը։ Այդ ապահով անկիւններում նրանք մի կերպ պահպանում էին իրանց գոյութիւնը, աւելի վայրենանում, աւելի խիստ ատելութեամբ էին լցւում դէպի իրանց հալածողները։

Դրութիւնը անտանելի դարձաւ մանաւանդ այն ժամանակ, երբ Իրլանդիայի կառավարիչ նշանակուեց բռնակալ և անգութ Ուէնտվօրտ (1633)։ Նա ահաբեկման ամենախիստ միջոցներին դիմեց,

սարսափահար արաւ ամենքին։ Անգլիական պատմագիրները ամօթով են պատմում այդ մարդուարարքները, որոնք սարսափելի հետևանքների հասցրին։ Եւ իրաւ, երբ բռնակալը, որ իր բոլոր չարագործութիւնների համար ստացել էր կոմս Ստրաֆֆօրդի տիտղոսը, ընկաւ իր իշխանութիւնից և գլխատուեց՝ 1641 թուին Իրլանդիայում բռնկեց ապստամբութիւն, որի ղեկավարն էր Օ՚Նէալ. ապստամբները, որոնք Ուլ՚ստէրից և ուրիշ տեղերից արտաքսուած իրլանդացիներն էին, երդուեցին մի հատ անգլիացի չը թողնել Իրլանդիայում։ Այդ զարհուրելի երդումը ճըշտութեամբ կատարեցին յուսահատութեան ծայրը հասած իրլանդացիները։ Սկսուեցան բարբարոսական կոտորածներ։ Կաթոլիկները մորթոտում էին բողոքականներին, խտրութիւն չը դնելով սեռի և հասակի մէջ. Նրանք բռնաբարում էին կանանց, ջարդում էին երեխաների գլուխները, այրում էին տները, ագարակները։ Սոսկում և զարհուրանք տարածուեց Անգլիայում՝ երբ Իրլանդիայից մէկը միւսից սարսափելի լուրեր հասան։ Վկաները երդմամբ ցոյց էին տալիս, թէ տեսել են, ինչպէս կաթոլիկները կտոր-կտոր էին անում տղամարդկանց նրանց կանանց աչքի առաջ, ինչպէս բռնաբարում էին աղջիկներին և մերկացնելով նրանց՝ տանում էին ծմակները, որ ցրտից ու քաղցածութիւնից մեռնեն այնտեղ։ Ապստամբութեան առաջին տարին ջըն-

ջուեցան մոտ 37000 անգլիացիներ։ Նրանք փախչում էին սարսափահար, մեռնում էին ճանապարհներին, զոհ էին գնում տարափոխիկ հիւանդութիւններին։

Անգլիան պահանջում էր «ոչնչացնել չարագործ ժողովուրդը». անգլիական պարլամենտը վերանորոգեց իր սպառնալիքները, թէ պէտք է արմատախիլ անել կաթոլիկութիւնը Իրլանդիայում։ Բայց այդ սպառնալիքները իսկոյն իրագործել անկարելի էր. Անգլիայում այդ ժամանակ ներքին պատերազմ կար. Թագաւորը (Կարլ) պատերազմում էր պարլամենտի դէմ. երկու կողմերի զօրքերը ընդհարւում էին զանազան տեղերում, և աջողութիւնը փոփոխական էր։ Այդ կռիւների մէջ երկու կողմն էլ սովորեցան տեղի տալ մի նոր ոյժի. դա զօրքըն էր։ Իր յաղթութիւններով հռչակուել էր Օլիվէր Կրոմվէլ’. զօրքի օգնութեամբ նա կատարեց յեղափոխութիւն. Թագաւորը գլխատուեց, պարլամենտը փակուեց, և Անգլիան հանրապետութիւն դարձաւ։ Իրլանդիայում շարունակւում էր ապըստամբութիւնը։ 1649 թուին Կրոմվէլ’ գնաց Իրլանդիա, տանելով իր հետ 20 հազարանոց մի բանակ։ Այժմ սկսուեցան իրլանդացիների տանջանքները։

Կրոմվէլ’ վճռել էր միանգամ ընդ միշտ վերջ տալ իրլանդական հարցին՝ բնաջինջ անելով բոլոր կաթոլիկներին։ Գրաւելով ապստամբների մի քանի բերդերը՝ Կրոմվէլ’, ինչպէս ինքն էր գրում

հրամայեց կոտորել ամենքին։ Կատաղած զինուորները Դրօգեդա բերդը գրաւելուց յետոյ սրի անց կացրին ոչ միայն բերդը պաշտպանողներին այլ և անօգնական բնակիչներին. կաթոլիկ եկեղեցում ապաստանուած հազար իրլանդացիներ բնաջինջ եղան։ Անգլիացիները պղծում էին սուրբ տեղերը, քանդում ու կողոպտում էին գերեզմանները, զօրանոց էին դարձնում կաթոլիկ եկեղեցիները և վանքերը։ Կրոմվէլի ազդած սարսափը այնքան մեծ էր, որ նրա ճանապարհից հեռու գտնուող քաղաքներն անգամ հնազանդութիւն էին յայտնում և պատգամաւորների միջոցով խնդրում էին նրան խղճալ, առաջարկելով ախոռ դարձնել իրանց եկեղեցիները։ Անհագին քանակութեամբ մարդիկ գերի բռնուեցան և վաճառուեցան՝ հատը 25 լիրայով. մի անգամ 1000 կոյս աղջիկներ բռնեցին և ուղարկեցին Ճամայկա կղզին՝ վաճառելու համար։ Երկիրը աւերակների կոյտ դարձաւ։ Իրլանդիան կորցրեց 600000 հոգի։ Յանձնելով իր գործի շարունակութիւնը ուրիշ մարդկանց՝ Կրոմվէլ՝ վերադարձաւ Անգլիա, ուր անցաւ նորակազմ հանրապետութեան գլուխը։ Եւ երբ Իրլանդիայում այլ ևս զէնքը ձեռին մարդ չմնաց՝ Կրոմվէլ՝ իր կրտսեր որդուն յանձնեց վերջնականապէս կարգ ու խաղաղութիւն հաստատել թշուառ երկրում։ Բայց դա աւելի սարսափելի բան էր՝ քան զէնքի ուժով նուաճելը։ Սկսեցին գատել ամբողջ իրլանդական

ժողովուրդը. ամէն մի մարդ, որ մասնակցել էր ապստամբութեան՝ զրկուեց իր հողերից և արտաքսուեց։ Անգլիայից և Շոտլանդիայից բողոքական գաղթականների մի հեղեղ սկսուեց, որ բռնեց բնիկների տեղը, վերանորոգեց աւերակները։ Իրլանդական պարլամենտը փակուեց։ Ժողովուրդը հօտերի նման այս ու այն կողմ էր քշւում, բնակեցնում էր այնպիսի տեղերում, ուր կառավարութիւնը հնարաւոր էր համարում թոյլ տալ իրլանդացիների գոյութիւնը։ Անգլիական պատմագիրներից մէկը (Ջօն Րիչարդ Գրին) ասում է. «Այնպիսի սարսափելի վիճակ, որ Իրլանդիայի բաժին ընկաւ Կրոմվէլի կառավարութեան ժամանակ՝ դեռ չէ տեսել ոչ մի ազգ նոր պատմութեան մէջ»։

Դաժան կարգերին փորձեց վերջ դնել Կարլ Բ-Թագաւորը. Նա նորից բաց արեց իրլանդական պարլամենտը, սկսեց մեղմ վարուել կաթոլիկների հետ։ Բայց նրան չաջողուեց վերականգնել կաթոլիկների իրաւունքները. որովհետև բողոքականները յամառութեամբ ընդդիմացան այդ մտքին և թոյլ չը տուին, որ Կրոմվէլի ժամանակ խլուած հողերը վերադարձնուեն իրանց տէրերին։ Սակայն Կրոմվէլի անգթութիւններից հազիւ քառասուն տարի անցած՝ Իրլանդիան դարձեալ ապստամբուած էր։ Այս անգամ նրան ապստամբութեան հրաւիրողը անգլիական Թագաւոր Յակոբ Բ էր, որ վճռել էր վերացնել բողոքականութիւնը Անգլիայում

և նորից հաստատել կաթոլիկութիւնը։ Նա մեծ յոյս ունէր Իրլանդիայի վրայ. և որպէսզի իր համար մի ապահով անկիւն պատրաստած լինի այն դէպքում, եթէ բողոքական Անգլիան ընդդիմանայ իր մտքին՝ նա Իրլանդիայի փոխարքայ նշանակեց մի կաթոլիկ ազնուականի։ Եկան կաթոլիկութեան յաղթանակի օրերը։ Բողոքականները զրկուեցան իրանց տեղերից, կաթոլիկները առաջ քաշուեցան. պարլամենտում, զօրքի մէջ, համալսարաններում բոլոր տեղերը նրանց էին պատկանում։ Բայց Յակոբ չը կարողացաւ աւելի առաջ գնալ. Անգլիայում 1688 թ. սկսուեց յեղափոխութիւն, և նա հարկադրուած եղաւ փախչել Ֆրանսիա։ Իրլանդիան պարզեց ապստամբութեան դրօշակը. այնտեղ ապրող անգլիացիները հաւաքուեցան մի քանի բերդերում և սկսեցին հերոսաբար պաշտպանուել։ Յակոբ վերադարձաւ Իրլանդիա. Նա մտադիր էր իրլանդական զօրքերով նուաճել Անգլիան և վերահաստատել կաթոլիկութիւնը։ Իրլանդացիները այդպիսի ձգտում չունէին. Նրանք կամենում էին միայն անկախութիւն ձեռք բերել կամ յետ խլել այն հողերը, որոնք այժմ անգլիացիների սեփականութիւն էին դարձել։ 1690 թուին անգլիական զօրքերը երևացին Իրլանդիայում, և պատերազմը սկսուեց կանոնաւոր կերպով։ Յակոբ Բ յետ նահանջեց և առաջին անաջողութիւնից յետոյ դարձեալ փախաւ Ֆրանսիա, թողնելով Իրլանդիան

յաղթողների կամքին։ Իսկ յաղթողները չարունակեցին պատերազմը, ոչնչացրին իրլանդական ոյժերը և դարձեալ սկսեցին իրանց խստութիւնները, մինչև որ Երկրում դարձեալ տիրեց գերեզմանի լռութիւնը։

Անգլիան միայն զէնքով չէր կռւում իրլանդացիների դէմ։ Գուցէ զէնքից աւելի սարսափելի էին այն օրէնքները, որ հնարում էր կառավարութիւնը՝ իրլանդացիներին վերջնականապէս դժբախտացնելու և ոչնչացնելու համար։ Զէնքը բնաջինջ չէր անում կաթոլիկներին. Թէև այնքան հալածանքների, կռիւների ժամանակ նրանք կոտորւում էին, փախչում էին իրանց հայրենիքից, բայց և այնպէս, դարձեալ բազմանում էին և երկրի ազգաբնակութեան ահագին մեծամասնութիւնն էին կազմում։ Այն, ինչ մի քանի անգամ չէր կարողացել անել զէնքը՝ պիտի կատարէին խիստ, բացառիկ օրէնքները։ Ամենից առաջ կառավարութիւնը աշխատում էր աղքատացնել ժողովուրդը։ Իրլանդիան բացառապէս երկրագործական և անասնապահական երկիր է։ Նրա հողերի տարածութիւնն է 11,000,000 ակր. ԺԸ դարի սկզբում այդ քանակութիւնից միայն մի միլիոն ակր էր մնացել կաթոլիկների ձեռքին, այն էլ այնպիսի կաթոլիկների, որոնք ծագումով անգլիացի էին։ Ամենալաւ և օգտաւէտ հողերը տրւում էին բողոքականներին։ Սրանց արգելուած էր խնամիական և բա-

բեկամական կապեր հաստատել կաթոլիկների հետ։ Խստութիւնները ծայրայեղութեան հասան մանաւանդ 1689 թուի ապստամբութիւնը ճնշելուց յետոյ։ Հրամայուած էր, որ մինչև 1698 թուի մայիսի 1-ը բոլոր կաթոլիկ արքեպիսկոպոսները, եպիսկոպոսները և այլ բարձրաստիճան հոգևորականները ընդ միշտ հեռանան Իրլանդիայից, որպէսզի կաթոլիկ եկեղեցին ինքն ըստ ինքեան վերանար՝ երբ կը մեռնէին երկրում մնացած քահանաները։ Աքսորուողներից նրանք, որոնք կը համարձակուէին հայրենիք վերադառնալ՝ ենթարկւում էին մահուան պատժի։ Նման պատիժների և տուգանքների էին ենթարկւում նաև նրանք, որոնք կը թաքցնեին աքսորուողներին իրանց տներում։ Օտարերկրացի կաթոլիկ հոգևորականութեան խիստ արգելուած էր Իրլանդիա մտնել։ Այնտեղ կարող էին գոյութիւն պահպանել այն փոքրաթիւ ծխական քահանաները, որոնք ներկայացնում էին 50 ֆունտ ստերլինգ գրաւական, պարտաւորւում էին երբէք դուրս չը գալ իրանց համար սահմանուած վիճակներից և քահանայագործութիւն անել միմիայն այն տեղերում՝ ուր թոյլ էր տալիս կառավարութիւնը։ Ջանգահարութիւնը և կրօնական թափօրները, հանդէսները անպայման արգելուած էին. դրսում դրած հրաշագործ պատկերները, խաչերը, այլ և սուրբերի գերեզմանները հրամայուած էր ոչնչացնել, իսկ նրանց, որոնք կը համարձակուէին ուխտ գնալ՝ պէտք

էր ծեծի ենթարկել։ Քահանաները ցուցակագրուած էին. բայց չը նայած հալածանքներին՝ Իրլանդիայում միշտ մնում էին չը ցուցակագրուած բազմաթիւ քահանաներ. դրանց դէմ ամենախիստ և անգութ օրէնքներ հրատարակուեցան։ 1720 թուին իրլանդական պարլամենտը որոշեց՝ ամեն մի ձերբակալուած քահանայի դէմքի վրայ հրաշէկ երկաթով մի առանձին նշան դրոշմել։ Բայց այս միջոցը շուտով թողնուեց, որովհետև իրլանդացիներն էլ բռնում էին բողոքականներին և նոյնպիսի նըշան էին դնում նրանց դէմքի վրայ։ Այն ժամանակ իրլանդական լօրդերի պալատը ընդունեց մի օրէնք, որ բոլոր չը ցուցակագրուած քահանաներին պէտք է ներքինացնել։ Բայց այս հրէշաւոր օրէնքը մերժուեց անգլիական պարլամենտից։

Բոլոր կաթոլիկ դպրոցները փակուած էին, ուսուցիչները աքսորուած. վերադառնալը մահուան պատժի արժանի մի յանցանք էր։ Իրլանդական երիտասարդութիւնը պիտի մնար անգրագէտ կամ բողոքական պիտի դառնար։ Սաստիկ արգելուած էր՝ երեխաներին ուղարկել արտասահման, ուսում ստանալու համար։ Ամեն մի պաշտօնեայ իրաւունք ունէր պահանջել կաթոլիկից, որ նա ցոյց տայ իր երեխաներին և դրանով ապացուցանէ, թէ նըրանցից ոչ մէկն էլ արտասահման չէ ուղարկուած։ Հաշտարար դատաւորը ամեն ժամանակ կարող էր կաթոլիկից հաշիւ պահանջել, թէ ինչպէս նա անց

Կացրեց օրը, ուր էր գնացել պատարագ լսելու, ով էր պատարագ անում և ով էր ներկայ. եթէ հարցու փորձի ենթարկուածը չէր պատասխանում կամ սուտ էր ասում՝ նրանից առնում էին 20 ֆունտ ստերլինգ տուգանք կամ բանտարկում էին մի տարի ժամանակով։ Կաթոլիկը իրաւունք չունէր ոչ որևէ ժառանգութիւն ստանալ իր բողոքական ազգականներից, ոչ ընդունել նրանց որևէ ընծան, ոչ դառնալ խնամակալ թէ իր, թէ ուրիշի երեխաների։ Քահանան, որ ամուսնացնում էր կաթոլիկին բողոքականի հետ՝ մահուան պատժի էր ենթարկւում։ Կաթոլիկի որդին, որ ընդունում էր բողոքականութիւն՝ իր ծնողների ամբողջ կարողութեան տէրն էր դառնում։ Կաթոլիկը չէր կարող ոչ ընտրել, ոչ ընտրուել որևէ պաշտօնի համար, չէր կարող վարել որևէ պաշտօն թէ՛ պետական և թէ հասարակական գործերի մէջ։ Չունենալով որևէ հողային սեփականութիւն՝ նա միայն կարող էր վարձով հող վերցնել բողոքականից, այն էլ ոչ աւել քան 31 տարի ժամանակով և այն պայմանով, որ վճարէ հողատիրոջ իր ստացած բոլոր արդիւնքի $^2/_3$ մասը։ Եթէ մէկը իմաց էր տալիս կառավարութեան, թէ կաթոլիկները աւելի ձեռնտու պայմաններով են հող վարձում՝ նա առատ պարգևներ էր ստանում։ Կաթոլիկին ազատ իրաւունք էր տրուած միմիայն բանուորի արհեստով պարապել։ Եթէ կաթոլիկ բանուորը հրաժարւում էր գործել

այնպիսի տուներին, որոնց չէր ընդունում բողոքական եկեղեցին՝ նա ենթարկւում էր պատիժների․ Ոչ մի կաթոլիկ իրաւունք չունէր լինել 5 ֆունտից աւել արժեցող ձիու տէր։ Ամեն մի բողոքական կարող էր խլել նրանից թէկուզ 500 ֆունտ արժեցող ձին և տալ նրան 5 ֆունտ։

Այս գրուած օրէնքների վրայ պէտք է աւելացնել և բողոքականների ֆանատիկոսութիւնը։ Ամեն մէկը կեղեքում էր կաթոլիկներին. նոյն-իսկ երկրի բարձր իշխանութիւնը չէր կարողանում արդար ու անկողմնապահ լինել, նա էլ գտնւում էր բողոքականների ազդեցութեան տակ։ Կաթոլիկ ծառաները, հող վարձողները և առհասարակ բոլոր պաշտպականները անարգուած էին ինչպէս անմաքուր կենդանիներ։ Նոյն-իսկ թատրոնական ներկայացումների մէջ կաթոլիկների հաւատալիքները և սովորութիւնները դառնում էին լիրբ ծաղրածութեան առարկայ։ Մանաւանդ անտանելի էին անգլիկան եկեղեցու սպասաւորները։ Կաթոլիկները տասնորդական հարկ էին վճարում պետական եկեղեցուն. բաւական չէր այս անարդարութիւնը.—անգլիկան քահանաները այնպիսի անգթութիւններով էին հաւաքում այդ հարկը, որ ժողովուրդը շատ անգամ էր դուրս գալիս համբերութիւնից ու ընդդիմանում էր։

Եթէ անգլիական կառավարութիւնը կարողանար այս սիստեմը մինչև և անխափան գործադրել

Իրլանդիայում՝ տեղացի կաթոլիկները վաղուց անհետացած կը լինէին։ Բայց օրէնքները շատ անգամ անտես էին առնւում։ Հէնց որ երկրում տիրում էր խաղաղութիւն՝ շատ բան մոռացութեան էր տրւում։ Սակայն հալածանքները այնքան խիստ էին և անգութ, որ Իրլանդիան մի աւերուած երկիր դարձաւ։ Մեծ բազմութեամբ իրլանդացիներ գաղթում էին Ամերիկա, իսկ երկրում մնացածները վարում էին զարհուրելի կեանք. գիւղական տարրը, վայրենացած, կեղտոտ՝ ապրում էր հողաշէն խրճիթներում անասունների հետ և քաղցած էր, միշտ քաղցած։ Սովը հողից և մարդկային իրաւունքներից զրկուած խեղճերի վիճակն էր դարձել։ Ոչ ոք չէր մտածում նրա մասին. պարլամենտը վաճառուած մարդկանց մի ժողով էր. անգլիական կառավարութիւնը ամենայն հոգատարութեամբ պլոկում էր նրան։ Իրլանդիան առևտուր չունէր. արգելուած էր այնտեղից հում նիւթ արտահանել։ Եւ այս զարհուրելի դրութեան մէջ գտնուող ժողովուրդը դարձեալ չէր ընկճւում, չէր հաշտւում նուաճողների հետ։ Նա դարձեալ շարունակում էր կռուել. նրա միջից դուրս էին գալիս կողոպտողների, կոտորողների խմբեր, որոնք վրէժ էին հանում անգլիացիներից։ ԺԸ դարի կէսում յայտնի դարձան «սպիտակ տղաները». այս անունը նրանք ստացան այն պատճառով, որ իրանց շորերի վրայից սպիտակ շապիկ էին հագնում։ Նրանք

յարձակւում էին կալուածատէրերի վրայ, սպանում էին, կոտորում էին նրանց անասուններին, սարսափահար միջոցներով հարկադրում էին կաթոլիկներին՝ մեծ վարձագին չը տալ հողերի համար, չհատուցանել անգլիկան եկեղեցու տասանորդական հարկը։ Այս մարդկանց գործերը սարսափելի կատաղութեան և անխղճութեան դրոշմ էին կրում։ Երբեմն նրանք օրը կէսօրին յարձակւում էին բողոքական եկեղեցիների վրայ, բռնում էին բոլոր գեղեցիկ աղջիկներին, փախցնում էին, բռնաբարում, և ապա կաթոլիկ քահանաները բռնութեամբ պսակում էին նրանց։ «Սպիտակ տղաներին» հալածելը կամ ոչնչացնելը բոլորովին անհնարին էր. նրանք թագնւում էին, և ոչ ոք չէր համարձակւում յայտնել նրանց տեղը։

«Սպիտակ տղաների» շարժումը ուղղուած էր գլխաւորապէս հողային կարգերի դէմ. նա նշանաւոր էր մանաւանդ նրանով, որ համակրութիւն գտաւ և բողոքականների մէջ, որոնք նոյնպէս սկսեցին գործել այդ եղանակով։ Բողոքականների դրութիւնը լաւ էր կաթոլիկների համեմատութեամբ. բայց բողոքական գիւղացին էլ նոյնպէս հարստահարւում էր բողոքական կալուածատիրոջ ձեռքով, նոյնպէս ճնշուած էր հարկերի և տուրքերի ծանրութեան տակ։ Անգլիական կառավարութիւնը իր հարստահարական սիստեմով հաւասար չափով վնասում էր և բողոքականներին. այս-

պէս, ապրանքների արտահանութեան արգելքը ամենից շատ բողոքականներին էր հարուածում։ Կամաց-կամաց երկրի անտեսական հարցերը, որոնք համարեա միատեսակ դրութիւն էին ստեղծել ամենքի համար՝ սկսեցին միացնել կաթոլիկներին և բողոքականներին։ Իրլանդական հայրենասիրութիւնը ոգեւորեց ամենքին։ Կազմուեց ինտելիգենցիա, որի մէջ նշանաւոր տաղանդներ երևան եկան և սկսեցին պաշտպանել ընդհանուր գործը։

Այս տաղանդաւոր մարդկանցից մէկն էր Ջօնաթան Սուիֆտ, «Գուլլիվերի ճանապարհորդութեան» հռչակաւոր հեղինակը։ Նա իր սուր գրչով, թունալից հեգնութիւններով հասկացնում էր իրլանդացիներին, թէ ո՛րպիսի զարհուրելի դրութեան մէջ են գտնւում նրանք։ Այսպէս, նա խորհուրդ էր տալիս աղքատ իրլանդացիներին ուտել իրանց երեխաներին և նկարագրում էր, թէ ինչ կերակուրներ կարելի է պատրաստել երեխաների մըսից։ Հրաւիրելով իրլանդացիներին պաշտպանել ընդհանուր ազգային գործը՝ նա ապացուցանում էր, որ Իրլանդիան երբէք չի բարւոքի իր դրութիւնը՝ մինչև որ չայրէ Անգլիայից եկած ամէն մի բան, բացի մարդկանցից և ածուխից։ «Ազատուելու միջոցը գտնւում է ձեր ձեռքում, գրում էր Սուիֆտ. դուք վերջապէս պիտի իմանաք, որ Աստուծու, բնութեան, ազգերի և ձեր սեփական երկրի օրէնքներով դուք նոյնպիսի ազատ

ժողովուրդ էք և պիտի դառնաք նախնական ազատ ժողովուրդ՝ ինչպէս ձեր եղբայրները Անգլիայում։ Այսպիսի գրուածքներ տարածւում էին ահագին քանակութեամբ. կարդում էր ամբողջ Իրլանդիան և յուզւում էր։ Անգլիական իշխանութիւնները չէին համարձակւում կալանաւորել Սուիֆտին, դատել նրան — վախենում էին ժողովրդից։ Սուիֆտի օրինակին հետևեցին և ուրիշ գրողներ։ Անգլիան առ ժամանակ անտես էր անում իրլանդացիների պահանջը։ Բայց երբ Հիւսիսային Ամերիկայի անգլիական գաղթականութիւնները ապստամբեցան, կառավարութիւնը, նեղն ընկած՝ ակամայ զիջեց իրլանդացիներին, խնդրելով նրանց պաշտպանել երկիրը։ Իրլանդիան արձագանգ տուեց այս հրաւէրին։ Անգլիական զօրքերը կռւում էին Ամերիկայում, և իրլանդացիները, ոգևորուած մի բուռն հայրենասիրութեամբ, հաւաքեցին 60,000 կամաւորներ։ Գործում էին միայն բողոքականները. կամաւոր զօրքը, օֆիցերները, հրամանատարները բողոքականներից էին։ Սկսուեց մի խաղաղ ապստամբութիւն. կառավարութեան և զօրքի գլուխ կանգնածները պահանջեցին Անգլիայից ազատութիւն։ Այս շարժման առաջնորդներից մէկն էր հռչակաւոր հռետոր Գրատտան, որի առաջարկութեամբ իրլանդական պարլամենտը դիմեց Թագաւորին մի յայտագրով, որի մէջ ասուած էր. «Թագաւորի իրլանդացի հպատակները ազատ ժողովուրդ են. Իր-

լանդիայի թագը պետական մի թագ է, որ անբաժանելի կերպով միացած է Անգլիայի թագի հետ. այդ կապից կախուած է երկու ժողովրդի բախտը։ Բայց Իրլանդիան մի առանձին թագաւորութիւն է, որ ունի իր պարլամենտը և իր օրէնսդիր իշխանութիւնը. աշխարհի մէջ ոչ ոք իրաւունք չունի օրէնքներ տալ այս ազգին՝ բացի Իրլանդիայի թագաւորից, լորդերից և համայնքներից»։ Անգլիայում ստիպուած էին զիջողութիւններ անել։ 1782 թուին Իրլանդիա ուղարկուեց նոր փոխարքայ, որին յանձնարարուած էր կատարել իրլանդացիների պահանջները, բայց ամենածայրայեղ դէպքում միայն։

Փոխարքան սկսեց ձգձգել, բայց իզուր։ Գրատտանը պահանջեց անյապաղ հռչակել Իրլանդիայի անկախութիւնը, հակառակ դէպքում սպառնաց իրլանդական զօրքը առաջ քաշել։ Փոխարքան համաձայնուեց, և ապրիլի 16-ին Իրլանդիան անկախ հրատարակուեց։ Պարլամենտում Գրատտան ասաց. «Ես այժմ դիմում եմ մի ազատ ժողովրդի։ Սա առաջին րոպէն է, երբ դուք, բազմաթիւ դարերից յետոյ, կարող էք կրել այդ անունը։ Ես այնքան յաճախ խօսել եմ ձեր ազատութեան մասին, որ այժմ աւելացնելու բան չունիմ, և միայն կարող եմ զարմանալ, թէ ինչպէս դուք անդադար առաջ էիք գնում, մինչև որ ազգը լարեց իր ամբողջ ուժերը, որպէսզի կատարէ ինքն իրան ազատո-

լու գործը։ Ես տեսայ Իրլանդիան ծնկների վրայ ընկած. ես նայում էի նրան հայրական խնամատարութեամբ։ Սուիֆտի ոգի, Մօլինէի ոգի, դուք յաղթեցիք։ Իրլանդիան այժմ ազգ է։ Ես ողջունում եմ նրան և, խոնարհուելով նրա առաջ, ասում եմ. կեցցես դու յաւիտեանս յաւիտենից»։

Ձեռք բերելով անկախութիւն՝ Իրլանդիան այնուամենայնիւ չը տեսաւ երջանկութեան օրը, որ ուխտում էր Գրատտանը։ Այժմ երկրի տէրը դարձաւ բողոքական արիստոկրատիան, որի ձեռքում էր գտնւում իրլանդական պարլամենտը։ Մի քանի թեթև արտօնութիւններ տալով կաթոլիկներին, ոչնչացնելով նրանց վրայ ծանրացած հրէշաւոր օրէնքները՝ ազնուականները կանգ առան և այլ ևս ոչ մի զիջողութիւն չարին յօգուտ նոյն-իսկ բողոքականների։ Գրատտան աշխատում էր բարենորոգել պարլամենտը, փոփոխելով ընտրողական կարգերը։ Բայց նորան հակառակւում էին հողատէրերը։ Կաթոլիկները չը բաւականացան և պահանջում էին հաւասար իրաւունքներ։ Հասարակ ժողովուրդը, որ երբէք չէր հետաքրքրուել, թէ ինչ են անում բարձր դասի մարդիկ՝ նորից սկսեց իր բռնութիւնները բողոքականների դէմ, համարելով նրանց իր թշուառութեան պատճառ։ Բողոքականները նոյնպէս կռիւ սկսեցին. 1785 թուին սրանք կազմակերպեցին «Լուսաբացի որդիներ» անունով հրոսակներ, որոնք պատժում էին կաթոլիկներին.

իսկ կաթոլիկները հրապարակ հանեցին ապաշտպաններու անունով խմբեր։ Բռնութիւնները, հարստահարութիւնները անպակաս էին։ Անգլիական պարլամենտը այժմ ոչինչ իրաւունք չունէր Իրլանդիայի վրայ։ Երբ անգլիական առաջին մինիստր Պիտտ առաջարկեց ոչնչացնել այն օրէնքը, որ արգելում էր Իրլանդիային ապրանք ուղարկել Անգլիա՝ այս առաջարկութիւնը մեծ դժուարութիւններով անցաւ անգլիական պարլամենտում. բայց իրլանդացի կալուածատէրերը, իրանց համար վնասակար համարելով ազատ առեւտուրը՝ մերժեցին այդ օրէնքը։

Եւ այսպէս, երկիրը այժմ հեծում էր մի նոր բռնապետութեան տակ։ 1789 թուին տեղի ունեցաւ ֆրանսիական մեծ յեղափոխութիւնը։ Իրլանդիայում արձագանգ տուեց այդ նշանաւոր դէպքը, որ հրատարակեց ազատութիւն, եղբայրութիւն և հաւասարութիւն։ Կազմուեց «Միացեալ իրլանդացիների դաշնակցութիւնը», որ մի կողմ դրեց ցեղային և կրօնական խտրութիւնները ու նպատակ ընտրեց բոլորովին ազատել Իրլանդիան և հաստատել հանրապետական կարգեր։ Ընկերութիւնը ունէր պատրաստութիւն. Նրա գլխաւոր գործիչներից մէկը գնաց Պարիզ և դաշնակցութիւն կնքեց հանրապետական կառավարութեան հետ, որ խոստացաւ զօրք ուղարկել Իրլանդիա։ Անգլիական կառավարութիւնը, լաւ իմանալով՝ թէ ինչ վտանգ է սպառնում Իրլանդիայից՝ նախ հարկադրեց իր-

լանդական պառլամենտային իրաւունքներ տալ կաթոլիկներին, և տաս փորձեց խաղաղութեան դաշըն կապել Ֆրանսիայի հետ և վերջ դնել այն պատերազմին, որ տեղի ունէր այդ երկու պետութիւնների մէջ։ Կաթոլիկներին իրլանդական պառլամենտը հաւասար իրաւունքներ շըտուեց. բողոքականները լսել անգամ չէին ուզում այդ հաւասարութեան մասին. Նրանք թոյլ տուին, որ կաթոլիկները մասնակցեն պառլամենտական ընտրութիւններին, ձայն տան այս կամ այն պատգամաւորին. բայց նրանք կարող էին միայն ընտրել, իսկ պատգամաւոր ընտրուելու իրաւունք չունէին։ Բացի դրանից՝ կաթոլիկներին իրաւունք տրուեց վաճառականութիւն անել, վարել մի քանի պաշտօններ։ Ինչ վերաբերում է Ֆրանսիային՝ այստեղի հանրապետական կառավարութիւնը, յոյս ունենալով Իրլանդիայի միջոցով ոչնչացնել Անգլիայի զօրութիւնը՝ մերժեց հաշտութիւն կնքել։ Շուտով Ֆրանսիական նաւատորմը ճանապարհուեց դէպի Իռլանդիա, տանելով մի ամբողջ բանակ։ «Միացեալ իռլանդացիները», որոնք սպասում էին Ֆրանսիացիներին՝ գործ սկսեցին։ Բայց հէնց սկզբում անմիաբանութիւն ծագեց նրանց մէջ. դարձեալ երկու կողմից առաջ եկաւ կրօնական ֆանատիկոսութիւնը. կաթոլիկները սկսեցին կոտորել բողոքականներին և այդ պատճառով էլ մենակ մնացին։ Իսկ Ֆրանսիական զօրքը չըկարողացաւ փոթորիկի պատ-

ճառով հասնել Իրլանդիայի ափերին, և յետ դարձաւ։ Անգլիական զինուորները, հէնց որ իմացան թէ Ֆրանսիացիները չեն գալիս՝ սկսեցին վրէժ հանել խաղաղ բնակիչներից, կոտորելով ու կողոպտելով իրլանդական գիւղացիներին։ Այս զզուելի գործողութիւնները այն հետեւանքն ունեցան, որ 1797 թուի մայիսի 23-ին Իրլանդիան նորից ապստամբութեան դրօշակ պարզեց։ Կռւում էին մեծ մասամբ կաթոլիկ գիւղացիները. Նրանց մի խումբը, բաղկացած 14,000 հոգուց՝ գրաւեց Վէքսֆորդ բերդը։

Ֆրանսիայից նոր օգնութիւն ուղարկեցին, միայն շատ աննշան օգնութիւն (ընդամենը 900 մարդ)։ Բայց այլեւս ուշ էր։ Անգլիացիները արեան հեղեղների մէջ խեղդեցին ապստամբութիւնը և դարձեալ սկսեցին սարսափելի հալածանքներ ու խստութիւններ։ Այս անգամ Պիտտ վճռեց միանգամայն ջնջել Իրլանդիայի անկախութիւնը։ Այս միտքը իրագործելու յարմար ժամանակն էր։ Իրլանդիան քանդուած ու ոչնչացած էր։ Ապստամբութիւնը 70 հազար մարդ էր ոչնչացրել. սարսափները հետեւում էին միմեանց. հարիւրաւոր մարդիկ էին կախւում, հունձը փչացրել էին զօրքերը և սկսուել էր սով։ 1799 թուին իրլանդական պարլամենտին առաջարկուեց ընդունել մի օրէնք, որով Իրլանդիան միանում էր Անգլիայի հետ և զըրկւում էր իր ինքնավարութիւնից, տեղական պար-

լամենտից։ Որքան և իռլանդական պատգամաւորները վաճառուող ու կառավարութեան նուիրուած մարդիկ էին՝ բայց առաջարկութիւնը մերժուեց 109 ձայնով ընդդէմ 104-ի։ Այն ժամանակ Պիտտ դիմեց կաշառքների միջոցին. պարլամենտի անդամներին բաժանուեց $1^1/_2$ միլիոն ստերլինգ. ընտրութիւնների ժամանակ զանազան անձանց, մանաւանդ կալուածատէրերին, տուին 1,260,000 ստերլինգ։ Երբ այսպիսով ձեռք բերուեց օրինագծին համակրողների մեծամասնութիւնը՝ ժողովրդի մէջ սկըսուեց սարսափելի զայրոյթ. ամեն տեղերից բողոքում էին։ Միացման դէմ մի հանրագիր տուին, որի վրայ կային 700,000 ստորագրութիւններ, այնինչ կողմնակիցները կարողացել էին ձեռք բերել միայն 7000 ստորագրութիւն։

1800 թուի ամառը միացման օրինագիծը նորից առաջարկուեց պարլամենտին։ Համայնքների ժողովը ներկայացնում էր մի փառահեղ տեսարան։ Կաշառուած, անպատիւ մեծամասնութեան դէմ դուրս եկաւ տաղանդաւոր, ազնիւ մարդկանց փոքրամասնութիւնը և կատաղի կռիւ սկսեց Իռլանդիայի անկախութեան համար։ Վիճաբանութիւնները անընդհատ շարունակուեցան 15 ժամ և մի ամբողջ գիշեր, երբ յանկարծ, առաւօտեան մօտ ժամի 7-ին, համայնքների ժողովը սթափուեց իր թմրութիւնից. դռները բացուեցան, և մի հիւանդ, համարեա կիսամեռ մարդ ներս բերուեց բազկաթոռի վրայ։

Դա Գրատտանն էր, այն մարդը, որ 1782 թուին ստեղծել էր իրլանդական անկախ ազգը։ Այժմ նա շատ ծանր հիւանդ էր, բայց ուրուականի պէս երևաց իրանց երկիրը վաճառողների առաջ՝ որ բողոքէ միացման դէմ։ Մի ամբողջ ժամ տևեց նրա ճառը։ «Այն իրը, որ ուզում է գնել մինիստրութիւնը՝ անկարելի է ծախել. դա մի ամբողջ երկրի ազատութիւնն է»։ Այս խօսքերով նա վերջացրեց իր առաջին հրաշալի ճառը։ Բայց աւաղ, աննման պերճախօսութիւնը, որ բոլոր անգլիացիներին հիացում էր պատճառում՝ անկարող եղաւ փրկել Իրլանդիան. վաճառուածների մեծամասնութիւնը քարացած էր։ Գրատտան նորից խօսեց, և ապացուցանելով թէ չէ կարող միացում լինել առանց տեղական ինքնավարութեան, թէ «առանց սրտերի դաշնակցութեան, առանց առանձին կառավարութեան՝ եղած միացումը խորտակումն է, անպատուութիւն, նուաճութիւն է և ոչ թէ միութիւն»՝ ասաց. «Բայց ես դարձեալ չեմ յուսահատւում։ Ես տեսնում եմ իմ հայրենիքը ուշաթափութեան մէջ, բայց նա չէ մեռել։ Թէև նա պառկած է դագաղի մէջ անօգնական և անշարժ՝ բայց նրա բերանի վրայ նկատելի է կեանքի ոգին, իսկ թշերի վրայ—գեղեցկութեան կարմրութիւնը։ Եւ ես կըմնամ նրա մօտ, հաւատալով նրա երջանկութեան, հաւատալով նրա անկախութեան, հաւատալով նորան, այդ ընկածին»։ Երբ նախագահը ծանր կեր-

պով արտասանեց, թէ ով միացման կողմն է, թող բարձրացնէ ձեռքը՝ միմեանց յետեից դանդաղ, վախվախելով բարձրացան 118 ձեռքեր։ Առաջարկութիւնն անցաւ. միացման դէմ էին միայն 73 հոգի։

Անգլիական պարլամենտում ազնիւ, ազատամիտ մարդիկ դէմ էին այս միացման։ Բայց իզուր էր ամեն մի հակառակութիւն։ Օգոստոսի մէկին թագաւորը հաստատեց պարլամենտական վճիռը, որով ոչնչացնում էր Իրլանդիայի անկախութիւնը «Իրլանդիան վաճառուած է», ասում էր ժողովուրդը։

Բայց սրանով, իհարկէ, չը լուծուեց իռլանդական հարցը...

Ահա թէ ինչ էր հին Անգլիան։

ԺԹ դարի սկզբում, ինչպէս տեսանք, նոյնիսկ ազատամիտ անգլիացիներն էլ, որոնք կը կամենային օգնութեան հասնել խեղճ ժողովրդին՝ հայրենասիրութիւն էին համարում լռել, նոր մաքեր չը յարուցանել, պահպանել հին կարգերը։ 1814 թուին հին Անգլիան շատ զօրեղ էր և չէր ուզում ոչ մի բան փոխել։ Բայց հէնց որ խաղաղութիւն հաստատուեց Եւրոպայում, և Նապօլէօնի ահը վերացաւ՝ արմատական կուսակցութիւնը շարժում սկսեց։ Առանձին առանձին մարդիկ ան-

նշան, թեթև բարեկարգութիւնների ծրագիրներ էին մտցնում պարլամենտը։ Նրանք գիտէին, որ այդ ծրագիրները պիտի մերժուեն, բայց և այնպէս շարունակում էին իրանց գործը, որպէս զի հասարակութիւն չարժեն, հարկադրեն մարդկանց մտածել այդ նոր խնդիրների վրայ։ Հասարակութեան մէջ էլ սկսեցին խօսել, դատել, և ահա այդ ժամանակներից Անգլիայում առաջ է գալիս մի նոր երևոյթ—հասարակական կարծիք քաղաքական հարցերի վերաբերմամբ։ Այդ նոր երևոյթին նպաստում էին լրագիրները, որոնք հիմնուել էին անցեալ դարի երկրորդ կէսում։ Կառավարութիւնը սկզբից շատ խէթ աչքով էր նայում պարբերական մամուլին, նկատելով նրա մէջ մի նոր ոյժ։ Մամուլը ենթարկուեց խիստ սահմանափակումների. ամեն մի թեթև զանցառութեան համար խմբագիրներին բանտարկում էին, նոյն-իսկ աքսորում։ Բացի դրանից, մամուլը ճնշուած էր հարկի տակ. 1815 թւին լրագրի իւրաքանչիւր թերթից առնում էին 4 պէնս ($15^{1}/_{2}$ կոպէկ). թղթի վրայ էլ հարկ դրին։ Բայց չը նայած այս արգելքներին՝ պարբերական մամուլը օր օրի վրայ զարգանում էր։ 1815-ին հրատարակւում էին 6 ամենօրեայ լրագիրներ, և նրանց մէջ ամենաուժեղը «Times» լրագիրն էր, որ ունէր 8000 բաժանորդ։ Պահանջը գնալով աւելանում էր. քաղաքական հարցերը արծարծւում էին թէ պարլամենտի նիստերում և

թէ մամուլի մէջ։ Կռիւը հին կարգերի դէմ, որոնց այնպիսի յամառութեամբ գրկել էին Թագաւորը և պահպանողականները՝ օրուայ հարց դարձաւ։

Արմատականները, չը նայած որ շատ փոքրաթիւ էին՝ համոզուած միջոցների դիմեցին, որպէս զի ժողովրդականացնեն այն միտքը, թէ պէտք է փոխել ընտրութեան կարգերը։ 1816 թուին Անգլիայում առեւտրական ճգնաժամ սկըսուեց. գործերը կանգ առան և սով տարածուեց։ Անգործ մնացած բանուորների ահագին բազմութիւնը անկարգութիւններ էր անում։ Կարծելով թէ գործերը պակասել են միայն այն պատճառով, որ նոր շոգեշարժ մեքենաներ են դուրս եկել՝ բանուորները մի քանի տեղերում փշրեցին մեքենաները։ Բայց դրանով ցաւին դարման չէր կարելի անել։ Ճիշտ է, 1780 թուականներից սկսած՝ Անգլիայում մեքենան խլել էր արհեստաւորի հացը, առաջ բերելով գործարանական կեանքը. ճիշտ է, գործարանները ստրկացրել էին աշխատաւոր դասակարգը, մտցնելով նրա կեանքի մէջ անբարոյականութեան, ծանր աշխատութեան քայքայիչ դըժբախտութիւնները. բայց կռիւ մղելով մեքենաների գործարանի դէմ՝ բանուորը չէր կարող վերացնել նրանց և վերադառնալ հին դրութեան՝ երբ ձեռքի աշխատանքն էր տիրում։ Գործարանները անհրաժեշտ կարիք էին դարձել, բազմանում էին զարմանալի արագութեամբ։ Պէտք էր

քանուորական դասակարգի համար գտնել ուրիշ ճանապարհ։ Արմատականները օգուտ քաղեցին այդ խլրտումներից և քարոզեցին, որ ամենքը պահանջեն ընտրողական իրաւունք։ Նրանք անհագին միտինգներ գումարեցին, պարզեցին իրանց միտքը. բազմամարդ թափօրները տանում էին դրօշակներ, որանց վրայ գրուած էր, թէ ինչ է ուզում ժողովուրդը։ Մի մեծ ժողովի առաջ կախուած էր մի անհագին յայտարարութիւն, որ այսպէս էր նկարագրում Անգլիայի դրութիւնը. «4 միլիոն մարդիկ ամենադառն տնանկութեան մէջ. 4 միլիոն աղքատներ. $1^{1}/_{2}$ միլիոն կիսով չափ աղքատներ. $^{1}/_{2}$ միլիոն շլացուցիչ փարթամութեան մէջ ապրողներ. մեր եղբայրները Իռլանդիայում աւելի վատ դրութեան մէջ են»։ Աղքատութիւնը միացել էր յեղափոխութեան հետ։ Բայց կառավարութիւնը զօրքեր հանեց այդ միութեան դէմ։ Պետութեան խնամակալը, Գէորգ Գ-ի որդին, ասաց պարլամենտում, որ ընտրողական կարգերը ամենակատարեալն են երբ և իցէ գոյութիւն ունեցած կարգերի մէջ։ Երբ նա վերադառնում էր պարլամենտից՝ ամբոխը ցեխ և քարեր էր գցում նրա կառքը և կանչում էր. «Չենք ուզում խնամակալ պրինցին. կորչէն մինիստրները»։ Այդ պատճառով մի շարք խիստ միջոցներ ձեռք առնուեցան։ Բանուորները մի քանի ցոյցեր էլ արին, բայց երբ անցաւ անգործութեան

ծանր ժամանակը՝ շարժումը ինքն ըստ ինքեան անհետացաւ:

Անգլիայի արհեստաւորները դարձեալ շարժուեցան 1819 թուին գործաւոր գործերը կանգնեցին, և աղքատ դասակարգի կարօտութիւնը սաստկացաւ: Այս անգամ արհեստաւորները սկսեցին գործել Մանչեստրում: Օգոստոսին մի ահագին ժողով կայացաւ Մանչեստրի մօտ, Պետերլօօ տեղում, ուր հաւաքուեցաւ 80,000 մարդ. խումբ-խումբ բանուորներ առնում էին դրօշակներ, որոնց վրայ գրուած էին. «Հացահատիկների մաքսի վերացում. ազատութիւն և եղբայրութիւն», «Ընտրողական իրաւունք ամենքի համար կամ մահ»: Մասնակցում էին և մեծ թուով կանայք: Կառավարութիւնը արգելել էր այդպիսի մեծ ժողովներ, և երբ մէկը ուզեց ճառ ասել՝ ոստիկանութիւնը փորձեց կալանաւորել նրան. բայց ամբոխը ընդդիմացաւ ոստիկաններին: Այդ ժամանակ հուսարների գունդը յարձակուեց ժողովի վրայ. շատերը սպանուեցան, հարիւրաւոր մարդիկ ծանր վէրքեր ստացան: Բռնութիւնը, ի հարկէ, աւելի ոյժ տուեց արհեստաւորներին. նրանք բողոքներ տպեցին, սկսեցին նուէրներ հաւաքել «Պետերլօօի կոտորածի» զոհերի համար: Իսկ կառավարութիւնը պարլամենտում անց կացրեց վեց հատ խիստ օրէնքներ, որոնք ուղղուած էին արհեստաւորների դէմ և ստացան «խցան» (բերանների խցան) անունը: Կատաղած

արմատականները դատավորութիւն սարքեցին՝ բոլոր մինիստրներին կոտորելու համար, բայց կառավարութեան և դատաւորներից հինգը կախաղան հանուեցան։ Բանուորների շարժումը դարձաւ դադարեց։

1820 թուին Անգլիայի գահը բարձրացաւ Գէորգ Դ. ժողովուրդը հէնց սկզբում ցոյց տուեց, թէ որքան ատում է այդ արքեցող, անբարոյական, կոպիտ և վատնող մարդուն։ Նոյն-իսկ մինիստրները, ազնուականութիւնը դժգոհ էին նրանից։ Նա մի խայտառակ գործ սկսեց իր օրինաւոր կնոջ, Կարոլինայի դէմ և պարլամենտին ուղարկեց այդ գործը, պահանջելով ապահարզանի որոշում կայացնել։ Լորդերի պալատում, ուր քննւում էր թագուհու դանգատը՝ երկու կողմի փաստաբանները խայտառակ մանրամասնութիւններ պատմեցին ամուսինների անհաւատարմութեան մասին։ Թէև երկուսն էլ մեղաւոր էին՝ բայց լորդերը միայն 9 ձայնի առաւելութեամբ ընդունեցին Գէորգի դանգատի հիմնաւորութիւնը։ Դա մի այնպիսի հարուած էր թագաւորի դէմ, որ մինիստրութիւնը յետ վերցրեց առաջարկութիւնը և գործը չանցահամայնքների ժողովը։ Թագաւորութեան օրը թագուհին Կարոլինան վռնտուեց Վեստմինստրեան եկեղեցուց։ Եւ երբ խեղճ կինը մեռաւ յուզմունքից, ժողովուրդը, չը նայած կառավարութեան արգելքին

և զօրքերի գնդերին՝ մեծ հանդէսով թաղեց անառակ թագաւորի ամուսնուն։

Թէև տօրիների կառավարութիւնը դարձեալ զօրեղ էր, բայց մի կողմից թագաւորի վարքը, միւս կողմից նոր գործիչները, որոնք երևացին նրա շարքերում՝ նպաստաւոր դրութիւն ստեղծեցին ժողովրդական իրաւունքների համար։ Մինիստրութեան մէջ հեղինակութիւն ձեռք բերին այնպիսի մարդիկ (Ռօբերտ Պիլ, Գէորգ Կաննինգ), որոնք որևէ բարեփոխութիւն մտցնելու մըտքին այնքան էլ հակառակ չէին։ Պարլամենտը զիջողութիւններ անել սկսեց։ Այսպէս, Պիլ կարողացաւ ջնջել տալ օրէնքից մօտ հարիւր յօդուածներ, որոնք մահուան պատիժ էին սահմանում նոյն-իսկ թեթև յանցաւորների համար։ Բանուորական դասակարգին թոյլ տրուեց փոխադարձ ինքնօգնութեան ընկերութիւններ կազմել. դրսից ներմուծուող հացահատիկների մաքսը թեթև փոփոխութիւնների ենթարկուեց։ Կիսատ պռատ, աննշան միջոցներ էին դրանք։

Բայց մի նշանաւոր գործ, որը մեծ դժուարութեամբ աջողեցրեց Ռօբէրտ Պիլ՝ կաթոլիկներին իրաւունք շնորհելն էր։ Մենք գիտենք, թէ ինչ հալածանքներ էին սահմանուած կաթոլիկների դէմ։ 1813 թուականից բազմաթիւ փորձեր եղան այդ անարդարութիւնները վերացնելու համար, բայց միշտ անաջող. համարեա ամեն տարի հարցը

տուաջարկւում էր պարլամենտին, և միայն 1821 թուին նա անցաւ համայնքների ժողովում, բայց լօրդերի պալատը մերժեց։ Գէորգ Դ յայտարարեց, որ ինքն էլ հակառակ է և չի թոյլ տալ, որ անգլիկան եկեղեցու իրաւունքները խախտուեն։ Այն ժամանակ Անգլիայի դէմ դուրս եկաւ իրլանդացի փաստաբան Դանիէլ Օ'Կօննէլ։

Այս մարդը, որ Եւրոպայում անհագին ժողովրդականութիւն ստացաւ՝ ներկայացնում էր հարստահարուած, տրնաքամ Իրլանդիան։ 1800 թուից յետոյ նա սկսեց իր դժբախտ հայրենիքում մի գործունէութիւն, որի նպատակն էր պատրաստել իրաւազուրկներին, ցոյց տալ նրանց, որ միայն անխոնջ մաքառման միջոցով կարելի է ձեռք բերել այն՝ ինչ անգլիացիները խլել են դարերի ընթացքում։ Օ'Կօննէլի նպատակն էր՝ խաղաղ, օրինական միջոցներով մղել կռիւ, մինչև որ Իրլանդիան կը ստանայ ազատութիւն։ Նա դէմ էր յեղափոխութեան, թէև պարտք էր համարում մի-մի վախեցնել անգլիացիներին, ցոյց տալով, թէ Իրլանդիան յուսահատութիւնից կարող է և յեղափոխութեան դիմել։ Այդ հսկայական պայքարի մէջ Օ'Կօննէլին օգնում էր կաթոլիկ հոգևորականութիւնը։ Լինելով տաղանդաւոր ճառախօս՝ նա ման էր գալիս երկրի զանազան կողմերը, տարածում էր իր գաղափարները, իսկ կաթոլիկ քահանաները ամեն տեղ քարոզում էին, որ ժողովուրդը հետևի

իր ազատագրողին։ 1823 թուին Օ'Կօննէլ հիմնեց «կաթոլիկական միութիւն» անունով մի քաղաքական ընկերութիւն, որի նպատակն էր պաշտպանել կաթոլիկների իրաւունքները։ Պարլամենտը պատասխանեց Օ'Կօննէլին, հրատարակելով մի օրէնք, որ արգելում էր այդպիսի ընկերութիւնները։ Կաթոլիկական միութիւնը փակուեց, բայց չուշով էլի վերակազմուեց նոր կանոններով։ Մինիստրութեան մէջ էլ նկատուեց հաստատուած բարեհաճ տրամադրութիւն դէպի կաթոլիկները։ Այսպէս, Գէորգ Կաննինգ, 1827 թուին ստանձնելով առաջին մինիստրի պաշտօնը՝ վճռեց իրաւունքներ տալ կաթոլիկներին։ Օ'Կօննէլ, սակայն, չը սպասեց, թէ երբ մինիստրութիւնը իր կամքով մի քանի կանէ և վճռեց հարցը լուծել գործնականապէս։ Այդ նըպատակով նա 1828 թուին Իրլանդիայում պատգամաւոր ընտրուեց։ Դա կատարեալ յանդգնութիւն էր երեւում, որովհետև Օ'Կօննէլ, իբրև կաթոլիկ, իրաւունք չունէր պատգամաւոր ընտրուել և մտնել համայնքների ժողովը։ Մինիստրութիւնը կամ պիտի ջնջունէր այդ ընտրութիւնը կամ բացարձակ կռիւ յայտարարէր իրլանդացիներին։ Վերջին միջոցը վտանգաւոր էր. ուստի 1829 թուին Ռօբերտ Պիլ վճռեց առաջարկել համայնքների ժողովին կաթոլիկների իրաւունքները որոշող մի օրինագիծ։ Թագաւորը համաձայնութիւն տուեց, բայց լացելով նա վերցրեց իր խօսքը։ Պիլ հրաժարուեց,

և որովհետև ոչ ոք չուզեց բռնել նորա տեղը՝ թագաւորը հարկադրուած եղաւ նորից նորան հրաւիրել։ Օրինագիծը այս անգամ անցաւ. կաթոլիկները ստացան պատգամաւոր ընտրուելու իրաւունք, այլ և մի քանի ուրիշ արտօնութիւններ։

1830 թուին մեռաւ Գէորգ Դ և նորան յաջորդեց Վիլհէլմ Դ, որ իր եղբօր նախորդների նման բարենորոգութիւնների անհաշտ թշնամի չէր։ Ազատամիտ կուսակցութիւնը, նպաստաւոր հանգամանքները տեսնելով՝ նորից առաջ քաշեց ընտրողական ռէֆորմի ծրագիրը, որը առժամանակ դէմ էր դրել՝ արտաքնականների չարաժամանս պատճառով 1830 թ. ընդոստութիւնների ժամանակ. պահպանողականները աննշան մեծամասնութիւն ստացան։ Ֆրանսիայում այդ տարին տեղի ունեցած յեղափոխութիւնը ոգևորեց ռէֆորմիստների կողմնակիցներին։ Մի քանի տեղերում կազմակերպուան բանուորների քաղաքական ընկերակցութիւններ, որոնք ընդարձակ չափերով քարոզում էին ռէֆորմի անհրաժեշտութիւնը։ Սակայն տօրիները դեռ ուժեղ էին կանգնած. և երբ ազատամիտների պարագլուխ լորդ Գրէյ լորդերի պալատում ճառ տուեց ընտրութիւնների ձևը բարեփոխելու մասին՝ պահպանողականների պարագլուխ Վէլլինգտոն պատասխանեց, թէ ինքը չը գիտէ մի պատճառ, որ ցոյց տար թէ հարկաւոր է փոփոխութիւն մտցնել ընտրողական կարգերի մէջ։ Այս յայտարարութիւնը մի-

նիստրութեան տապալման պատճառ դարձաւ։ Թագաւորը մինիստրութիւնը յանձնեց լորդ Գրէյին, որ պատրաստ ունէր ընտրողական ռէֆօրմի ծրագիրը։

Ազատամիտների պահանջը բաւական համեստ էր։ Ենթադրւում էր ոչնչացնել «փտած տեղերը» և նրանց պատկանող 119 պատգամաւորական տեղերը տալ աւելի մեծ ազգաբնակութիւն ունեցող քաղաքներին։ Պատգամաւորների թիւը համայնքների ժողովում մնում էր նոյնը։ Այսքան չափաւոր պահանջն էլ չօգնեց ազատամիտներին. ծրագիրը համայնքների ժողովում հեգնական ծիծաղ յարուցեց. պահպանողականները միահամուռ ջանք գործ դրին և օրինագիծը միայն մի ձայնի առաւելութեամբ ընդունուեց։ Լորդ Գրէյ ստիպեց թագաւորին արձակել պատգամաւորների ժողովը։ Նոր ընտրութիւններ նշանակուեցան, և ազատամիտները յաղթութիւն տարան։ Համայնքների ժողովը ընդունեց ռէֆօրմի օրինագիծը։ Բայց նոր արգելք.— լորդերի պալատը մերժեց նրան։ Հասկանալի է, թէ ինչ զայրոյթ էր պատճառում ժողովրդին մի խումբ արտօնուածների այս յամառ դիմադրութիւնը։ Սկըսուեց յուզմունք. կայացան բողոքի բազմաթիւ միտինգներ, ցոյցեր։ Բիրմինգէմի քաղաքական դաշնակցութիւնը յայտարարեց, որ եթէ ընտրական ռէֆօրմը չընդունուի՝ ինքը կը դադարեցնէ հարկեր տալը։ Համայնքների ժողովը երկրորդ անգամ ըն-

դունեց օրինագիծը. լորդերը այս անգամ քաջութիւն չունեցան մերժել, ուստի սկսեցին այլանդակել ներկայացրած ծրագիրը։ Իշխող մինիստրութիւնը սպառնում էր լորդերին, հաւատացնելով որ նրանց յամառութիւնը ժողովրդական ապստամբութեան պատճառ կը դառնայ։ Երբ այդ միջոցն էլ չօգնեց՝ մինիստրութիւնը դիմեց Թագաւորին, խնդրելով որ նա հարկադրէ լորդերին ընդունել ծրագիրը ամբողջութեամբ։ Թագաւորը կարող էր այդ բանը անել, քանի որ նրա իրաւունքն էր նոր լորդեր նշանակել և այդպիսով խախտել օրինագծին հակառակուող մեծամասնութիւնը։ Բայց նա չուզեց այդ միջոցին դիմել և ընդունեց լորդ Գրէյի հրաժարականը։ Սակայն ժողովրդական պահանջները այնքան խիստ էին, որ տօրիները չը համարձակուեցան կառավարութեան գլուխ անցնել, և Վիլհէլմ ստիպուած էր նորից դիմել Գրէյին, խոստանալով նոր լորդեր նշանակել։ Միայն այդ ժամանակ լորդերի պալատը զիջեց և ինքն էլ ընդունեց նոր օրինագիծը 9 ձայների առաւելութեամբ (1832 թ.)։

Այսքան դժուարութիւններով ձեռք բերած րէֆօրմը ընտրողական իրաւունք էր տալիս մօտ 400,000 մարդկանց։ Բանուորների մեծամասնութիւնը դարձեալ զրկուած մնաց այդ իրաւունքից. ընտրութիւնների կարգերը մնում էին նոյնը։ Բայց

որքան էլ չնչին լինէր ազատամիտների ազդու-թիւնը՝ առաջին քայլը արուած էր։ Համայնքների ժողովը այնուհետև ազգի ներկայացուցիչն էր դառ-նում և նրա միջոցով ժողովուրդը ձեռք էր բե-րում իր երկրի կառավարութիւնը։ Հին Անգլիան ջարդ ու փշուր էր դառնում։

Գ.

Նիւ-Արկի պատգամաւորը։ — Բանուորական շարժում և «Չարտիստներ»։ — Օ'Կօննէլ և Իռլանդիա։ — Գլադստօն — կրօնական բանակալութեան ջատագով։ — Մաքսային բարեփոխումներ։ — Առաջին արշաւանք արտօնուած դասակարգի դէմ։ — Սով Իռլանդիայում։ — Հացահատիկների մաքսը։ — Իռլանդական յեղափոխութիւն։ — Հերձուած պաշտպանողական կուսակցութեան մէջ։ — Պալմերստօն և արտաքին քաղաքականութիւն։ — Դօն-Պաչիֆիքօի գործը։ — Բողոք անարդարութեան դէմ։ — Գլադստօն և «Բումբ-Թագաւորի» բարբարոսութիւնները։ — Հռչակաւոր նամակներ։ — Դաշինների պարտութիւնը։

Համալսարանից դուրս գալուց յետոյ Գլադստօն գնաց ճանապարհորդելու։ 1832 թուին նա գտնւում էր Իտալիայում՝ երբ Նիւ-Կէստլի դուքսը առաջարկեց նրան պատգամաւոր ընտրուել Նիւ-Արկ անունով տեղում։ Դուքսը, ինչպէս գիտենք՝ Գլադստօնին ճանաչում էր իր որդու նամակներով, որոնք գրուած էին Օքսֆորդից։ 22 տարեկան երիտասարդը ընդունեց այդ առաջարկութիւնը և գնաց Անգլիա՝ իր ընտրողներին ներկայանալու և իր քաղաքական դաւանանքները հրապարակ հա-

նելու համար։ Այդ դաւանանքները—ինչ խօսք— նոյնն էին՝ ինչ որ համալսարանում, այսինքն պահպանողական։ Եւ ուրիշ կերպ նա չէր էլ արժանանալ Նիւ-Կէստլի դուքսի հովանաւորութեան։ Ընտրողների առաջ Գլադստօն յայտնեց, թէ ինքը կուսակցութիւններից անկախ մարդ է։ Բայց և այնպէս ասաց, որ ինքը չը պիտի հետևի յաճախ փոփոխութիւններ մտցնելու վտանգաւոր մօդային, այսինքն որ ինքը րէֆօրմների հակառակորդ է։ Ապա Աստուածաշունչից վկայութիւններ բերելով հաստատեց որ ստրկութիւնը պէտք է պահպանուի։ Ստրուկ նեգրերին Գլադստօն առաջարկում էր նախ բարոյապէս ազատել, ամենքին քրիստոնեայ դարձնելով, և ապա միայն տալ ֆիզիքական ազատութիւն, մարդկային իրաւունքներ։

Այդ ճառը, իհարկէ, դուր չեկաւ Նիւ-Արկի ընտրողներին. ահագին մեծամասնութիւնը նրա դէմ էր։ Բայց ինչ վնաս։ Նիւ-Արկը «գրպանի տեղերից» մէկն էր և պարտաւոր էր ընտրել՝ ում դուքսը կը կամենայ։ Դուքսը Գլադստօնին էր ուզում, և սա պատգամաւոր դարձաւ ու համայնքների ժողովում նստեց պահպանողականների նստարանների վրայ։

Կային երկու կարևոր հերթական հարցեր— ստրկութեան վերացումը և Իրլանդիայի խռովութիւնները։ Պարլամենտին առաջարկուած էր՝ ազատութիւն տալ անգլիական գաղթականութիւնների

մէջ եղած բոլոր ստրուկ նեգրերին և այդ առիթով երկար վիճաբանութիւններ էին տեղի ունենում։ Գլադստօն կրկնում էր համարեա նոյնը՝ ինչ յայտնել էր իր ընտրողներին *)։ Իսկ Իրլանդիայում դեռ 1831 թուին ծագել էր յամառ ապստամբութիւն։ Իրլանդացի կաթոլիկները թէև մի քանի իրաւունքներ ստացել էին, բայց դարձեալ անբաւական էին. Նրանք չազատուեցան այն տասանորդական հարկից, որ տալիս էին անգլիկան եկեղեցուն։ Ժողովուրդը, ոգևորուած Օ'Կօննէլի կրակոտ ճառերից՝ չէր ուզում վճարել այդ հարկը։ Անգլիկան հոգևորականութիւնը ահագին վնասներ էր կրում. կառավարութիւնը ինքը սկսեց հաւաքել տասանորդը զինուորների սուինների օգնութեամբ։ Իրլանդացիները բռնութեան պատասխանեցին կըրակով ու արիւնով. Նրանք սպանում էին հարկահաններին, սպառնում էին այն մարդկանց, որոնք ուզում էին վճարել հարկը, կրակ էին տալիս ագարակները, ոչնչացնում էին ցանքսերը, կոտորում էին անասունները. 1832 թուին այդ տեսակ յանցանքների թիւը հասաւ 9,000-ի։ Կառավարութիւնը պահանջեց պարլամենտից՝ իրաւունք տալ մի շարք ամենախիստ միջոցներ ձեռք առ-

---

*) Չը նայած պահպանողականների յամառ դիմադրութեան՝ նեգրերի ազատութեան օրինագիծը ընդունուեց 1833 թուին։

նելու իռլանդացիների դէմ․ Գլադստոնը բողոքեց այդ միջոցների դէմ, ընդհակառակն, պաշտպանում էր անգլիական եկեղեցու շահերը։

Սակայն այսպիսի յետադէմ ուղղութեամբ էլ նա լաւ տպաւորութիւն էր թողնում ամենքի վրայ։ Ադմինիստրատական գործնական ընդունակութիւնները, անկեղծութիւնը, պարզութիւնը, դէպի հակառակորդն ունեցած չափաւոր և բարեխիղճ վերաբերմունքը նրան շատ դուրս բերին պարլամենտական հասարակ գործիչների շարքից։ Այդ է պատճառը, որ երբ 1834 թուին մինիստրութիւնը անցաւ պահպանողականների ձեռքը՝ Ռոբէրտ Պիլ առաջարկեց Գլադստոնին ֆինանսների մինիստրի օգնականի պաշտօնը։ Բայց շատ կարճ էր այդ պաշտօնավարութիւնը․ մի քանի ամսից յետոյ Պիլի մինիստրութիւնը տապալուեց։ Եւ այնուհետև մինչև 1841 թիւը Գլադստոն լոկ պատգամաւոր էր։

Այդ ժամանակամիջոցում նա ականատես էր մի շարք նշանաւոր անցքերի, որոնք առաջին նշանակութիւն ունէին Անգլիայի համար և, անկասկած, շատ ազդեցին Գլադստոնի ապագայ գործունէութեան վրայ։

Միայն Թշուառ Իռլանդիան չէր, որ խանգարում էր անգլիական արիստոկրատիայի հանգստութիւնը։ Վաղուց էր նա կռւում իր ազատութեան համար։ Եւ եթէ կռիւը այժմ աւելի կատաղի էր, աւելի լաւ կազմակերպուած՝ դրա պատճառն այն

էր, որ Օ'Կօննէլ հիանալի կերպով օգտւում էր իր ազգի բարոյական կենսունակ ուժերից։ Նա կըրթել էր իրլանդացիներին, դարձրել էր նրանց ազատութեան ֆանատիկոս զինուորներ։ Իրլանդիան հասկանում էր, որ իրան ամենից առաջ հարկաւոր է քաղաքական անկախութիւն, ու մի սիրտ, մի հոգի դարձած՝ կրկնում էր այն՝ ինչ ասում էր Օ'Կօննէլ։ Միայն դաշոյնը չէր նրա դատի պաշտպանը. դպրոցները բազմանում էին, բարոյական կրթութեան ոյժը լայն ծաւալ էր ընդունում։ 1834 թուին Օ'Կօննէլ առաջարկեց պարլամենտին, որ ջնջուի 1800 թուականի միաւորման օրէնքը և Իրլանդիան ստանայ իր անկախ կառավարութիւնը։ Ինն գիշեր շարունակւում էին վիճաբանութիւնները։ Մի ճառի մէջ, որ տևեց վեց ժամ, Իրլանդիայի «ազատողը» պատմեց, թէ ինչ յանցանքներ է Անգլիան գործել իր հայրենիքում և ապացուցանում էր որ Իրլանդիան, դառնալով անկախ՝ կը լինէր Անգլիայի հաւատարիմ բարեկամը թէ երջանկութեան և թէ դժբախտութեան ժամանակ և այլևս Անգլիայի խայտառակութիւնը, թուլութիւնը և վտանգը չէր լինի։ Բայց առաջարկութիւնը մերժուեց 485 ձայների բազմութեամբ. կառավարութիւնը, սակայն, խոստացաւ նշանաւոր ռէֆօրմներ և թեթևութիւններ շնորհել իրլանդացիներին։ Եւ Օ'Կօննէլ վճռեց սպասել վեց տարի, փորձելու համար, թէ որքան ճիշտ է այդ խոստումը։ Սպասել

և միշտ պատրաստ լինել—այդ էր հռչակաւոր գործիչի ծրագիրը։ Իրլանդիան իր դատից ձեռք չէր վերցնում, միշտ սպառնում էր անգլիացիներին։ Բայց, կրկնում ենք, միայն նա չէր Անգլիայի ցաւը։

Այն ժամանակ, երբ կառավարութիւնը պաշարման դրութիւն էր մտցնում Իրլանդիայում, արգելում էր իրլանդացիներին զէնք կրել և զինուորական ուժով էր խեղդում իրլանդացի հողագործի հեծեծանքները՝ բուն Անգլիայում նորից գլուխ բարձրացրեց բանուորական շարժումը։ 1832—1834 թուականները, ծանր ճգնաժամ էին անգլիական արդիւնագործութեան համար. մանաւանդ արդիւնաբերական քաղաքները մատնուեցան մեծամեծ դժբախտութիւնների։ Բանուորների օրավարձը պակասեց. աղքատութիւնը, որ առանց այդ էլ ահագին չափեր ունէր Անգլիայում՝ ծայրայեղութեան հասաւ։ Դեռ 1831 թուին Անգլիայի ազգաբնակութեան մի ութերորդ մասը—1,276,620 հոգի—ապրում էր կառավարութեան տուած նպաստներով։ Դրութիւնը այնքան անտանելի դարձաւ, որ կառավարութիւնը 1833-ին մի յատուկ յանձնաժողով նշանակեց աղքատութեան պատճառները և կարօտեալների կարիքը ուսումնասիրելու համար։ Քննութիւնը լոյս հանեց զարհուրելի փաստեր։ Մեծ քաղաքներում, օրինակ Լօնդօնում, Մանչէստրում, Լիվըրպուլում, ամենափարթամ հարստութեան կողքին բոյն էր դրած ամենասոսկալի աղքատութիւնը։

Տասնեակ հազարաւոր մարդիկ ապրում էին անասունների պէս, օդից ու լոյսից զրկուած, նեղ, խոնաւ բնակարաններում։ Ջերմախտը (տիֆը), հարինքը, թոքախտը աւերմունքներ էին գործում այդ դժբախտների մէջ։ Լիվերպուլում կային 7800 նկուղներ, որոնց մէջ բնակւում էին 40,000 բանւորներ։ Բայց ի՜նչ նկուղներ...Դրանց հարեւանցի նկարագրութիւնն անգամ սարսափ է ազդում։ Այսպէս էր քաղաքներում. իսկ գիւղերի դրութիւնը աւելի զարհուրելի էր։ Անբարոյականութիւնը, իհարկէ, պարարտ հող էր գտնում այդ իրական դժոխքում։ Բանուորը ազատ ժամանակը անց էր կացնում գինետան մէջ. ընտանիքի հիմքերը խախտուած էին։ Լօնդօնում կային 80,000 պոռնիկ կանայք. հաշուել են, որ այս թշուառներից տարեկան 8000 հոգի մեռնում են հիւանդութիւններից կամ անձնասպանութիւն են գործում։ Ապօրէն զաւակների թիւը 1835-ին՝ միայն Անգլիայում 71,298 էր։ Սաստիկ տարածուած էր և երեխաներ սպանելու յանցանքը։

Կարիքը առաջադիմութեան սկզբնապատճառըն է։ Սոված բազմութիւնը դուրս եկաւ իր թըշուառութեան որջերից և սկսեց պահանջներ անել։ Անցել էին այն ժամանակները, երբ աղքատը լուռ տանում էր իր թշուառութիւնը, հաւատալով որ աղքատութիւնը երկինքն է տալիս։ Այժմ անգլիական բանուորը գիտէր, որ իր դժբախտութեան

պատճառն այն է, որ ինքը ստրուկ, իրաւունքներից զրկուած է, արտօնուած դասակարգին ենթարկուած։ Նա պահանջեց, որ իրան էլ տրուին կառավարելու, վճիռներ կայացնելու իրաւունք. Եւ իրաւ, ինչ էին տալիս այն մարդիկ, որոնք իրանց ձեռքն էին անց կացրել բանուոր, հողագործ, արհեստաւոր դասակարգերը կառավարելու մենաշնորհը։ Ամբողջ կէս դար Անգլիան կառավարում էին պահպանողականները։ Նրանք շատ լաւ հասկանում էին, որ հին կարգերը անխախտ կը մնան միշտ՝ քանի հասարակ ժողովուրդը կը լինի տգէտ, անզարգացած։ Ուսում տալ աղքատին՝ նշանակում էր բաց անել նրա աչքերը, սովորեցնել նրան չը յարգել այն հիմնարկութիւնները, որոնք աղքատութեան պատճառն էին։ Արտօնուած դասակարգի շահերը պահանջում էին, որ աշխատաւոր մարդը քիչ վարձ ստանայ. այդ անարդարութեան հետ ինչպէս կարող էր հաշտուել աշխատաւորը՝ եթէ նա կրթուած, զարգացած լինէր։ Այդ էր պատճառը, որ տօրիները ժողովրդական կրթութեան մասին որևէ հոգ չէին տանում։ Եւ այժմ, երբ գործերի պակասութիւնը սով էր ստեղծել չքաւորների անհագին բազմութեան համար, ինչ էին անում նոյն այդ կառավարող դասակարգերը, այդ հարուստ արիստօկրատները։ Փոխանակ պատճառները քննելու, փոխանակ ճար ու միջոց գտնելու՝ նրանք զինուեցան աղքատութեան դէմ։ Տեսնելով

որ կառավարութեան միջոցներից աղքատներին տրուող ողորմութիւնը տարեցտարի ահագին գումարների է հասնում, որ այդ ողորմութեան մեծ մասը անցնում է պաշտօնեաների գրպանը կամ վատնւում է գինետներում՝ նրանք պակասեցրին նպաստների չափը։ 1835 թուին հրատարակուեց մի օրէնք, որի գլխաւոր սկզբունքը հետեւեալն էր. «Աղքատութիւնը մի ծանր յանցանք է, որի համար մեղաւորը պիտի պատժուի»։ Այս օրէնքով աղքատը իրաւունք չունէր նպաստ ստանալ իր տանը, այլ պիտի գնար բանւորական տները, ուր նրան հարկադրում էին կատարել ամենածանր աշխատանքներ։ Նրան բաժանում էին իր կնոջից, երեխաներից, և նա ենթարկուած էր վերատեսուչների կամայականութեան։ Միայն անճարութեան վերջին ծայրին հասած մարդն էր թոյլ տալիս իրան մտնել այդ բարեգործական բանտերը...

Եւ այսպէս, բանւորները պահանջում էին իրաւունքներ։ Նրանց առաջնորդ հանդիսացան արմատականները, որոնք կազմեցին պահանջների հետեւեալ ծրագիրը. 1) Ձայնատուութեան իրաւունք ամեն մի չափահաս մարդու համար, որ առողջ խելքի տէր է և որևէ յանցանք չէ գործել. 2) Պարլամենտը պիտի վերանորոգուի ամեն տարի, այսինքն ամեն տարի ընտրութիւններ լինեն. 3) Պարլամենտի անդամներին ռոճիկ տրուի, որպէս զի աղքատ մարդիկն էլ պատգամաւոր դառնան.

4) Ընտրութիւնները կատարուէին գաղտնի քուէարկութեամբ, որպէսզի վերացուին կաշառքները, և ուժեղ ու ազդեցիկ մարդիկ չը վախեցնեն ընտրողներին. 6) Վերացնել ընտրողական ցենզը և ընտրողական շրջաններին հաւասար իրաւունքներ տալ։

Այս ծրագիրը անուանւում էր «Ժողովրդական կանոնագիր» («խարտիա») կամ ինչպէս անգլիերէն ասւում է՝ «չարտ», որից ամբողջ շարժումը ստացաւ «Չարտիստների շարժում» անունը։ Բուն բանւորական շարժումը շուտ դադարեց՝ երբ արդիւնաբերութիւնը ազատուեց աննպաստ հանգամանքներից և սկսեց իր սովորական ընթացքը. բայց չարտիստների շարժումը, որ յաջորդեց բանւորական շարժման և դարձել բանուորների աջակցութեամբ և ուժերով էր առաջ գնում՝ տևեց մինչև 1839 թուականը։ Չարտիստների գործունէութեան կենտրոնը Բիրմինգէմ քաղաքն էր, բայց բոլոր մեծ կենտրոններն էլ համակրում էին նրանց պահանջներին։ Այսպէս, Մանչեստրում մի միտինգ կազմուեց, որին մասնակցում էին 300,000 մարդիկ. ճառախօսներից մէկը այսպէս ձևակերպեց բարենորոգութեան կողմնակիցների բաղձանքը. «Իւրաքանչիւր ազատ մարդ, որ շնչում է Աստուծու ազատ օդը և կոխ է տալիս Աստուծու ազատ հողը՝ իրաւունք ունի սեփական օջախի տէր լինելու»։ Մի ուրիշ քաղաքում գումարուեց նոյնպիսի

համակրական միտինգ, որին մասնակցում էին 40,000 կանայք։ Նկատենք և այն, որ բանուորական շարժման մասնակցում էր Ռօբէրտ Օուէն, հռչակաւոր մարդասէր և բարենորոգիչ Օուէնը, որ իր ամբողջ կեանքը նուիրել էր բանուորների դըրութեան բարուոքման, գեղեցիկ գործեր էր կատարել, բայց և այդպէս չէր կարողացել գլուխ բերել իր մեծ ծրագիրը։

Տօրիների կուսակցութիւնը սարսափելի կատաղութեամբ էր նայում բանուորական շարժման և պահանջում էր կառավարութիւնից խիստ միջոցներ ձեռք առնել։ Բայց անցել էր նրանց գերիշխանութեան ժամանակը. ազատամիտ կուսակցութիւնը, որի ձեռքում էր կառավարութեան ղեկը, թէև չէր ընդունում արմատականների ծրագիրը, թէև չափաւոր բարենորոգումների կողմնակից էր՝ բայց թոյլ տուեց որ ժողովուրդը ազատ հաւաքուի, խօսի իր կարիքների մասին։ Ազատամիտների համար շատ նպաստաւոր էր և այն հանգամանքը, որ 1837 թուին անգլիական գահը բարձրացաւ Վիկտօրիա թագուհին, 18 տարեկան մի օրիորդ, որ ազատամիտ ուղղութեամբ էր կըրթուած և որ կատարեալ պարլամենտական կառավարութիւն հաստատեց Անգլիայում, այսինքն մինիստրութիւնը յանձնում էր այն մարդկանց, որոնք մեծամասնութիւն ունէին պարլամենտում։

Վիկտօրիայի թագաւորութեան երկրորդ տա-

րին, 1838-ին, Անգլիայում դարձյալ առևտրական սաստիկ տագնապ սկսուեց։ Այդ ժամանակ Մանչէստրում գոյութիւն ստացաւ մի նոր շարժում—ազատ առևտրի կողմնակիցների շարժումը։ Նրա հոգին էր գործարանատէր Կոբդէն, Անգլիայի նշանաւոր գործիչներից մէկը, իսկ նրան օգնում էր հռչակաւոր հռետոր, արմատական Ջօն Բրայտ։ Կոբդէն պահանջում էր, որ ջնջուին հացահատիկների մուտքը արգելող օրէնքները, վերացուին հովանաւորող մաքսերը։

Եւ այսպէս, 30-ական թուականների վերջին, միաժամանակ երեք շարժումներ—իռլանդական, չարտիստների և ազատ առևտրի—կռւիւ էին յայտարարել անգլիական արիստոկրատիային։ Գլադստօն, իբրև պահպանողական կուսակցութեան անդամ՝ այս երեք շարժումներից միայն մէկի դէմ դուրս եկաւ հրապարակով։ Դա իռլանդական շարժումն էր։ 1838 թուին Օ'Կօննէլ նորից փորձեց ջնջել անգլիական եկեղեցու իրաւունքները Իռլանդիայում, բայց աջողութիւն չը գտաւ։ Այդ միջոցին էր որ Գլադստօն հրատարակեց իր առաջին քաղաքական բրօշիւրը, որ նուիրուած էր պետական եկեղեցու հարցին։ Նա ասում էր, որ պետութիւնը ունի իր խիղճը», հետևաբար նրա իրաւունքն է պարտաւորեցնել բոլոր քաղաքացիներին՝ պաշտպանել իր ընտրած եկեղեցին։ Իսկ երբ նրան պատասխանեցին, թէ այս սկզբունքը առաջ կը

քերէ կրօնական հալածանքներ՝ նա հասաւ այն աստիճանին, որ ասաց թէ պետութիւնը իր բարոյական պարտքը կատարելու համար կարող է հալածանքներից խուսափելը երկրորդական բան համարել։ Այս ֆանատիկոս-կղերական ուղղութեան մէջ Գլադստոն առաջին անգամ մի ուժեղ և համոզիչ դիմադրութեան հանդիպեց նշանաւոր կրիտիկոս և պատմաբան Մակօլէյի կողմից, որ անխնայ քննադատութեան ենթարկեց այդ գրուածքը։ Սակայն Մակօլէյ արժանապէս գնահատեց հեղինակի տաղանդը և ասաց, որ տօրիների կուսակցութեան մէջ մի նոր, փայլուն աստղ է ծագում։ Նա մասամբ չէր սխալւում. աստղ, ճիշտ է, ծագում էր, բայց ոչ պահպանողական կուսակցութեան համար... Բրօշիւրը մեծ տպաւորութիւն գործեց և կարճ միջոցում երեք անգամ հրատարակուեց։

Բայց Գլադստոն այս գրքի վրայ աշխատելիս՝ ստացել էր աչքերի հիւանդութիւն և բժիշկների խորհրդով առ ժամանակ գնաց Իտալիա։ Այստեղ նա ծանօթացաւ Ստեփան Գլին անունով մի մարդու ընտանիքի հետ և 1839-ին վերադառնալով Անգլիա՝ ամուսնացաւ նրա մեծ աղջկայ, Կատերինայի հետ և բաժինք ստացաւ Հօվարդէն ամրոցը, ուր ապրում էր նա մինչև վերջը։ Մի տարուց յետոյ նա հրատարակեց իր երկրորդ աշխատութիւնը, որ նոյնպէս վերաբերում էր եկեղեցական իրաւունքի հարցին և պաշտպանում էր

նոյն մտքերը, որոնք յայտնուած էին առաջին բրօշիւրի մէջ։

1839 Թ. փետրվարին չարտիստները ներկայացրին պարլամենտին մի խնդրագիր, որով պահանջում էին ընդունել իրանց առաջարկութիւնները։ Խնդրագրի տակ կային 1.200,000 ստորագրութիւններ։ Բայց համայնքների ժողովը ծաղրեց այդ առաջարկութիւնները և ձայների մեծամասնութեամբ վճռեց նոյն-իսկ քննութեան չենթարկել նրանց։ Չարտիստների շարժումը առժամանակ դադար առաւ։ Մնացին ազատ առևտրի կողմնակիցների և իրլանդական շարժումները։

1841 Թ. Րօբէրտ Պիլ՝ նորից կառավարութեան գլուխն անցաւ և Գլադստօնին տուեց վաճառականութեան մինիստրի օգնականի պաշտօնը։ Հետզհետէ զգալի էր դառնում, որ պէտք է փոխել մաքսային հարկերը և ազատել առևտուրը արհեստական կապանքներից։ Ժողովրդի պահանջը գնալով սաստկանում էր, իսկ Րօբէրտ Պիլ՝ այնքան յամառ պահպանողական չէր, որ միանգամայն անտես առնէր այդ պահանջը։ Նա սկսեց զիջողութիւններ անել, չը նայած որ իր կուսակցութիւնը, լօրդերը, կղերականութիւնը դիմադրութիւն էին ցոյց տալիս։ 1842 Թուին մինիստրութիւնը համաձայնուեց վերաքննել մաքսային օրէնքները։ Դա մի հսկայական աշխատութիւն էր, և Գլադստօն իր բոլոր եռանդով նուիրուեց

նրան։ Մաքսի ենթարկուած առարկաների թիւը հասնում էր 1200-ի. Գլադստօն վերաքննեց 750 առարկաների հարկերը, կամ ոչնչացրեց նրանց կամ սաստիկ պակասեցրեց։ Պետական ելևմտացոյցի մէջ դրանից գոյացած դեֆիցիտը նա ծածկեց՝ սահմանելով տուրք եկամուտներից։ Այդ ժամանակից Գլադստօն երևելի ֆինանսագէտի հռչակ ստացաւ։

Հետզհետէ նա համոզւում էր, որ բարեփոխումները անհրաժեշտ են, որ առանց դրանց երկիրը չէ կարող առաջադիմել։ Ակսուեցան մի շարք թէև թեթև, բայց կարևոր օրէնսդրական ձեռնարկութիւններ. մահացու հարուածներ էր ստանում հովանաւորող քաղաքականութեան սիստեմը, որ արտօնութիւններ էր ստեղծում մի դասակարգի համար ի վնաս ամբողջ ազգութեան։ Սակայն եկեղեցական հարցերի մէջ Գլադստօն դեռ նոյնն էր։ Ուստի երբ Ռօբէրտ Պիլ՝ խոստացաւ իռլանդացի պատգամաւորներին, թէ ինքը կաշխատի իրաւունքներ շնորհել իռլանդական դպրոցներին և աւելացնել այն նպաստը, որ կառավարութիւնը տալիս էր իռլանդական կաթոլիկ դպրոցին՝ Գլադստօն անկարելի համարեց մնալ մինիստրութեան մէջ, քանի որ ինքը մի քանի տարի առաջ ուրիշ կարծիք էր յայտնել իր բրօշիւրների մէջ։

Բայց Պիլ՝ չէր կարող զիջումներ չանել իռլանդացիներին։ 1840 թուին, երբ վերջացաւ վեց

տարուայ ժամանակամիջոցը, Օ'Կօննէլ վերանորոգեց իր պահանջը։ Նա ահագին պատրաստութիւններ էր տեսնում. 3.700,000 իրլանդացիներ հպատակուած էին Օ'Կօննէլին, շարժւում էին այնպէս՝ ինչպէս նա էր ցոյց տալիս, և պահանջում էին որ Իրլանդիան անջատուի Անգլիայից։ Պահանջում էին բացարձակ, առանց բռնութիւններ գործ դնելու. Օ'Կօննէլ դարձել էր Իրլանդիայի կուռքը. Նրան պաշտում էին, նրա խօսքը սուրբ էր ամենքի համար։ Տեղի էին ունենում ահագին միտինգներ։ Մի բլուրի մօտ, որի վրայ մի ժամանակ կատարւում էր իրլանդական թագաւորների թագադրութիւնը՝ հաւաքուեց միտինգ 1.200,000 մարդկանցից։ Յաճախ լուսադէմին կարելի էր տեսնել միտինգների տեղերում անթիւ մարդիկ, որոնք խումբ-խումբ ծունկ չոգած կաթոլիկ քահանաների առաջ, լսում էին առաւօտեան ժամասացութիւնը. Խունկը ծխում էր, հոգևոր երաժշտութեան ձայները տարածւում էին քամու հետ։ Ժողովուրդը առանց աղմուկի, հանդարտ խօսում էր, և երբ անգլիական զօրքերը ուղարկւում էին ժողովի տեղերը՝ բաւական էր մի թեթև պահանջ—և ժողովները կատարեալ կարգապահութեամբ ցրւում էին։ Օ'Կօննէլ արդէն պատրաստութիւն էր տեսնում Դուբլինում իրլանդական պարլամենտի համար շինութիւն կառուցանելու համար։ Եւ որպէս զի ցոյց տայ, թէ իրլանդացիները կարող են իրանք իրանց

կառավարել՝ նա հիմնեց տեղական դատարաններ, որոնց դիմում էին բոլոր իռլանդացիները, անտես անելով անգլիական դատարանները։ 1843 թուի հոկտեմբերի 3-ին Դուբլինի մօտ պիտի գումարուէր մի միտինգ, որ բազմամարդութեամբ պիտի գերազանցէր մինչև այդ տեղի ունեցած բոլոր միտինգները։ Այդտեղ ժողովուրդը պիտի ստորագրէր թագուհու անունով գրուած այն հանրագիրը, որ պահանջում էր Իռլանդիայի անջատումը։ Օ'Կոննէլ յայտարարեց, որ ինքը կը կազմէ մի ժամանակաւոր պարլամենտ, որը կը կառավարէ երկիրը՝ եթէ անգլիական կառավարութիւնը մերժէ ժողովրդի հանրագիրը։ Բայց միտինգը չը կայացաւ։ Կառավարութիւնը շատ ուշ իմացաւ նրա մասին, և երբ զօրքերը գնացին միտինգի տեղը՝ բոլոր ճանապարհները ծածկուած էին մարդկանց անհամար խմբերով, որոնք շտապում էին ժամանակին հասնել։ Ընդհարումը զօրքերի և ժողովրդի մէջ անխուսափելի էր. բայց Օ'Կոննէլ համոզեց ամենքին հպատակուել կառավարութեան կարգադրութեան, և ժողովուրդը ցրուեց։

Կառավարութիւնը վճռեց միջոցներ ձեռք առնել հռչակաւոր հայրենասէրի դէմ. լորդերի պալատը համարեա միաձայն վճռեց դատի ենթարկել Օ'Կոննէլին։ Դատարանը դատապարտեց նրան տուգանքի և մի տարուայ բանտարկութեան։ Օ'Կոննէլ գնաց բանտ, բայց բողոք ներկայացրեց լօր

դերի պալատին, որ այժմ արդարացրեց նրան։ Այս ժամանակից Օ'Կօննէլի ազդեցութիւնը թուլացաւ։ Նրա կողմնակիցների մի մասը հեռացաւ, որովհետև չէր համակրում նրա բռնած ուղղութեան։ Նա սկզբից դէմ էր յեղափոխական միջոցներին և շարունակ այն էր քարոզում, թէ անկախութիւն ձեռք բերելու ամենալաւ միջոցն է գործել օրինական ճանապարհով։ Այդ միջոցը, սակայն, չէր օգնում. և Օ'Կօննէլին հակառակողները կազմեցին «Երիտասարդ Իրլանդիա» անունով յեղափոխական ընկերութիւնը։

Այս անցքերի ազդեցութեան տակ էր Պիլ’ աշխատում մասնաւոր զիջումներով գոհացում տալ իրլանդացիներին։ Բայց Գլադստօն, չը նայած իր բարեկամների թախանձանքներին՝ 1846 թ. հեռացաւ մինիստրութիւնից։ Մինչև այդ նա հրատարակել էր մի նոր աշխատութիւն, որ վերաբերւում էր նոր ընդունած առևտրական օրէնսդրութիւններին։ Այստեղ արդէն երևում է ազատ զարգացման պաշտպան Գլադստօնը։ Նա ասում էր. «Այսուհետև պետական իմաստութիւնը այն չի լինի, թէ պէտք է հովանաւորել մի որևէ դասակարգի, այլ այն, որ արդիւնագործութիւնը և բանւորները ազատուած լինին արտօնութիւնների և մենաշնորհների կապանքներից»։

Ասում են, որ Րօբէրտ Պիլ’ Գլադստօնի այս աշխատութեան ազդեցութեան տակ փոխուեց և

ինքն էլ դարձաւ հովանաւորող օրէնքների հակառակորդ։ Նրա ընկերակից մինիստրներից երկուսը հրաժարական տուեցին, և նա, կորցնելով իր կուսակցութեան համակրութիւնը՝ նոյնպէս հրաժարուեց. բայց այդ հրաժարականը չընդունուեց, և Պիլ, նորից առաջին մինիստր դառնալով, հրաւիրեց Գլադստոնին և տուեց նրան գաղթականութիւնների մինիստրի պաշտօնը։

1846 թուին Իրլանդիան մատնուեց մի զարհուրելի դժբախտութեան։ Մինչդեռ Օ'Կօննէլ գեղեցիկ ապագայի յոյսեր էր ներշնչում և կրթում էր ժողովուրդը ազատասիրական ոգով, իսկ միւս կողմից կաթոլիկ քահանայ Մաթիու բարոյական դաստիարակութիւն էր տարածում և ոչնչացնում էր արբեցողութիւնը, հետզհետէ ահագին ժողովրդականութիւն ստանալով՝ 1846 թուի ամառը յանկարծ սկսեց փտել կարտօֆիլը, որ իրլանդական ժողովրդի գլխաւոր ուտելիքն է և փոխարինում է հացը։ Հիւանդութիւնը մի գիշեր ոչնչացրեց բոլոր ցանքսերը, օդի մէջ սաստիկ գարշահոտութիւն տարածելով։ Սկսուեց սով, որ տևեց երկու տարի։ 1847 թուին սովից կոտորուեցան 1 միլիօնից ոչ պակաս մարդիկ։ Իրլանդիան ունէր 9 միլիօն ազգաբնակութիւն։ Սոսկալի աղէտը սկսեց դատարկել դժբախտ երկիրը։ Ահագին խմբեր գաղթեցին Հիւսիսային Ամերիկա. իսկ երկրում մնացածները կոտորւում էին ճանճերի նման։ Ճանապարհները

[illegible] որ չը [illegible] է [illegible]

Բայց [illegible], որ [illegible] է [illegible] և [illegible]։ [illegible] և [illegible] էր [illegible], որ [illegible] կարելի էր [illegible]։ [illegible] էր. 333 [illegible] 114 [illegible] էին [illegible]

կանոնները խիստ վիրաւորական խօսքերով յանդի-մանում էին Պիլին, անուանելով նրան դաւաճան, իր կուսակցութեան սկզբունքները ուրացող, դա-ծանոգի և այլն։ Այդ կատաղի յարձակումներին պատասխանեց Ջօն Բրայտ մի գեղեցիկ ճառով, որի մէջ ապացուցեց, թէ ինչ մեծ գործ է կատա-րում առաջին մինիստրը։ Բրայտ, որ տօրիների անհաշտ թշնամի արմատականների կուսակցու-թեան էր պատկանում և Կօբդէնի հետ ազատ առևտրի շարժման գլուխն էր անցել, այնպիսի գե-ղեցիկ գոյներով նկարագրեց Պիլի քաջագործու-թիւնը, որ առաջին մինիստրը լաց եղաւ։ Բայց և այնպէս, պահպանողականները չը ներեցին իրանց առաջնորդին և շուտով ցոյց տուին, թէ ինչ է նը-շանակում ոտնակոխ անել ազնուականների շա-հերը։

Առիթը դարձեալ Իռլանդիան էր։ Յեղափո-խական կուսակցութիւնը, տեսնելով սովի կոտո-րածները և պաշտօնական Անգլիայի անտարբերու-թիւնը՝ քարոզում էր որ աւելի լաւ կը լինէր, եթէ այդքան ժողովուրդը մեռնէր զէնքը ձեռքին։ Ա-պստամբական այդ շարժումը խեղդելու համար Րօ-բէրտ Պիլ՝ պարլամենտից լիազօրութիւններ պա-հանջեց։ Ազատամիտները դէմ էին այդ մտքին. պահպանողականները միացան նրանց հետ, և նոյն օրը, երբ թագուհին հաստատում էր մաքսահարկի նոր օրէնքը՝ Պիլի մինիստրութիւնը տապալուեց։

Գլադստոն, հովանաւորող մաքսահարկերի հակառակորդ դառնալով՝ այլ ևս չուզեց մնալ պատգամաւոր Նիւ-Արկի շրջանից, որ պատկանում էր արիստօկրատիայի ջերմ պաշտպաններից մէկին, Նիւ-Կէստլի դուքսին։ Նա իր պարտքը համարեց հրաժարական ուղարկել իր ընտրողներին։ 1847 թուին նրան պատգամաւոր ընտրեց Օքսֆորդի համալսարանը. դա մեծ պատիւ էր համարւում։

Պիլլի մինիստրութեան յաջորդեց Ջօն Րօսսըլի ազատամիտ մինիստրութիւնը։ Երբ սովը Իռլանդիայում հասաւ ծայրայեղ չափերի՝ կառավարութիւնը մի շարք միջոցներ ձեռք առաւ սովատանջներին օգնելու համար։ Հասարակական բարեգործութիւնը առատ նուիրաբերութիւններ էր թափում Իռլանդիա. ուրիշ երկիրներից մեծ քանակութեամբ հաց բերուեց, կառավարութեան ծախսով սկսեցին ճանապարհներ շինել, որպէսզի սովատանջները գործ ունենան և կարողանան փող վաստակել։ Բայց չը նայած այս բոլորին՝ կոտորածը շարունակւում էր։ Պէտք է ասել, որ այդ զարհուրելի դժբախտութիւնը մի առաջին օգնութիւն էր Իռլանդիայի անխիղճ հողատէրերի համար։ Սովը կոտորում էր իռլանդացիներին. նշանակում էր որ աղքատ, միշտ յուզուող ազգաբնակութիւնը ջնջուելով պակասում էր։ Հողատէրերը մանաւանդ ուրախ էին, որ իռլանդացիները գաղթում են իրանց հայրենիքից։ Անգլիական մամուլն էլ չէր

ծածկում իր գոհութիւնը։ «Թող գնան աղքատները, թող հեռանան, ասում էր նա. Անգլիայից, Շոտլանդիայից մեծ քանակութեամբ գիւղացիներ կը գաղթեն Իրլանդիա և կը բռնեն հեռացածների տեղը»։ Խրախուսուելով այս տեսակ մտքերից՝ Իրլանդիայի հողատէրերը իրանց կողմից ոչինչ ջանք չէին խնայում, որ փախցնեն իրլանդացիներին։ Դեռ սովը չէր վերջացել, դեռ մարդիկ կոտորւում էին անօթութիւնից, երբ սկսուեցին հողատէրերի բարբարոսութիւնները։ Օրէնքը նրանց իրաւունք էր տալիս՝ ամեն ժամանակ վռնդել գիւղացիներին իրանց հողերից. և ահա այդ իրաւունքը նրանք գործադրում էին լայն չափերով։ Տեղի էին ունենում գազանական զարհուրելի տեսարաններ։

Գիւղացիները արտաքսւում էին՝ երբ կամենում էր հողատէրը. ոչ փոթորիկը, ոչ անձրևը, ոչ ձիւնն ու բուքը չէին կարող արգելք հանդիսանալ։ Ուժասպառ ծերերը, օրօրոցի երեխաները, հիւանդները և մեռնողները—ամենքը պիտի հեռանային և պիտի մնային բաց երկնքի տակ։ Ահա ինչպէս է նկարագրում մի եպիսկոպոս այդ դժբախտների դրութիւնը. «Այսօր եօթն հարիւր մարդիկ վռնդուեցան իրանց բնակարաններից, թէև նրանցից ոչ ոք, բացի մի հատ մարդուց, ոչինչ պարտ չէր հողատիրոջ։ Ոստիկանապետի օգնականները, որոնք նշանակուած էին այդ ազնիւ, աշխատասէր մարդկանց տները քանդելու համար՝

զբաղուած էին իրանց սարսափելի գործով մինչև երեկոյ։ Վերջապէս վանդալները սարսափահար կանգ առան երկու տնակների առաջ, որոնց նոյնպէս պէտք էր քանդել։ Նրանք նոր էին իմացել, որ այդտեղ ճարակած է տիֆը, որից մի քանի բնակիչներ արդէն մեռել էին։ Քանդողները աղաչում էին հողատիրոջ գործակալին խնայել այդ տները, բայց նա անողոք էր և պահանջում էր իսկոյն քանդել։ Գործակալը հրամայեց մի լայն վերմակով ծածկել զառանցող հիւանդներին և վերցնել տների կտուրները։ Ես ուղեկցում էի այդ հիւանդներից չորսին։ Նրանք ծածկուած էին վերմակով, իսկ վերևից ծածկում էր երկինքը։ Այս արտաքսման տեսարանները ես երբէք չեմ մոռանայ։ Կանանց հեծկլտանքները, վախեցած երեխաների ճղճղոցը, տղամարդկանց լուռ յուսահատութիւնը՝ արտասուքներ էին հոսեցնում տեսնողների և լսողների աչքերից։ Ես տեսայ, որ պաշտօնեաներն ու ոստիկանները, որոնք ներկայ էին այդ տեսարաններին՝ լաց էին լինում երեխաների նման։ Ցուրտ անձրևը թափւում էր ամբողջ գիշերը և անտուն նահատակներին ցոյց էր տալիս նրանց դրութեան ամբողջ սարսափը։ Շրջակայ կալուածատէրերը արգելել էին իրանց գիւղացիներին տեղ տալ այդ խեղճերին՝ գոնէ մի գիշեր մնալու։ Վտարուածները գաղթում էին Ամերիկա, բայց կոտորւում էին ճանապարհին։

Այսպէս էր անգլիական արիստոկրատիան ճնշում Իրլանդիան։ Սովը և գաղթականութիւնը կարծես վերջ էին տալիս Իրլանդիայի հարցին։ Բայց այդ ժամանակ գլուխ բարձրացրեց յեղափոխութիւնը։ Սովի ամենասարսափելի տարին, 1847 թուին, մեռաւ Օ'Կօննէլ։ Նոյն տարուայ վերջում «Երիտասարդ Իրլանդիան» վճռեց զէնքի դիմել։ Նրա ղեկավարներն էին Օ'Բրիէն (հարուստ կալուածատէր իրլանդացի, որ Իրլանդական թագաւորների տոհմից էր սերուած), Ֆրանսիս Մէլըր (23 տարեկան երիտասարդ) և Միչըլ (յայտնի մատենագիր և հրապարակախօս)։ Յեղափոխական «Ազգ» լրագիրը տարածւում էր ահագին քանակութեամբ և ժողովրդականացնում էր այն միտքը, թէ փրկութեան միակ միջոցը ապստամբութիւնն է։ Բայց «Երիտասարդ Իրլանդիան» մեծ աջողութիւն չունեցաւ ժողովրդի մէջ, քանի որ նրա դէմ գործում էին Օ'Կօննէլի հետևողները։ Սրանց մէջ էր Իրլանդիայի ամբողջ կաթոլիկ հոգևորականութիւնը, որ քարոզում էր ժողովրդին, թէ չը պէտք է հետևել յեղափոխականներին։ «Երիտասարդ Իրլանդիան» ընդունում էր բոլոր իրլանդացիներին, առանց կրօնի խտրութեան, մինչդեռ Օ'Կօննէլի հիմնած միութիւնը զուտ կաթոլիկական էր։ Երկու կուսակցութիւնների մրցութիւնը մի պարզ նշան էր, որ ոչ մի յեղափոխական ձեռնարկութիւն չը պիտի աջողուի։ Եւ այնու ամենայնիւ յեղափոխա-

[illegible]

[illegible]

Այս գործունէութիւնը նրանց աջողուեց։ Յեղափոխականներին հաւատարիմ մնացած խումբը Տիպպերարի անունով տեղում շրջապատուեց անգլիական զինուորներով և ոստիկաններով. 118 մարդ կառավարութեան ձեռքն ընկան, իսկ մնացածները փախան։ Օ'Բրիէն և ուրիշները մահուան դատապարտուեցան, բայց Թագուհին ստիպուած եղաւ ներել ամենքին և բաւականանալ միայն աքսորելով նրանց Իրլանդիայից։ Այնուհետև դժբախտ կղզին մատնուեց հողատէրերի կամայականութեան, և ամայի դարձաւ։ Մեռելութիւն էր տիրում ամեն տեղ, և միայն գիւղացիները շարունակում էին վրէժ հանել հողատէրերից՝ գաղտնի սպանութիւնների, հրձգութիւնների միջոցով։ Գաղթականութիւնը դէպի Ամերիկա շարունակւում էր անընդհատ. այնտեղ կազմակերպւում էր մի Նոր Իրլանդիա, որ լցուած էր անսահման ատելութեամբ դէպի Անգլիան։

Ֆրանսիական յեղափոխութիւնը ոտքի կանգնեցրեց և չարտիստներին։ Նրանց լիազօրները 1848 թ. ապրիլին հաւաքուեցան Լօնդօնում և մի մեծ հանրագիր կազմեցին։ Պէտք էր կարդալ այդ հանրագիրը մի ահագին ժողովում, որը այնուհետև պիտի թափօր կազմէր և տանէր հանրագիրը պարլամենտին ներկայացնելու։ Մինիստրութիւնը վախեց և ժողովն ու թափօրը ապօրինի յայտարարեց. միևնոյն ժամանակ դիմեց գեներալ Վելլինգտօնին

դերի պալատին, որ այժմ արդարացրեց նրան։ Այս ժամանակից Օ'Կօննէլի ազդեցութիւնը թուլացաւ։ Նրա կողմնակիցների մի մասը հեռացաւ, որովհետև չէր համակրում նրա բռնած ուղղութեան։ Նա սկզբից դէմ էր յեղափոխական միջոցներին և չարունակ այն էր քարոզում, թէ անկախութիւն ձեռք բերելու ամենալաւ միջոցն է գործել օրինական ճանապարհով։ Այդ միջոցը, սակայն, չէր օգնում. և Օ'Կօննէլին հակառակողները կազմեցին «Երիտասարդ Իրլանդիա» անունով յեղափոխական ընկերութիւնը։

Այս անցքերի ազդեցութեան տակ էր Պիլ' աշխատում մասնաւոր զիջումներով գոհացում տալ իրլանդացիներին։ Բայց Գլադստօն, չը նայած իր բարեկամների թախանձանքներին՝ 1846 թ. հեռացաւ մինիստրութիւնից։ Մինչև այդ նա հրատարակել էր մի նոր աշխատութիւն, որ վերաբերւում էր նոր ընդունած առևտրական օրէնսդրութիւններին։ Այստեղ արդէն երևում է ազատ զարգացման պաշտպան Գլադստօնը։ Նա ասում էր. «Այսուհետև պետական իմաստութիւնը այն չի լինի, թէ պէտք է հովանաւորել մի որևէ դասակարգի, այլ այն, որ արդիւնագործութիւնը և բանւորները ազատուած լինին արտօնութիւնների և մենաշնորհների կապանքներից»։

Ասում են, որ Ռօբէրտ Պիլ' Գլադստօնի այս աշխատութեան ազդեցութեան տակ փոխուեց և

ինքն էլ դարձաւ հովանաւորող օրէնքների հակառակորդ։ Նրա ընկերակից մինիստրներից երկուսը հրաժարական տուեցին, և նա, կորցնելով իր կուսակցութեան համակրութիւնը՝ նոյնպէս հրաժարուեց. բայց այդ հրաժարականը չընդունուեց, և Պիլ, նորից առաջին մինիստր դառնալով, հրաւիրեց Գլադստոնին և տուեց նրան գաղթականութիւնների մինիստրի պաշտօնը։

1846 թուին Իրլանդիան մատնուեց մի զարհուրելի դժբախտութեան։ Մինչդեռ Օ'Կօննէլ գեղեցիկ ապագայի յոյսեր էր ներշնչում և կրթում էր ժողովուրդը ազատասիրական ոգով, իսկ միւս կողմից կաթոլիկ քահանայ Մաթիու բարոյական դաստիարակութիւն էր տարածում և ոչնչացնում էր արբեցողութիւնը, հետզհետէ ահագին ժողովրդականութիւն ստանալով՝ 1846 թուի ամառը յանկարծ սկսեց փտել կարտօֆիլը, որ իրլանդական ժողովրդի գլխաւոր ուտելիքն է և փոխարինում է հացը։ Հիւանդութիւնը մի գիշեր ոչնչացրեց բոլոր ցանքսերը, օդի մէջ սաստիկ գարշահոտութիւն տարածելով։ Սկսուեց սով, որ տևեց երկու տարի։ 1847 թուին սովից կոտորուեցան 1 միլիօնից ոչ պակաս մարդիկ։ Իրլանդիան ունէր 9 միլիօն ազգաբնակութիւն։ Սոսկալի աղէտը սկսեց դատարկել դժբախտ երկիրը։ Ահագին խմբեր գաղթեցին Հիւսիսային Ամերիկա. իսկ երկրում մնացածները կոտորւում էին ճանճերի նման։ Ճանապարհները

ծածկուած էին դիակներով։ Սովից մեռնում էին փողոցներում, եկեղեցու դռների մօտ. նոյն-իսկ հարուստ և նշանաւոր ընտանիքներ չէին ազատւում սարսափելի մահից։ Սկզբում պաշտօնական Անգլիան, փոխանակ իրական օգնութիւն հասցնելու սովատանջներին՝ բաւականանում էր դատարկ խորհուրդներ տալով։ Այսպէս, թագաւորական հողագործական ընկերութիւնը յորդորում էր իրլանդացիներին, որ ոսկորները մի անգամ եփելու տեղ երեք անգամ եփեն, որպէսզի միշտ կերակուր ունենան. միւսները խորհուրդ էին տալիս աղ դրած ձուկ ուտել։ Տիրապետում էր այն կարծիքը, որ աղէտը այնքան մեծ չափեր չունի, մանաւանդ այն՝ որ չը պէտք է սովորեցնել ժողովուրդը ձրիակերութեան և այդպիսով անբարոյականացնել նրան։

Բայց Ռօբէրտ Պիլ՝ հասկացաւ, որ Իրլանդացուն հաց է հարկաւոր և ոչ թէ խորհուրդ։ Նա անմիջապէս առաջարկեց դրսից ներմուծուող հացահատիկների մաքսը իջեցնելու մի օրինագիծ և անց կացրեց այդ կարևոր առաջարկութիւնը ազատամիտների օգնութեամբ։ Նոր օրէնքը սահմանում էր այնքան չնչին մաքսահարկ, որ հացի առևտուրը կարելի էր ազատ համարել։ Պահպանողականների կատաղութիւնը իրանց պարագլխի դէմ անսահման էր։ 333 պահպանողականներից միայն 104 հոգի էին օրինագծի կողմնակիցները։ Աղմկալոյց վիճաբանութիւնների ժամանակ պահպանողա-

կանները խիստ վիրավորական խօսքերով յանդիմանում էին Պիլին, անուանելով նրան դաւաճան, իր կուսակցութեան սկզբունքները ուրացող, ցածհոգի և այլն։ Այդ կատաղի յարձակումներին պատասխանեց Ջօն Բրայտ մի գեղեցիկ ճառով, որի մէջ ապացուցեց, թէ ինչ մեծ գործ է կատարում առաջին մինիստրը։ Բրայտ, որ տորիների անհաշտ թշնամի արմատականների կուսակցութեան էր պատկանում և Կօբդէնի հետ ազատ առևտրի շարժման գլուխն էր անցել, այնպիսի գեղեցիկ գոյներով նկարագրեց Պիլի քաջագործութիւնը, որ առաջին մինիստրը լաց եղաւ։ Բայց և այնպէս, պահպանողականները չը ներեցին իրանց առաջնորդին և շուտով ցոյց տուին, թէ ինչ է նշանակում ոտնակոխ անել ազնուականների շահերը։

Առիթը դարձեալ Իռլանդիան էր։ Յեղափոխական կուսակցութիւնը, տեսնելով սովի կոտորածները և պաշտօնական Անգլիայի անտարբերութիւնը՝ քարոզում էր որ աւելի լաւ կը լինէր, եթէ այդքան ժողովուրդը մեռնէր զէնքը ձեռքին։ Ապստամբական այդ շարժումը խեղդելու համար Ռօբերտ Պիլ՝ պարլամենտից լիազօրութիւններ պահանջեց։ Ազատամիտները դէմ էին այդ մտքին. պահպանողականները միացան նրանց հետ, և նոյն օրը, երբ Թագուհին հաստատում էր մաքսահարկի նոր օրէնքը՝ Պիլի մինիստրութիւնը տապալուեց։

Գլադստոն, հովանաւորող մաքսահարկերի հակառակորդ դառնալով՝ այլ և չուզեց միայն պատգամաւոր Նյու-Արկի շրջանից, որ պատկանում էր արիստոկրատիայի ջերմ պաշտպաններից մեկին, Նյու-Կէստլի դուքսին։ Նա իր պարտքը համարեց հրաժարական ուղարկել իր ընտրողներին։ 1847 թուին նրան պատգամաւոր ընտրեց Օքսֆորդի համալսարանը. դա մեծ պատիւ էր համարւում։

Պիլի մինիստրութեան յաջորդեց Ջոն Ռօսսըլի ազատամիտ մինիստրութիւնը։ Երբ սովը Իրլանդիայում հասաւ ծայրայեղ չափերի՝ կառավարութիւնը մի շարք միջոցներ ձեռք առաւ սովատանջներին օգնելու համար։ Հասարակական բարեգործութիւնը առատ նուիրաբերութիւններ էր թափում Իրլանդիա. ուրիշ երկիրներից մեծ քանակութեամբ հաց բերուեց, կառավարութեան ծախսով սկսեցին ճանապարհներ շինել, որպէսզի սովատանջները գործ ունենան և կարողանան փող վաստակել։ Բայց չը նայած այս բոլորին՝ կոտորածը շարունակւում էր։ Պէտք է ասել, որ այդ զարհուրելի դժբախտութիւնը մի ահագին օգնութիւն էր Իրլանդիայի անխիղճ հողատէրերի համար։ Սովը կոտորում էր իրլանդացիներին. նշանակում էր որ աղքատ, միշտ յուզուող ազգաբնակութիւնը ջնջուելով պակասում էր։ Հողատէրերը մանաւանդ ուրախ էին, որ իրլանդացիները գաղթում են իրանց հայրենիքից։ Անգլիական մամուլն էլ չէր

ծածկում իր փտութիւնը։ «Թող գնան աղքատները, թող հեռանան, ասում էր նա. Անգլիայից, Շոտլանդիայից մեծ քանակութեամբ գիւղացիներ կը գաղթեն Իրլանդիա և կը բռնեն հեռացածների տեղը։ Խրախուսուելով այս տեսակ մաքերից՝ Իրլանդիայի հողատէրերը իրանց կողմից ոչինչ ջանք չէին խնայում, որ փախցնեն իրլանդացիներին։ Դեռ սովը չէր վերջացել, դեռ մարդիկ կոտորւում էին անօթութիւնից, երբ սկսուեցին հողատէրերի բարբարոսութիւնները։ Օրէնքը նրանց իրաւունք էր տալիս՝ ամեն ժամանակ վռնդել գիւղացիներին իրանց հողերից. և ահա այդ իրաւունքը նրանք գործադրում էին լայն չափերով։ Տեղի էին ունենում զազանական զարհուրելի տեսարաններ։

Գիւղացիները արտաքսւում էին՝ երբ կամենում էր հողատէրը. ո՛չ փոքրիկը, ո՛չ անձրեւը, ո՛չ ձիւնն ու բուքը չէին կարող արգելք հանդիսանալ։ Ուժասպառ ծերերը, օրօրոցի երեխաները, հիւանդները և մեռնողները—ամենքը պէտք հեռանային և պէտք մնային բաց երկնքի տակ։ Ահա ինչպէս է նկարագրում մի եպիսկոպոս այդ դժբախտների դրութիւնը. «Այսօր եօթն հարիւր մարդիկ վռնդուեցան իրանց բնակարաններից, թէև նրանցից ոչ ոք, բացի մի հատ մարդուց, ոչինչ պարտ չէր հողատիրոջ։ Ոստիկանապետի օգնականները, որոնք նշանակուած էին այդ ազնիւ, աշխատասէր մարդկանց տները քանդելու համար՝

զբաղուած էին իրանց սարսափելի գործով մինչև երեկոյ։ Վերջապէս վանդալները սարսափահար կանգ առան երկու տնակների առաջ, որոնց նոյնպէս պէտք էր քանդել։ Նրանք նոր էին իմացել, որ այդտեղ ճարակած է տիֆը, որից մի քանի բնակիչներ արդէն մեռել էին։ Քանդողները աղաչում էին հողատիրոջ գործակալին խնայել այդ տները, բայց նա անողոք էր և պահանջում էր իսկոյն քանդել։ Գործակալը հրամայեց մի լայն վերմակով ծածկել զառանցող հիւանդներին և վերցնել տների կտուրները։ Ես ուղեկցում էի այդ հիւանդներից չորսին. Նրանք ծածկուած էին վերմակով, իսկ վերևից ծածկում էր երկինքը։ Այս արտաքսման տեսարանները ես երբէք չեմ մոռանայ։ Կանանց հեծկլտանքները, վախեցած երեխաների ճղվղոցը, տղամարդկանց լուռ յուսահատութիւնը՝ արտասուքներ էին հոսեցնում տեսնողների և լսողների աչքերից։ Ես տեսայ, որ պաշտօնեաները ու ոստիկանները, որոնք ներկայ էին այդ տեսարաններին՝ լաց էին լինում երեխաների նման։ Յորդ անձրևը թափում էր ամբողջ գիշերը և անտուն նահատակներին ցոյց էր տալիս նրանց դրութեան ամբողջ սարսափը։ Շրջակայ կալուածատէրերը արգելել էին իրանց գիւղացիներին տեղ տալ այդ խեղճերին՝ գոնէ մի գիշեր մնալու»։ Վռնդուածները գաղթում էին Ամերիկա, բայց կոտորւում էին ճանապարհին։

Այսպէս էր անգլիական արիստոկրատիան մաքրում Իրլանդիան։ Սովը և գաղթականութիւնը կարծես վերջ էին տալիս Իրլանդիայի հարցին։ Բայց այդ ժամանակ գլուխ բարձրացրեց յեղափոխութիւնը։ Սովի ամենասարսափելի տարին, 1847 թուին, մեռաւ Օ՛Կօննէլ։ Նոյն տարուայ վերջում «Երիտասարդ Իրլանդիան» վճռեց զէնքի դիմել։ Նրա ղեկավարներն էին Օ՛Բրիէն (հարուստ կալուածատէր իրլանդացի, որ իրլանդական թագաւորների տոհմից էր սերուած), Ֆրանսիս Մէյըր (23 տարեկան երիտասարդ) և Միչըլ (յայտնի մատենագիր և հրապարակախօս)։ Յեղափոխական «Ազգ» լրագիրը տարածում էր անհագին քանակութեամբ և ժողովրդականացնում էր այն միտքը, թէ փրկութեան միակ միջոցը ապստամբութիւնն է։ Բայց «Երիտասարդ Իրլանդիան» մեծ աջողութիւն չունեցաւ ժողովրդի մէջ, քանի որ նրա դէմ գործում էին Օ՛Կօննէլի հետևողները։ Սրանց մէջ էր Իրլանդիայի ամբողջ կաթոլիկ հոգևորականութիւնը, որ քարոզում էր ժողովրդին, թէ չը պէտք է հետևել յեղափոխականներին։ «Երիտասարդ Իրլանդիան» ընդունում էր բոլոր իրլանդացիներին, առանց կրօնի խտրութեան, մինչդեռ Օ՛Կօննէլի հիմնած միութիւնը զուտ կաթոլիկական էր։ Երկու կուսակցութիւնների մրցութիւնը մի պարզ նշան էր, որ ոչ մի յեղափոխական ձեռնարկութիւն չը պիտի աջողուի։ Եւ այնու ամենայնիւ յեղափոխա-

կանոնները, մի կողմից ազատամտութիւն քարոզելով միւս կողմից պատրաստ էին ճզմել հին իռլանդացիների դէմ։ Ֆրանսիան Մէյրր մի հատ մէջ պատա-պարտաց այն օրաբայադէտներին, որոնք ազատա-թիւնը մի կաթիլ արեան արժանի չէին համարում։

Յեղափոխականներին հրճուանք պատճառեց փետրվարի յեղափոխութիւնը, որ տեղի ունեցաւ Փարիզում 1848 թուին և որպէս արձագանք Գերմանիայում, Աւստրիայում և այլ տեղերում։ Իռլանդացիները ազատասիրութեան աղաղակեցին Փարիզ՝ կաթոլիկ Ֆրանսիայի օգնութիւնը խնդրելու համար։ Բայց Ֆրանսիան միտք չունէր Իռլանդիայի պատճառով կռիւ սկսել Անգլիայի դէմ, և Լամարտին քաղաքավարութեամբ յետ դարձրեց պատգամաւորներին։ Անգլիական կառավարութիւնը լաւ հանդիսատես չը մնաց։ Ռոսսըլի մինիստրութիւնը ժամանակաւոր դադարեցնել տալուց անձնական ազատութեան (Habeas Corpus) օրէնքը Իռլանդիայում և մի չորս խիստ միջոցներ ձեռք առաւ ապստամբութեան դէմ։ Սակայն իռլանդական յեղափոխութեան թևերը կատարողը կառավարութիւնը չէր, այլ Օ'Կօննէլի կուսակցութիւնը։ Կրօնական անհամբերողութեան կրակով վառուած էին իռլանդացիները չէին թոյլ տալիս, որ գիւղացիները «Երիտասարդ Իռլանդիայի» կողմն անցնեն, իսկ այնպիսիներին, որոնք կանգնած էին յեղափոխական դրօշակի տակ՝ աշխատում էին յետ դարձնել։

Այս գործունէութիւնը նրանց աջողուեց։ Յեղափոխականներին հաւատարիմ մնացած խումբը Տիպպերարի անունով տեղում շրջապատուեց անգլիական զինուորներով և ոստիկաններով. 118 մարդ կառավարութեան ձեռքն ընկան, իսկ մնացածները փախան։ Օ՚Բրիէն և ուրիշները մահուան դատապարտուեցան, բայց թագուհին ստիպուած եղաւ ներել ամենքին և բաւականանալ միայն աքսորելով նրանց Իրլանդիայից։ Այնուհետև դժբախտ երկրին մատնուեց հողատէրերի կամայականութեան, և ամայի դարձաւ։ Մեռելութիւն էր տիրում ամեն տեղ, և միայն գիւղացիները շարունակում էին վրէժ հանել հողատէրերից՝ գաղտնի սպանութիւնների, հրձգութիւնների միջոցով։ Գաղթականութիւնը դէպի Ամերիկա շարունակւում էր անընդհատ. այնտեղ կազմակերպւում էր մի նոր Իրլանդիա, որ լցուած էր անսահման ատելութեամբ դէպի Անգլիան։

Ֆրանսիական յեղափոխութիւնը ոտքի կանգնեցրեց և չարտիստներին։ Նրանց լիազօրները 1848 թ. ապրիլին հաւաքուեցան Լոնդոնում և մի մեծ հանրագիր կազմեցին։ Պէտք էր կարդալ այդ հանրագիրը մի ահագին ժողովում, որը այնուհետև պիտի թափօր կազմէր և տանէր հանրագիրը պարլամենտին ներկայացնելու։ Մինիստրութիւնը վախեց և ժողովն ու թափօրը ապօրինի յայտարարեց. միևնոյն ժամանակ դիմեց գեներալ Վելլինգտոնին

և խնդրեց նրան պաշտպանել Լոնդոնը։ Գեներալը զորքեր կուտեց մայրաքաղաքում և հրավիրեց բնակիչներին կամավոր գրվել. հավաքվեց 170,000 մարդ։ Ժողովը կայացավ, բայց Թափորը արգելվեց, և չարտիստների ղեկավարներից մեկը տարավ հանրագիրը, ներկայացրեց պարլամենտին։ Նա ասել էր, թե հանրագրի տակ 5,716,000 ստորագրություն կայ. բայց դուրս եկավ միայն 1,975,000 ստորագրություն և մի քանիսները՝ գրված հանաքի համար (օրինակ, Թագուհի, Վելլինգտոն)։ Չարտիստների շարժման վերջաբանն էր սա։

Այս բոլոր աղմուկներից լետոյ տիրեց խաղաղություն։ Ազատամիտ մինիստրությունը մի առանձին գործունէություն ցույց չը տուեց. նրա ռէֆորմների ծրագիրը սպառվել էր։ Անգլիան մտավ 50-ական թուականների շրջանը՝ երբ երկրի ուշադրությունը նուիրուեց գլխաւորապէս արտաքին քաղաքականութեան։

Հացահատիկների մաքսահարկը, ինչպէս տեսանք, հերձուած առաջացրեց պահպանողականների մէջ և այդպիսով թուլացրեց այդ ուժեղ կուսակցությունը։ Ռօբէրտ Պիլի համախոհները, որոնց մէջ էր և Գլադստոն, բաժանուեցան տօրիներից և կազմեցին մի առանձին կուսակցություն («պիլեան»), որ իր չափաւոր ազատամիտ հայեացքներով հեռու էր պահպանողականներից, բայց մօտ չէր և ազատամիտներին։ Այս կուսակցությունը շատ հարցե-

րում ազատամիտների կողմն էր անցնում։ Գլադստոն կամաց-կամաց դիմում էր դէպի ազատամիտները։

1850 թուին Գլադստոն առաջին անգամ առիթ ունեցաւ բացատրելու, թէ՛ ինչ հայեացքներ ունէր է ինքը արտաքին քաղաքականութեան հարցերում։ Այդ ժամանակ Ռոսսըլի մինիստրութեան մէջ արտաքին գործերի մինիստր էր լորդ Պալմերստոն *)։ Սա վարում էր ժողովրդական համակրութիւնը վայելող մի փայլուն քաղաքականութիւն, որ սակայն հիմնուած էր ինտրիգների և ուժեղի իրաւունքի վրայ։ Աջողութիւն վաստակելու համար՝ նա սուրբ էր համարում բոլոր միջոցները և սիրում էր կրկնել իր նման դիպլոմատների հին ասացուածքը. «Ազգերը սիրում են, որ իրանց խաբեն»։ Գլադստոն անբարոյական էր համարում այդ սկզբունքները և յաճախ ասում էր. «Պալմերստոն պատրաստ է ունել ցեխ՝ որքան կուզես, միայն թէ այդ ցեխը ոսկեզօծած լինի»։

Եւ ահա յարմար առիթ եկաւ այդ մարդու դէմ կռիւ սկսելու։ 1850 թուին Աթէնքում լոյն ամբոխը կրակ տուեց հրէայ Դօն-Պաչիֆիքօի տունը։

---

*) Պալմերստոն սկզբում պահպանողական էր. անցնելով ազատամիտների կողմը՝ նա այնու ամենայնիւ բոլորովին չը հրաժարուեց պահպանողական գաղափարներից, որոնց հետևում էր մանաւանդ արտաքին քաղաքականութեան գործերում։

Պաչիֆիկօ անգլիական հպատակ էր և խնդրում վարձատրութիւն պահանջեց, նշանակելով այրուած և փչացած իրերի համար հրէշաւոր գներ, որոնց ընդհանուր գումարն էր 32,000 անգլիական ոսկի *)։ Յունաց կառավարութիւնը շատ աղքատ էր, ուստի այդ անարդար պահանջը առանց ուշադրութեան թողեց։ Լօրդ Պալմերստօն պահանջեց, որ այդ հաշիւը ամբողջութեամբ վճարուի։ Նա գժգոհ էր Յունաստանից, և ճնշում գործ դնելու առիթներ էր որոնում։ Թէ այս դէպքը և թէ մի քանի մանր մունր հանգամանքներ պատրուակ բռնելով՝ նա հրամայեց անգլիական նաւատորմին պաշարել Յունաստանի ափերը։ Յունաստանը դիմեց Ֆրանսիային և Ռուսաստանին, որոնք խիստ բողոքներ ներկայացրին այդ բռնութեան դէմ, մինչև անգամ ֆրանսիական դեսպանը հեռացաւ Լօնդօնից։ Մի խօսքով, պատրաստւում էր մի ահագին պատերազմ հրէայի մահճակալների և սպիտակեղէնի պատճառով։ Պալմերստօն ի վերջոյ ստիպուած եղաւ զիջողութիւն անել և ֆրանսիական կառավարութեան միջնորդութեամբ համաձայնուեց, որ Դոն-Պաչիֆիկօ ստանայ մի վարձատրութիւն, որ նրա սկզբնական պահանջից երեսուն անգամ պակասեցրած էր։

*) Ահա այդ գնահատութեան չափը. 150 ոսկի մահճակալի համար, 30 ոսկի անկողնի համար. 25 ոսկի երկու վերմակների համար և 10 ոսկի բարձի երեսի հա-

Համայնքների ժողովում հարց եղաւ այդ մասին։ Պալմերստոն մի չքեղ ճառ արտասանեց, որ տևեց հինգ ժամ. Նա արդարացրեց իր վարմունքը, բերելով այն միտքը, թէ բրիտանական ամենավերջին հպատակն անգամ օտար երկրներում համոզված պետք է լինի, որ իրան պաշտպանում է Անգլիայի ամբողջ ույժը։ Ինչպէս մի ժամանակ հռոմայեցին ազատվում էր կալանաւորութիւնից, երբ արտասանում էր «Հռոմայեցի եմ» խօսքը՝ այնպէս էլ բրիտանական հպատակը որտեղ և գնայ՝ վստահ պիտի լինի, որ Անգլիայի անքուն աչքը և հզօր զէնքը նրան կը պաշտպանեն անիրաւութիւններից և նախատինքներից։ Այս խօսքերը գրգռում էին ազգային ամպարծութիւնը և թթու ազգասիրութիւնը, տալով անհագին տպաւորութիւն գործեցին։ Այն ժամանակ վեր կացաւ Գլադստոն և արտասանեց մէկը այն ճառերից, որոնք երբէք չեն մոռացուի։ Նա բացատրեց, թէ ինչ նշանակութիւն ունէր մինիստրի յիշած «Հռոմայեցի եմ» ձևը հին աշխարհում։ Հռոմայեցի—դա յաղթողների մի արտօնուած դասակարգ էր, որ ունէր իր սկըզբունքները, որ հաւատում էր, թէ իր իրաւունքն է՝ զէնքի ույժով տիրել և բռնանալ աշխարհի վրայ։

մար. բացի դրանից 2000 ոսկի իր կնոջ և աղջիկների ակնեղէնների համար։ Անգլիական ոսկին 9 րուբլուց աւելի արժէ։

Պալմերստոն ասած էր, որ ազգերը մինչև խրա-քանչյուր անգլիացի, բայց դա հակառակ է ազգի պատվին, ազնվության գաղափարին: Անգլիան այդ չէր գիտի ամփոփեցներ. Անգլիան գիտի պաշ-տպանէր ազգերի մէջ լաւագոյնը դէպի միջազգային օրէնքը, որ հասարակ չափով գիտի պաշտպանէ թէ հզորին և թէ թույլին: Ազգերի մէջ պէտք է հաստատվել եղբայրութեան և անկախութեան սկըզ-բունքները, ասաց նա. փրկենք թույլին և պաշտ-պանենք նրան: Չը խառնվենք ուրիշների ներ-քին գործերի մէջ, բռնակալութեան չաջակցենք ու-րիշների ասպարեզը և ցեղերը գանձարան, այլ ու-նենք աշխարհին այն՝ ինչ ասած ենք որ նրանք մեզ անեն:

Վիճաբանությունները շարունակվեցան չորս գիշեր. Խոսեցին անգլիական բոլոր նշանավոր հռետորները. բայց ոչ ոք Գլադստոնի լույս և մաքրված գաղափարները չէր պաշտպանել: Պարլամեն-տը 40 ձայների մեծամասնությամբ հաստատեց ...ից Պալմերստոնի քաղաքականությունը. բայց այս վճիռը Գլադստոնի համար ոչինչ նշանակու-թյուն չունէր, և նա շարունակեց այնուհետև էլ պաշտպանել արդարության, եղբայրության սկըզ-բունքները, որոնք նրա փառքի հիմնաքարը դար-ձան: Դիվանագիտությունը, դիպլոմատիան, որի ձեռքին է ազգերի ճակատագիրը՝ չէ ղեկավարված բարոյական այն օրէնքներով, որոնք պարտավո-

րական են առօրեայ կեանքի մէջ։ Նրա գլխաւոր նպատակն է պաշտպանել մի ազգի շահերը, և դրա համար ամէն միջոց գործադրելի, սուրբ է համարւում—օրինակ՝ երկդիմութիւն, ինտրիգներ, անազնւութիւն, բացարձակ խաբէութիւն, բռնէից օգտուելու, թոյլի դրութիւնը անգութ կերպով շահագործելու հնարագիտութիւն։ Գլադստոն բողոքում էր այդ գիշատիչ, հարստահարող միջոցների դէմ, պահանջում էր, որ ազգերի յարաբերութեան մէջ էլ վճռական լինի խղճի, սրտի ձայնը։ Բայց քաղաքագէտները վաղուց ծաղրում էին սրտի, զգացմունքի պահանջները, և Պալմերստոն կարող էր ամենայն վստահութեամբ ասել, թէ Գլադստոնի ցանկութիւնները առնուազն երիտասարդական ցնորքներ են...

Այս ընհարումից մի քանի ամիս յետոյ Գլադստոն ցոյց տուեց, թէ ինչ կարող է անել հալածուածների պաշտպանը։ 1850 թ. վերջում նա իր վեցամեայ հիւանդ աղջկան տարաւ Իտալիա և մի քանի ամիս ապրեց Նէապոլում։ Երեխան մեռաւ, սաստիկ վիշտ պատճառելով սիրող ծնողին։ Բայց եթէ չը լինէր այդ փոքրիկը, հազարաւոր անբախտների ձայնը չէր հասնի աշխարհին։

Նէապոլում այն ժամանակ սարսափելի դրութիւն էր հաստատուել։ Նրա թագաւորը, Ֆերդինանդ, որ իր անգթութիւնների պատճառով ստացել էր «ռումբ-թագաւոր» անունը՝ ահ ու սարսափի

մէջ էր պահում իր բոլոր հպատակներին։ Իտալիայում վաղուց սկսուած էր ազատասիրական մի բուռն շարժում. Նրա բաժան-բաժան դարձած մասերը մի կողմից ձգտում էին միանալ, մի ամբողջութիւն կազմել, իսկ միւս կողմից ուզում էին մտցնել ազատ սահմանադրական և հանրապետական կարգեր։ Այս բոլորը իրագործելու համար իտալացի հայրենասէրները մի միջոց գիտէին—յեղափոխութիւն։ Նրանց դիմադրում էին երկրի զանազան կողմերում բնակած իշխանները ու թագաւորները, դիմադրում էր և կաթոլիկ հոգեւորականութիւնը, որ պարզ տեսնում էր, թէ եկել է պապի աշխարհական իշխանութեան վերջը։ Բայց ոչ մի տեղ ժողովրդի ազատական շարժումը այնպիսի սոսկալի ճնշումներ չէր յարուցանում, ինչպէս Նէապոլում։

Ֆէրդինանդ մի քանի ժամանակ առաջ սահմանադրութիւն էր շնորհել իր հպատակներին, ազատամիտ օրէնքներ էր հրատարակել։ Բայց տեսնելով, որ այդ միջոցն էլ չէ մոռացնել տալիս հայրենասէրների գործը՝ դիմեց իր սիրած սարսափահար միջոցներին։ Շվէյցարացի վարձկան զօրքերի օգնութեամբ նա սաստիկ ճնշում էր ժողովուրդը, խեղդում էր ամեն մի գործ՝ որի նպատակն էր ազատ զարգացման նպաստել։ Նա չէր հաւատում, թէ մարդկային բնաւորութեան մէջ կարող են լինել լաւ յատկութիւններ, և այս պատճառով բնակչութիւնը հասցրել

էր ծայրայեղ չափերի։ Մի ջերմ հայրենասէր, Կարլօ Պօէրիօ անունով, որ մի տաղանդաւոր մարդ էր՝ կողմնապահ դատաւորների վճռով մեղաւոր էր ճանաչուած իբրև քաղաքական յանցաւոր. Նրան աքսորեցին մի կղզի, որ բոլորովին զուրկ էր ջուաքից. այդտեղ նրան ութ տարի հարկադրեցին քար տաշել արևի տակ՝ և ամբողջ ժամանակ նա շղթայով կապուած էր տաժանակիր աշխատանքների դատապարտուած մի չարագործի հետ, որ նշանաւոր էր իր գազանային կոպտութեամբ։ Այնպիսի պետական գործիչներ, ինչպէս էին Շալօյեա և Լէօպարդի, իբրև ողորմութիւն՝ դատապարտուած էին տաժանակիր աշխատանքների։ Թագաւորը իր պատշգամից դիտում էր, թէ ինչպէս նրա նախկին մինիստրին հարկադրում էին սրբել փողոցները և ինչպէս էին շղթաներ հագցնում այն պատգամաւորներին, որոնք մեղադրուած էին քաղաքական յանցանքների մէջ։ Այսպիսի յանցանքների համար դատապարտուածների թիւը հասնում էր 22 հազարի։ Օրէնք, իրաւունք, արդարութիւն ջնջուած էին։ Ֆէրդինանդ գրում էր Ֆրանսիական թագաւորին. «Իմ ժողովուրդը մտածելու հարկաւորութիւն չունի. ես հոգս եմ տանում նրա բարօրութեան և արժանաւորութեան մասին»։

Այս բոլոր սարսափներից Գլադստօն այնքան վրդովուեց, որ իր բարեկամների միջոցով թոյլտուութիւն ստացաւ մտնել բանտերը, ուր պահւում

էին քաղաքական բռնությունները, առանձնապես նրանց ազատությունը,- հասարակ ամերիկյան ժողովուրդը Մոնտանից նա զրկված էր կաթոլիկ հավատա-կանության վրա, որ բուրժուական կրթված պրա-ղանում էր այդ անտանելի բանականությունը և գործ էր դնում իր ամբողջ ինքնակամությունը, որ ամփոփեցնէ ժողովրդին չէր ճանաչողությամբ ու-նել Ֆէրդինանդի թագավորությունները։ Մինչ-դեռ ազատականները օր օրի վրա ամբողջում էին ամբողջության բոլոր կանոններով կաթոլիկ եկե-ղը ջնջինել էր գաղտագողեր, որոնց մեջ եկեղեցա-և պետք ինքնակալության անուններով հաստատում էր, թէ սամաթ-թագավորի արարքները ժողովրդ-դի բարօրության համար են, թէ թագավորի իշ-խանությունը Աստուծոյ է և չէ կարող վրա լի-նել ոչ մի դժգոհում։ Գլադստոն իր առանձը նկա-րագրեց մի բրօշիւրի մէջ, որի վերնագիրն էր «Նեապոլիտանէր լորդ Աբերդինին»։ Ահա ի միջի այլոց ինչ էր գրում նա.

«Նէապոլիտանական կառավարության սիստեմն ընթացքը՝ կրօնի, քաղաքակրթության, մարդկու-թեան և վայելչության անուամարգութիւն է։ Օրէնք-ները կատարելապէս ոտնակոխ անելու համար ոստիկանապետը և նրա ծառաները հետամուտ են լինում մարդկանց, մտնում են նրանց տները— յաճախ գիշեր ժամանակ—յափշտակում են նրանց գրասում են թղթերը և գույքը, պոկում են, եթէ

ուզում են, լաստակի տախտակները և պատերի պաստառները՝ այնտեղ թաքցրած զենք գտնելու պատրվակով․ մարդկանց բանտ են նետում տասնեակներով, հարիւրներով, մինչև իսկ հազարներով՝ առանց որևէ դատավճռի, երբեմն նոյն-իսկ առանց որևէ գրաւոր լիազորութեան, լոկ մի ոստիկանի խօսքով։ Մարդկանց կալանաւորում են ոչ թէ այն պատճառով, որ նրանք կատարել են կամ գուցէ կատարել են որևէ յանցանք, այլ լոկ այն պատճառով, որ թւում է, թէ աւելի լաւ է նրանց փակած պահել։ Այն երկիրներում, ուր կայ արդարադատութիւն՝ անօրինութիւն է համարւում պատժել մարդկանց մտքերի պատճառով, իսկ այստեղ մտքերը ոչ միայն պատժւում են, այլ և կեղծւում են, որպէս զի կարելի լինի պատժել։ Բաւական է ասել, որ կեղծ վկայութիւնների համար ոչ մի պատիժ չը կայ։ Ոստիկանապետն ինքն է կաշառք առաջարկում վկաներին։

«Նէապոլիտանեան բանտերը սարսափի և նողկանքի համանիշ բառեր են։ Ես տեսել եմ շատ բան, բայց սրանից վատը չեմ տեսել։ Ես եղայ ստորերկրեայ բանտերում, ուր լոյսը թափանցում է առաստաղի մէջ կամ պատի վերևում շինած փոքրիկ վանդակից. ես տեսայ, թէ ինչպէս բժիշկները հրաժարւում էին իջնել ցեխի և գարշահոտութեան այդ փոսերը, ուստի հիւանդ, կիսամեռ կալանաւորներին բերում էին նրանց մօտ, վերև»։

[illegible]

[illegible]

[illegible]

խիստ էր հարուածը, որ Գլադստոնի նամակների դէմ ամբողջ հատորներ գրուեցան, որոնք պնդում էին թէ, ընդհակառակն, «ռումբ-թագաւորի» հպատակները միանգամայն երջանիկ են։ Ֆերդինանդի կառավարութեան ներկայացուցիչը Լոնդոնում պահանջում էր, որ օտար պետութիւններին ուղարկուի նաև Գլադստոնի գրածների հերքումը, բայց լորդ Պալմերստոն կոպիտ կերպով մերժեց այդ պահանջը։

Ճիշտ է, Նէապոլի բռնակալութիւնը շարունակուեց և դրանից յետոյ, մինչև որ Գարիբալդի իր հռչակաւոր զօրախմբով եկաւ և ազատեց խեղճ ժողովուրդը, բայց Գլադստոն բռնութեան օջախի առաջին սասանեցողն էր։ Մօտիկ ծանօթութիւն հաստատելով իտալացի հայրենասէրների հետ, որոնց մէջ կային Գարիբալդիի պէս խելքի և տաղանդի տէր մարդիկ՝ նա վերադարձաւ Անգլիա։

Դ.

Պահպանողականներից երես դարձնելը։—Անհաշտ մրցակիցներ և առաջին ճառըը։—Ֆինանսական բարեկարգութիւններ։—Ռոկեզարի ակերդը։—Արևելեան հարցը մինչև 1853 թուականը։—Դաշնակցութիւն Ռուսաստանի դէմ։—Գլադստոնի բռնած դիրքը։—Պարիզի դաշնադրութիւնը։—Ի՞նչ էր նա։—Առաջին յարձակում Թիւրքիայի դէմ։—Գործերից յետ քաշուելը։—Դիզրաէլիի ջանքերը։—Յոնիական կղզիներում։—Հոմերոս։

1852 *թուի սկզբում գործերի գլուխ անցաւ լորդ Դէրբիի մինիստրութիւնը։ Նրա մէջ առաջին անգամ պաշտօն ստացաւ մի մարդ, որ ապագայում մեծ անուն պիտի հանէր։ Այդ մարդը Դիզրաէլին էր։ Գլադստօն, հրաւէր ստանալով իր ընկերների հետ պաշտօններ ստանձնել նոր մինիստրութեան մէջ՝ բացասական պատասխան տուեց։ Այսպիսով նա կտրեց իր բոլոր կապերը պահպանողական կուսակցութեան հետ, և գլխաւոր պատճառը Դիզրաէլին էր, որի հետ Գլադստօն չէր ուզում գործել։ Պէտք է ասել, որ Րօբէրտ Պիլ վախճանուել էր մի տարի առաջ, և նրա կուսակցութիւնը ա-*

ռանց պարագլխի էր մնացել. մի մասը նորից վերադարձաւ պահպանողականների շարքը, իսկ Գլադստօն դարձաւ Դիզրաէլիի հակառակորդը։ Հարկաւոր է մի քանի խօսք ասել այս վերջինի մասին, որի գործունէութիւնը այնքան աղէտաբեր էր մանաւանդ արևելեան հարցում։

Դիզրաէլի, կամ, ինչպէս ասում էին արհամարհողները՝ «Դիզի», շատ խելօք և ընդունակ մի հրէայ էր, որ իր գրած մի քանի վէպերով բաւական յայտնի անուն էր հանել անգլիական գրականութեան մէջ։ Սկզբում նա պատկանում էր արմատական կուսակցութեան։ Լինելով չափազանց փառասէր՝ նա ձգտում էր ձեռք բերել իշխանութիւն, հարստութիւն։ Շուտով նա թողեց ազատամիտներին և դարձաւ ծայրայեղ պահպանողական։ Առաջին աջողութիւնները, որոնց նա հասաւ մեծ դժուարութիւններով, փոխեցին նրա բարոյական կերպարանքը։ Նա մի տաղանդաւոր արկածախնդիր էր, ճարպիկ, շուտ հասկացող, առանց որևէ սկզբունքի—մի քամելէոն, որ փոխում էր իր գոյները առանց դժուարութեան։ Նրան տրուած էր գրելու շնորհք. պակաս չէր և խօսելու տաղանդը. նա ունէր օձի լեզու, իր ճառերը համեմում էր լպիրշ սրախօսութիւններով և կարողանում էր պղտորել մարդկանց մտքերը նոյն-իսկ ամենապարզ հարցերի մէջ։ Սեփական շահը, իր կուսակցութեան աջողութիւնը այդ շահի համար և Անգլիայի աջո-

ղութիւնը իբրև միջոց իր կուսակցութեան աջո-
ղութեան համար՝ ահա այդ մարդու դաւանանքը։
Գլադստոն և նա—երկու հակապատկերներ էին։

Համայնքների ժողովը երկար տարիների ըն-
թացքում այդ երկու հակադրութիւնների կատաղի
մենամարտութեան ասպարէզ դարձաւ։ Առաջին
անգամ Գլադստոն ջարդեց նրան նոյն 1852 թուին՝
Դիզրաէլի ֆինանսների մինիստր էր և իր կազ-
մած նախահաշիւը անց կացնելու համար սկսեց
անխնայ հարուածել պիլեաններին, որոնց համա-
րում էր ամենավտանգաւոր հակառակորդներ. Նա
կամենում էր նորից մտցնել մաքսահարկ հացահա-
տիկների համար։ Եւ ահա Գլադստոն, իբրև երե-
ւելի ֆինանսագէտ, խիստ քննադատութեամբ ո-
չնչացրեց Դիզրաէլիի նախահաշիւը, ապացուցեց,
թէ ֆինանսների մինիստրը որքան անընդունակ
է ֆինանսական գործերի մէջ։ Համայնքների ժո-
ղովը մերժեց այդ նախահաշիւը, և Դիզրաէլի տա-
պալուեց ամբողջ մինիստրութեան հետ։ Կազմուեց
լորդ Աբէրդինի ազատամիտ մինիստրութիւնը.
Գլադստոն ստացաւ իր տապալած հակառակորդի
պաշտօնը—ֆինանսների մինիստրութիւնը։ Մի
կարճ միջոցում նա ամենագեղեցիկ դրութեան հաս-
ցրեց Անգլիայի տնտեսական վիճակը։ Խելացի,
օգտաւէտ կարգադրութիւնները կեանք տուին եր-
կրի առևտրական գործունէութեան. ժողովուրդը
հարստանում էր, բանուորների դրութիւնը բար-

ւոքւում էր։ Պետական պարտքերի մեծ մասը վճարուեց, և 30 միլիոն րուբլի աւելացաւ եկամուտներից։ Այս սքանչելի աջողութիւնները հըրճուանք էին պատճառում ամբողջ մինիստրութեան. հակառակորդները լռեցին. և ինչպէս չը լռէին, երբ պարզ տեսնում էին վաճառականական և արդիւնագործական ոսկեդարի սկզբնաւորութիւնը։ Աշխարհի բոլոր կողմերից հարստութիւններ էին թափւում Անգլիա և ամեն մի ձեռնարկութիւն անհագին օգուտներ էր տալիս։

Բայց այս ոսկեդարը, որի հիմնադիրը Գլադստոնի տաղանդն էր՝ շուտ ոչնչացրին քաղաքական հանգամանքները։ Արևելեան հարցը ծանր և վտանգաւոր կերպարանք ստացաւ. պատրաստւում էր մեր դարի ամենասարսափելի պատերազմներից մէկը —Ղրիմի պատերազմը, որ իր ամբողջ ծանրութեամբ ընկաւ Անգլիայի վրայ։ Ի՞նչպէս առաջացաւ նա։

Արևմտեան Եւրոպան դեռ ռուսաց Պետրոս մեծ կայսրի ժամանակից ականատես էր, թէ ինչպէս Ռուսաստանը ջանքեր է անում ոչնչացնել Թիւրքիան և նրա փլատակների վրայ նոր, քրիստոնեայ պետութիւններ ստեղծել։ ԺԸ դարում Ռուսաստանը մի շարք պատերազմներ մղեց Թիւրքիայի դէմ և կարողացաւ ջլատել այդ մահմեդական հսկայ բռնապետութիւնը. Եկատերինա կայսրուհու տենչանքներից մէկն էր վերանորոգել

հին բիւզանդական կայսրութիւնը՝ ռուսաց հովանաւորութեան տակ։ Նապօլէօնի տիրապետութիւնը առ ժամանակ մոռացնել տուեց Թիւրքիան։ Բայց երբ ռուսաց գահը բարձրացաւ Նիկոլայ Ա՝ Ռուսաստանը նորից ձեռք առաւ արևելեան քրիստոնեաների հարցը։ 1828 թուի պատերազմը սարսափելի հարուած էր Թիրքիայի համար. ռուսաց զօրքերը հասան Ադրիանուպօլիս, և այնտեղ կընքուած դաշնադրութեամբ Թիւրքիան ճանաչեց Յունաստանի անկախութիւնը, այլ և հաստատեց նախկին դաշնագիրները, որոնց զօրութեամբ Ռուսաստանը Թիւրքիայում գտնուող յունադաւան քրիստոնեաների հովանաւորն էր համարւում։ Բայց այդ ժամանակից հազիւ մի տարի անցած՝ Ռուսաստանը փոխեց իր քաղաքականութիւնը։ Տեսնելով որ Եւրոպան շատ անվստահ է իր բռնած ուղղութեան վերաբերմամբ և կասկածներ ունի թէ Թիւրքիան կոչնչացնուի ռուսների ձեռքով՝ Նիկոլայ Ա. բարեկամութիւն հաստատեց սուլթանի հետ, որպէսզի խաղաղ միջոցներով իր ազդեցութեան տակ պահէ թէ Կ. Պոլիսը և թէ առ հասարակ Արևելքը։ Այս պատճառով նա շատ զիջումներ արաւ, մեղմացրեց Ադրիանուպոլսի դաշնադրութեան մի քանի ծանր պայմանները։ Իսկ երբ 1833 թուին Եգիպտոսի Մէհմէդ-Ալի փաշան ապստամբուեց սուլթանի դէմ և նուաճեց Փոքր Ասիայի մեծ մասը՝ Ռուսաստանը շտապեց փրկել Թիւրքիան վերջնական կործանից։

Այն ժամանակ, երբ եգիպտական զօրքերը Փոքր Ասիայի կողմից մօտենում էին Կ. Պոլսին՝ ռուսաց զօրքը ափ իջաւ Թիւրքաց մայրաքաղաքի մօտ և Մէհմէդ-Ալի փաշան ռուսաց կառավարութեան կողմից ստացաւ առաջարկութիւն՝ դադարեցնել արշաւանքը։ Եւրոպան լուռ հանդիսատես էր, այնպէս որ եթէ չը լինէր Ռուսաստանը՝ Թիւրքիան կ'ոչնչանար։

Ազատելով սուլթանի գահը՝ ռուսները 1833 թուին Կ. Պոլսի մօտ, Հիւնքեար-Իսկելեսի անունով տեղում, կնքեցին մի դաշնադրութիւն, որով երկու պետութիւնները — Ռուսաստան և Թիւրքիա — պարտաւորւում էին պահպանել միմեանց և միասին դիմադրել, եթէ նրանցից մէկը ենթարկուի մի ուրիշ պետութեան յարձակման։ Սուլթանը պարտաւորուեց փակել Դարդանէլի նեղուցը և ոչ մի դէպքում թոյլ չը տալ, որ այդտեղով պատերազմական նաւեր անցնեն։ Բայց այս դաշնակցութիւնը աւելի ևս սաստկացրեց կասկածները արեւմտեան Եւրոպայում. պետութիւնները միացան և առաջարկեցին, որ Թիւրքիան գտնուի ոչ թէ մի որևէ առանձին պետութեան հովանու տակ, այլ ամբողջ Եւրոպայի, նրա բոլոր պետութիւնների հաւաքական խնամքի տակ։ Այս պատճառով, երբ 1839 թուին Մէհմէգ-Ալին նորից ապստամբուեց, սուլթանը՝ ականջ դնելով իրան տուած խորհուրդներին, դիմեց ոչ թէ Ռուսաստանին, այլ ամբողջ

-էին քաղաքական յանցաւորները, ուսումնասիրեց նրանց դրութիւնը, հաւաքեց սոսկալի փաստեր. Մանաւանդ նա զայրացած էր կաթոլիկ հոգևորականութեան վրայ, որ բացարձակ կերպով պաշտպանում էր այդ անամօթ բռնակալութիւնը և գործ էր դնում իր ամբողջ հեղինակութիւնը, որ սովորեցնէ ժողովրդին հլու հնազանդութեամբ տանել Ֆերդինանդի բարբարոսութիւնները։ Մինչդեռ սարսափները օր օրի վրայ աւելանում էին տմարդութեան բոլոր կանոններով՝ կաթոլիկ կղերը յօրինել էր դասագրքեր, որոնց մէջ եկեղեցու և պապի հեղինակաւոր անուններով հաստատւում էր, թէ «ռումբ-թագաւորի» արարքները ժողովրդի բարօրութեան համար են, թէ թագաւորի իշխանութիւնը Աստուծուց է և չէ կարող վատ լինել ոչ մի դէպքում։ Գլադստօն իր տեսածը նկարագրեց մի բրօշիւրի մէջ, որի վերնագիրն էր «Նամակներ լօրդ Աբէրդինին»։ Ահա ի միջի այլոց ինչ էր գրում նա.

«Նէապոլիտանեան կառավարութեան այժմեան ընթացքը՝ կրօնի, քաղաքակրթութեան, մարդկութեան և վայելչութեան անուարկութիւն է։ Օրէնքները կատարելապէս ոտնակոխ անելու համար ոստիկանապետը և նրա ծառաները հետամուտ են լինում մարդկանց, մտնում են նրանց տները— յաճախ գիշեր ժամանակ—յափշտակում են նրանց, գրաւում են թղթերը և գոյքը, պոկում են, եթէ

ուղում են, յատակի տախտակները և պատերի պաստառները՝ այնտեղ թագցրած զէնք գտնելու պատրուակով. մարդկանց բանտ են նետում տասնեակներով, հարիւրներով, մինչև իսկ հազարներով՝ առանց որևէ դատավճռի, երբեմն նոյն-իսկ առանց որևէ գրաւոր լիազորութեան, լոկ մի ոստիկանի խօսքով։ Մարդկանց կալանաւորում են ոչ թէ այն պատճառով, որ նրանք կատարել են կամ գուցէ կատարել են որևէ յանցանք, այլ լոկ այն պատճառով, որ թւում է, թէ աւելի լաւ է նրանց փակած պահել։ Այն երկիրներում, ուր կայ արդարադատութիւն՝ անօրինութիւն է համարւում պատժել մարդկանց մտքերի պատճառով, իսկ այստեղ մտքերը ոչ միայն պատժւում են, այլ և կեղծւում են, որպէս զի կարելի լինի պատժել։ Բաւական է ասել, որ կեղծ վկայութիւնների համար ոչ մի պատիժ չը կայ։ Ոստիկանապետն ինքն է կաշառք առաջարկում վկաներին։

«Նէապոլիտանեան բանտերը սարսափի և նողկանքի համանիշ բաներ են։ Ես տեսել եմ շատ բան, բայց սրանից վատը չեմ տեսել։ Ես եղայ ստորերկրեայ բանտերում, ուր լոյսը թափանցում է առաստաղի մէջ կամ պատի վերևում շինած փոքրիկ վանդակից. ես տեսայ, թէ ինչպէս բժիշկները հրաժարւում էին իջնել ցեխի և գարշահոտութեան այդ փոսերը, ուստի հիւանդ, կիսամեռ կալանաւորներին բերում էին նրանց մօտ, վերև»։

Իր գրությունը այսպես էր վերջացնում Գլադստոն.

«Ժամանակ է, վերջապես, վերցնել վարագույրը այս տեսարաններից, որոնք ավելի գժոխքին են սազ գալիս, քան աշխարհին։ Ես յանձն առայ այս չափազանց յոգնեցուցիչ և անախորժ աշխատությունը այն յուսով, թէ մի բան կանեմ մարդկային տանջանքների այս հսկայական կույտը փոքրացնելու համար»։

«Նամակները» Անգլիայում ահագին յուզմունք առաջացրին։ Հասարակական կարծիքը պահանջեց օգնություն տանջվողներին։ Համայնքների ժողովում հարցապնդում եղաւ, և Պալմերստոն պատասխանեց, որ իր ստացած տեղեկությունները միանգամայն հաստատում են Գլադստոնի գրածները։ Իրաւունք չը համարելով օտար պետությունների ներքին գործերի մէջ խառնուել՝ անգլիական կառավարությունը, այնուամենայնիւ, այդ նամակների պատճէնները ուղարկեց իր դեսպաններին, որպէսզի նրանք փորձեն պետությունների մի միահամուռ բարոյական ճնշում ստեղծել՝ Նէապոլում գործադրելու համար։ Գլադստոն թէև չը կարողացաւ քաղաքական մի ուժեղ հոսանք առաջացնել «ռումբթագաւորի» դէմ, բայց լաւ պատժեց Նէապոլի դահիճներին, Եւրոպայի հասարակական կարծիքը գրգռելով նրանց դէմ։ Ամեն տեղից լսում էին զայրոյթի և նախատինքի ձայներ։ Եւ այնքան

խիստ էր հարուածը, որ Գլադստոնի նամակների դէմ ամբողջ հատորներ գրուեցան, որոնք պնդում էին թէ, ընդհակառակն, «ռումբ-թագաւորի» հպատակները միանգամայն երջանիկ են։ Ֆերդինանդի կառավարութեան ներկայացուցիչը Լոնդոնում պահանջում էր, որ օտար պետութիւններին ուղարկուի նաև Գլադստոնի գրածների հերքումը, բայց լորդ Պալմերստոն կոպիտ կերպով մերժեց այդ պահանջը։

Ճիշտ է, Նէապոլի բռնակալութիւնը շարունակուեց և դրանից յետոյ, մինչև որ Գարիբալդի իր հռչակաւոր զօրախմբով եկաւ և ազատեց խեղճ ժողովուրդը, բայց Գլադստոն բռնութեան օջախի առաջին սասանեցողն էր։ Մօտիկ ծանօթութիւն հաստատելով իտալացի հայրենասէրների հետ, որոնց մէջ կային Գարիբալդիի պէս խելքի և տաղանդի տէր մարդիկ՝ նա վերադարձաւ Անգլիա։

Դ.

Պահպանողականներից երես դարձնելը.—Անհաշտ մրցակիցներ և առաջին ջարդը.—Ֆինանսական բարեկարգութիւններ.—Ոսկեդարի սկիզբը.—Արևելեան հարցը մինչև 1853 թուականը.—Դաշնակցութիւն Ռուսաստանի դէմ.—Գլադստոնի բռնած դիրքը.—Պարիզի դաշնադրութիւնը.—Ի՞նչ էր նա.—Առաջին յարձակում Թիւրքիայի դէմ.—Գործերից յետ քաշուելը.—Դիզրաէլիի ջանքերը.—Յոնիական կղզիներում.—Հոմերոս։

1852 *թուի սկզբում գործերի գլուխ անցաւ լորդ Դէրբիի մինիստրութիւնը։ Նրա մէջ առաջին անգամ պաշտօն ստացաւ մի մարդ, որ ապագայում մեծ անուն պիտի հանէր։ Այդ մարդը Դիզրաէլին էր։ Գլադստոն, հրաւէր ստանալով իր ընկերների հետ պաշտօններ ստանձնել նոր մինիստրութեան մէջ՝ բացասական պատասխան տուեց։ Այսպիսով նա կտրեց իր բոլոր կապերը պահպանողական կուսակցութեան հետ, և գլխաւոր պատճառը Դիզրաէլին էր, որի հետ Գլադստոն չէր ուզում գործել։ Պէտք է ասել, որ Ռօբէրտ Պիլ վախճանուել էր մի տարի առաջ, և նրա կուսակցութիւնը ա-*

ռանց պարագլուխ էր մնացել. մի մասը նորից վերադարձաւ պահպանողականների շարքը, իսկ Գլադստօն դարձաւ Դիզրաէլիի հակառակորդը։ Հարկաւոր է մի քանի խօսք ասել այս վերջինի մասին, որի գործունէութիւնը այնքան աղէտաբեր էր մանաւանդ արևելեան հարցում։

Դիզրաէլի, կամ, ինչպէս ասում էին արհամարհողները՝ «Դիզի», շատ խելօք և ընդունակ մի հրէայ էր, որ իր գրած մի քանի վէպերով բաւական յայտնի անուն էր հանել անգլիական գրականութեան մէջ։ Սկզբում նա պատկանում էր արմատական կուսակցութեան։ Լինելով չափազանց փառասէր՝ նա ձգտում էր ձեռք բերել իշխանութիւն, հարստութիւն։ Շուտով նա թողեց ազատամիտներին և դարձաւ ծայրայեղ պահպանողական։ Առաջին աջողութիւնները, որոնց նա հասաւ մեծ դժուարութիւններով, փոխեցին նրա բարոյական կերպարանքը։ Նա մի տաղանդաւոր արկածախընդիր էր, ճարպիկ, շուտ հասկացող, առանց որևէ սկզբունքի—մի քամելէոն, որ փոխում էր իր գոյները առանց դժուարութեան։ Նրան տրուած էր գրելու շնորհք. պակաս չէր և խօսելու տաղանդը. Նա ունէր օձի լեզու, իր ճառերը համեմում էր լպիրշ սրախօսութիւններով և կարողանում էր պղտորել մարդկանց մտքերը նոյն-իսկ ամենապարզ հարցերի մէջ։ Սեփական շահը, իր կուսակցութեան աջողութիւնը այդ շահի համար և Անգլիայի աջո-

ղութիւնը իբրև միջոց իր կուսակցութեան աջողութեան համար՝ անձ այդ մարդու դաւանանքը։ Գլադստօն և նա—երկու հակապատկերներ էին։

Համայնքների ժողովը երկար տարիների ընթացքում այդ երկու հակադրութիւնների կատաղի մենամարտութեան ասպարէզ դարձաւ։ Առաջին անգամ Գլադստօն ջարդեց նրան նոյն 1852 թուին․ Դիզրաէլի ֆինանսների մինիստր էր և իր կազմած նախահաշիւը անց կացնելու համար սկսեց անխնայ հարուածել պիլեաններին, որոնց համարում էր ամենավտանգաւոր հակառակորդներ. Նա կամենում էր նորից մտցնել մաքսահարկ հացահատիկների համար։ Եւ ահա Գլադստօն, իբրև երեւելի ֆինանսագէտ, խիստ քննադատութեամբ ոչնչացրեց Դիզրաէլիի նախահաշիւը, ապացուցեց, թէ ֆինանսների մինիստրը որքան անընդունակ է ֆինանսական գործերի մէջ։ Համայնքների ժողովը մերժեց այդ նախահաշիւը, և Դիզրաէլի տապալուեց ամբողջ մինիստրութեան հետ։ Կազմուեց լորդ Աբէրդինի ազատամիտ մինիստրութիւնը. Գլադստօն ստացաւ իր տապալած հակառակորդի պաշտօնը—ֆինանսների մինիստրութիւնը։ Մի կարճ միջոցում նա ամենագեղեցիկ դրութեան հասցրեց Անգլիայի տնտեսական վիճակը։ Խելացի, օգտաւէտ կարգադրութիւնները կեանք տուին երկրի առևտրական գործունէութեան. ժողովուրդը հարստանում էր, բանուորների դրութիւնը բար-

ւոքւում էր։ Պետական պարտքերի մեծ մասը վճարուեց, և 30 միլիոն րուբլի աւելացաւ եկամուտներից։ Այս սքանչելի աջողութիւնները հըրճուանք էին պատճառում ամբողջ մինիստրութեան. հակառակորդները լռեցին. և ի՞նչպէս չը լռէին, երբ պարզ տեսնում էին վաճառականական և արդիւնագործական ոսկեդարի սկզբնաւորութիւնը։ Աշխարհի բոլոր կողմերից հարստութիւններ էին թափւում Անգլիա և ամեն մի ձեռնարկութիւն անհագին օգուտներ էր տալիս։

Բայց այս ոսկեդարը, որի հիմնադիրը Գլադստօնի տաղանդն էր՝ չուտ ոչնչացրին քաղաքական հանգամանքները։ Արևելեան հարցը ծանր և վտանգաւոր կերպարանք ստացաւ. պատրաստւում էր մեր դարի ամենասարսափելի պատերազմներից մէկը —Ղրիմի պատերազմը, որ իր ամբողջ ծանրութեամբ ընկաւ Անգլիայի վրայ։ Ի՞նչպէս առաջացաւ նա։

Արևմտեան Եւրոպան դեռ ռուսաց Պետրոս մեծ կայսրի ժամանակից ականատես էր, թէ ինչպէս Ռուսաստանը ջանքեր է անում ոչնչացնել Թիւրքիան և նրա փլատակների վրայ նոր, քրիստոնեայ պետութիւններ ստեղծել։ ԺԸ դարում Ռուսաստանը մի չարք պատերազմներ մղեց Թիւրքիայի դէմ և կարողացաւ ջլատել այդ մահմեդական հսկայ բռնապետութիւնը. Եկատերինա կայսրուհու տենչանքներից մէկն էր վերանորոգել

հին բիւզանդական կայսրութիւնը՝ ռուսաց հովանաւորութեան տակ։ Նապօլէօնի տիրապետութիւնը առ ժամանակ մոռացնել տուեց Թիւրքիան։ Բայց երբ ռուսաց գահը բարձրացաւ Նիկոլայ Ա՝ Ռուսաստանը նորից ձեռք առաւ արևելեան քրիստոնեաների հարցը։ 1828 թուի պատերազմը սարսափելի հարուած էր Թիւրքիայի համար. ռուսաց զօրքերը հասան Ադրիանուպօլիս, և այնտեղ կնքուած դաշնադրութեամբ Թիւրքիան ճանաչեց Յունաստանի անկախութիւնը, այլ և հաստատեց նախկին դաշնագիրները, որոնց զօրութեամբ Ռուսաստանը Թիւրքիայում գտնուող յունադաւան քրիստոնեաների հովանաւորն էր համարւում։ Բայց այդ ժամանակից հազիւ մի տարի անցած՝ Ռուսաստանը փոխեց իր քաղաքականութիւնը։ Տեսնելով որ Եւրոպան շատ անվստահ է իր բռնած ուղղութեան վերաբերմամբ և կասկածներ ունի թէ Թիւրքիան կոչնչացնուի ռուսների ձեռքով՝ Նիկոլայ Ա. բարեկամութիւն հաստատեց սուլթանի հետ, որպէսզի խաղաղ միջոցներով իր ազդեցութեան տակ պահէ թէ Կ. Պոլիսը և թէ առ հասարակ Արևելքը։ Այս պատճառով նա շատ զիջումներ արաւ, մեղմացրեց Ադրիանուպոլսի դաշնադրութեան մի քանի ծանր պայմանները։ Իսկ երբ 1833 թուին Եգիպտոսի Մէհմէդ-Ալի փաշան ապստամբուեց սուլթանի դէմ և նուաճեց Փոքր Ասիայի մեծ մասը՝ Ռուսաստանը շտապեց փրկել Թիւրքիան վերջնական կորստից։

Այն ժամանակ, երբ եգիպտական զօրքերը Փոքր Ասիայի կողմից մօտենում էին Կ. Պոլսին՝ ռուսաց զօրքը ափ իջաւ Թիւրքաց մայրաքաղաքի մօտ և Մէհմէդ-Ալի փաշան ռուսաց կառավարութեան կողմից ստացաւ առաջարկութիւն՝ դադարեցնել արշաւանքը։ Եւրոպան լուռ հանդիսատես էր, այնպէս որ եթէ չը լինէր Ռուսաստանը՝ Թիւրքիան կոչնչանար։

Ազատելով սուլթանի գահը՝ ռուսները 1833 թուին Կ. Պոլսի մօտ, Հիւնքեար-Իսկելէսի անունով տեղում, կնքեցին մի դաշնադրութիւն, որով երկու պետութիւնները—Ռուսաստան և Թիւրքիա—պարտաւորւում էին պաշտպանել միմեանց և միասին դիմադրել, եթէ նրանցից մէկը ենթարկուի մի ուրիշ պետութեան յարձակման։ Սուլթանը պարտաւորուեց փակել Դարդանէլի նեղուցը և ոչ մի դէպքում թոյլ չը տալ, որ այլ[?]տեղով պատերազմական նաւեր անցնեն։ Բայց այս դաշնակցութիւնը աւելի ևս սաստկացրեց կասկածները արևմտեան Եւրոպայում. պետութիւնները միացան և առաջարկեցին, որ Թիւրքիան գտնուի ոչ թէ մի որևէ առանձին պետութեան հովանու տակ, այլ ամբողջ Եւրոպայի, նրա բոլոր պետութիւնների հաւաքական խնամքի տակ։ Այս պատճառով, երբ 1839 թուին Մէհմէդ-Ալին նորից ապստամբուեց, սուլթանը՝ ականջ դնելով իրան տուած խորհուրդներին, դիմեց ոչ թէ Ռուսաստանին, այլ ամբողջ

Եւրոպային։ 1840 և 1841 թուականներին Լօնդոնում գումարուեց պետութիւնների ներկայացուցիչների ժողով, որ քննում էր արևելեան գործերը։ Այդտեղ Ռուսաստանը իր յօժար կամքով զըրկուեց այն բոլոր իրաւունքներից, որ ձեռք էր բերել Հիւնքեար-Իսկէլէսիի դաշնադրութեամբ։ Թիւրքիան Եւրոպայի հովանաւորութեան տակ դրուեց և նրա ամբողջութիւնն ու անկախութիւնը հրատարակուեց իբրև միակ հիմք արևելեան քաղաքականութեան։

1853 թուին Պաղեստինի սուրբ տեղերի պատճառով անհամաձայնութիւններ ծագեցին կաթոլիկների և յոյների մէջ։ Նիկոլայ կայսրը յունադաւանութեան պաշտպան հանդիսացաւ և պահանջեց, որ սուլթանը մի ֆիրմանով հաստատէ յունական եկեղեցու իրաւունքները Երուսաղէմում։ Այս հարցը կարգադրելու համար Կ. Պոլիս գնաց լիազօր դեսպան Մենշիկօվ, որին, ի միջի այլոց, յանձնարարուած էր մի գաղտնի դաշնադրութիւն կնքել Բ. Դրան հետ դարձեալ այն մտքով, թէ Ռուսաստանը սուլթանի հպատակ քրիստոնեաների հովանաւորն է։ Ահա այստեղ անգլիական և ֆրանսիական կառավարութիւնները, իրանց կողմն ունենալով ամբողջ արևմտեան Եւրոպայի համաձայնութիւնը՝ հակառակուեցան Ռուսաստանին։ Դեսպանների թելադրութեամբ սուլթանը մերժեց դաշնադրութիւն կապելու առաջարկը, ուստի դեսպան

Մենշիկով, որի բռնած դիրքը առհասարակ սպառնական էր և գրգռիչ՝ հեռացաւ Կ. Պոլսից։ Պատերազմը անխուսափելի դարձաւ մանաւանդ այն ժամանակ, երբ Նապօլէոն Գ Անգլիայի հետ համաձայնութիւն կայացրեց Ռուսաստանի դէմ։ Անգլօ-ֆրանսիական նաւատորմը մտաւ Դարդանէլ։ Սուլթանը պատերազմ հրատարակեց Ռուսաստանի դէմ։ Շուտով նրա հետ միացան Ֆրանսիան և Անգլիան։

Անգլիական մինիստրներից լորդ Աբէրդին և Գլադստօն հակառակ էին այդ պատերազմին։ Հակառակ էին նաև ազատ առևտրի կողմնակիցները։ Կօբդէն և Բրայտ միտինգներ էին կազմում, բողոքում էին պատերազմի դէմ։ Բրայտ մի պատգամաւորութեան գլուխ անցած՝ գնաց Պետերբուրգ և խնդրեց Նիկոլայ կայսրին պատերազմ չը սկսել։ Բայց կայսրը չը զիջեց։

Ղրիմի պատերազմը յամառ էր և երկարատև (1853—1856)։ Երեք դաշնակից պետութիւնները— Ֆրանսիան, Անգլիան և Թիւրքիան պաշարեցին Սեվաստօպօլը, կռիւներ էին մղում Ղրիմի թերակղզու զանազան կողմերում, բայց մի առանձին աջողութիւն չունէին։ Անգլիական բանակը անչափ վնասներ կրեց ոչ այնքան ռուսայ զինակներից, որքան խօլերայից և այլ հիւանդութիւններից։ Յայտնի դարձաւ, որ անգլիական զօրքերը այնքան զոհեր են տալիս՝ կառավարութեան ան-

հողութեան պատճառով։ Ցարձակումները մինիստրութեան դէմ սաստկացան, և լօրդ Աբէրդին հրաժարական տուեց։ Նրա տեղն անցաւ լօրդ Պալմերստօն. իսկ Գլադստօն ստիպուած եղաւ շարունակել իր պաշտօնը, որովհետև ոչ ոք յանձն չէր առնում մի այդպիսի դժուար ժամանակ վարել պետութեան դրամական գործերը։ Եւ իրաւ, հարկաւոր էր մի հմուտ, հասկացող մարդ. Ղրիմի պատերազմը Անգլիայից խլեց 400 միլիոն րուբլի։ Այս վիթխարի զոհաբերութիւնը ծանրանում էր ազգաբնակութեան վրայ այն ժամանակ, երբ Անգլիան, ինչպէս տեսանք՝ նոր էր սկսել հսկայական քայլեր անել առևտրական և արդիւնաբերական ասպարէզում։ Գլադստօն, ստիպուած լինելով հնազանդել անհրաժեշտութեան՝ մնաց Ղրիմի պատերազմի հեղինակների գործակից, թէև ամեն յարմար առիթից օգտուելով՝ իր բողոքներն էր յայտնում։ Նա հրապարակով դատապարտում էր Ռուսաստանի աշխարհակալական ձգտումները, բայց միևնոյն ժամանակ ապացուցանում էր, որ քրիստոնէութեան և արդարութեան տեսակէտից բոլորովին անօգուտ է պահպանել մեռնող Թիւրքիան։ Եւ դա միանգամայն ճիշտ էր. Եւրոպան սարսափելի զոհաբերութիւններ էր անում, որպէս զի պահպանէ իր ծոցում մահմետական մի բարբարոս բռնապետութիւն, որ վաղուց խեղդուած պիտի լինէր իր թափած արեան ծովերի մէջ...

1855 թուին, մինչդեռ շարունակւում էր պատերազմը՝ մեռաւ Նիկոլայ Ա։ Նրա յաջորդը, կայսըր Ալէքսանդր Բ, խաղաղասիրութիւն ցոյց տուեց, և Վիեննայում դեսպանաժողով գումարուեց՝ հաշտութեան պայմաններ որոշելու համար։ Դեսպանաժողովը վճռեց, որ Թիւրքիան անձեռնմխելի պիտի մնայ, Ռուսաստանը պիտի հրաժարուի Թիւրքիայի քրիստոնեաներին հովանաւորելու մաքից և բացի դրանից իրաւունք չը պիտի ունենայ նաւատորմ պահել Սև ծովի վրայ։ Ռուսաստանը մերժեց այս վերջին պայմանը. Անգլիան զիջողութիւն չարաւ, և պատերազմը վերանորոգուեց։ Այս անգամ երեք դաշնակիցներին միացաւ և չորրորդը—Սարդինիան, որ 15 հազար զօրք ուղարկեց Սև ծովը և ստացաւ Անգլիայից 10 միլիոն րուբլի։ Գլադստօն դարձեալ բողոքեց. նա ապացուցանում էր, որ պատերազմը արդէն հասել է իր նպատակին։ Գալով այն բանին, որ Ռուսաստանը պիտի զրկուի Սև ծովի վրայ նաւատորմ պահելու իրաւունքից՝ Գլադստօն ասաց, որ դա անպատւութիւն է Ռուսաստանի համար։ «Իսկ եթէ մենք այժմ կռւում ենք միայն պատերազմական փառք ձեռք բերելու համար,—շարունակեց նա—թող պատգամաւորների ժողովը նայէ բանականութեան աչքերով, և նա կը տեսնէ, որ այդպիսի ձգտումը անբարոյական է, հակամարդկային և հակաքրիստոնէական»։ Այս անգամ էլ նա փորձում էր արդարութեան և մարդ-

կայնութեան սկզբունք մտցնել քաղաքական գործերի մէջ, բայց իզուր։ Շատերը մեղադրեցին նրան, ասելով թէ նա հայրենիքի թշնամիների կողմն է։

Վերջապէս դաշնակից զօրքերը գրաւեցին Սեվաստօպօլը և Ղրիմի պատերազմը վերջացաւ։ Ռուսաստանը Պարիզի դաշնադրութեամբ ընդունեց այն ծանր պայմանները, որոնք առաջարկուել էին Վիեննայի դեսպանաժողովում։ Բայց և այնպէս, պատերազմը մի ահագին սխալ էր ոչ միայն անգլիական շահերի, այլ և ընդհանուր եւրոպական, նոյն-իսկ մարդկութեան շահերի տեսակէտից։ Եւ այս դառն ճշմարտութիւնը խոստովանեցին անգլիական նշանաւոր գործիչներից շատերը 40 տարի յետոյ, 1895—1896 թուականներին, երբ Եւրոպայի արիւնով ու միլիոններով պահպանուած Թիւրքիան 100 հազար հայերի դիակներով ծածկեց Փոքր Ասիայի դաշտերը...

Ղրիմի ահռելի պատերազմի իսկական հեղինակները մի քանի անձնաւորութիւններ էին։ Նրանք այնպէս հիպնօզացրել էին ամբողջ քաղաքական աշխարհը, որ ամենքը—դրանց թւում և Գլադստօն—համաձայն էին մի կէտի մէջ, այն է՝ որ Թիւրքիան պէտք է ազատել Ռուսաստանի ճանկերից։ Լորդ Պալմերստօն, այս դժբախտ մտքի մոլեռանդ քարոզիչներից մէկը և առաջինը՝ կարծում էր, թէ պաշտպանել Թիւրքիան չէ նշանակում պաշտպանել այնտեղ ապրող մօնգօլական ցե-

ղը, մահմետական Թիւրքերին։ Ամբողջ ժամանակ նա դտնւում էր այն մոլորութեան մէջ, թէ Թիւրքիան միացած Եւրոպայի խոնարհ և կամակատար սպասաւորը կը դառնայ։ Այս պատճառով էլ նա գործ դրեց իր ամբողջ ոյժը, իր բոլոր ընդունակութիւնները, որպէս զի Պարիզի 1856 թուի դաշնագիրը ամեն կողմից, ամենապարզ և կտրուկ որոշումներով նպաստաւոր լինի Թիւրքիայի համար։ Այդպէս էլ եղաւ... թղթի վրայ։ Բայց Պարիզի դաշնադրութիւնը, «պատմութեան մէջ եղած ամենամեծ սխալներից մէկը, եթէ չասենք ամենամեծ յանցանքներից մէկը», ինչպէս անուանեց մի անգլիացի՝ ամենադառն հեգնութիւն էր Պալմերստոնի և նրա ընկերակիցների մտքի ու կարծիքների վրայ. նա ցոյց տուեց, որ ազգերի պատմութեան մէջ էլ, ինչպէս և առօրեայ կեանքում, ամենաճարտար ու որոշ նախագծերը, միայն մի յայտնի և աշկարայ նպատակի հետեւող ձեռնարկութիւնները բոլորովին հակառակ հետեւանքների են հասցնում։ Ահա թէ ինչպէս։

Պարիզի դաշնադրութեան հիմքը, հոգին՝ Թիւրքիայի կատարեալ անկախութիւնն էր։ Բոլոր դաշնադիր պետութիւնները ամենահանդիսաւոր կերպով վկայում և երաշխաւորում էին, որ Թիւրքիայի հողերից ոչ մի կտոր չը պիտի խլուի, որ ոչ մի պետութիւն իրաւունք չունի խառնուել Թիւրքիայի ներքին գործերի մէջ։ Միևնոյն ժամանակ սուլ-

թանը ներկայացնում էր Պարիզի վեհաժողովին իր հրատարակած Խաթթի-Հիւմայունը, որով հաւասար իրաւունքներ էր տալիս իր քրիստոնեայ հպատակներին։ Այս գրաւոր խոստումն էլ մտաւ Պարիզի դաշնագրութեան մէջ։ Նշանակում էր որ Եւրոպան մի կողմից կատարեալ անկախութիւն և ազատութիւն տալով Թիւրքիային՝ միւս կողմից լուռ համաձայնութեամբ ընդունում էր և այն, որ Թիւրքիայի քրիստոնեաները իրաւունք ունին պահանջելու, որ իրանց դրութիւնը բարւոքուի։ Քրիստոնեաների դարաւոր դատը Պարիզում չը ջնջեցին, այլ, ընդհակառակն, միջազգային գրաւոր պայմանագրութեամբ հաստատեցին։ Թիւրքը իշխող ու հարստահարող էր և այդպէս էլ մնաց. իսկ քրիստոնեան, արիւն թափող, հարստահարուող հպատակը, մի քայլ առաջ գնաց. ինչպէս թիւրքը հաստատում էր տիրապետողի իրաւունքը՝ նոյնպէս էլ քրիստոնեան հաստատում էր պահանջելու իրաւունք։ Ահա այս երկու իրաւունքները մի տեղ դրեց Պարիզի դաշնագրութիւնը։ Նա չը լուծեց արևելեան հարցը, այլ աւելի ևս խճճեց նրան։ Նա չը վերացրեց հարստահարողի և հարստահարուողի կռիւը, այլ բնական դարձրեց նրան, օրինականացրեց։ Եւ դրա հետևանքն այն եղաւ, որ Պարիզի դաշնագրութիւնից յետոյ Եւրոպան սկսեց աւելի յաճախ խառնուել Թիւրքիայի ներքին գործերի մէջ, թէև զրկել էր իրան այդ իրաւունքից։ Արիւնահեղ դրամաները

գնալով ահռելի չափեր ստացան։ Ղրիմի պատերազմի հեղինակներից ոչ մէկը կենդանի չը մնաց մինչև 70-ական թուականների կէսը, որ տեսնէ իր գործած սխալի արիւնոտ հետևանքները։ Գլադստօն թէև ոչ հեղինակ, գոնէ պաշտօնական անդամ այն կառավարութեան, որ պատերազմ էր մղել՝ ականատես եղաւ Բալկանեան քրիստոնեաների տանջանքներին և այն ժամանակից մի հերոսական կռիւ սկսեց 1856-ի անարդարութեան դէմ։

Սխալուելը յանցանք չէ. յանցանքը սխալին յամառութեամբ հետևելն է։ 1858 թուին, Պարիզի դաշնադրութիւնից երկու տարի յետոյ, անգլիական պարլամենտին ներկայացրած էր Մոլդաւիայի և Վալախիայի հարցը։ Այս երկու իշխանութիւնները վաղուց էին ձգտում միանալ և ազատուել Թիւրքաց լուծից։ Տեղի ունեցան արիւնահեղ ընդհարումներ. Թիւրքաց զօրքերը խեղդեցին ապստամբութիւնը։ Պարիզի վեհաժողովը վճռեց, որ երկու իշխանութիւններից ընտրուած պատգամաւորներ հաւաքուեն միասին և յայտնեն ժողովրդի իսկական ցանկութիւնը։ Բայց վեհաժողովից յետոյ Թիւրքիան սկսեց իր սովորական խաղերը, և երբ ժողովրդի ներկայացուցիչները յայտարարեցին, թէ ընդհանուրի ցանկութիւնն է, որ Մօլդաւիան ու Վալախիան միանան, մի իշխանութիւն կազմեն՝ Թիւրքերը մի շարք անամօթ ճնշումներ գործ դրին.

Աւստրիան էլ, չը կամենալով երկու իշխանութիւն-ների միացումը՝ անցաւ Թիւրքիայի կողմը։ Պետութիւնները նորից ժողով կազմեցին Պարիզում՝ յատկապէս այս հարցը կարգաւորելու համար։ Ահա այդ ժամանակ Գլադստօն համայնքների ժողովում արտասանեց մի գեղեցիկ ճառ, պաշտպանեց Մոլդաւիայի և Վալախիայի միացման գործը։ «Մահմետական պետութիւնը երկար ժամանակ չէ կարող պահպանել իր գոյութիւնը Եւրոպայում», ասաց նա և խորհուրդ տուեց շնորհել քրիստոնեայ ազգութիւններին ինքնավարութիւն՝ Թիւրքիայի գերիշխանութեան տակ։ Վերջին հանգամանքը նա հարկաւոր էր համարում այն պատճառով, որ Թիւրքաց ժառանգութեան աչք դրած պետութիւնները առիթ չունենան յափշտակութիւններ անելու և պատերազմ ու խռովութիւններ յարուցանելու։ Այս առաջարկութեան սաստիկ ընդդիմացաւ լորդ Պալմերստօն, որ շարունակում էր հաստատ մնալ իր գործած ահագին սխալի մէջ։ Սակայն Մօլդաւիայի և Վալախիայի միացումը կատարուած իրողութիւն դարձաւ, չը նայած Պալմերստօնի հակառակութեան և Թիւրքիայի բողոքներին։

Ղրիմի պատերազմից յետոյ Գլադստոն երեք տարի հեռու մնաց պետական գործերից։ Նրան չէին համակրում և համակրել չէին կարող մի այնպիսի ժամանակ, երբ Պալմերստօնի աստղն էր փայլում։ Գլադստոն հայրենասէր չէր

այն անգլիացիների համար, որոնց մնապարծութեան նիւթ էր տալիս Պալմերստոնի քաղաքականութիւնը։ Գլադստօն աւելի իր հայրենիքի թըշնամու—Ռուսաստանի կողմն էր պաշտպանում, ատի և նրան արհամարհում էին։ Մարդկային ընթացիկ արդարադատութիւնը այսպէս է. կարելի չէ թշնամուն համակրել նոյն-իսկ այն դէպքում՝ երբ արդարութիւնը նրա կողմն է…

Ժամանակաւոր անգործութիւնը շատ ծանր էր Գլադստօնի համար։ Նա ասում էր. «Ինձ համար շատ ցաւալի է, որ գործերից հեռու եմ, մանաւանդ որ կան շատ գործեր, որոնց կուզէի նըւիրուել։ Իմ կեանքի լաւագոյն տարիները անցնում են անօգուտ, բայց ես դարձեալ ուրախ եմ, որ չեմ ծառայում Պալմերստոնի հետ, երբ տեսնում եմ թէ ինչ անազնիւ միջոցների, խարեբայութիւնների է նա դիմում ամեն օր։ Սրտանց ուրախ եմ, որ նրա հետ միասին մի մինիստրական նստարանի վրայ չեմ նստած»։ Նա այդպէս խօսելու իրաւունք ունէր։ Փաստերը ներկայանում էին համարեա ամեն օր։ Ահա դրանցից մէկը։

1856 թուականին Չինաստանի Կանտօն նահանգի մի գետի վրայ չինական պաշտօնեաները բռնեցին մի նաւակ, որի մէջ գտնւում էին տասներկու ծովային ասպատակներ։ Նաւակը չինական էր, բայց անգլիական դրօշակ ունէր պարզած։ Անգլիական հիւպատոսը բացատրութիւն պահան-

ջեց, և սկսուեց «Արրօվ» նաւակի գործը։ Անգլիացիները իրանց դրօշակի անպատուութիւնը պատըրուակ բռնելով՝ ուռցրին եղելութիւնը և բանը այնտեղ հասաւ, որ ծովապետ Սէյմուր ռմբակոծեց Կանտօն քաղաքը։ Չինական նաւերը ոչնչացան, քաղաքի արուարձանները քարուքանդ դառան, հրդեհը լափեց բազմաթիւ շինութիւններ. իսկ քանի՜ մարդիկ զոհ գնացին անգլիական ռումբերին։ Եւ այդ բոլորը մի նաւակի համար։ Պարլամենտը նորից յարձակուեց Պալմերստօնի վրայ ճիշտ այնպէս՝ ինչպէս Դօն-Պաչիֆիքօի գործի ժամանակ։ Նա արդարացաւ նրանով, որ չինացիները բռնութիւններ են գործ դնում անգլիացիների դէմ։ Ուրեմն չինացիները Կանտօնի ռմբակոծումից յետոյ էլ չը պիտի կատաղէին անգլիացիների դէմ։ Գլադստօն բացականչեց. «Դուք կարծում էք թէ չինացիների վրդովեցուցիչ վարմունքը մեղմացնում է ձեր մեղքը։ Ո՛չ, դրանով ձեր մեղքը աւելի մեծանում է»։ Խօսեցին և ուրիշ պատգամաւորներ, բայց օրուայ հերոսը Գլադստօնն էր։ Պալմերստօն պարտութիւն կրեց։ Եւ երբ պատգամաւորները դուրս էին գալիս ժողովից՝ 500 հոգուց բաղկացած մի խումբ ծափահարութիւններով ընդունեց Գլադստօնին և միւսներին, որոնք արդարութիւնն էին պաշտպանել։ Բայց Պալմերստօն գիտէր, որ իր գործը հաւանութիւն կը գտնէ անգլիական ժողովրդի մէջ. ուստի չը հրաժարուեց պաշտօնից, այլ

արձակեց պատգամաւորների ժողովը։ Նոր ընտրութիւնների ժամանակ Պալմերստօն յաղթեց. չէ՞ որ նա ազգային սնապարծութեան և վաճառականական շահերին էր ոյժ տուել, քարուքանդ անելով չինաց մայրաքաղաքներից մէկը։ Ամեն անգամ, երբ որևէ մինիստր շահագործել է անգլիացու այդ երկու յատկութիւնները՝ միշտ աջողութիւն է ունեցել։ Պալմերստօնի դէմ խօսողների մեծ մասը սևացաւ ընտրութիւնների ժամանակ. միայն Գլադստօնն էր, որ նորից ընտրուեց, թէև ամենից խիստ էր խօսել ուժեղի անիրաւութեան դէմ։

Բայց Պալմերստօնն էլ երկար չը վայելեց այդ յաղթութիւնը։ 1858 թուի սկզբում իտալացի հայրենասէր Օրսինի պայթուցիկ ռումբերով փորձեց սպանել Նապօլէօն կայսրին, երբ նա թատրօն էր գնում։ Փորձը չաջողուեց. քննութիւնից երևաց, որ ռումբերը պատրաստուել են Լօնդօնում, ուր ապաստանուած էին իտալացի յեղափոխականները։ Ֆրանսիական կառավարութիւնը Լօնդօնում պահանջներ արաւ, որ յեղափոխականները աքսորուին Անգլիայից։ Եւ լորդ Պալմերստօն, որ մի առանձին սէր ունէր դէպի Նապօլէօնը, այնքան անխոհեմ եղաւ, որ պարլամենտին առաջարկեց մի օրինագիծ, որ բաւարարութիւն պիտի տար ֆրանսիական պահանջներին։ Գլադստօն և նրա հետ պատգամաւորների մեծամասնութիւնը զինուեցան օրինագծի դէմ, որ խախտում էր Անգլիայի

հին, հիմնական օրէնքը—անհատի ազատութիւնը։ Պալմերստոն ընկաւ։

Դէրբիի պահպանողական մինիստրութիւնը, ստանձնելով կառավարութեան ղեկը՝ Գլադստոնին իր կողմը գրաւելու փորձեր արաւ։ Ահա ինչ էր գրում Դիզրաէլի Գլադստոնի մտերիմ բարեկամ եպիսկոպոս Վիլբերֆորսին. «Որքան ես կուզէի, որ դուք համոզէք Գլադստոնին մտնել լորդ Դէրբիի կաբինէտին։ Իմ մեղը չէ, որ նա համաձայնութիւն չը տուեց. ես համարեա ծունկ չոքած խնդրում էի նրան այդ մասին»։ Ճարպիկ հրէան կեղծում էր։ Նրա համար ամենավտանգաւոր թշնամին Գլադստոնն էր. և այդպիսի թշնամուց ազատուելու ամենալաւ միջոցն էր՝ նրան իր քաղաքականութեան կողմնակից դարձնել։ Բայց երբ այդ չաջողուեց՝ Դէրբիի մինիստրութիւնը մի ուրիշ բանով ուզեց շահել Գլադստոնի սիրտը, և աջողութիւն ունեցաւ։ 1858 թուի վերջում Գլադստոն պահպանողական մինիստրութեան յանձնարարութեամբ գնաց Յօնիական կղզիները։

Յունաստանի արևմտեան կողմում գտնուող այս եօթը կղզիները 1818 թուից, Վիեննայի վեհաժողովի վճռով, կազմում էին մի առանձին հանրապետութիւն, որ գտնւում էր Անգլիայի հովանաւորութեան տակ։ Անգլիան պահում էր այնտեղ մի զօրախումբ, որի հրամանատարը միևնոյն ժամանակ կղզիների ընդհանուր կառավարիչն էր։ Յօ-

նիական փոքրիկ հանրապետութիւնը ունէր սենատ, որ բաղկացած էր վեց անդամներից, և օրէնսդիր ժողով, ուր կային քառասուն պատգամաւորներ։ Որքան էլ փոքրիկ պետութիւնը ազատ ու ապահով լինէր, բայց երբ Ցունաստանը բոլորովին ազատուեց Թիւրքաց լծից՝ յոյն ազգասէրները սկսեցին ամեն ջանք գործ դնել, որ եօթըն կղզիներն էլ միանան իրանց հայրենիքի, Ցունաստանի հետ։ Երկար ժամանակ անգլիացիները լսել անգամ չէին ուզում այդ առաջարկութիւնը, և ամեն անգամ, երբ գլուխ էր բարձրացնում յօնիական հարցը՝ անգլիական մամուլը սկսում էր դատապարտել կղզեցիների ապերախտութիւնը։ Սակայն միացման գաղափարը ընդհանուր ժողովրդական գաղափար դարձաւ, և կղզեցիները անդադար դիմումներ էին անում Եւրոպային. յեղափոխական միջոցների մասին նրանք չէին էլ կարող մտածել, որովհետև լաւ գիտէին, որ Անգլիան Թիւրքիա չէ և իւրաքանչիւր ապստամբական փորձը տեղն ու տեղը կը խեղդուի։ Դիմումները, աղաչանքները այնքան գրգռեցին անգլիացիներին, որ պարլամենտը 1857 թուին առաջարկեց միանգամայն ընդ միշտ միացնել Յօնիական կղզիները Անգլիայի հետ, թոյլ տալով որ նրանք պատգամաւոր ունենան անգլիական պարլամենտում։ Կղզիները բողոքեցին։ Եւ ահա Գլադստօն ուղարկուեց այնտեղ՝ ժողովրդի ցանկութիւնը իմանալու համար։

Յոյները մեծ ոգևորութեամբ ընդունեցին Գլադստօնին, որ յայտնի էր իբրև հելլէնասէր և Հոմերոսի ջերմ երկրպագու։ Նրա ճանապարհորդութիւնը նման էր յաղթական գնացքի․ ամեն տեղ ժողովուրդը տօնում էր նրա գալուստը։ Ամենքը համոզուած էին, որ Գլադստօն եկել է կղզիները ազատելու։ Իզուր նա հաւատացնում էր, որ իր պատուիրակութեան միակ նպատակն է հաշտեցնել կղզեցիներին Անգլիայի գերիշխանութեան հետ։ Նա շրջեց ամեն տեղ, մանրամասն տեղեկութիւններ հաւաքեց և յայտնեց անգլիական կառավարութեան, որ բոլոր կղզեցիների միահամուռ փափագն է՝ միանալ Յունաստանի հետ։ Ապա գնաց Աթէնք։ Սակայն չքեղ ընդունելութիւնները առիթ տուին պահպանողականներին ասելու, թէ Գլադստօն ինքն է խրախուսում կղզեցիներին բաժանուել Անգլիայից։ Գլադստօն յետ կանչուեց, և նրա փոխարէն ուղարկուեց մի ուրիշ պատուիրակ, որին յանձնարարուեց ամեն ջանք գործ դնել, որ անգլիական իշխանութիւնը պինդ հաստատուի կղզիներում։ Հարցը ձգձգուեց մինչև 1864 թիւը, երբ Անգլիան Գլադստօնի առաջարկութեամբ համաձայնուեց տալ կղզիները Յունաստանին։ Զիջողութեան գլխաւոր պատճառն այն էր, որ Յունաստանը թագաւոր էր ընտրել Դանիայի թագաւորի որդուն, Գէորգին, որ Վիկտորիա թագուհու հարսի եղբայրն էր։

Գլադստոնի համար այդ ճանապարհորդութիւնը ունէր և մի այլ մեծ նշանակութիւն։ Նա մանրամասն ուսումնասիրեց Հոմերոսի հայրենիքը և հրատարակեց այդ ուսումնասիրութեան պտուղները։ Յոնիական կղզիները, որոնցից մէկը, Իթակէն, ինչպէս յայտնի է, անմահ բանաստեղծի հերոս Ոդիսևսի հայրենիքն էր՝ պատկերացրին նրա առաջ հին Յունաստանը, նրա նահապետական կենցաղը, որ այնքան հրաշալի պարզութեամբ յաւերժացել է Հոմերոսի երգերի մէջ։ Այդ երգերը Գլադստոն համարում էր Աստուածաշունչի շարունակութիւն։ Աստուածաշունչը, ասում էր նա, պատկերացնում է նահապետական մարդուն միայն կրօնական տեսակէտից, իսկ Հոմերոսը նկարում է նոյն մարդու իրական, առօրեայ կեանքը իր բոլոր կողմերով։

Ե.

Ազատամիտ շարժում Անգլիայի մէջ։ — Դիզրաէլիի զիջողութիւնները։ — Ֆինանսական նոր յաղթանակ — Գիրք և Թէյ։ — Ամերիկական պատերազմը և Գլադստոն։ — Բանուորների պաշտպանը։ — Օքսֆորդ և իր պատգամաւորը։ — Դիզրաէլիի ճարպիկութիւնը իբրև յաղթանակ Գլադստոնի համար։ — Հերոսական կռիւ կղերականութեան դէմ։ — Գլադստոն — առաջին մինիստր։ — Անգլիկան եկեղեցին Իռլանդիայում։ — Ազատամիտ կուսակցութեան ոսկեդարը։ — Ժողովրդական կրթութիւն։ — Մի նոր հարուած ազնուականութեան դէմ։ — Ֆրանս-պրուսական պատերազմը և Ռուսաստան։ — «Ալաբամա» նաւի գործը։ — Հասարակական կարծիքը Գլադստոնի դէմ։ — Գլադստոն իր ընտրողների առաջ։ — «Հանգած հրաբուխ»։

Մինչդեռ Գլադստոն ճանապարհորդում էր Յունաստանում՝ Եւրոպան ականատես էր մի շարք նշանաւոր անցքերի։ Իտալիան Ֆրանսիայի աջակցութեամբ պատերազմ սկսեց Աւստրիայի դէմ. իտալական հռչակաւոր քաղաքագէտ կոմս Կավուր ստեղծում էր միացած և անկախ Իտալիա. Գարիբալդի դիւցազնական արշաւանքներ էր գործում։ Ամբողջ Իտալիան հայրենասիրութեան և ազատական շարժման մի հրաշալի օրինակ էր դարձել ազգերի համար։

Այդ շարժումը՝ արձագանգ տուեց և Անգլիայում։ Այնտեղ մտում էին շատ ռէֆօրմներ, որոնք խոստացուած էին վաղուց, բայց յետաձգւում էին զանազան պատճառներով։ Ամենագլխաւորը դարձեալ ընտրողական ռէֆօրմն էր։ 1832 թ. ռէֆօրմը, ինչպէս տեսանք, միայն մի խոշոր քայլ էր դէպի առաջ. ճիշտ է, հասարակ ժողովրդի առաջ բացուել էին համայնքների ժողովի դռները, բայց դեռ կար բանուորների մի ահագին բազմութիւն, որ զրկուած էր պատգամաւոր ընտրելու իրաւունքից։ Պահանջւում էր իջեցնել ընտրողական ցէնզը, այսինքն թոյլ տալ, որ քիչ եկամուտ ունեցողներն էլ ձայն ունենան պարլամենտական ընտրութիւնների ժամանակ։ Այս շարժման գլուխը և ղեկավարը Ջօն Բրայտն էր, որի գեղեցիկ ճառերը ամեն տեղ քարոզում էին իրաւունքների հաւասարութիւն։ Հարցը բոլորովին հասունացած էր։ Դիզրաէլի զգում էր, որ եթէ ժողովրդի պահանջը ազատամիտների ձեռքով պարլամենտ մտցնուի՝ պահպանողականները սաստիկ պարտութիւն կը կրեն։ Ուստի նա յղացաւ մի նենգաւոր միտք. պահպանողական կուսակցութիւնը ինքը կը դնէր այդ հարցը և այդպիսով ժողովրդականութիւն կը վաստակէր։ Այդ քաղաքական աչքակապութիւնը պարզ ցոյց էր տալիս, որ խորամանկ հրէան իր դիտաւորութիւնները աջողեցնելու համար մտցնում է պարլամենտական կարգերի մէջ անբարոյակա-

նութեան սկզբունք, քանի որ պահպանողականնե-րը երբէք իրանց յօժար կամքով չէին առաջարկի այնպիսի րէֆօրմ, որ հակառակ էր իրանց ուղղութեան։ Լօկ իշխանութիւնից չը զրկուելու համար Դիզրաէլի առաջարկեց մի օրինագիծ, որ ընտրելու իրաւունք էր տալիս տարեկան 100 րուբլի եկամուտ կամ 200 րուբլի կենսաթոշակ ստացողին, այլ և համալսարանական կրթութեան տէր բոլոր անձինքներին, քահանաներին, բժիշկներին, իրաւաբաններին։ Գլադստօն չէր կարող չը պաշտպանել իր հակառակորդի բերած առաջարկութիւնը, որ ժողովրդի համար շատ օգտակար էր։ Բայց օրինագիծը չընդունուեց։ Ազատամիտները դէմ էին, որովհետև անբաւարար էին համարում. դէմ էին և պահպանողականները, որովհետև սկզբունքով հակառակ էին րէֆօրմներին։ Մինիստրութիւնն ընկաւ, Պալմերստօն կազմեց նոր մինիստրութիւն, որի մէջ Գլադստօն ընդունեց ֆինանսների մինիստրի պաշտօնը։

Օքսֆօրդի համալսարանը արդէն երես էր դարձնում Գլադստօնից։ Այս կղերական հիմնարկութեան համար այժմ պարզ էր, որ իր պատգամաւորը վերջնականապէս շեղուել է իր նախկին ուղղութիւնից։ Բարձր արիստօկրատիան, հոգևորականութիւնը նրան կորած էին համարում։ 1859 թուին Օքսֆօրդը, երկար տատանումներից յետոյ, վերջին անգամ ընտրեց Գլադստօնին։ Այդ տատա-

նումներին պատասխանեց Էդինբուրգի առաջադիմական համալսարանը, ընտրելով Գլադստոնին պատուաւոր ռեկտոր։

Նորից ձեռք առնելով Անգլիայի ֆինանսները՝ Գլադստոն վերադարձրեց այն ոսկեդարը, որ գոյութիւն ունէր Ղրիմի պատերազմից առաջ։ Թէ որքան լաւ էր նա ըմբռնում ժողովրդի կարիքները և ինչ արգելքների էր հանդիպում իւրաքանչիւր, նոյն-իսկ մանր բարեկարգութիւնների մէջ՝ ցոյց է տալիս հետեւեալ փաստը։ Ինչպէս ասացինք, տպագրական թուղթը ենթարկուած էր հարկի. սրա քանակութիւնը սկզբում շատ մեծ էր, բայց հետզհետէ պակասեցրուել էր։ Գլադստոն առաջարկեց բոլորովին վերացնել այդ հարկը. այդպիսով էժանանում էր գիրքը, լրագիրը, ուրիշ խօսքերով՝ գիտութիւնը աւելի ժողովրդականանում էր, մատչելի դառնալով չքաւոր դասակարգի համար։ Հետաքրքրական է այն հանգամանքը, որ թղթի հարկի հետ միասին դրուած էր և թէյի մաքսահարկը պակասեցնելու հարցը։ Անգլիայում սաստիկ տարածուած էր թէյի գործածութիւնը, այնպէս որ թէյի էժանութիւնը ամեն մէկի համար կենսական կարեւոր հարց էր։ Զը նայած այդ բանին՝ ամենքը գոհ մնացին, երբ Գլադստոն առաջարկեց թողնել թէյի հարկը անփոփոխ, իսկ թղթի հարկը բոլորովին վերացնել։ Մտաւորը յաղթեց, փորը պարտութիւն կրեց. անգլիացին հասկացաւ, որ այս

դէպքում լաւը անձնական հաճոյքից զրկուելն է։ Բայց պահպանողականները կատաղի դիմադրութիւն ցոյց տուին. արտօնութիւնների, մենաշնորհների դասակարգը չէր ուզում զիջել ժողովրդին նոյն-իսկ էժան գրքեր ու լրագիրներ կարդալու իրաւունքը։ Համայնքների ժողովն ընդունեց թըղթի հարկը վերացնելու առաջարկութիւնը, բայց լորդերի պալատը մերժեց։ Գլադստոն զայրացաւ իր հակառակորդների անբարեխղճութեան վրայ և արտասանեց մի ճառ, որը Ջօն Բօսըլ անուանեց «հիանալի-խելագար» ճառ։ Գլադստոն առաջին անգամ պատերազմ էր հրապարակում լորդերի պալատի դէմ, որ ցոյց էր տալիս իր իշխանութիւնը ամեն անգամ՝ երբ հարկաւոր էր մի լաւ օրէնք ձեռք բերել ժողովրդի համար։ Սակայն թղթի հարկը վերացնելու համար Գլադստոն դիմեց ուրիշ միջոցի։ Հետեւեալ տարին նա առանձին օրինագծի նիւթ չը դարձրեց այդ հարկը, այլ մտցրեց նրան պետական ընդհանուր նախահաշուի մէջ։ Լորդերի պալատը կամ պիտի ամբողջովին ընդունէր նախահաշիւը կամ պիտի վերադարձնէր համայնքների ժողովին. երկրորդ քայլը նա չը համարձակուեց անել, և այդպիսով թղթի հարկը ջնջուեց։ Շատերը յարձակուեցան Գլադստոնի վրայ, ասելով որ նրա գործադրած այդ եղանակը խախտում է պարլամենտական կարգերը։

Գլադստոն ուշադրութիւն չը դարձրեց այդ

միջադրանքների վրայ։ Նա անդադար ձգտում էր նոր և նոր բարեկարգութիւնների հասնել. Չէր բաւականանում քչով, տեսնելով որ դեռ շատ և շատ գործեր կան կատարելու։ 1862 թուականի գարնանը Մանչէստրում մի ճառի մէջ նա մեղադրում էր ժողովուրդը, որ սիրում է անշարժ մնալ։ «Վերջին տարիները—ասաց նա—տեղի ունեցան նշանաւոր փոփոխութիւններ։ Երկրի քաղաքական տրամադրութիւնը այժմ այն չէ, ինչ էր առաջ։ Լեթարգիական քունը կարծես տիրել է պարլամենտին և ժողովրդին։ Ես այս ասում եմ ոչ առանց վշտի։ Իմ խօսքերի ճշմարտութիւնը հաստատելու համար ես կարող էի շատ հարցեր օրինակ բերել, բայց կը բաւականանամ միայն մէկով։ Ես այստեղ խօսում եմ իմ անունից, յայտնում եմ միայն իմ անձնական կարծիքը և ոչ աւել։ Ես ուզում եմ մատնացոյց անել ընտրողական ռէֆօրմի հարցը. դժուար է ժխտել, թէ այդ հարցի վերաբերմամբ գոյութիւն չունեն լեթարգիայի անկասկած նշաններ» *)։

---

*) Ֆրանսիական նշանաւոր գործիչ և գրող Լուի Բլան ահա ի՛նչ է գրում այդ խօսքերի առիթով. «Ի՞նչ կասէք կառավարութեան այս անդամի մասին, որ հրապարակով, հանդիսաւոր ժողովի մէջ, վշտի զգացմունքով է յիշատակում ժողովրդի քաղաքական անտարբերութիւնը, համարեա յանդիմանում է ժողովուրդը՝ նրա քաղաքական ծուլութեան համար։ Նա կը կամենար տեսնել այդ ժողո-

Օր օրի վրայ աւելանում էր Գլադստոնի ժողովրդականութիւնը։ Մինչդեռ եւրոպական բոլոր պետութիւնները խրուած էին մեծամեծ պարտքերի մէջ, Անգլիան, չը նայած Ղրիմի պատերազմի պատճառած ահագին ծախսերին, ոչ միայն նոր պարտքեր չարաւ, այլ և հետզհետէ մեծ խնայողութիւններ անելով՝ պակասեցնում էր իր նախկին պարտքերը։

Բայց արեգակի վրայ էլ սև բծեր կան։ Գլադստոն այդ փայլուն գործունէութեան ժամանակ գործեց մի սխալ. դա այն դիրքն էր, որ նա բռնեց Հիւսիսային Ամերիկայի Միացեալ Նահանգների մէջ բորբոքուած ներքին պատերազմի վերա-

---

վորդը աւելի ևս նախաձեռնող, այսպէս ասած՝ աւելի կենդանի. կը կամենար որ ժողովուրդը աւելի եռանդով ձգտէր ձեռք բերելու այն իրաւունքները, որոնք դեռ պակասում են։ Ո՛րպիսի օրինակ. ո՛րպիսի դաս։ Ճիշտ է, իմանալով որ լորդ Պալմերստոն անձամբ անբարեհաճ է դէպի ամեն մի ռէֆորմ՝ Գլադստոն մի առանձին խնամքով շեշտեց, որ միայն իր անձնական կարծիքն է յայտնում. բայց նրա խօսքերը, այնու ամենայնիւ, շատ նշանաւոր են. դրանք ցոյց են տալիս, որ Անգլիայում իշխանութիւնը այլեւս չէ համարում մի ոյժ, որ անպատճառ պարտաւոր է դիմադրել. պետական լաւագոյն մարդիկ ոչ միայն չեն արգելում առաջադիմութիւնը, այլ, ընդհակառակն, ցանկանում են առաջադիմութիւն, առաջ են քաշում նրան, պատրաստ են սովորեցնել որ նրան դուրս բերեն, շտապեցնեն, եթէ նա շատ է ուշանում»։

թերմամբ, մի դիրք, որ բոլորովին հակասում էր նրա ազատասիրական ձգտումներին։

Ցայտնի է, որ այս անհաւոր և երկարատև պատերազմը (1861—1865) ծագեց՝ սորուկ նեգրերին ազատութիւն տալու համար։ Միացեալ Նահանգների հիւսիսային մասը պահանջում էր ջնջել ստրկութիւնը իբրև մի շատ ամօթալի բան, որ արատաւորում էր մարդկութեան անունը. իսկ հարաւային նահանգները, ուր բամբակի և շաքարեղէգի անթիւ տնկարաններում սորուկ նեգրը կատարում էր անբան գրաստի դերը՝ ընդդիմացան և յայտարարեցին, որ իրանք բաժանւում են Միացեալ Նահանգներից։ Հիւսիսը զէնք վերցրեց որպէսզի հարկադրէ հարաւայիններին չը խախտել հանրապետութեան ամբողջութիւնը։ Նախագահ Աբրահամ Լինկօլ՛ն պատերազմի պաշտօնական յայտարարութեան մէջ յիշատակեց միայն այդ հանգամանքը։ Անգլիան սկզբից բռնեց հարաւային նահանգների, այսինքն ստրկատէրերի կողմը։ Անգլիացիները, ասել է Տօքվիլ, ընդունակութիւն ունին համոզուելու, որ կռուող կողմերից արդարը նա է, ով աւելի է ծառայում անգլիական շահերին։ Այս դէպքում շահաւէտ կողմը հարաւային նահանգներն էին, որոնք ահագին քանակութեամբ բամբակ էին ուղարկում Անգլիա։ Հասարակութեան մէջ կար և այն կարծիքը, որ Անգլիան պիտի միջամտէ և օգնէ հարաւայիններին։ Եւ ահա Գլադ-

ստօն 1862 թուի նոյեմբերին Նիւ-Կէստլում արտասանած մի ճառի մէջ համակրութիւն յայտնեց «Նոր ազգին»։ Այսպէս անուանեց նա հարաւային նահանգները, այն․իսկ նահանգները, որոնք մի քանի ամիս առաջ պահանջում էին, որ նորից թոյլատրուի բարբարոսական գերեվաճառութիւնը Աֆրիկայում։

Ֆինանսների մինիստրի այս ճառը մեծ ուրախութիւն պատճառեց անգլիացիներին և մանաւանդ պահպանողականներին։ Ամենքը կարծում էին, թէ կառավարութիւնը վճռել է միջամտել հարաւայինների օգտին։ Ի՞նչ ասել կուզէ, որ Գլադստօնի խօսքերը զայրոյթ և ահագին անբաւականութիւն յարուցին Ամերիկայի հիւսիսային նահանգներում։ Սակայն ի պատիւ Անգլիայի պէտք է ասել, որ քիչ չէին և այնպիսի մարդիկ, որոնք բողոքում էին միջամտութեան դէմ և հակառակ էին հասարակական կարծիքին։ Կօբդէն, ազատ առևտրի հռչակաւոր կողմնակիցը, ծաղրելով այն միտքը, թէ Անգլիան պիտի օգնէ հարաւայիններին, որպէսզի կարողանայ բամբակ ստանալ՝ ասաց. «Սուր վերցրած գնալ բամբակի ետևից… Աստուած իմ․․ դա աւելի թանկ կը նստէր՝ քան եթէ մենք սկսէինք կրիայի սպասով, շամպայն գինով և որսի մսով կերակրել այն արդիւնագործական դասերը, որոնք կարօտ են ամերիկական բամբակին»։ Աւելի մեծ եռանդով խօսում էր

Ջօն Բրայտ։ Բայց և այնպէս, թէ պաշտօնական շրջանները և թէ հասարակական կարծիքը այնքան նպաստաւոր էին ստրկատէրերի համար, որ Անգլիան նոյն-իսկ խախտեց չէզոք պետութեան պարտաւորութիւնները։ Անգլիական նաւարաններում հինգ պատերազմական նաւեր պատրաստուեցան հարաւայինների համար։ Դրանցից մէկն էր «Ալաբամա» նաւը, որ Լիվրպուլից ճանապարհ ընկաւ իբրև անգլիական առևտրական նաւ, բայց ճանապարհին յանկարծ զինուեց և դարձաւ մարտանաւ, որ ղեկավարւում էր անգլիական օֆիցերների ու նաւաստիների ձեռքով։ «Ալաբաման» միւս անգլիական նաւերի նման անգին վնասներ հասցրեց հիւսիսայիններին՝ բռնելով նրանց առագաստանաւերը, մինչև որ 1864 *թուին հիւսիսայինների մի մարտանաւ յարձակուեց նրա վրայ և մի ահաւոր կռուից յետոյ ոչնչացրեց նրան։ Այստեղից սկսուեց «Ալաբամայի» հարցը։ Պատերազմը վերջացնելուց յետոյ Միացեալ Նահանգների կառավարութիւնը պահանջեց Անգլիայից «Ալաբամայի» և միւս նաւերի պատճառած վնասների փոխարինութիւն* 100 *միլիոն ռուբլի։ Այս հարցը երկար ժամանակ յուզում էր երկու կողմերը։*

Որ նիւթական շահի ակնկալութիւնն էր հարկադրում անգլիացիներին այդպիսի վատ դիրք բռնել մի գործի մէջ, որ պաշտպանում էր չորս միլիոն ստրուկների մարդկային իրաւունքները՝ դրա ա-

պացոյցներից մէկն էլ այն է, որ երբ 1863 թուի յունուարի 1-ին Լինկօլ'ն հրատարակեց այն հռչակաւոր հրովարտակը, որով ջնջում էր ստրկութիւնը՝ Անգլիայում հասարակական կարծիքը չը փոխուեց։ Ճիշդ է, մի հոսանք սկսուեց յօգուտ հիւսիսայինների, բայց այդ հոսանքը շատ թոյլ էր։ Եւ սակայն Անգլիան ազատութեան թշնամի չէր։ 1864 թուին, մինչդեռ Ամերիկայում տասնեակ հազարների արիւնն էր թափւում՝ Անգլիան արքայական պատիւներով և չը տեսնուած տօնախմբութիւններով ընդունեց Գարիբալդիին, որ իտալական վերածնութեան մարմնացումն էր։ Գլադստօն Գարիբալդիի բարեկամն էր և միևնոյն ժամանակ համակրում էր ստրկատէրերին։ Սա մեծ հակասութիւն էր։ Եւ Գլադստօն չը մնաց այս հակասութեան մէջ։ 1867 թուին իր ամերիկացի ծանօթներից մէկին գրած նամակում նա իրան յատուկ անկեղծութեամբ խոստովանեց, որ սխալուած է եղել, և այսպէս հաշտուեց հիւսիսայինների հետ։ Բայց նրա թշնամիները երբէք չը մոռացան այդ սխալը։

1864 թուին պարլամենտում առաջարկութիւն եղաւ, որ բանուոր դասակարգին էլ ընտրողական իրաւունք շնորհուի։ Գլադստօն, պաշտպանելով այդ առաջարկութիւնը՝ ասաց. «Նրանք, որոնք զրկում են բանուոր դասակարգի $^{49}/_{50}$ մասը քաղաքական իրաւունքներից՝ պարտաւոր են ապացուցանել, թէ բանուորը այդ իրաւունքներից

օգտուելու ընդունակութիւն չունի։ Իսկ ես կարծում եմ, որ ամեն մի մարդ, եթէ չունի բացառիկ վատ յատկութիւններ՝ կարող է մասնակցել երկրի սահմանադրական կարգերին։ Իսկ երբ ընդդիմախօսներից մէկն ասաց, թէ բանուորները իրանք չեն պահանջում այդպիսի իրաւունքներ՝ Գլադստոն պատասխանեց. «Բանուորները սկսում են շարժուել այնպիսի ժամանակ, երբ նրանց դրութիւնը կատարելապէս անտանելի է դառնում. ուստի օրէնսդիրը չը պիտի թոյլ տայ, որ բանը հասնի ագիտացիայի, այլ ինքը պիտի վաղօրօք տայ այն, ինչ պահանջւում է»։

Յաջորդ տարին, 1867-ի ամառը, նոր ընտրութիւններ էին նշանակուած։ Այս անգամ Օքսֆորդի համալսարանը բոլորովին հեռացրեց Գլադստոնին։ Ընտրութիւնները վերջանալու վրայ էին, երբ պարզուեց Օքսֆորդի կղերականների բռնած դիրքը. Գլադստոն հարկադրուած եղաւ ուրիշ տեղ դնել իր թեկնածութիւնը, և ձայների գոհացուցիչ մեծամասնութիւն վաստակեց։ Պալմերստոն Օքսֆորդի ընտրութեան ժամանակ ասում էր. «Պահեցէք նրան Օքսֆորդում. այդտեղ կայ նրա համար դնչակալ. իսկ եթէ թողնէք նրան մի ուրիշ տեղ գնալ՝ նա կը կատաղի»։ Մի ուրիշ անգամ նա ասաց. «Շուտով նա կը բռնէ իմ տեղը և այն ժամանակ կը սկսուեն տարօրինակ գործողութիւններ»։ Բայց Օքսֆորդը խուլ մնաց, և «Times» լրա-

գիրը սխալուած չէր, յայտնելով որ Գլադստոն «այսուհետև Օքսֆորդին չէ պատկանում, այլ ամբողջ Անգլիային»։ Եւ իրաւ, նա այլևս իր ընտրողների նեղ պահպանողական և կղերական պահանջներին չէր ենթարկուած, այլ մի ազատ մարդ էր և ընտրողների շրջան որոնում էր հասարակ դասակարգի մէջ։

Ընտրութիւններից յետոյ Պալմերստոն մեռաւ. Ջօն Րօսսըլ բռնեց նրա տեղը լօրդերի պալատում, իսկ Գլադստոն դարձաւ ազատամիտ կուսակցութեան պարագլուխ համայնքների ժողովում։ Նորից յարուցուեց ընտրողական րէֆօրմի հարցը։ Բայց ազատամիտները այնքան վախկոտ եղան, որ չը վստահացան Դիզրաէլիի ծրագրից քիչ հեռու գնալ։ Նրանց կազմած օրինագիծը համարեա նոյնն էր՝ ինչ առաջարկել էր Դիզրաէլի։ Պաշտպանելով այդ օրինագիծը՝ Գլադստոն ասաց. «Իզուր կարծում են շատերը, թէ վտանգաւոր կամ վնասակար բան է իրաւատէր դարձնել այն քաղաքացիներին, որոնք զրկուած են իրաւունքներից... Ընդհակառակըն, թողէք որ այդ մարդիկ շահ ունենան երկրի սահմանադրութեան մէջ, և բնութեան ու Նախախնամութեան բարերար օրէնքներով այդ նոր շահերը նրանց նոր կապերով կը կապեն գահի հետ, այն հիմնարկութիւնների և օրէնքների հետ, որոնց հովանու տակ նրանք ապրում են. իսկ այդպիսի կապերը աւելի թանկագին են՝ քան ոսկին ու ար-

ծաթը, աւելի թանկագին՝ քան նոյն-իսկ նաւատորմներն ու բանակները. դրանք են երկրի ոյժը, փառքը, յենարանը։ Ուրիշ խօսքերով՝ Գլադստօն ասում էր. եթէ կամենում էք տալ մարդկանց քաղաքացիական կրթութիւն, եթէ ուզում էք ամբոխից հասարակական կեանքին գիտակցաբար վերաբերուող մի բազմութիւն կազմել՝—նրանց էլ պատասխանատու դարձրէք այն ամենի համար, ինչ կատարւում է պետութեան մէջ. պատասխանատուութիւնը քաղաքացիական իմաստութեան մայրն է։

Բայց պարլամենտը, չնորհիւ ազատամիտ կուսակցութեան վախկոտութեան և պառակտումներին, մերժեց և այս համեստ օրինագիծը։ Մինիստրութիւնը հրաժարուեց։ Բայց Գլադստօն մեծ համարումն էր վաստակել այն դասակարգի մէջ, որի շահերը այնպէս պաշտպանում էր։ Հրաժարականի օրը 10 հազար մարդուց բաղկացած մի բազմութիւն խմբուեց նրա տան առաջ և պահանջեց, որ նա իր ընտանիքի հետ երևայ պատշգամբում և խրախուսէ մարդկանց, ապագայի յոյսեր ներշնչէ։ Յուլիսի 3-ին 100,000 ցոյց անողներ ուզում էին մտնել Հայդ-Պարկ՝ միտինգ կազմելու համար։ Ոստիկանութիւնը, պահպանողական մինիստրութեան հրամանով, արգելեց այդ ցոյցը և փակեց դռները. բայց անհագին բազմութիւնը իր սարսափելի ոյժով տապալեց երկաթէ դռները և հեղեղի նման ներս-

թափուելով՝ միտինգ կազմեց, պահանջելով որ ընտրողական րէֆօրմը ընդունուի։ Բանուորների այս շարժումը տարածուեց ամբողջ երկրում. Բիրմինգամում ցոյց անող բանուորների թիւը հասնում էր 250 հազարի։

Անկարելի էր դիմադրել այս միահամուռ պահանջներին։ Դիզրաէլի, չը կամենալով որ պահպանողական մինիստրութիւնը տապալուի հէնց սկզբում, դիմեց նախկին միջոցին և առաջարկեց ընտրողական րէֆօրմի օրինագիծը, որ նախկինի պէս համեստ էր և չափաւոր։ Ծիծաղաշարժ էր նրա դրութիւնը։ Ամբողջ ժամանակ նա կատարում էր ծաղրածուի դեր և ստիպուած էր պար գալ այնպէս՝ ինչպէս ուզում էին ազատամիտները։ Գլադստօն շարունակ թելադրում էր այս կամ այն սրբագրութիւնը, և Դիզլին հարկադրուած էր ընդունել իր կուսակցութեան շահերի համար։ Բայց պահպանողականները, բարենորոգումների ուխտեալ թշնամիները, չը կարողացան, վերջապէս, համբերութիւն պահպանել և մի ամբողջ ապստամբութիւն յայտնեցին իրանց պարագլխի դէմ։ Սօլըսբիւրի, որ ապագայում պիտի բռնէր Դիզրաէլիի տեղը՝ ասաց. «Ես ամենավճռական կերպով բողոքում եմ այն քաղաքական բարոյագիտութեան դէմ, որի վրայ հիմնուած են այժմեան կարգերը»։ Ապա, դառնալով իր համախոհներին՝ նա շարունակեց, իր հայեացքը գցելով Դիզրաէլիի վրայ.

«Եւ եթէ ձեզ հաճելի է քաղաքական բարոյագիտութիւն սովորել քաղաքական արկածախնդրից՝ դուք կարող էք համոզուած լինել, որ ձեր սահմանադրական կարգերը ձեր ոտների տակ տրորուած կը լինին»։ Պահպանողականները կատաղելու իրաւունք ունէին. Նոր ընտրողական օրէնքը, Գլադստոնի շնորհիւ, շատ բաւարար էր և ազատամիտ։ Դիզրաէլիի այս աջողութիւնը մի մեծ յաղթանակ էր ազատամիտների համար։ Ընտրողների մի մեծ թիւ, գլխաւորապէս չքաւոր դասակարգից, աւելանում էր ժողովրդական այն տարրերի վրայ, որոնք համայնքների ժողովն էին ուղարկում բուն ազգային ներկայացուցիչներ *)։ Անգլիան կերպարանափոխւում էր, դառնալով ռամկապետական երկիր։ Այժմ արտօնուած դասակարգերը կորցնում էին իրանց նշանակութիւնը։ Ժողովուրդը այժմ մի ոյժ էր, և պարլամենտական գործիչները պիտի գրաւէին նրա վստահութիւնը, պիտի նրա հաւանութեանն արժանանային։ Ուստի ամեն մի կուսակցութիւն, նախ քան ընտրողների քուէն խընդրելը՝ բաց էր անում ժողովրդի առաջ իր գործունէութեան ծրագիրը, բացատրում էր թէ ինքը ինչ ուղղութեան կը հետևի համայնքների ժողովում։ Եւ ժողովուրդը ինքն էր ընտրում իրան ներկայա-

---

*) Նոր օրէնքով ընտրողների թիւը, որ մինչև այդ 1,364,000 էր՝ հասաւ 3,000,000-ի։

ցրած ծրագիրներից մէկն ու մէկը, տալիս էր նրան իր վստահութիւնը։ Կառավարութիւնը ժողովրդի ձեռքին էր։

Մինչդեռ Անգլիան ձեռք էր բերում այս մեծ իրաւունքը՝ Իրլանդիան դարձեալ ցոյց տուեց, որ իր դատը չէ մոռացել։ Մենք տեսանք, թէ ինչպէս մի կողմից սովը և միւս կողմից անգութ կալուածատէրերը հեռացնում էին թշուառ գիւղացիներին իրանց հայրենի երկրից և հազարներով փախցնում էին Ամերիկա։ Տարիների ընթացքում այնտեղ կազմուեց մի Նոր Իրլանդիա, որ վայելելով քաղաքական ազատութիւն, ձեռք բերելով բարօրութիւն՝ կատաղի, անհաշտ թշնամութիւն էր տածում դէպի Անգլիան։ Բուն Իրլանդիայում տիրում էր գերեզմանական անշարժութիւն. բայց ովկիանոսի միւս ափում ծաղկած Նոր Իրլանդիան չէր մոռանում իր արիւնաներկ մայր-հայրենիքը և պատրաստւում էր ազատել նրան անգլիական ոստիկանի բռունցքից։ Նեգրերի ազատութեան համար մղած երկարատև պատերազմը ամերիկական իրլանդացիներին սովորեցրեց զինուորական արուեստը։ Միացեալ Նահանգների մէջ բազմաթիւ էին իրլանդացի օֆիցերներ, գեներալներ և զինուորներ։ Երբ պատերազմը վերջացաւ՝ այս կռուողները իրանց ուշադրութիւնը նուիրեցին իրանց հայրենիքին։ Երկու Իրլանդիաների մէջ սերտ յարաբերութիւններ տեղի ունէին, և ահա հին Իր-

լանդիայում նորից գլուխ բարձրացրեց յեղափոխական մի կազմակերպութիւն։ Դա ֆ է ն ի ն ե ր ի գաղտնի ընկերութիւնն էր, որ նպատակ էր ընտրել ապստամբական միջոցներով ազատել Իրլանդիան և տալ նրան հանրապետական կառավարութիւն։ Ընկերութիւնը յոյս ունէր գործող բանակ կազմել Ամերիկայի իրլանդացի զինուորներից, այլ և անգլիական զօրքերի մէջ գտնուող իրլանդացիներից։ Իսկ մինչև այդ՝ նա գործում էր գաղտնի. քաղաքական յանցանքների թիւը 1867-ին հասաւ 836-ի։ Հարկաւոր եղաւ էլի խիստ միջոցներ գործադրել Իրլանդիայում։ 1865 թուին կառավարութիւնը գտաւ ֆէնիական լրագրի գաղտնի տպարանը, կալանաւորեց յեղափոխականների գլխաւորներին։ Բայց ընկերութիւնը նորից կազմակերպուեց։ Ամերիկայից եկած ֆէնիները 1867 թուի մարտին ընդհանուր ապստամբութիւն պատրաստեցին, որ, սակայն, չաջողուեց։ Տեղի ունեցան մի քանի յանդուգն փորձեր նաև Անգլիայում։ Ամերիկական գեներալ Կէլլի դաւադրութիւն սարքեց Չէստէրի զինարանից զէնքեր գողանալու համար. նրան ձերբակալեցին և տարան. բայց ֆէնիների մի խումբ յարձակուեց այն կառքի վրայ, որի մէջ տանում էին գեներալին և ազատեց. այս խմբից երեք հոգի մահուան պատիժ կրեցին, և իրլանդացիները փառաբանեցին նրանց իբրև նահատակների։ Ֆէնիական մի ուրիշ գեներալ բանտարկուած էր Լօն-

-դոնում. Նրա կողմնակիցները փորձեցին օդը հանել բանտը։ Թէև այս փորձերը աջողութիւն չունեցան, բայց ֆէնիների կազմակերպութիւնը հաստատ հիմքերի վրայ դրուեց։ Իրլանդական հողագործները աջակցում էին ֆէնիներին իրանց կռուով, որ դարաւոր պատմութիւն ունէր։ Կալուածատէրերից վրէժ հանելու համար նրանք չարունակում էին սպանութիւններ գործել, կրակ տալ, կտորել անասուններին և այլն։

Գլադստոն ուշադրութիւն դարձրեց Իրլանդիայի դրութեան վրայ։ Մշտական անկարգութիւններին վերջ դնելու համար նա չը դիմեց սարսափահար միջոցների, այլ սկսեց քարոզել, որ պէտք է բաւարարութիւն տալ իրլանդացիների օրինաւոր պահանջներին։ Նա ասում էր, որ իրլանդացիները պիտի սովորեն յարգել անգլիական օրէնքները, իսկ յարգել կարող են այն դէպքում՝ երբ այդ օրէնքները կը լինին արդար և անկողմնապահ։ Այս տեսակէտից ամենամեծ անարդարութիւնը տասանորդական հարկն էր, որ տալիս էին Իրլանդիայի կաթոլիկները անգլիկան եկեղեցուն։ Ուրեմն ամենից առաջ պէտք էր վերացնել այս հարկը, որ կատաղեցնում էր իրլանդացիներին։ Մենք տեսանք, որ այս հարկը սահմանուած էր վաղուց, և դեռ ԺԸ դարում իրլանդացիները ամբողջ ապստամբութիւններ էին սարքում նրա դէմ։ Անգլիկան հոգևորականութիւնը, չը նայած իր բա-

ըոր խստութիւններին՝ չէր կարողանում հաւաքել տասանորդը ամբողջովին և միշտ ահագին ապառիկներ էին մնում ժողովրդի վրայ։ Կառավարութիւնը յաճախ միջամտում էր և սուիններով էր հարկադրում վճարել. բայց այս միջոցն էլ չէր օգնում։ Ցամառութիւնը երկու կողմերի մէջ զարմանալի էր. հոգևորականութիւնը զիջում անել չը գիտէր. իսկ իրլանդացին լաւ էր համարում մեռնել, զրկուել գոյքից, պատիժների ենթարկուել՝ քան հարկ վճարել իր համար մի խորթ եկեղեցու։ Եւ ինչ արդարութիւն էր։ Մինչդեռ կաթոլիկ եկեղեցին պահւում էր իր աղքատ ծխի համեստ նուէրներով՝ անգլիկան եկեղեցին զինւորների և ոստիկանների օգնութեամբ ստանում էր այդ աղքատ ժողովրդից խոշոր հարկ և փարթամ էր, հարուստ։ Մի քանի թուեր բաւական են այդ դրութիւնը լուսաբանելու համար։

1868 թուին Իրլանդիայում ապրում էր անգլիկան եկեղեցուն պատկանող 680,000 մարդ. սրանք կազմում էին ազգաբնակութեան 1/9 մասը։ Բայց այսքան մարդկանց հովուելու համար Իրլանդիայում կային 2 արքեպիսկոպոս, 40 եպիսկոպոս և 1500 պաստոր, այսինքն իւրաքանչիւր 43 հոգի ծխականներին գալիս էր մի հոգևորական։ Կային 200-ից աւել ծխեր, որոնք ոչ մի հատ ծխական չունէին. 575 ծխեր միջին թուով 20 հոգի անգլիացիներից էին կազմուած։ Եւ հոգևորականների

այս անհագին դասը ստանում էր մեծամեծ ռոճիկներ, սպառելով անգլիկան եկեղեցու եկամուտները, որոնք տարեկան $2^{1}/_{2}$ միլիոն ռուբլի էին տալիս։ Արքեպիսկոպոսը ստանում էր ռոճիկ 555,000 ռուբլի։ Հաշուած է, որ 1822 թուից մինչև 1868 թիւը մեռած եպիսկոպոսների մէջ չէ եղել մէկը, որ 250,000 ռուբլուց պակաս կարողութիւն թողած լինէր. իսկ արքեպիսկոպոս լօրդ Ջօն Բերեսֆորդ, որ մեռաւ 1865 թուին, թողեց իր ժառանգներին $5^{1}/_{2}$ միլիոն ռուբլի։ Իւրաքանչիւր եպիսկոպոս ունէր շքեղ բնակարան և շրջապատուած էր աշխարհային բոլոր բարիքներով։ Նա իշխում էր, և նրան ատում էին...

Զինուած այս փաստերով՝ Գլադստօն 1868 թուին առաջարկեց պատգամաւորների ժողովին ջնջել պետական եկեղեցին Իրլանդիայում։ Ժողովը 65 ձայների առաւելութեամբ հաւանութիւն տուեց այս առաջարկութեան։ Մինիստրութիւնը, որ, իհարկէ, հակառակ էր այս մտքին, հրաժարական պիտի տար. բայց Դիզլին խորամանկութեամբ պահուեց մի քանի ամիս էլ, մինչև աշուն, երբ նոր ընտրութիւններ պիտի կատարուէին։ Ընտրողական պայքարը Գլադստօն սկսեց մի կրակոտ եռանդով։ Ամենից առաջ նա հարկաւոր համարեց բացատրել, թէ ինչու ինքը այժմ փոխել է իր կարծիքը պետական եկեղեցու մասին, և հրատարակեց մի բրօշիւր, որի վերնագիրն էր «Մի գլուխ իմ ինքնա-

կենսագրութիւնից»։ Չը նայած որ ամբողջ արիստոկրատ Անգլիան և քաղաքական հոգևորականութիւնը ոչինչ ջանք չէին խնայում, որ ընտրութիւնների ժամանակ պահպանողական պատգամաւորների մեծամասնութիւն գոյանայ՝ Գլադստոն փառաւոր յաղթութիւն տարաւ. ազատամիտները 115 ձայների առաւելութիւն ունէին։ Այժմ կարելի էր գործել։ Գլադստոն առաջին մինիստր դարձաւ։

1869 թուականը անգլիական ազատամիտ կուսակցութեան ոսկեդարի սկիզբն էր։ Կուսակցութիւնը ուժեղ էր, համախմբուած։ Գլադստոն այդ հզօր բանակի գլուխն անցած՝ գնաց արտօնուած դասակարգերի, հին նախապաշարումների դէմ։ Առաջին հարցը, իհարկէ, եկեղեցու հարցն էր։ Ամեն տեղ ատամների կրճտոց, անէծք և վայնասուն բարձրացաւ։ Իրլանդիայից քաղաքական ֆանատիկոսութեան վայրենի պայթիւնը անցաւ Անգլիա, տարածուեց մինչև հեռաւոր անկիւնները։ Գլադստոնին անուանում էին դաւաճան՝ թագուհու, երկրի և Աստուծու առաջ, մատնիչ, կողոպտող, որ ձեռք է բարձրացնում Աստուծու ստացուածքի դէմ։ Իսկ գաւառներում տարածւում էին լուրեր, թէ Գլադստոն դիւահար է և անասելի թշնամութիւն ունի դէպի եկեղեցին, թէ նա վճռել է կողոպտել Աստուծուն, և այլն։

Այսպիսի աղմուկների մէջ համայնքների ժո-

դովը ընդունեց առաջարկուած օրինագիծը։ Գլադստօն երեք ժամ ճառ ասաց և ապացուցեց, որ նոր օրէնքից անգլիկան եկեղեցին ամենևին չի վնասուի, այլ, ընդհակառակն, օգուտներ կունենայ։ Լօրդերը երկար ժամանակ պահեցին օրինագիծը և շարունակում էին ժողովրդի մէջ հակառակութիւն և դիմադրութիւն ստեղծել։ Այն ժամանակ ազատամիտներն էլ սկսեցին քարոզել լօրդերի պալատի դէմ։ Տեսնելով որ ժողովուրդը համակրում է նոր օրէնքին՝ լօրդերը այլևս չընդդիմացան։ Անգլիկան եկեղեցուց խլուեցան բոլոր կալուածները, որոնք գնահատուած էին 16 միլիոն ստերլինգ (մօտ 150 միլիոն ռուբլի)։ Այս ահագին գումարը բաժանուեց երեք մասի. ամենախոշորը տրուեց անգլիկան եկեղեցուն, ամենափոքրը ստացան Իրլանդիայի երիցական և կաթոլիկ եկեղեցիները, իսկ երրորդ մասը յատկացրուեց բարեգործական հիմնարկութիւնների—հիւանդանոցների և ապաստարանների։ Անգլիկան եկեղեցին այլևս ոչ մի նպաստ չը պիտի ստանար պետական գանձարանից, ոչ մի առանձին արտօնութիւն չը պիտի վայելէր։ Այս հերոսական օրէնսդրութեամբ Գլադստօն Եւրոպայի մէջ մտցրեց մի նոր հասկացողութիւն—եկեղեցին պետութիւնից բաժանելու հարցը, որ այնուհետև հերթական դարձաւ շատ տեղերի համար։

Իրլանդիայի համար դա առաջին քայլն էր։

Գլադստոն իր պաշտպանութեան տակ առաւ և իրլանդական գիւղացուն։ Ինչպէս գիտենք՝ կալուածատէրը ամեն ժամանակ, նոյն-իսկ առանց պատճառի, կարող էր հեռացնել գիւղացուն իր հողից։ Այս կամայականութեան դէմ Գլադստոն առաջարկեց կարողութիւն տալ գիւղացուն հետըզհետէ գնել իր վարձած հողը, և մի փայլուն ճառի մէջ ցոյց տուեց, որ Իրլանդիայում պէտք է գիւղական տարրի համար ստեղծել այնպիսի պայմաններ, որ նա հարկադրուած չը լինի գաղթել, թափառել. դրա համար պէտք էր նրան օգնել, պետական գանձարանից փոխառութիւն տալ։ Բայց այս անգամ Գլադստոն հաստատ չը կանգնեց իր առածի վրայ և սկսեց զիջումներ անել հակառակորդներին, այնպէս որ իր առաջարկած օրինագիծը բոլորովին կերպարանափոխուեց։ Իրլանդիայի Ուլստէր նահանգում կար սովորութիւն, որ կալուածատիրոջը զրկում էր անսահման իրաւունքներից. այն կալուածատէրը, որ կապալառու գիւղացուն հեռացնում էր հողից՝ պիտի տար տուգանք և բացի դրանից այն բոլոր շինութիւնների և բարեկարգութիւնների արժողութիւնը, որ գիւղացու միջոցներով էին գլուխ բերուած։ Գլադստոն այս մասնաւոր շրջանի սովորութիւնը օրէնք դարձրեց ամբողջ Իրլանդիայի համար։ Դրանով չէր վերջանում հողային արիւնոտ հարցը, և գիւղացու տանջանքները չէին վերանում։ Մի թեթև քայլ էր

դա, մի փոքրիկ բարեփոխութիւն։ Ուստի և չը գոհացրեց իրլանդացիներին։

Մի այլ խոշոր ռէֆօրմ, որ անց կացրեց Գլադստօն 1870 թուին՝ ժողովրդական կրթութեան նոր սիստեմն էր։ Հաստատուեց պարտադիր ուսման սկզբունքը. ժողովրդական դպրոցների թիւը աւելացնելու համար մի շարք խնլացի միջոցներ ձեռք առնուեցան։ Նրանք հասարակական դպրոցներ էին, և հոգևորականութիւնը ոչ մի իրաւունք չունէր նրանց վրայ. կրօնի դասատուութիւն չը կար, թոյլատրւում էր միայն Աստուածաշունչի պատմութիւնը. զանազան դաւանութիւնների պատկանող երեխաները կարող էին սովորել մի դպրոցում։ Հասկանալի՝է, որ այս քայլն էլ չէր կարող դուր գալ հոգևորականութեան։ Ազնուական դասակարգը կատաղեց մանաւանդ մի դէպքից։

Անգլիայի զինուորական վարչութեան մէջ օրէնք կար, որ պաշտօնները կարելի է առնել փողով։ Օրինակ մի գնդի հրամանատար դառնալու համար՝ պէտք էր վճարել 100—150 հազար ռուբլի։ Սա էլ մի կատարեալ անբարոյական և անարդար կարգ էր, որով զինուորական բարձր աստիճանները մատչելի էին դառնում միմիայն հարուստներին։ 1870 թ. Գլադստօն առաջարկեց մի օրինագիծ, որով ջնջւում էր այդ անպատուաբեր կարգը, և պաշտօններ ստանալը արժանաւոր և

հասկացող մարդկանց իրաւունքն էր դառնում։ Համայնքների ժողովն ընդունեց առաջարկած օ-րէնքը, բայց լօրդերը սաստիկ հակառակութիւն ցոյց տուին և մերժեցին այդ նոր բանը, որ զըր-կանք էր ազնուականների համար։ Երկրորդ ան-գամն էր, որ Գլադստօն ընդհարում էր ունենում արտօնուած դասակարգի հետ։ Եւ այս անգամ էլ նա անտես արաւ լօրդերին։ Յանկարծ Լօնդօնի պաշ-տօնական լրագրում հրատարակուեց թագուհու հրամանը, որ արգելում էր պաշտօնների վաճառքը և հաստատում էր այն արդար կարգը, որ պաշ-տօններ ստանան միայն նրանք, որոնք քննու-թիւն են բռնում։ Գլադստօն գտել էր, որ պաշ-տօններ ծախելը սկզբում պարլամենտի կողմից հաստատուած օրէնք չէր, այլ պարզապէս թագա-ւորի հրամանով էր մտցրուել. հետևաբար մի թա-գաւորի հրամանը կարող էր ոչնչացնել միւս թա-գաւորը, չը դիմելով պարլամենտի օգնութեան։ Բայց այս յանդուգն քայլն էլ, որքան և պատուա-բեր լինէր Անգլիայի համար՝ մեծ զայրոյթ պատ-ճառեց։ Նոյն-իսկ Գլադստօնի կողմնակիցներից շատ-շատերը անբաւական էին և գտնում էին, որ առաջին մինիստրը դրանով վտանգի է ենթարկում պարլամենտի անկախութիւնը։ Գլադստօնի մեծ ժողովրդականութիւնը հետզհետէ ընկնում էր։ Այս անաջողութեան վրայ աւելացան և այն քայլերը,

որ Գլադստօն արաւ արտաքին քաղաքականութեան մէջ։

1870 թուին ծագեց ֆրանս-պրուսական պատերազմը։ Գլադստօն տպեց մի յօդուած, որի մէջ ասում էր հետեւեալը. «Լուսաւորուած մարդկութեան դատաւճիռը, որ բարձրագոյն, բողոք չընդունող մի ատեան է՝ դատապարտեց ֆրանսիացիների աշխարհակալական ծարաւը և կը դատապարտէ գերմանացիների անկուշտ ագահութիւնը։ Մեր ժամանակի ամենամեծ յաղթանակը կը լինի այն, որ միջազգային իրաւունքը կը թագաւորէ իբրև համաշխարհային քաղաքականութեան գերագոյն ղեկավար, և բոլոր ազգերի մէջ առաջինը այն ազգը կը լինի, որ միւս ազգերին կը ներշնչէ համոզմունք, թէ արդարը ինքն է»։ Այս խօսքերի մէջ էլ հանդէս էր գալիս նոյն Գլադստօնը, որ մի ժամանակ բողոքում էր Պալմերստօնի դէմ, որ տմարդի գործ էր համարում Ղրիմի պատերազմը։ Այժմ նա առաջին մինիստր էր և կարող էր գործով ցոյց տալ, թէ ինչ է իր խօսքերի միտքը։ Ֆրանս-պրուսական պատերազմի ժամանակ նա չէշոք մնաց, նոյն-իսկ մերժեց Թիէրի խնդիրքը և չուզեց Ֆրանսիայի օգտին միջամտութիւն գործել։ Իսկ երբ Ռուսաստանը, օգտուելով այդ պատերազմից, պահանջեց ջնջել Պարիզի դաշնադրութեան այն յօդուածը, որ արգելում էր ռուսներին պատերազմական նաւատորմ պահել Սև ծովի վրայ՝

Գլադստօն չընդդիմացաւ, քանի որ ինքը դեռ Պարիզի դաշնադրութեան ժամանակ էր յայտնել, որ չը պէտք է սահմանափակել Ռուսաստանի իրաւունքները։ Յօդուածը ջնջուեց 1871 թուին, բայց այս բանը մի զօրաւոր զէնք դարձաւ Գլադստօնի հակառակորդների ձեռքում։ Ազգային ինքնասիրութիւնը վիրաւորուած էր. Անգլիան Ղրիմի պատերազմի ժամանակ այնքան արիւն էր թափել, այնքան գումարներ էր վատնել Ռուսաստանը թուլացնելու համար, և այժմ ոչնչանում էր այնքան զոհաբերութիւնների միակ նշանաւոր պըտուղը։ Բայց այսքանը բաւական չէր։ Անգլիական ինքնասիրութիւնը շուտով մի նոր և աւելի ծանր հարուած էլ ստացաւ։

Դա «Ալաբամայի» հարցն էր։ Յարաբերութիւնները Միացեալ Նահանգների և Անգլիայի մէջ այնքան լարուած էին, որ երկու կողմից ծովային պատերազմի պատրաստութիւններ էին տեսնւում։ Գլադստօն երկար բանակցութիւններից յետոյ առաջարկեց վէճը ենթարկել միջնորդ դատարանի քննութեան։ Միացեալ Նահանգների կառավարութիւնը համաձայնութիւն տուեց, և միջնորդ դատաւորներ ընտրուեցան երեք այնպիսի չէզոք պետութիւններ, որոնք որևէ շահ չունէին այդ գործում (Շվէյցարիա, Իտալիա և Բրազիլիա)։ Դատարանը գումարուեց Ժընևում. նրան ներկայացուեցան գործի բոլոր մանրամասնութիւնները,

իսկ Ամերիկայի և Անգլիայի հաւատարմատարները պաշտպանում էին իրանց կառավարութիւնների շահերը։

Մինչև այդ՝ Գլադստօն անց կացրեց և մի այլ կարևոր օրէնսդրութիւն։ Դա գաղտնի քուէարկութեան օրէնքն էր։ Մենք տեսանք, որ պատգամաւորների ընտրութիւնը կատարւում էր բաց քուէարկութեամբ, որի բազմաթիւ անկարմարութիւններից գլխաւորն այն էր, որ ընտրողների վրայ հեշտ էր ճնշում գործ դնել սպառնալիքների և կաշառքի միջոցով։ Վաղուց էին խօսում այս հին կարգը վերացնելու և ընտրողներին կատարեալ ազատութիւն տալու մասին։ 1871 թուի ամառը Գլադստօնի օրինագիծը, որ հաստատում էր գաղտնի քուէարկութիւն՝ անցաւ պատգամաւորների ժողովում, չը նայած պահպանողականների գործ դրած բոլոր ջանքերին։ Լորդերը այս օրինագիծն էլ մերժեցին. բայց 1872 թուին նորից առաջարկուեց և այս անգամ անցաւ նաև լորդերի պալատում։

Սակայն այս կարևոր րէֆօրմն էր մոռացուեց։ 1872-ի ամառը Ժընևվի միջնորդ դատարանը վերջացրեց «Ալամաբայի» գործի քննութիւնը և վճռեց, որ Անգլիան 32 միլիոն ռուբլի վնաս վճարէ Միացեալ Նահանգներին։ Գլադստօն այս առիթով ասաց. «Որքան և ծանր լինի մեզ վրայ դրած տուգանքը՝ բայց նա կորցնում է իր ամբողջ նշա-

նակութիւնը, երբ նկատի ենք առնում երկու մեծ ազգերի տուած այս օրինակի բարոյական վեհութիւնը։ Այս ազգերը, չը նայած որ նախանձախնդիր էին իրանց պատուին՝ կանգնեցին միջնորդ դատարանի առաջ, փոխանակ իրանց մէջ ծագած վէճը սրով վճռելու»։

Եւ իրաւ, աշխարհը դեռ չէր տեսել այսպիսի արդար և խաղաղ միջոց։ Դա նոր, լուսաւոր երեւոյթ էր, որ իրաւունքի պաշտպանութիւնը յանձնում էր անկողմնապահ արդարադատութեան և ոչ թէ պատերազմի աստծուն, որի ճանաչած միակ օրէնքն այն է, թէ արդարը նա է՝ ով յաղթում է, այսինքն թէ իրաւունքը ուժեղին է պատկանում։ Եւ այսպիսի դատաստանը տեղի էր ունենում այն ժամանակ, երբ նոր էր վերջացել Ֆրանս-պրուսական աղէտալի պատերազմը, որ սկսուել էր մի չնչին պատճառով և դարձաւ մի ահռելի դժբախտութիւն ամբողջ Եւրոպայի համար։ Եթէ աշխարհը շատ Գլադստոններ տուած լինէր, եթէ ազգերի յարաբերութիւնները բղխէին համամարդկային եղբայրակցութեան սկզբունքից՝ միջազգային միջնորդ դատարանը վաղուց բռնած կը լինէր թնդանօթների տեղը։ Բայց Գլադստոն մի հատ էր, իսկ մի հատ ծաղկով, ինչպէս յայտնի է՝ գարուն չի լինի։ Ինքը Անգլիան, ազատութեան և հանճարների այս հայրենիքը, վեր կացաւ Գլադստոնի դէմ, որ ապացուցանէ, թէ նա իր ժամանակի մարդ չէ, թէ նրա պէս ի դ է ա լ ի ս տ փ ի լ ի ս ո փ ա ն չէ կարող

ղեկավարել մարդկանց այնպիսի դէպքերում՝ երբ խօսում է արիւնածարաւ կռիւը...

Երբ հրատարակուեց Ժընեվի դատարանի վճիռը՝ Անգլիայում հասարակական կարծիքը անսահման կատաղութեան հասաւ. Նոյն-իսկ լուրջ, հասկացող մարդիկ աղաղակում էին, որ կառավարութիւնը չը պիտի հպատակուի այդ վրդովեցուցիչ դատավճռին։ Անգլիան, ծովերի թագուհին, ստորութիւն էր համարում մի անկաշառ և արդար դատարանի առաջ մեղաւոր ճանաչուելը։ Կառավարութիւնը, իհարկէ, ականջ չը դրեց փրփրած շովինիստներին, ուստի «Ալաբամայի» գործը, որ իր վեհութեամբ կատարելապէս արժանի էր Գլադստոնի անուան, դարձաւ մի ժայռ, որին զարնուելով՝ խորտակուեց մինիստրութիւնը։ Գլադստոնի անունը ու վարկը արագ ընկնում էին։ Բանը հասաւ այն տեղին, որ Նրա ընտրողների մի մեծ մասը փորձեց ցոյց սարքել, որպէսզի հարկադրէ Նրան հեռանալ պաշտօնից։ Գլադստոն զինուեց իր անհագին եռանդով և գնաց ուղղակի ցոյցի տեղը։ 20 հազար մարդ էին կանգնած Նրա դէմ, ամենքն էլ անբաւական. այդ բազմութեան առաջ Նա սկսեց մի երկար ճառ, քայլ առ քայլ պաշտպանեց իր բոլոր արածները։ Սկզբում խլացնող ծափահարութիւնների հետ լսւում էին մռնչոցներ, սուլոց և գոռում-գոչիւններ։ Բայց յետոյ, երբ անվրդով և համարձակ ատենաբանը տիրեց մարդկանց խելքին, գերելով Նրանց իր անկեղծութեամբ և չի-

տակութեամբ, բողոքողների թիւը այնքան քչացաւ, որ վերջում, երբ ատենաբանը խնդրեց լսողներին վճիռ կայացնել՝ տեղի ունեցան այնպիսի ոգևորուած ցոյցեր, որոնք միայն յաղթողներին են վիճակւում։

Դա, այո, յաղթութիւն էր ընտրողների առաջ. բայց միայն ընտրողները չէին հակառակ. ամբողջ Անգլիան շարունակեց անհամակրական դիրք պահել ամբողջ մինիստրութեան վերաբերմամբ։ Այլեւս ոչինչ չէր կարելի անել։ 1873 թուին Գլադստօն առաջարկեց աշխարհական համալսարան բաց անել Իրլանդիայի Դուբլին քաղաքում կաթոլիկների և բողոքականների համար։ Ամենքը անբաւական էին, նոյն-իսկ ազատամիտները. ծրագիրը տապալուեց, և Գլադստօն իր ընկերների հետ հրաժարական տուեց։ Սակայն Դիզրաէլի, որին թագուհին առաջարկեց մինիստրութիւն կազմել՝ չուզեց կառավարութեան գլուխ անցնել մի այնպիսի ժամանակ, երբ համայնքների ժողովում ազատամիտները ահագին մեծամասնութիւն ունէին։ Նա աւելի լաւ համարեց սպասել, որ «հանգած հրաբուխները», ինչպէս նա անուանում էր ազատամիտներին՝ դարձեալ մի քանի պարտութիւններ կրեն։ Եւ Գլադստօն, հակառակ իր կամքի, հարկադրուած եղաւ մի տարի էլ կառավարել երկիրը։ 1874 թ. յունուարին նա արձակեց պարլամենտը և նոր ընտրութիւններ նշանակեց։

Ազատամիտների պարտութիւնը և պահպա-

նողականների յաղթանակը կատարեալ էին։ Սկըսուեց Գլադստօնի կեանքի տխուր շրջանը։ Յուսահատութեան նշաններ երևացին այդ երկաթի մարդու մէջ—այնքան խոր էր այն անջրպետը, որ այժըմ բաժանում էր նրան հասարակական կարծիքից։ Նա խօսում էր ասպարէզը բոլորովին թողնելու մասին, ասում էր որ պետական գործիչը 60 տարեկան դառնալուց յետոյ այլևս չէ կարող գործ կատարել, իսկ ինքը արդէն 65 տարեկան է։ Չընայած այս հիասթափման՝ նա, իբրև ազատամիտ կուսակցութեան պարագլուխ, իր պարտքը համարեց մասնակցել ընտրութիւններին և, ինչպէս միշտ, եռանդուն և անխոնջ ագիտացիա սկսեց. երևում էր ամեն տեղ, ճառեր էր արտասանում։ Բայց ինչ դուրս եկաւ։ Նրան մի տեղ ընտրեցին երկրորդ կանդիտատ՝ օղիի մի գործարանատէրից յետոյ, իսկ նրա ընկեր մինիստրներին սևացրին։ Այն ժամանակ նա մի նամակ գրեց լօրդ Գրէնվիլին և հրաժարուեց կուսակցութեան պարագլխի պաշտօնից. Մնալով լոկ պատգամաւոր՝ նա քաշուեց Հօվարդէնի ամրոցը, նուիրուեց իր սիրած գրական աշխատութիւններին։

Սկսուեց Դիզլիի թագաւորութիւնը։ Բայց Գլադստօն այնպիսի հրաբուխներից չէր, որոնք հանգչում են։ Պահպանողականների ճարպիկ պարագլուխը շատ շուտ համոզուեց այս բանի մէջ։

Զ.

Բալկանեան հրդեհը։—Եւրոպայի բացուած դիրքը։—Իսլամի բանկումը։—Ցոյցեր Կ. Պոլսում և արիւն ու աւերանք Բօլգարիայում։—Դիզրաէլին.—բաշիբօզուկների պաշտպան։—Մամուլի մերկացումները։—Սարսափ և զայրոյթ։—Գլադստօն միտինգներում։—«Բօլգարական Սարսափներ և Արևելեան Հարց»։—Համակրանքը հակակրանքի փոխուած։—Անգլիան պատերազմի է պատրաստւում։—Կիպրոս և Բեռլինի վեհաժողով։—Դիզլին—օրուայ հերոս։—Գլադստօնի երկրորդ մինիստրութիւնը։—Իռլանդիան և Պառնէլ։—Ընտրողական նոր ռէֆօրմ։—Կարճատև անաջողութիւն։—Իռլանդական ինքնավարութիւն և նոր պարտութիւն։—Պառնէլի մահը։

1874 թուականը, անգլիական ազատամիտների պարտութեան տարին, անբարեյաջող էր և Բալկանեան թերակղզու հիւսիս-արևմտեան կողմում գտնուող նահանգների համար։ Հերցեգօվինայում հունձը շատ անբաւարար էր, և հողագործ քրիստոնեաները յայտնեցին թիւրք կառավարութեան, որ իրանք հարկեր տալու կարողութիւն չունին։ Թիւրք զապթիաները կատաղած գայլերի նման յարձակուեցան խաղաղ ազգաբնակութեան վրայ և սկսեցին կեղեքել նրան։ Դա մի սովորա-

[illegible]

[illegible] 1375 [illegible]

[illegible]

քաց զօրքերը կանոնաւոր պատերազմ սկսեցին, բայց աջողութիւն չունէին։

Եւրոպան միջամտեց։ Ռուսաստանը, Աւստրիան և Գերմանիան իրանց մէջ համաձայնութիւն կայացրին և հրաւիրեցին միւս պետութիւնները գործել միաբան։ Եւրոպական հիւպատոսները բանակցութիւն սկսեցին ապստամբների առաջնորդների հետ, համոզեցին նրանց հաշտութիւն կնքել Թիւրքերի հետ, բայց ոչինչ աջողութիւն չունեցան։ Այն ժամանակ երեք դաշնակից պետութիւնները Թիւրքիայից պահանջեցին րէֆօրմներ մտցնել ապստամբուած նահանգներում։ Քրիստոնեայ Եւրոպայի միջամտութիւնը վառեց իսլամի ֆանատիկոսութիւնը։ Կ. Պոլսում սկսուեցան խլրտումներ, որոնց հեղինակն էր «Երիտասարդ Թիւրքիա» անուանուած կուսակցութիւնը։ Անգլիական դեսպան սըր Էլլիօտ, որ յայտնի էր իր Թիւրքամոլութեամբ՝ կուսակցութեան պարագլուխ Միդհատ-փաշայի անձնական բարեկամն էր և, ուրեմն, նաև խորհրդատուն։ Երիտասարդ Թիւրքերը, թագնուելով եւրոպական ազատ մտքերի դիմակի տակ՝ ներկայացնում էին մահմետական հայրենասիրութիւնը, որ ֆանատիկոսութեան էր հասնում։ Պետութիւնների միջամտութիւնը խանգարելու համար՝ նրանք սկսեցին խօսել սահմանադրութեան մասին, յայտարարելով որ րէֆօրմները պիտի լինին ոչ թէ մի քանի նահանգների, այլ ամբողջ պետութեան

համար։ Թիւրքաց կառավարութիւնը պաշտօնապէս խոստացել էր պետութիւնների պահանջած րէֆօրմները մտցնել Բօսնիայում և Հերցեգօվինայում։ Ուստի երիտասարդ Թիւրքերը զինուեցան կառավարութեան դէմ և սկսեցին ցոյցեր անել։ Նրանց յուզմունքը սաստկանում էր մանաւանդ այն պատճառով, որ բօսնիացի և հերցեգօվինացի ապստամբները մեծ աջողութեամբ էին կռւում Մուխտար-փաշայի զօրքերի դէմ։ Ամեն ինչ գուշակում էր մօտալուտ փոթորիկ։

Այդ յարմար ժամանակից օգուտ քաղեցին և բօլգարները։ 1876 թուի ապրիլի 20-ին Բալկանեան սարերում, Պանիգուրիշտի գիւղում, յայտարարուեց բօլգարական ապստամբութիւն։ Դա մի խեղճ ու թոյլ փորձ էր։ Բուքարէստում գոյութիւն ունէր բօլգար ուսանողների մի գաղտնի ընկերակցութիւն, որ յեղափոխութիւն էր պատրաստում։ Տեսնելով որ հանգամանքները շատ նպաստաւոր են, ընկերակցութիւնը մի քանի մարդ ուղարկեց Բալկանեան սարերը՝ ապստամբութիւն յարուցանելու։ Պատրաստութիւններ չը կային։ Պանիգուրիշտի գիւղում ժողովներ եղան, արտասանուեցան հայրենասիրական կրակոտ ճառեր, իսկ տեղական վարժուհի Րայկա պատրաստեց բօլգարական ազգային դրօշակ։ Այս փորձը յայտնի դարձաւ Թիւրքերին. տեղի ունեցան մի քանի ընդհարումներ, մինչև որ ապրիլի 30-ին վրայ հասաւ Հաֆիզ-փա-

ջան կանոնաւոր զօրքերի և բաշիբօզուկների հետ։ Սկսուեցան զարհուրելի կոտորածներ։ Որքան յայտնի է՝ չորս կամ հինգ գիւղ էին գտնւում ապըստամբական դրութեան մէջ։ Բայց Թիւրքերը կոտորում էին անխտիր ամենքին։ Մանաւանդ զարհուրելի էր կոտորածը Բատօկ գիւղում։ Բալկանեան սարերը մի կարճ միջոցում արիւնլուայ դարձան։

Եւրոպան լուռ էր, ոչինչ չը գիտէր։ Միայն յունիսին «Daily News» լրագրում տպուեց առաջին թղթակցութիւնը թիւրքական գազանութիւնների մասին։ Հասարակութեան մէջ զայրոյթի և սարսափի աղաղակ բարձրացաւ։ Պարլամենտում հարցապնդում եղաւ, բայց Դիզրաէլի նախ ասաց, թէ ոչինչ չը գիտէ, յետոյ թէ ժամանակ չունի, և ապա մի շարք տափակ սրախօսութիւններով աշխատեց քնացնել պատգամաւորներին։ Այսպէս, նա ասաց որ Արեւելքում մարդկանց ցից հանելը սովորական բան է, որ ընդհարումները քրիստոնեանների և մահմետականների մէջ միշտ անխուսափելի են և այլն։ Սակայն լրագիրներում հետզհետէ լոյս տեսնող մանրամասնութիւնները մերկացնում էին, թէ ինչ անամօթ աղաւաղութիւնների է դիմում Անգլիայի առաջին մինիստրը՝ բաշիբօզուկներին պաշտպանելու համար։ Կ. Պոլսի դեսպան Էլլիօտ աջակցում էր Դիզրաէլիին այդ բանի մէջ, հասցնելով նրան աղճատած տեղեկութիւններ։ Հա-

հասարակական կարծիքին բաւարարութիւն տալու համար՝ Դիզրայէլի մինիստրութիւնը, պառլամէնտում եղած առաջին հարցապնդումից մի ամիս յետոյ, հրամայեց որ Էլլիոտին մի քննիչ ուղարկել Բոլղարիա։ Դեսպանը ուղարկեց իր ստորադրեալներից մէկին, Բէրինգին, որ նոյնպէս յայտնի թիւրքասէր էր։ Որքան և Բէրինգ ջանք էր թափում, որ մեղմացնէ թիւրքերի յանցանքը ու ցոյց տայ, որ երկու կողմերն էլ—բուլղարներն ու թիւրքերը—հաւասար չափով մեղաւոր են՝ բայց և այնպէս, չը կարողացաւ թաքցնել, որ միմիայն Ֆիլիպոպոլի վիլայէթում կոտորուել են 12000 բուլղարներ։ Դիզրայէլի չուզեց հաւատալ նոյն-իսկ Բէրինգին և հրամայեց երկրորդ անգամ ուղարկել նրան քննութիւն կատարելու։ Սակայն երկրորդ քննութիւնն էլ նոյն հետևանքներն ունեցաւ։ Բայց նախ քան Բէրինգից պաշտօնական տեղեկութիւններ ստանալը՝ Դիզրայէլի մի անգամին բացատրութիւն տալիս «Times» լրագրում և բացարձակապէս յայտարարեց, թէ երկու կողմն էլ մեղաւոր են։ «Ի՞նչ զարմանալու բան կայ,—ասում էր նա—որ չէրքէզները, երբ նրանց գիւղերը կրակում են, իսկ տներըը քանդում՝ աշխատում են պաշտպանել յարձակուածների դէմ։ Առաջին մինիստրի այս անամօթ ստախօսութիւնները այնքան զզուեցուցիչ էին, որ նոյն-իսկ Կ. Պոլսում հրատարակուող մի ֆրանսերէն լրագիր չը կարողացաւ լուռ մնալ

և հաստատեց, որ ճիշտ չէ Դիզրաէլիի այն վկայութիւնը, թէ քառասուն հատ բօլգար աղջիկներ չեն այրուած։ Այս յանդգնութեան համար լրագիրը Բ. Դուան հրամանով խափանուեց։ Թէև համայնքների ժողովում չարունակւում էին հարցապնդումները, բայց Դիզրաէլի զանազան միջոցներով, որոնց նմուշը տուինք արդէն, քնացրեց ամենքին, ձգձգեց հարցը մինչև որ վրայ հասաւ ամարային արձակուրդի ժամանակը։ Պարլամենտը փակուեց, և Դիզրաէլի ստացաւ լօրդ Բիկօնսֆիլդի տիտղոսը։

Մի կողմից անմեղ զոհերի արիւնը, միւս կողմից անգլիական կառավարութեան բռնած ամօթալի ուղղութիւնը դուրս կանչեցին Գլադստօնին։ Նա ձայն բարձրացրեց, և անգլիական ազգը, որ արդէն յուզուած էր լրագիրներում տպուած նկարագրութիւններով՝ արձագանգ տուեց 67 տարեկան ծերունու մարդասիրական բողոքներին։ Միմեանց ետևից բազմաթիւ միտինգներ կազմուեցան։ Գլադստօն հասնում էր ամեն տեղ, կրակոտ ճառեր էր արտասանում, և զայրոյթի, բողոքների ձայները լսւում էին Անգլիայի ամեն կողմերից։ Մի ականատես, Ստէդ, այսպէս է նկարագրում Գլադստօնին այդ միտինգներից մէկում.

«Գլադստօն բարձրահասակ է, լիքը կազմուածք չունի. ընդհակառակն, նիհար է և ջղուտ։ Բայց նայելով նրա դէմքին՝ դժուար էր մտածել կազմուածքի մասին։ Զարմանալի արտայայտիչ դէմք

ունի. իւրաքանչիւր մկան ազդում է, իւրաքանչիւր ջիղ խօսում է։ Երբեմն այդ անսովոր աշխոյժ դէմքը լուսաւորւում էր մի խելօք ժպիտից, երբեմն պատկերացնում էր այն սարսափը, որ այդ միջոցին արտայայտւում էր նրա խօսքերի մէջ. յետոյ մտքի բարձր թռիչքը դարձեալ բռնկւում էր նրա փայլուն աչքերի մէջ, և նայողը այնպէս էր կարծում, թէ լսում է մարգարէի ձայն։ Նա տոգորուած էր բարութեամբ, որը նրա սրտից թափւում էր ձեզ վրայ հայեացքների միջոցով և հաղորդւում էր նրա իւրաքանչիւր դիմագծին իսկական կանացի փափկութիւն և քնքշութիւն։ Այն միջոցին, երբ մի-մի թուելով ապացոյցները, նա յայտարարեց, որ Թիւրքաց կառավարութիւնը արիւնով թաթախուած է, իբրև ամենազզուելին վարձկան սպանողներից՝ ճառախօսի սարսափելի եռանդը անցաւ ամբոխին, և սա դղրդաց. այդ դղրդոցը մեղադրանք էր առանց խօսքերի, որ անգլիական ժողովուրդը արտասանում էր Թիւրքերի դէմ։ Իր ատելութիւնը և բարկութիւնը ճառախօսը արտայայտութեան գագաթնակէտին հասցրեց այն ժամանակ, երբ ասաց, որ եթէ անգլիական պատմութեան բոլոր ամենախայտառակ էջերից մի տեղ հաւաքուեն բոլոր սպանութիւնները և չարագործութիւնները՝ դարձեալ նրանք այնքան չնչին կը լինին, որ չեն բռնի նոյն-իսկ մէկը պատմութեան այն էջերից, որոնցով այսուհետև

յաւիտենական խայտառակութեան կը մատնուեն Թիւրքերի գործերը Բօլգարիայում։ Նրա հոգին, կարծես, թողել էր նրան և սաւառնում էր տարածութեան մէջ, երբ նա անէծքներ էր թափում Բօլգարիան աւերողների գլխին։ Բայց ճառի ամենաճկուն և նուրբ մասն այն էր, որի մէջ նա թւում էր, թէ ինչ պայմաններով է թոյլատրւում Թիւրքերին մնալ Եւրոպայում։ Որպէս թէ դիմելով Թիւրքերին՝ նա քիչ կանգ առաւ, ուղղեց իր ամբողջ կազմուածքը և հանդիսաւոր, մեղմ ձայնով սկսեց, դանդաղ կերպով բաց թողնելով խօսքեր խօսքերի ետևից. «Դուք կարող էք ստանալ որոշ հարկ, պահել ձեր անուանական գերիշխանութիւնը, ձեր պետութիւնը ուրիշների յարձակման չի ենթարկուի, բայց—այստեղ Գլադստոնի աչքերը վառուեցան, և բարձրացնելով բռունցքը՝ նա ձայնեց փողի պէս, բարձր նօտաներով—բայց երբէք առաջիկայում, որքան տարիները կը յաջորդեն միմեանց՝ երբէք այսուհետև դուք չէք համարձակուի բարձրացնել հարստահարութեան ձեռքը, ազատութիւն տալ ձեր վաւաշոտութեան. չէք համարձակուի հնարել անգթութեան սարսափելի կատարելագործութիւններ ի դժբախտութիւն մարդկային ազգի»։ Այստեղ թնդաց ծափահարութիւնների գոռ աղմուկը, որ խլացրեց նրա ձայնը։ Վերջին խօսքերը խորին պատկառանքով լցրին լսողների սրտերը. Թւում էր, թէ մարդկութեան բար-

ծրագրին քաղաքը պաշտպանելու է կառավարած յանձնառար ապստամբութեան դէմ... Գլադստոն խօսքեր էր արտայայտած Թիւրքերու դէմ այնպէս՝ ինչպէս պատմութիւնը նշանակ է խօսած գաղափարին, լսելով իր ձայնը և կենդրոնացնելով ամբողջ [illegible] մի հասարակութեան մէջ։ Նա գիտէր էր [illegible] կացութեան զբաղմունքին։ «Եթէ Անգլիան, ասաց նա, [illegible] դառնալով խօսքին թողլ կը տայ խոնարհութեան. այդ ժողովուրդներու ազատութիւնը՝ այն ժամանակ նոյնն կը մնայ [illegible] Անմիջական [illegible] պարտականութիւնը։ Այս կոչումը, որ ուղղուած էր մեծագոյն լաւ գաղափարներին՝ վերջնականապէս [illegible] [illegible] ամբոխը։ Հայութիւնը [illegible] թէրութեան, և այդ Թիւրքիոյներէն [illegible] մի [illegible] [illegible], որ [illegible] էր Չերքեզներ [illegible] (Թիւրքերու դէմ)։

Այսքանը բաւական չէր։ Սասունի [illegible] Գլադստոն հրապարակից իր [illegible] շրջանը, որի վերնագիրն էր [illegible] Սասունին և Արեւելեան Հայոց։ Սա մի [illegible] պատմութիւն էր, ուղղուած ոչ միայն [illegible] դէմ, այլ և նրանց պաշտպանին՝ [illegible] միջնորդութեան դէմ։ Սասունեցիներին [illegible] էր քննադատում Գլադստոն։

«Եա [illegible] [illegible] [illegible] և [illegible] գծերով ներկայացնել Թիւրք ցեղը, թէ ինչ է եղել նա և ինչ է այժմ։ Այստեղ [illegible] [illegible]

մետականութեան մասին չէ, այլ մի ցեղի առանձնայատուկ բնաւորութեան հետ զուգախառնուած մահմետականութեան մասին։ Թիւրքերը ոչ Հնդկաստանի հեզաբարոյ մահմետականներն են, ոչ Սիրիայի Սալադինեան ասպետները և ոչ Սպանիայի քաղաքակիրթ մաւրերը։ Սկսած այն սև օրից, երբ Թիւրքերը առաջին անգամ մտան Եւրոպա՝ մենք տեսնում ենք նրանց մէջ մարդկային մի հասարակութիւն՝ որ մարմնացնում է մարդկութեան թշնամուն։ Ուր որ գնացել են նրանք՝ իրանց ետևից միշտ թողել են մի լայնատարած արիւնաներկ հետք՝ և ուր հասել է նրանց տիրապետութիւնը՝ այնտեղ անհետացել է քաղաքակրթութիւնը։ Ամեն տեղ նրանք եղել են ներկայացուցիչ ույժի վրայ յենուող կառավարութեան, բացասելով օրէնքի վրայ հիմնուած կառավարութիւնը։ Այս կեանքում նրանց միակ ղեկավարը՝ անյողդողդ ֆանատիկոսութիւնն էր, իսկ հանդերձեալ կեանքում դրա վարձատրութիւնն էր զգայասիրական դրախտը։

«Նրանք եղել են ահռելի մարմնացումն զինուորական ույժի։ Նրանց հետ առաջ էր խաղում Աստուծու պատուհասը և սպառնում էր ամբողջ Եւրոպային։ Եթէ նա կանգ առաւ, և այն ոչ թէ մի, այլ մի քանի անգամ՝ այդ եղաւ շնորհիւ հերոսութեան այն եւրոպական ազգի, որ ապրում էր նոյն այն երկրներում, որոնց մի մասը այժմ դար-

ձել է պատերազմի բեմ*) և դիւանագիտական գործունէութեան մտատանջող առարկայ։ Հին ժամանակներում ամբողջ արևմտեան քրիստոնէութիւնը համակրութեամբ էր վերաբերւում ընդհանուր թշնամու դէմ մղուած կռուին՝ և նոյն-իսկ ռէֆորմացիայի դարի կատաղի կռիւների միջոցներին, եթէ չեմ սխալւում, անգլիական եկեղեցիներում աղօթքներ էին կարդացւում, աջողութիւն մաղթելով կայսրին, Հռոմէադաւան կաթոլիկների ուժի և ազդեցութեան պետին, որ պատերազմ էր վարում Թիւրքերի դէմ։

«Սակայն Թէպէտ և Թիւրքը ներկայացնում էր օրէնքներ բացասող ուժը՝ այնու ամենայնիւ նոյն-իսկ ուժի վրայ յենուող կառավարութիւնն էլ չէ կարող պահպանուել առանց մտաւոր տարրի օգնութեան, իսկ այդպիսի տարր չունէր Թիւրքը։ Այստեղից առաջացաւ մի տեսակ համբերողութիւն դաժանութեան, բռնակալութեան և աւազակութեան մէջ, մի երևոյթ, որ հազուագիւտ է մարդկային պատմութեան էջերում։ Քրիստոնեաներից շատերին արհամարհաբար կեանք էր շնորհւում․ թոյլ էին տալիս, որ կառավարութեան երկրորդական պաշտօնավարութիւններից շատերը անցնեն եղիս․

*) Այն ժամանակ, երբ Գլադստոն գրում էր այս փրօշիւրը՝ Սերբիան և Չերնոգորիան պատերազմում էին Թիւրքիայի դէմ։

կապոսների ձեռքը և դէպի Կ. Պոլիս էին գլորւում. լոյն ցեղը, որ շարունակ որոշ չափով լրացնում էր. Թիւրքական իսլամի մէջ եղած պակասորդը մտաւորի կողմից...

...«Պատերազմական եռանդի անկումը մի-պետութեան մէջ, որ դարերի ընթացքում սոսափ էր ազդում ամբողջ աշխարհին՝ միանգամայն զարմանալի է: Քսան տարիների ընթացքում Թիւրքիան, շնորհիւ եւրոպական բօրսաների դիւրահաւատութեան, փոխ է առել ոչ պակաս քան 200 միլիոն ստերլինգ. այս գումարի նշանաւոր մասը գործ է դրուել նրա զօրքի և նաւատորմի վրայ: Այսքան ծախսերի հետեւանքը աչքներիս առաջն է: Հետեւանքը մենք տեսանք Թիւրքիայի կռւում Սերբիայի դէմ, որի ազգաբնակութիւնը մէկ ու կէս միլիոնից պակաս է, իսկ զօրքի թիւը 5-ից մինչև 8 հազար է. Միացածները, որոնք զէնք են կրում՝ դեռևս կիսավարժ միլիցիոներներ են: Այդ տեսանք նոյնպէս և այն պատերազմի ժամանակ, որ նա մղում էր մի քանի տասնեակ հազար չէրնոգօրցիների դէմ: Մեր ցեղին պատկանող այդ մի բուռն մարդկանց դէմ մի կայսրութիւն, որ երեսուն միլիոնից աւելի հպատակ ունի՝ ուղղում է իր բոլոր զօրութիւնը. այդ նպատակների համար նա գործ է դնում բոլոր իր սեփական դրամական միջոցները և իր պարտատէրերի ամբողջ կարողութիւնը, և երկու ամիս յուսահատ ճիգեր թափելուց յետոյ

պարծենկոտությունը հաստատում է նրանով, որ ինչ-որ [illegible] ավտոնոմություններ է [illegible] Սեր-[illegible] և առանց որևէ [illegible] է Չեռնոգորիային [illegible]։ Ինչպես էր այդ [illegible] Բուլղարներին, [illegible] և [illegible]։

Այնուամենայնիվ, [illegible] պաշտպան անգլիական կառավարությանը՝ Գլադստոն գրում էր.

Ես ընդունում եմ, որ մինչև վերջին ժամանակներս հասարակության մեջ շատ [illegible] էր այն կարծիքը, թե մեր կառավարությունը, չը[illegible] իր գործունեության [illegible] անկախությունների՝ շատ [illegible] է [illegible] այդ [illegible] իր [illegible], [illegible] [illegible] Միայն երկու-երեք շաբաթ է անցել այդ ժամանակից. այն ինչ հիմա, [illegible], որ [illegible] մի [illegible] էր [illegible] է [illegible]։ Եվ ինչ [illegible] մեր [illegible], և [illegible] մեր [illegible] է մի [illegible], [illegible]։ Այժմ [illegible] մի [illegible], որ [illegible] է [illegible] մի [illegible]

ժխարդման վրայ։ Մի ձայն, մի գրեթէ միայնակ ձայն, տարածուելով ծովերի և ցամաքների վրայով՝ հնչեց յունիս ամսին և բերեց մեզ կատարուող դէպքերի բօթը։ Չը կար լուրների պակասութիւն, երբ պատմւում էր այն համատարած կոտորածի մասին, որ կատարուել էր կառավարութեան անունով, մի կառավարութեան, որին, մեր շնորհիւ, քսան տարի առաջ կեանք պարգևուեց և որը մենք վճռել ենք այս տարի պահպանել մեր անուան ամբողջ ույժով, հակառակ Եւրոպայի. և մենք չենք էլ հարցնում, թէ ինչպէս և ինչի վրայ նա գործադրեց իրան շնորհած 20-ամեայ կեանքը։ Այդ դեռ քիչ է. յայտնի էր դառնում, որ այդ համատարած կոտորածները միացած էին այնպիսի սոսկալի չարագործութեան հետ, որի առաջ նսեմանում են նոյն-իսկ խողխողման արհաւիրքն ու խայտառակութիւնը։

«Սակայն ինչ եղաւ հետևանքը։ Այդ մեղադրանքները, այդ լուրերը գալիս էին մի անանուն, անպատասխանատու լրագրական թղթակցից։ Ահաբեկուած լօրդերը և պարլամենտի անդամները, խոհեմ անգլիացու բնազդով, սկսեցին հարց հարցի ետևից առաջարկել կառավարութեան։ Կառավարութեան պատասխանների գործած տպաւորութիւնը, նրանց ընդհանուր իմաստը, թէև ոչ բառացի, բայց եթէ կարելի է այսպէս ասել՝ բարոյական հերքումն էր։ Ի՞նչ էին ասում մեզ։ Մեզ զգու-

չացված էին չափազանցութիւններէ դէմ. ամբաստանուած էին ընդհանրապէս թեթեւցնել գործը, մեղմացնելով որ ամբողջովին բաներ զարմանալի չէին վայրենի ցեղերի մէջ, որոնց բարբարական զարդարանքները և հանդէսները բոլորովին տարբեր են մերիններից. դանդաղան ցինիկական բացատրութիւններ էին տալիս, նկատելով, օրինակ, թէ երկարատեւ տանջանքների մասին պատմածները դժուար թէ ճշմարիտ լինին, որովհետեւ յայտնի է, որ թիւրքերը ապանութիւն գործելիս երկար ու բարակ չէին մտածում. պնդում էին թէ դժուար է վճռել, թէ ո՛ր կողմն է աւելի անիրաւ գործել և աւելի զազրանօրէն վարուել. ընդհանրապէս համոզուած էին մեզ, թէ պատասխանատուները են եղել միշտ նախայարձակ, թելադրելով մեզ այն միտքը, թէ գլխաւոր պատասխանատուութիւնը պէտք է ընկնի նրա վրա՛ ով առաջին հարուածն է հասցրել. արդարացնում էին թիւրքաց ամբողջ կառավարական զօրքը և բոլոր իշխանաւորներին, համոզելով մեզ, թէ այդ դէպքը կրօնամոլութեան մի բողոքական բանկած էր անկանոն զօրքի մի վաշտի մէջ, պատահած, որի անկարգըն ու վերջը դժբախտ միմեանց բաղխուած են եղել. Իսկ ամեններից աւելի և ամեններից առաջ պնդում էին, թէ տեղեկութիւններ չունէին կատարուած դէպքերի մասին. Այս ինչ այդ տեղեկութիւնների ուրացումը, մեր համոզմունքով, ինքն ըստ ինքեան

մի բացասական ապացոյց էր այն խօսքերի վերաբերմամբ, թէ կառավարութիւնը ոչինչ չը գիտէ։

«Արդարև, բոլորիս յայտնի է, որ մենք ունինք բարեկարգ դեսպանատուն Կ. Պոլսում և իսկական դիւանագիտական պաշտօն վարող հիւպատոսութիւնների ու փոխ-հիւպատոսութիւնների մի ամբողջ ցանց, սփռուած եւրոպական Թիւրքիայի բոլոր գաւառներում։ Հնարաւո՞ր բան է արդեօք, որ տասնեակ գիւղեր հրկիզուեն հիմն ի վեր, որ հազարաւոր այր մարդիկ, կանայք և մանուկներ կոտորուեն կամ աւելի վատ քան կոտորուեն, մայրաքաղաքի և խռովութիւնների բեմի մէջ գտնուող մի Թիւրքական գաւառում, և մեր դեսպանատունն ու հիւպատոսարանները ոչինչ չիմանան այդ մասին։ Դա անհնարին է։ Դա չէ կարող լինել։ Բայց այսպէս թէ այնպէս՝ կառավարութիւնը հասաւ իր նպատակին. լռեցին և հանգստացան։ Մի քանի անգամ պահանջներ եղան, որ կառավարութիւնը քննէ այդ խնդիրը, բայց նա ամեն անգամ հարցը քնացնում էր»։

Բուլղարական կոտորածների ժամանակ Անգլիան, նկատելով որ Եւրոպան անտարբեր չը պիտի մնայ դէպի արևելեան քրիստոնեաները՝ ուղարկեց իր նաւատորմը դէպի Կ. Պոլիս։ Աշկարա բան էր, որ դա մի ցոյց է Թիւրքիայի պաշտպանութեան համար, որովհետև Դիզրաէլի, ստանալով Ռուսաստանի և նրա դաշնակից պետութիւնների

ունի. իւրաքանչիւր մկան ազդում է, իւրաքանչիւր ջիղ խօսում է։ Երբեմն այդ անսովոր աշխոյժ դէմքը լուսավառւում էր մի խելօք ժպիտից, երբեմն պատկերացնում էր այն սարսափը, որ այդ միջոցին արտայայտւում էր նրա խօսքերի մէջ. յետոյ մտքի բարձր թռիչքը դարձեալ բռնկւում էր նրա փայլուն աչքերի մէջ, և նայողը այնպէս էր կարծում, թէ լսում է մարգարէի ձայն։ Նա տոգորուած էր բարութեամբ, որը նրա սրտից թափւում էր ձեզ վրայ հայեացքների միջոցով և հաղորդում էր նրա իւրաքանչիւր դիմագծին իստակ կանացի փափկութիւն և քնքշութիւն։ Այն միջոցին, երբ մի-մի թուելով ապացոյցները, նա յայտարարեց, որ Թիւրքաց կառավարութիւնը արիւնով թաթախուած է, իբրև ամենազզուելին վարձկան սպանողներից՝ ճառախօսի սարսափելի եռանդը անցաւ ամբոխին, և սա դղրդաց. այդ դղրդոցը մեղադրանք էր առանց խօսքերի, որ անգլիական ժողովուրդը արտասանում էր Թիւրքերի դէմ։ Իր ատելութիւնը և բարկութիւնը ճառախօսը արտայայտութեան գագաթնակէտին հասցրեց այն ժամանակ, երբ ասաց, որ եթէ անգլիական պատմութեան բոլոր ամենախայտառակ էջերից մի տեղ հաւաքուեն բոլոր սպանութիւնները և չարագործութիւնները՝ դարձեալ նրանք այնքան չնչին կը լինին, որ չեն բռնի նոյն-իսկ մէկը պատմութեան այն էջերից, որոնցով այսուհետև

յաւիտենական խայտառակութեան կը մատնուեն Թիւրքերի գործերը Բօլգարիայում։ Նրա հոգին, կարծես, թողել էր նրան և սաւառնում էր տարածութեան մէջ, երբ նա անէծքներ էր թափում Բօլգարիան աւերողների գլխին։ Բայց ճառի ամենաճկուն և նուրբ մասն այն էր, որի մէջ նա Թւում էր, թէ ինչ պայմաններով է թոյլատրւում Թիւրքերին միայն Եւրոպայում։ Որպէս թէ դիմելով Թիւրքերին՝ նա քիչ կանգ առաւ, ուղղեց իր ամբողջ կազմուածքը և հանդիսաւոր, մեղմ ձայնով սկսեց, դանդաղ կերպով բաց թողնելով խօսքեր խօսքերի ետևից. «Դուք կարող էք ստանալ որոշ հարկ, պահել ձեր անուանական գերիշխանութիւնը, ձեր պետութիւնը ուրիշների յարձակման չի ենթարկուի, բայց—այստեղ Գլադստոնի աչքերը վառուեցան, և բարձրացնելով բռունցքը՝ նա ձայնեց փողի պէս, բարձր նոտաներով—բայց երբէք առաջիկայում, որքան տարիները կը յաջորդեն միմեանց՝ երբէք այսուհետև դուք չէք համարձակուի բարձրացնել հարստահարութեան ձեռքը, ազատութիւն տալ ձեր վաւաշոտութեան. չէք համարձակուի հնարել անգթութեան սարսափելի կատարելագործութիւններ ի դժբախտութիւն մարդկային ազգի»։ Այստեղ թնդաց ծափահարութիւնների գոռ աղմուկը, որ խլացրեց նրա ձայնը։ Վերջին խօսքերը խորին պատկառանքով լցրին լսողների սրտերը. Թւում էր, թէ մարդկութեան բար-

ձրագոյն քուրմը դատավճիռ է կարդում յանցաւոր պետութեան դէմ… Գլադստոն խօսքեր էր արձակում Թիւրքերի դէմ այնպէս՝ ինչպէս որսորդը նիզակ է խփում գազանին, լարելով իր ջղերը և կենդրոնացնելով ամբողջ եռանդը մի հարուածի մէջ։ Նա դիմում էր լսողների կրօնական զգացմունքին։ «Եթէ Անգլիան, ասաց նա, նախանձից դրդուած իրան թոյլ կը տայ խանգարել այդ ժողովուրդների ազատութիւնը՝ այն ժամանակ նրան կը մնայ սպասել Ամենաբարձրեալի արդար դատաստանին»։ Այս կոչումը, որ ուղղուած էր մարդկային լաւ զգացմունքներին՝ վերջնականապէս հիպնօզացրեց ամբոխը։ Հազարաւոր ձայներ թընդացին, և այդ թնդիւններից բարձրացաւ մի ոգեւորուած աղաղակ, որ նման էր ջերմեռանդ աղօթքի. «Տա՛ր մեզ, տա՛ր մեզ» (Թիւրքերի դէմ)։

Այսքանը բաւական չէր։ Սեպտեմբերի սկզբին Գլադստոն հրատարակեց իր հռչակաւոր բրօշիւրը, որի վերնագիրն էր «Բօլգարական Սարսափներ և Արևելեան Հարց»։ Սա մի ահաւոր ամբաստանութիւն էր, ուղղուած ոչ միայն սպանողների դէմ, այլ և նրանց պաշտպանի՝ Դիզրաէլիի մինիստրութեան դէմ։ Սպանողներին այսպէս էր բնորոշում Գլադստոն.

«Ես պիտի աշխատեմ համառօտ և ընդհանուր գծերով ներկայացնել Թիւրք ցեղը, թէ ինչ է եղել նա և ինչ է այժմ։ Այստեղ հարցը սոսկ մահ-

մետականութեան մասին չէ, այլ մի ցեղի առանձնայատուկ բնաւորութեան հետ՝ զուգախառնուած մահմետականութեան մասին։ Թիւրքերը ոչ Հնդկաստանի հեզաբարոյ մահմետականներն են, ոչ Սիրիայի Սալադինեան ասպետները և ոչ Սպանիայի քաղաքակիրթ մաւրերը։ Սկսած այն սև օրից, երբ Թիւրքերը առաջին անգամ մտան Եւրոպա՝ մենք տեսնում ենք նրանց մէջ մարդկային մի հասարակութիւն՝ որ մարմնացնում է մարդկութեան թշնամուն։ Ուր որ գնացել են նրանք՝ իրանց ետևից միշտ թողել են մի լայնատարած արիւնաներկ հետք՝ և ուր հասել է նրանց տիրապետութիւնը՝ այնտեղ անհետացել է քաղաքակրթութիւնը։ Ամեն տեղ նրանք եղել են ներկայացուցիչ ույժի վրայ յենուող կառավարութեան, բացասելով օրէնքի վրայ հիմնուած կառավարութիւնը։ Այս կեանքում նրանց միակ ղեկավարը՝ անյողդողդ ֆանատիկոսութիւնն էր, իսկ հանդերձեալ կեանքում դրա վարձատրութիւնն էր զգայասիրական դրախտը։

«Նրանք եղել են անհուելի մարմնացումն զինուորական ույժի։ Նրանց հետ առաջ էր խաղում Աստուծու պատուհասը և սպառնում էր ամբողջ Եւրոպային։ Եթէ նա կանգ առաւ, և այն ոչ թէ մի, այլ մի քանի անգամ՝ այդ եղաւ շնորհիւ հերոսութեան այն եւրոպական ազգի, որ ապրում էր նոյն այն երկրներում, որոնց մի մասը այժմ դար-

ձել է պատերազմի բեմ*) և դիւանագիտական գործունէութեան մտատանջող առարկայ։ Հին ժամանակներում ամբողջ արեւմտեան քրիստոնէութիւնը համակրութեամբ էր վերաբերւում ընդհանուր թշնամու դէմ մղուած կռուին՝ և նոյն-իսկ ռէֆորմացիայի դարի կատաղի կռիւների միջոցներին, եթէ չեմ սխալւում, անգլիական եկեղեցիներում աղօթքներ էին կարդացւում, աջողութիւն մաղթելով կայսրին, հռոմէադաւան կաթոլիկների ուժի և ազդեցութեան պետին, որ պատերազմ էր վարում թիւրքերի դէմ։

«Սակայն թէպէտ և թիւրքը ներկայացնում էր օրէնքներ բացառող ուժը՝ այնու ամենայնիւ նոյն-իսկ ուժի վրայ յենուող կառավարութիւնն էլ չէ կարող պահպանուել առանց մտաւոր տարրի օգնութեան, իսկ այդպիսի տարր չունէր թիւրքը։ Այստեղից առաջացաւ մի տեսակ համբերողութիւն դաժանութեան, բռնակալութեան և աւազակութեան մէջ, մի երևոյթ, որ հազուադիւտ է մարդկային պատմութեան էջերում։ Քրիստոնեաներից շատերին արհամարհաբար կեանք էր շնորհւում. թոյլ էին տալիս, որ կառավարութեան երկրորդական պաշտօնավարութիւններից շատերը անցնեն եպիս-

*) Այն ժամանակ, երբ Գլադստոն գրում էր այս բրօշիւրը՝ Սերբիան և Չեռնոգորիան պատերազմում էին Թիւրքիայի դէմ։

կապոսների ձեռքը և դէպի Կ. Պոլիս էին գլորւում. յոլն ցեղը, որ շարունակ որոշ չափով լրացնում էր Թիւրքական իսլամի մէջ եղած պակասորդը մզաւորի կողմից...

...«Պատերազմական եռանդի անկումը մի պետութեան մէջ, որ դարերի ընթացքում սարսափ էր ազդում ամբողջ աշխարհին՝ միանգամայն զարմանալի է։ Քսան տարիների ընթացքում Թիւրքիան, շնորհիւ եւրոպական բորսաների դիւրահաւատութեան, փոխ է առել ոչ պակաս քան 200 միլիոն ստերլինգ. այս գումարի նշանաւոր մասը գործ է դրուել նրա զօրքի և նաւատորմի վրայ։ Այսքան ծախսերի հետևանքը աչքներիս առաջն է։ Հետևանքը մենք տեսանք Թիւրքիայի կռւում Սերբիայի դէմ, որի ազգաբնակութիւնը մէկ ու կէս միլիոնից պակաս է, իսկ զօրքի թիւը 5-ից մինչև 8 հազար է. Միացածները, որոնք զէնք են կրում՝ դեռևս կիսավայրի միլիցիոններներ են։ Այդ տեսանք նոյնպէս և այն պատերազմի ժամանակ, որ նա մղում էր մի քանի տասնեակ հազար չերնոգորցիների դէմ։ Մեր ցեղին պատկանող այդ մի բուռն մարդկանց դէմ մի կայսրութիւն, որ երեսուն միլիոնից աւելի հպատակ ունի՝ ուղղում է իր բոլոր զօրութիւնը. այդ նպատակների համար նա գործ է դնում բոլոր իր սեփական դրամական միջոցները և իր պարտատէրերի ամբողջ կարողութիւնը, և երկու ամիս յուսահատ ճիգեր թափելուց յետոյ

ձել է պատերազմի բեմ*) և դիւանագիտական փոր-ձառութեան մտատանջող առարկայ։ Հին ժամանակներում ամբողջ արեւմտեան քրիստոնէութիւնը համակրութեամբ էր վերաբերւում ընդհանուր թըշնամու դէմ մղուած կռուին՝ և նոյն-իսկ ռէֆորմացիայի դարի կատաղի կռիւների միջոցներին, եթէ չեմ սխալւում, անգլիական եկեղեցիներում աղօթքներ էին կարդացւում, աջողութիւն մաղթելով կայսրին, հռոմէադաւան կաթոլիկների ուժի և ազդեցութեան պետին, որ պատերազմ էր վարում Թիւրքերի դէմ։

«Սակայն թէպէտ և Թիւրքը ներկայացնում էր օրէնքներ բացասող ուժը՝ այնու ամենայնիւ նոյն-իսկ ուժի վրայ յենուող կառավարութիւնն էլ չէ կարող պահպանուել առանց մտաւոր տարրի օգնութեան, իսկ այդպիսի տարր չունէր Թիւրքը։ Այստեղից առաջացաւ մի տեսակ համբերողութիւն դաժանութեան, բռնակալութեան և ատողակութեան մէջ, մի երևոյթ, որ հաղուադիւտ է մարդկային պատմութեան էջերում։ Քրիստոնեաներից շատերին արհամարհաբար կեանք էր շնորհւում. Թոյլ էին տալիս, որ կառավարութեան երկրորդական պաշտօնավարութիւններից շատերը անցնեն եղիս.

*) Այն ժամանակ, երբ Գլադստոն գրում էր այս փրօշիւրը՝ Սերբիան և Չեռնօգորիան պատերազմում էին Թիւրքիայի դէմ։

կապոսների ձեռքը և դէպի Կ. Պոլիս էին գրաւում. լոյն ցեղը, որ շարունակ որոշ չափով լրացնում էր Թիւրքական իսլամի մէջ եղած պակասորդը մշտա-ւորի կողմից...

...«Պատերազմական եռանդի անկումը մի-պետութեան մէջ, որ դարերի ընթացքում սպա-ռափ էր ազդում ամբողջ աշխարհին՝ միանգամայն զարմանալի է։ Քանի տարիների ընթացքում Թիւր-քիան, շնորհիւ եւրոպական բորսաների դիւրահա-ւատութեան, փոխ է առել ոչ պակաս քան 200 միլիոն ստերլինգ. այս գումարի նշանաւոր մասը գործ է դրուել նրա զօրքի և նաւատորմի վրայ։ Այսքան ծախսերի հետևանքը աչքներիս առաջն է։ Հետևանքը մենք տեսանք Թիւրքիայի կռւում Սերբիայի դէմ, որի ազգաբնակութիւնը մէկ ու կէս միլիոնից պակաս է, իսկ զօրքի թիւը 5-ից մինչև 8 հազար է. Մնացածները, որոնք զէնք են կրում՝ դեռևս կիսավարժ միլիցիօններներ են։ Այդ տեսանք նոյնպէս և այն պատերազմի ժամանակ, որ նա մղում էր մի քանի տասնեակ հազար չերնոգորցի-ների դէմ։ Մեր ցեղին պատկանող այդ մի բուռն մարդկանց դէմ մի կայսրութիւն, որ երեսուն մի-լիոնից աւելի հպատակ ունի՝ ուղղում է իր բոլոր զօրութիւնը. այդ նպատակների համար նա գործ է դնում բոլոր իր սեփական դրամական միջոցները և իր պարտատէրերի ամբողջ կարողութիւնը, և երկու ամիս յուսահատ ճիգեր թափելուց յետոյ

պարծենկոտութեամբ հպարտանում է նրանով, որ ինչ-որ կասկածելի աջողութիւններ է ունեցել Սերբիայի դէմ և առանց որևէ կասկածի լաւ ջարդուել է Չէրնօգօրիայի պատերազմում։ Ի՞նչպէս էք այս ամենը տանում դու ք, Բայազէտների, Մուրադների և Մէհէմմէդների ստուերներ։

Այնուհետև, դառնալով մարդասպանների պաշտպան անգլիական կառավարութեան՝ Գլադստօն գրում էր.

«Ես ընդունում եմ, որ մինչև վերջին ժամանակներս հասարակութեան մէջ շատ տարածուած էր այն կարծիքը, թէ մեր կառավարութիւնը, չը նայած իր գործունէութեան ուրիշ ասպարէզներում ունեցած անաջողութիւններին՝ շատ բարձր է կանգնած ազգի աչքում իր արտաքին, այսինքն արևելեան քաղաքականութեան նկատմամբ։ Միայն երկու-երեք շաբաթ է անցել այդ ժամանակից. այն ինչ հաստ, անթափանցիկ վարագոյրը, որ պարլամենտի արձակման րոպէին մի քանի մատնաչափ էր միայն գետնից վեր՝ սկսել է օրէց-օր կամաց-կամաց բարձրանալ։ Եւ ինչ տեսարան բացուեց մեր առաջ, և ո՞ւր։ Մօտ չորս ամիս մեր երկրում պահպանուել է մի անբնական, մեռելային լռութիւն։ Այժմ յետ ենք նայում այդ լեթարգիայի ժամանակամիջոցի վրայ, իբրև մի հանգստութեան ժամանակամիջոցի վրայ, որ գնուած է անարգութեան գնով, իբրև մի չար երազի երկարատև կա-

ճխարդման վրայ։ Մի ձայն, մի գրեթէ միայնակ ձայն, տարածուելով ծովերի և ցամաքների վրայով՝ հնչեց յուլիս ամսին և բերեց մեզ կատարուող դէպքերի բօթը։ Չը կար լսողների պակասութիւն, երբ պատմում էր այն համատարած կոտորածի մասին, որ կատարուել էր կառավարութեան անունով, մի կառավարութեան, որին, մեր շնորհիւ, քսան տարի առաջ կեանք պարգևուեց և որը մենք վճռել ենք այս տարի պահպանել մեր անուան ամբողջ ուժով, հակառակ Եւրոպայի. և մենք չենք էլ հարցնում, թէ ինչպէս և ինչի վրայ նա գործադրեց իրան շնորհած 20-ամեայ կեանքը։ Այդ դեռ քիչ է. յայտնի էր դառնում, որ այդ համատարած կոտորածները միացած էին այնպիսի սոսկալի չարագործութեան հետ, որի առաջ նսեմանում են նոյն-իսկ խողխողման արհաւիրքն ու խայտառակութիւնը։

«Սակայն ի՞նչ եղաւ հետևանքը։ Այդ մեղադրանքները, այդ լուրերը գալիս էին մի անանուն, անպատասխանատու լրագրական թղթակցից։ Ահաբեկուած լօրդերը և պարլամենտի անդամները, խոհեմ անգլիացու բնազդով, սկսեցին հարց հարցի ետևից առաջարկել կառավարութեան։ Կառավարութեան պատասխանների գործած տպաւորութիւնը, նրանց ընդհանուր իմաստը, թէև ոչ բառացի, բայց եթէ կարելի է այսպէս ասել՝ բարոյական հերքումն էր։ Ի՞նչ էին ասում մեզ։ Մեզ զգու-

չացնում էին չափազանցութիւնների դէմ. աշխատում էին ընդհանրապէս թեթևացնել գործը, յիշեցնելով, որ այդպիսի բաներ զարմանալի չեն վայրենի ցեղերի մէջ, որոնց բարոյական գաղափարները և կանոնները բոլորովին տարբեր են մերիններից. զանազան ցինիկական բացատրութիւններ էին տալիս, նկատելով, օրինակ, թէ երկարատև տանջանքների մասին պատմածները դժուար թէ ճիշտ լինին, որովհետև յայտնի է, որ թիւրքերը սպանութիւն գործելիս երկար ու բարակ չեն մտածում. պնդում էին թէ դժուար է վճռել, թէ ո՛ր կողմն է աւելի ոճիրներ գործել և աւելի գազանաբարոյ վարուել. յանդգնաբար հաւատացնում էին մեզ, թէ ապստամբներն են եղել միշտ նախայարձակ, թելադրելով մեզ այն միտքը, թէ գլխաւոր պատասխանատուութիւնը պէտք է ընկնի նրա վրայ՝ ով առաջին հարուածն է հասցրել. արդարացնում էին թիւրքաց ամբողջ կանոնաւոր զօրքը և բոլոր իշխանաւորներին, համոզելով մեզ, թէ այդ դէպքը կրօնամոլութեան մի րոպէական բռնկումն էր անկանոն զօրքի մի վաշտի մէջ, բռնկումն, որի սկիզբըն ու վերջը գրեթէ միևնոյն րոպէումն են եղել. իսկ ամենից աւելի և ամենից առաջ պնդում էին, թէ տեղեկութիւններ չունին կատարուած դէպքերի մասին։ Ահա հէնց այդ տեղեկութիւնների ուրացումը, մեր համոզմունքով, ինքն ըստ ինքեան

մի բացասական ապացոյց էր այն խօսքերի վերաբերմամբ, թէ կառավարութիւնը ոչինչ չը գիտէ։

«Արդարև, բոլորիս յայտնի է, որ մենք ունինք բարեկարգ դեսպանատուն Կ. Պոլսում և իսկական դիւանագիտական պաշտօն վարող հիւպատոսութիւնների ու փոխ-հիւպատոսութիւնների մի ամբողջ ցանց, սփռուած եւրոպական Թիւրքիայի բոլոր գաւառներում։ Հնարաւո՞ր բան է, արդեօք, որ տասնեակ գիւղեր հրկիզուեն հիմն ի վեր, որ հազարաւոր այր մարդիկ, կանայք և մանուկներ կոտորուեն կամ աւելի վատ քան կոտորուեն, մայրաքաղաքի և խռովութիւնների բեմի մէջ գտնուող մի Թիւրքական գաւառում, և մեր դեսպանատունն ու հիւպատոսարանները ոչինչ չիմանան այդ մասին։ Դա անհնարին է։ Դա չէ կարող լինել։ Բայց այսպէս թէ այնպէս՝ կառավարութիւնը հասաւ իր նպատակին. լռեցին և հանգստացան։ Մի քանի անգամ պահանջներ եղան, որ կառավարութիւնը քննէ այդ խնդիրը, բայց նա ամեն անգամ հարցը քնացնում էր»։

Բոլգարական կոտորածների ժամանակ Անգլիան, նկատելով որ Եւրոպան անտարբեր չը պիտի մնայ դէպի արևելեան քրիստոնեաները՝ ուղարկեց իր նաւատորմը դէպի Կ. Պոլիս։ Աչկարա բան էր, որ դա մի ցոյց է Թիւրքիայի պաշտպանութեան համար, որովհետև Դիզրաէլի, ստանալով Ռուսաստանի և նրա դաշնակից պետութիւնների

կողմից առաջարկութիւն ծովային մի ցոյց անելու Կ. Պոլսի մօտերքում, որպէսզի կարելի լինի հարկադրել սուլթանին մտցնել պահանջուած րէֆորմները, տուեց բացասական պատասխան։ Գլադստօն, ի նկատի առնելով Դիզրաէլիի այն յայտարարութիւնը, թէ բրիտանական նաւատորմը ուղարկուած է Բէզիկի ծոցը անգլիական շահերը պաշտպանելու համար՝ բացագանչում է. «Ես բողոքում եմ ինքնասիրական ձգտումներին դիմելու այս մշտական սիստեմի դէմ»։ Ամենագլխաւոր սկզբունքը քաղաքականութեան մէջ նա համարում էր մարդասիրութիւնը և հէնց այդ պատճառով պահանջում էր, որ բրիտական նաւատորմը, փոխանակ Բէզիկի ծոցում կանգնած մնալու՝ մօտենայ ափերին և իր պաշտպանութեան տակ առնէ Բօլգարիայի քրիստոնեաներին։

Բայց Գլադստօն միայն բողոքել, մեղադրել, անիծել չը գիտէր։ Արևելեան հարցի վերաբերմամբ նա ունէր գործնական ծրագիր, որը նա շատ անգամ էր պարզել իր ճառերի մէջ և այժմ էլ բացատրում էր այդ բրօշիւրի մէջ։ Ի՞նչպէս էր Գլադստօն վճռում Արևելեան հարցը։ Ամենից առաջ նա էլ ընդունում էր, որ Թիւրքիայի ամբողջութիւնը, ճիշտ որ, հարկաւոր է միջազգային հաւասարակշռութեան համար։ Բայց ապահովել այդ ամբողջութիւնը չէ նշանակում պահպանել Թիւրքաց վայրենի և բարբարոսական վարչութիւնը։ Ընդհա-

կառակն, Թիւրքիայի քրիստոնեայ համայնքները պիտի ստանան ինքնավարութիւն, կատարեալապէս անկախ մնալով Թիւրքաց վարչութիւնից և միայն հարկ վճարելով սուլթանին։ Թիւրքիայի ամբողջութիւնը — դա հասկանալի է, բայց Թիւրքիայի անկախութիւնը, որ իրաւունք է տալիս կառավարել այնպէս, ինչպէս թիւրք փաշաներին է հաճելի՝ — դա անարդարութիւն է։ Գալով Բօլգարիայի հարցին՝ Գլադստոն պահանջում էր.

«1) Վերջ դնել վարչական անիշխանութեան, կողոպուտներին, սպանութիւններին, որոնք, ինչպէս մենք իմացանք արժանահաւատ տեղեկութիւններից՝ մինչև այժմ դեռ աւերում են Բօլգարիան։ 2) Գտնել իրական միջոցներ, որ չը կըրկնուեն այն խժդժութիւնները, որոնք նորերումս տեղի ունեցան օսմանեան կառավարութեան հաճութեամբ։ Դրա համար հարկաւոր է հեռացնել Թիւրքաց վարչական իշխանութիւնը ոչ միայն Բօսնիայից և Հերցեգօվինայից, այլ և ամենից առաջ Բօլգարիայից, ուր առնուազն մի քանի տարի և մի քանի սերունդների մէջ պիտի մնան զըզուելի և արիւնահեղ հարստահարութիւնների հետքերը։ 3) Մաքրել այս միջոցներով քրիստոնեական անուան պատիւը, որ ներկայ տարուայ դէպքերից վնասուել է, որքան ինձ յայտնի է, աւելի շատ՝ քան երբ և իցէ»։

Իր բրօշիւրը Գլադստօն վերջացնում էր հետեւեալ խօսքերով.

«Հին ծառայ գահի և պետութեան՝ ես աղաչում եմ իմ հայրենակիցներին, որոնցից գործը աւելի կախում ունի քան Եւրոպայի մի այլ ազգից, աղաչում եմ պահանջել ստիպողաբար և անշեղ, որ մեր՝ կառավարութիւնը, որ մինչև այժմ գործում էր մի ուղղութեամբ՝ այսուհետև գործէ ուրիշ ուղղութեամբ և իր ամբողջ ոյժը միւս պետութիւնների հետ միասին գործ դնէ, որ արմատախիլ լինի թիւրքաց գործադիր իշխանութիւնը Բօլղարիայում։ Թող թիւրքերը այժմ ջնջեն իրանց յանցանքները մի միակ միջոցով, որ դեռ հնարաւոր է նրանց համար, այն է՝ թող հեռանան։ Նրանց զափթիաներն ու մուդիրները, բինբաշիներն ու իւզբաշիները, կայմակամներն ու փաշաները, ամենքը՝ որքան կան, իրանց ունեցած չունեցածով, յոյս ունիմ, դուրս կը գնան այն նահանգից՝ որը նրանք պղծել են և աւերել։ Այս վճռական հեռացումը, այս երանաւէտ ազատութիւնը կը լինի մեզ համար մի հատիկ հնարաւոր վրէժ, որ պահանջում են դժբախտ երկիրը կոյտերով ծածկած դիակների յիշատակը, կանանց, կոյսերի և երեխաների պղծուած պատիւը, քաղաքակրթութիւնը, որ ենթարկուած էր այդպիսի բռնութեան և խայտառակութեան, Աստուծու, կամ եթէ կամենում էք՝ Ալլահի օրէնքները և ամբողջ մարդկութեան բա-

քոլական զգածմունքը։ Չը կայ մի ոճրագործ եւրո-պական բանտում, չը կայ մի մարդակեր Հարաւային ովկիանոսի կղզիներում, որ չը բորբոքուէր վրդովմունքից, լսելով այն ամենը՝ ինչ կատարուել է, ինչ չափազանց ուշ ենթարկուել է քննութեան և դեռ հատուցում չէ ստացել. այն ամենը, ինչ մոռացնել է տալիս բոլոր զզուելի և զազանային կրքերը, որոնք չարագործութեան պատճառ դարձան։ Այս կրքերը կարող են նորից զարթնել մի նոր արիւնոտ հունձ անելու համար մի հողի վրայ՝ որ ողողուած է ծխացող արիւնով, մի օդի մէջ՝ որ լցուած է ամեն տեսակ անօրինութեան, ամօթի և խայտառակութեան կուսական ոյժով։ Ամօթ՝ որ այսպիսի գործ կարող էր երբևիցէ տեղի ունենալ. ամօթ և անէծք մեր ցեղի այն մասին՝ որ կատարել է այդ գործը։ Բայց այդ ամօթը կընկնի մեզ ամենքիս վրայ, կընկնի ամբողջ մեր ցեղի վրայ՝ եթէ այսուհետև էլ դուռը չի փակուի և սարսափելի գործը կարող կը լինի նորից կրկնուել»։

Այսպէս էր գործում «հանգած հրաբուխը»։ Եւ Անգլիան նրա կողմն էր, քանի Բալկանեան թերակղզում սլաւոնները օրհասական կռիւ էին մղում Թիւրքիայի դէմ։ Լորդ Բիկօնսֆիլդ հարկադրուած էր գոնէ առժամանակ, նոյն-իսկ առերես, հպատակուել հասարակական կարծիքին։ 1876 թուի վերջերում Անգլիան դառնում է րէֆօրմների կողմնակից, և նրա հաւանութեամբ Կ. Պօլսում դես-

[illegible] է քաղաքական [illegible] [illegible]-
ու [illegible] [illegible] [illegible] Լորդ Բիկոնսֆիլդ
[illegible] ներկայացուցիչ [illegible] կառավարու-
թեան [illegible] պահանջները է [illegible] [illegible]-
[illegible] [illegible]. [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible]
[illegible] [illegible] կառավարութիւնները՝ [illegible]-
թիւնները [illegible] [illegible]. [illegible] [illegible]
[illegible] հրապարակներից [illegible], [illegible]
[illegible] պահանջները [illegible]
թիւ [illegible] [illegible] [illegible] մեծ [illegible]-
ղովին, որ կազմված էր Թիւրքիայի և քրիստոնեա-
ների ներկայացուցիչներից և որ մերժեց մեծ պե-
տութիւնների բոլոր առաջարկները։ [illegible] [illegible]-
[illegible] Ի. այնպէս չէ կարող [illegible] [illegible]
թիւրքական քաղաքականութեան [illegible]. և պա-
տերազմ հռչակուեց (1877 թուին)

Այստեղ էլ փորձեց Դիզրայելին հաւան-
գան գործակցութիւնը. Անգլիան, որ հետզհետե-
ցել լսում էր նրան ու յաղթում՝ երկու գոր-
ծերից նրանից և տեղում Բիկոնսֆիլդի կողմը։ Ա-
ռաջին մինիստրը սկսեց մեծ ուշադրութեամբ չափա-
զանցել այն քաղաքականութիւնը, որ այնքան
հաջողել էր Պալմերստոնին և Դերբին պատերազմի
պատճառն էր դարձել։ Ռուսաստանը ուզում էր
նուաճել Թիւրքիան, հաստատուել Կ. Պոլսում...
Ահա թէ ինչ բացատրութիւն էր տալիս պաշտօ-
նական Անգլիան ռուս-թիւրքական պատերազմին,

չը նայած որ Ալէքսանդր կայսրը ամենակտրուկ և հանդիսաւոր կերպով յայտարարել էր աշխարհի առաջ, թէ Ռուսաստանը զէնք է վերցնում միմիայն քրիստոնեաների ազատութեան համար։ Գլադստօնի մարդասիրական աղաղակները խլացան անգլիական չօվինիստների բարձրացրած ահագին աղմուկի մէջ։ Ռուսաստանը պիտի գրաւէ Կ. Պոլիսը, Փոքր Ասիան, իսկ դա վտանգ է սպառնում Հնդկաստանին. աւելի լաւ է, որ Թիւրքիայի 12—13 միլիոն քրիստոնեաները խորտակուեն դըժոխքի մէջ, քան անգլիական տիրապետութիւնը Հնդկաստանում վտանգուի։ Այսպէս էր մտածում Բիկօնսֆիլդ, և Անգլիան ծափահարում էր նրան։

Թիւրքիային մեծամեծ խոստումներ արուեցին Անգլիայի կողմից, և պատերազմը անգլիական միջոցներով շարունակուեց։ Բայց իզուր։ 1877 թուի վերջում Թիւրքիան ջարդուած էր, և Թիւրքաց արտաքին գործերի մինիստրը գրում էր Լօնդօնի դեսպանին. «Նորին մեծութիւն սուլթանը, կամենալով վերջ տալ պատերազմին, որ այնքան ծանր է կռուող կողմերի համար՝ վճռեց դիմել Նորին բրիտանական մեծութեան կառավարութեան, որ միշտ իր բարեհաճ հոգատարութիւնն է ցոյց տուել մեր պետութեան անկախութեան և անձեռնմխելիութեան նկատմամբ, մի սկզբունք, որի վրայ հիմնուած է մեր քաղաքական գոյութիւնը։ Ուստի առաջարկում եմ ձեզ, պ. դեսպան, մեր օգոստա-

փառ տիրոջ հրամանով, Բ. Դրան անունից խընդրել Նորին բրիտանական մեծութեան միջնորդութիւնը, որը, ինչպէս համոզուած ենք՝ մեզ չի մերժի մեր հին և հաւատարիմ բարեկամը։

Բիկօնսֆիլդի կառավարութիւնը շտապեց օգնութեան հասնել։ Երբ 1878 թուի յունուարին ռուսաց զօրքերը մօտեցան Կ. Պոլսին՝ Անգլիան իր զրահակիր նաւերը ուղարկեց Կ. Պոլսի ջրերը և մի դիւանագիտական կռիւ սկսեց Ռուսաստանի դէմ։ Յարաբերութիւնները երկու պետութիւնների մէջ այնքան լարուեցան, որ անգլօ-ռուսական պատերազմը անխուսափելի էր համարւում։ Գլադստօն նորից բողոք բարձրացրեց, ասելով որ եթէ Անգլիային այս անգամ էլ աջողուի ոտքի կանգնեցնել Թիւրքիան՝ դա կը լինի մեծ դժբախտութիւն Եւրոպայի համար։ Այդպիսի խիստ բողոքներ արտասանելու համար հարկաւոր էր հերոսական անվախութիւն. Գլադստօն և իր կողմնակիցները մի աննշան, հազիւ նկատելի թիւ էին կազմում, մինչդեռ ամբողջ Անգլիան Բիկօնսֆիլդի թևն ու թիկունքն էր դառել։ Տիրում էր մի հայրենասիրական ոգևորութիւն, որ Ղրիմի պատերազմի ժամանակն էր յիշեցնում։ Թիւրքիայի պաշտպանութիւնը անգլիացիների համար ամենամեծ հայրենասիրութիւնն էր համարւում։ Բիկօնսֆիլդ փառքի գագաթնակէտին էր հասել. Նա ճառեր էր արտասանում, կոչում անելով լօրդերի հայրենասի-

րութեան, իսկ նրան օգնում էր Կ. Պոլսի անգլիական դեսպան, կատաղի թիւրքամոլ Լայարդը, որ յուզիչ հեռագիրներ էր ուղարկում Անգլիա, վկայում էր, թէ ռուսաց զօրքերը, հակառակ արդէն կայացած հաշտութեան՝ մօտենում են Կ. Պոլսին։ Լոնդոնում ահագին միտինգներ էին գումարւում, որոնք համակրութիւն էին յայտնում կառավարութեան. այդ միտինգներում թիւրքաց ահագին դրօշակները անգլիական դրօշակների հետ էին ծածանւում։ Ցոյց անողները փշրում էին Գլադստօնի տան ապակիները, հրապարակով այրում էին «Daily News» լրագիրը, որ ազատամիտների կողմնակիցն էր, և «ուրա» էին կանչում Բիկօնսֆիլդի տան առաջ։ Գլադստօն այնուամենայնիւ չարունակում էր իր բողոքները թէ պարլամենտում և թէ մամուլի մէջ։ Եւ եթէ Անգլիան 1878 թուին արիւն չը թափեց թիւրքական բռնակալութիւնը պաշտպանելու համար, եթէ Բիկօնսֆիլդ հարկադրուած եղաւ ընտրել Ռուսաստանի հետ խաղաղ համաձայնութիւն կայացնելու ճանապարհը՝ դրա գլխաւոր պատճառներից մէկը, անկասկած, Գլադստօնն էր։

Պատերազմ չեղաւ, բայց Անգլիան այնուամենայնիւ անգնահատելի ծառայութիւններ մատուցեց Թիւրքիային։ Նա պահանջեց, որ Սան-Ստեֆանօի դաշնագիրը մեծ պետութիւնների քննութեան ենթարկուի. Ռուսաստանը ստիպուած

էր գիջանել, և 1878 թուի յունիսին բացուեց Բեր-լինի վեհաժողովը։ Մինչև այդ՝ Անգլիան դաշնակցութիւն կնքեց Թիւրքիայի հետ, ստանալով Կիպրոս կղզին։ Մարկիզ Սօլսբիւրի, որ նոր էր ստանձնել արտաքին գործերի մինիստրի պաշտօնը՝ Կ. Պոլսի դեսպան Լայարդին գրած թղթում բացատրում էր, որ այս դաշնադրութեան հիմնական նպատակն է պահել Փոքր-Ասիայի նահանգները սուլթանի իշխանութեան տակ և թոյլ չը տալ, որ նրանք ընկնեն Ռուսաստանի ձեռքը։ Ահա Կիպրոսի դաշնադրութեան առաջին յօդուածը.

«Եթէ Ռուսաստանը չը վերադարձնէ Բաթումը, Արդահանը, Կարսը, կամ դրանցից մէկն ու մէկը, և փորձէ տիրել, երբևիցէ, նորին կայսերական մեծութիւն սուլթանի Ասիայում ունեցած հողերի ուրիշ որևէ մասերին, որոնք Թիւրքիայի սեփականութիւն կը համարուեն հաշտութեան վերջնական դաշնագրով՝ Անգլիան յանձնառու է լինում այդ դէպքերում միանալ նորին կայսերական մեծութեան հետ՝ այդ երկիրները զէնքի ուժով պաշտպանելու համար։ Դրա փոխարէն, նորին կայսերական մեծութիւն սուլթանը խոստանում է մտցնել հարկաւոր բարենորոգութիւնները (որոնք յետոյ կորոշուեն երկու պետութիւնների կողմից) վերոյիշեալ երկիրներում՝ Բ. Դռան քրիստոնեայ և այլ հպատակների բարւոք կառավարութեան և պաշտպանութեան համար։ Եւ որպէսզի Անգլիան

կարողանալ ապահովել այն միջոցները, որոնք հարկաւոր են իր տուած խոստումը գործադրելու համար՝ Նորին կայսերական մեծութիւն սուլթանը համաձայն է յանձնել Անգլիային Կիպրոս կղզին՝ կառավարելու և բնակութիւն հաստատելու համար։

Դաշնագրութիւնը գաղտնի էր։ Բեռլինի վեհաժողովում Բիկօնսֆիլդ և մարկիզ Սօլսբիւրի ոչինչ ջանք չը խնայեցին Թիւրքիայի պաշտպանութեան համար։ Իսկ երբ հերթը հասաւ Թիւրքիայի ասիական նահանգներին, երբ պիտի քննուէր Սան-Ստեֆանօի դաշնագրութեան 16 յօդուածը, որ վերաբերում էր հայերին՝ Բիկօնսֆիլդ և Սօլսբիւրի հրապարակ հանեցին Կիպրոսի դաշնագրութիւնը և յայտարարեցին, որ Անգլիան Փոքր Ասիայի վերաբերութեամբ արդէն յանձն է առել պարտաւորութիւններ, հետևաբար վեհաժողովը չը պիտի զբաղուի այդ հարցով։ Այս քաղաքական խորամանկութիւնը սաստիկ դժգոհութիւն պատճառեց ամբողջ Եւրոպայում։ Բայց ինչ կարելի էր անել։ Վեհաժողովը հաշտուեց իրողութեան հետ, և Փոքր Ասիայի քրիստոնեաների հարցը բաւարար և արմատական լուծում չը ստացաւ։

Յուլիսի 4-ին Բիկօնսֆիլդ վերադարձաւ Անգլիա։ Ափ իջնելիս նա բացագանչեց. «Հաշտութիւն և պատիւ»։ Անգլիան փառաւոր ցոյցերով ընդունեց իր յաղթական մինիստրներին։ Ամբոխը հա-

ւաքւում էր Բիկօնսֆիլդի տան առաջ, ցնծութեան աղաղակներ էր արձակում. փառքի գագաթնակէտին հասած հրէան դուրս էր գալիս պատշգամբ, շնորհակալութիւն էր յայտնում։ Նոյն-իսկ պարլամենտն էլ իր հիացմունքն էր յայտնում։ Յուլիսի 18-ին լորդերի պալատում Բիկօնսֆիլդ ընդհանուր ոգևորութեան և աղմկալի ցոյցերի մէջ արտասանեց մի երկար ճառ, որ տևեց երկու ժամ։ Յաղթողի պարծենկոտութեամբ նա յիշատակեց իր աշխատանքները Բերլինում, կարծես նա վերջնական անկումից ազատել էր ոչ թէ Թիւրքիան, այլ Անգլիան։ Յիշատակեց, որ Սան-Ստեֆանօի դաշնագրով որոշուած Բօլգարիայի երկու երրորդական մասը վերադարձրուեց սուլթանին, ապա գովեց թիւրքաց զօրքերը։ Խօսելով Փոքր Ասիայի մասին՝ նա ասաց. «Եթէ չը միջամտէինք, Ասիայում մեր շահերը պահպանելու համար՝ Թիւրքիայի այդ մասը կը դառնար կամ անիշխանութեան զոհ կամ Ռուսաստանի որս»։ Արևելեան հարցի միակ ապահով լուծումը, ինչպէս հաւատացնում էր Բիկօնսֆիլդ՝ սուլթանի իշխանութեան պահպանութիւնն է։ Եւ ի վերջոյ նա ցինիկաբար աւելացրեց, որ մանր ազգութիւնների պատգամաւորները չէին իմանում, թէ Բերլինի վեհաժողովը Թիւրքիան բաժան-բաժան անելու համար չէր գումարուել։

Այս ցնծութիւնների, այս փառաւոր տօների ժամանակ էլ Գլադստօն բողոքում էր, ապացուցա-

նելով որ Բիկօնսֆիլդի տարած յաղթութիւնը պատիւ չէ Անգլիայի համար, այլ անպատւութիւն։ Եւ իրաւ, Կիպրոսի յափշտակութեամբ ուրախացած և թիւրքամոլ Դիզրաէլի-Բիկօնսֆիլդի օձային լեզուով թովուած Անգլիան չը գիտէր, թէ ինչ անելի, անլուր աղէտներ պիտի գան ապագայում և անջնջելի արատ դառնան անգլիական պատմութեան մէջ։ Կային սակաւաթիւ մարդիկ, որոնք Գլադստօնի պէս հասկանում էին Բիկօնսֆիլդի տարած յաղթութեան արժէքը։ Այսպէս, լօրդ Շէրբրուկ մի ճառի մէջ ասաց, որ Անգլիայի քաղաքականութիւնը՝ Թիւրքիայի քրիստոնեաների առաջ փակեց դժոխքից դուրս գալու բոլոր ճանապարհները։ Բայց ինչ նշանակութիւն ունէին այս ձայները ընդհանուր հրճուանքի մէջ, որ Բիկօնսֆիլդ պատճառել էր Անգլիային...

Պահպանողականների առաջնորդը գտել էր ուժեղ ու անպարտելի իշխանաւոր լինելու գաղտնիքը։ Ինչպէս Նապօլէօն Գ իր խախուտ գահը պահպանելու համար շլացնում էր ֆրանսիացիներին արտաքին քաղաքականութեամբ, յաղթութիւններով, զինուորական հանդէսներով՝ այնպէս էլ լօրդ Բիկօնսֆիլդ գրաւում էր անգլիացիներին այնպիսի արտաքին գործերով, որոնք շոյում էին ազգի սնապարծութիւնը, հպարտութիւնը։ Բերլինում տարած փառաւոր յաղթութիւնը դեռ չէր մոռացուել՝ երբ Բիկօնսֆիլդ մի ուրիշ հանդէս

սարքեց անգլիացիներին գրաւելու համար։ Այս անգամ նրա զէնքերը Կիպրոսի դաշնագրութեան պէս ամօթալի գործերը չէին, ոչ էլ քաղաքական ճարպկութիւնն ու խորամանկութիւնը։ 1878 թուի ամառը ռուսաց մի դեսպանութիւն գնաց Աւղանիստանի էմիր Շիր-Ալիի մօտ։ Աւղանիստանը այն երկիրն է, որ բաժանում է Հնդկաստանը Ռուսաստանից. այդ կողմից է Անգլիան սպասում ռուսաց զօրքերի արշաւանքը դէպի Հնդկաստան։ Բիկօնսֆիլդ պահանջեց, որ Շիր-Ալին ընդունէ և անգլիական դեսպանութիւնը, որ կուղարկուի Հնդկաստանից։ Երբ էմիրը մերժեց այս առաջարկութիւնը՝ անգլօ-հնդկական զօրքերը մտան Աւղանիստան և սկսուեց պատերազմ, որ տևեց մինչև 1880 թուականի սկիզբը։ Անգլիական զօրքերը մեծ դժուարութիւններով կարողացան գրաւել Աւղանիստանը և սարսափելի անգթութիւններ գործեցին։ Բացի դրանից Աֆրիկայում էլ անգլիացիները արշաւանք սկսեցին զուլուսների դէմ և նոյնպէս աջողութիւն ունեցան։ Լորդ Բիկօնսֆիլդ կատարելապէս հասաւ իր նպատակին. Նրա հեղինակութիւնը անհագին էր, նրա իշխանութիւնը անխախտելի էր։ Ամբողջ Եւրոպայում Անգլիան էր ուղղութիւն տալիս քաղաքականութեան։ Բայց հանճարեղ հրէան քաղաքական արկածախնդրութիւնների և արտաքին փայլերի մէջ էլ գտաւ իր անկումը, ինչպէս այդ պատահել էր և Նապօլէօն

Դ-ի հետ։ Անգլիան անհագին ծախսեր էր անում զանազան արշաւանքների համար. պետական ֆինանսները ողորմելի դրութեան մէջ էին գտնւում։ Ներքին գործերի վրայ պահպանողական մինիստրութիւնը ուշադրութիւն չէր դարձնում, մինչդեռ բազմաթիւ վերին աստիճանի կարևոր հարցեր կային։ Օգուտ քաղելով իր անսահման աջողութիւններից՝ Բիկօնսֆիլդ ուզեց մինչև անգամ փոփոխել կառավարութեան ձևը։ Նրա իդէալն էր ազատել թագաւորող անձը պարլամենտի բռնակալութիւնից և հիմնել կառավարութիւնը երեք սկզբունքների վրայ — միապետութիւն, եկեղեցի և ժողովուրդ։ Նրա առաջարկութեամբ պարլամենտը 1876 թուին յատկացրեց Վիկտորիա թագուհուն «Հնդկաստանի Կայսրուհի» տիտղոսը։ Թագուհին, իհարկէ, պարգևներ էր շնորհում իր առաջին մինիստրին։ Անգլիական ազգը, սակայն, չընկաւ Դիզլի պատրաստած ծուղակի մէջ. նա շուտ հասկացաւ, որ Բիկօնսֆիլդ կարող է լինել մի որևէ արևելեան բռնապետի մօտ լաւ վէզիր, բայց ոչ թէ մինիստր Անգլիայում, ուր ժողովուրդը դարերից իվեր կապուած է իր պարլամենտական կարգերի հետ։

Այսպիսի հանգամանքների մէջ վրայ հասաւ 1880 թուականը։ Պատգամաւորների ժամանակը լրացել էր, և նոր ընտրութիւններ նշանակուեցան։ Պահպանողականները բոլորովին ապահով

էին, որ դարձեալ իրանք կը ստանան մեծամասնութիւն և դեռ երկար իրանց ձեռքում կը պահեն կառավարութեան ղեկը։ Բայց ազատամիտները համարձակ մրցութեան ասպարէզ եկան։ Գլադստօն, որ, ինչպէս տեսանք, հրաժարուել էր կուսակցութեան պարագլխի պաշտօնից՝ հրաւիրուեց մասնակցել ազատամիտների կռուին։ Եւ եօթանասնամեայ ծերունին ընդունեց այդ հրաւէրը ու նորից սկսեց եռանդուն գործունէութիւն։ Այս անգամ նրա գործը շատ դժուար էր։ Ազատամիտները, իրանց հակառակորդներին անխնայ ջարդելու համար՝ դրին Գլադստօնի թեկնածութիւնը Շօտլանդիայի Միդլօտիանի շրջանում։ Սա մի չը տեսնուած յանդգնութիւն էր. Միդլօտիան միշտ պատկանում էր պահպանողականներին, և այնտեղ պատգամաւոր էր ընտրւում տեղային կալուածատէր դուքսը, որ համարեա մի փոքրիկ թագաւոր էր իր ահագին կալուածներում։ Յաղթել այդտեղ՝ նշանակում էր մահացու հարուած հասցնել պահպանողականներին, իսկ յաղթուել՝ նշանակում էր կորցնել ամեն մի յոյս։ Գլադստօն գնաց Շօտլանդիա։

Անհամար միտինգների մէջ նա ճառեր էր ասում, քննադատում էր Բիկօնսֆիլդի արևելեան քաղաքականութիւնը, ցոյց էր տալիս, թէ Անգլիան որքան անպատուած է Կիպրոսի դաշնադրութեամբ, Աւղանիստանում տեղի ունեցած կոտորածներով։ Նրա աջողութիւնը ահագին էր. Նրա

ճանապարհորդութիւնը յաղթական գնացքի էր նման։ Շոտլանդական բանուորները աղաղակում էին. «Կեցցէ Գլադստոն, աշխարհի առաջին մարդը»։ Իսկ երբ նա ընտրուեց ձայների անհագին մեծամասնութեամբ՝ բանուոր դասակարգը այնպիսի ցոյցեր արաւ, կարծես ողջունում էր հայրենիքը ազատողին։ Այս փառաւոր յաղթութեան լուրը տարածուեց ամեն տեղ և նպաստեց միւս ազատամիտների աջողութեան։ Բիկոնսֆիլդ տապալուած էր։ Գլադստոնին պատգամաւոր ընտրեցին և Լիդսում, ուր նա ներկայ էլ չէր. բայց որովհետև մէկը չէր կարող երկու տեղից պատգամաւոր լինել, ուստի Լիդսում նորից ընտրութիւն եղաւ և ընտրուեց Գլադստոնի որդին, Հերբերտ։ Բիկոնսֆիլդ սպասում էր Թագուհու վերադարձին, որ հրաժարական տայ։ Մինչև այդ՝ նա իր կողմնակիցներին վարձատրեց շքանշաններով, իշխանական տիտղոսներով. այս ընծաները անձրևի պէս թափւում էին պահպանողականների գլխին, որովհետև Թագուհին չէր մերժում իր սիրելի մինիստրի առաջարկութիւնները։ Ապրիլի 18-ին նա գնաց Վինձօրի ամրոցը իր ամենողորմած Թագուհուն հրաժարական մատուցանելու։ Նրա իշխանութեան վերջին օրերն էին. նրան չէր վիճակուած մի անգամ էլ անցնել կառավարութեան գլուխը։ Բայց ով պիտի ընդունէր իշխանութիւնը նրա ձեռքից. Ազատամիտ կուսակցութիւնը ունէր մի քանի չնոր-

հալի ներկայացուցիչներ. բայց նրանցից ոչ ոք չուզեց յանձն առնել մինիստրութիւն կազմելը. միայն Գլադստոն կարող էր ստանձնել առաջին մինիստրի պաշտօնը։ Եւ նա ընդունեց։ Երբ նա գնում էր Թագուհու մօտ իր համաձայնութիւնը տալու համար՝ ժողովուրդը ցոյցեր էր անում, արտայայտելով իր ուրախութիւնը։ Ուրախացան ամենքը։ Եւրոպայի զանազան կողմերից շնորհաւորական հեռագիրներ էին թափւում։ Հալածուածների պաշտպանը, խաղաղասէր, ազատամիտ և ազնիւ քաղաքականութեան ներկայացուցիչը անցաւ կառավարութեան գլուխը։

Պահպանողականների թողած ժառանգութեան ամենադժուարին բաժինը իրլանդական հարցն էր, որ եօթանասնական թուականների վերջում դարձեալ սուր կերպարանք էր ստացել։ 1879 թուին Իրլանդիայում սաստիկ յուզմունք սկսուեց։ Մի քանի տարի շարունակ հունձը վատ էր, և գիւղացիները այնքան էին աղքատացել, որ կարողութիւն չունէին հարկերը և հողի վարձը վճարելու։ Կալուածատէրերը գործ դրին իրանց սովորական անգթութիւնները. հազարաւոր գիւղացիներ արտաքսուեցան իրանց հողերից և մնացին առանց մի կտոր հացի, առանց օթևանի։ Բիկօնսֆիլդի մինիստրութիւնը խիստ միջոցների դիմեց, բայց դրանով աւելի ևս գրգռեց իրլանդացիներին։ Այժմ Իրլանդիան անպաշտպան չէր. նա ունէր կազմակեր-

պուած դիմադրութեան մեծ յարմարութիւններ. բայց որ գլխաւորն է՝ Իրլանդիայում յայտնուել էր մի մարդ, որ Օ'Կօննէլի եռանդն ու քաջութիւնն էր յիշեցնում։ Դա Պարնէլն էր։

Լինելով անգլիական ծագումից, պատկանելով անգլիկան եկեղեցուն՝ Պարնէլ այնուամենայնիւ հոգով նուիրուած էր Իրլանդիային և իր կեանքի նշանաբան էր ընտրել թշուառ կղզու ազատութիւնը։ 1875 թուին նա, դեռ բոլորովին անյայտ մի մարդ, ընտրուեց պատգամաւոր Իրլանդիայի կողմից, բայց երկու տարուց յետոյ նրա անունը արդէն հռչակուած էր։ Պարլամենտի մէջ իրլանդական պատգամաւորները գործադրում էին մի միջոց, որ յայտնի էր «օբստրուկցիոնիզմ» անունով։ Տեսնելով որ պարլամենտը ոչինչ ուշադրութիւն չէ դարձնում իրլանդական գանգատների, պահանջների վրայ՝ այդ պատգամաւորները վճռեցին խանգարել պարլամենտի պարապմունքները, թոյլ չը տալ որ անգլիական պատգամաւորները հեշտ և արագ վճռեն հերթական հարցերը։ Պարլամենտական կարգերը թոյլ էին տալիս պատգամաւորին խօսել մի հարցի մասին՝ որքան նա կը կամենայ։ Եւ ահա իրլանդացիները ամենալայն չափերով գործադրում էին այդ իրաւունքը, յոգնեցնում էին պատգամաւորներին իրանց անվերջ ճառերով։ 1877 թուին Պարնէլ իր մի ճառի մէջ ասաց. «Ես այստեղ եկել եմ մի եր-

կրէց, որ խիստ տանջւում է անգլիացիների անգթութիւններից ու բռնակալութիւնից, և ինձ համար մի առանձին քաղցրութիւն է խռչընդոտներ դնել կառավարութեան գործունէութեան առաջ։ Այս խօսքերը զայրոյթ յարուցին պարլամենտում. առաջարկուեց հեռացնել Պարնէլին, բայց ազատամիտներից մէկը պաշտպանեց նրան, ասելով որ նա պարլամենտական կարգերի դէմ չէ գնում։ Դա մի յաղթանակ էր, որ առաջին անգամ հռչակեց Պարնէլի անունը Եւրոպայում։ Մի քանի օրից յետոյ Պարնէլ ձգձգեց պարլամենտի նիստը 26 ժամ։ Կարճ միջոցում նա այնպիսի ժողովրդականութիւն ստացաւ, որ 1879 թուին նրան էլ Օ'Կօննէլի նըման սկսեցին անուանել Իրլանդիայի անթագակիր թագաւոր։ Յաջորդ տարին նա գնաց Ամերիկա՝ իրլանդական գործի համար փող հաւաքելու։

Գլադստօն, ի հարկէ, չը դիմեց պահպանողականների ձեռք առած միջոցներին, այլ միջնորդ հանդիսացաւ Իրլանդիայի և պարլամենտի մէջ։ Նա առաջարկեց պարլամենտին, որ նախ՝ Իրլանդիայում պետական բարեգործութիւնը աւելի ընդարձակուի, և երկրորդ՝ որ հողատէր ազնուականների իրաւունքները սահմանափակուեն։ Սրանք էլ կիսատ-պռատ, անգոհացուցիչ միջոցներ էին՝ ինչպէս 1870 թուին ընդունածները։ Բայց լորդերը ընդդիմացան Գլադստօնի երկրորդ առաջարկութեան։ Իրլանդիան աւելի ևս կատաղեց լորդերի

վարմունքից. քարոզւում էր բացարձակ ընդդիմութիւն։ 1879 թուին կազմուած էր «Հողային Լիգա» անունով մի ընկերութիւն, որը գիւղացիների համար մի պաշտպանողական դաշնակցութիւն էր հողատէրերի դէմ։ Սպանել հողատէրերին կամ նրանց կառավարիչներին, կրակ տալ արտերը, տընտեսական շինութիւնները. կոտորել անասուններին՝—սրանք վրէժի միջոցներ էին, որոնք շատ հին ժամանակներից էին յայտնի։ Դրանց վրայ աւելացաւ և մի ուրիշ միջոց. իրլանդացիները կղզիացնում էին այն մարդկաց, որոնք իրլանդական դատին հակառակ էին. ոչ ոք իրաւունք չունէր այդպիսիններին մի բան ծախել, փոխ տալ, ծառայ կամ բանուոր մտնել նրանց մօտ։ Առաջին անգամ այս միջոցը գործադրուեց կապիտան Բոյկոտի դէմ (1880 թ.), և այնուհետև կռուի այս նոր եղանակն անուանուեց «բոյկոտիզմ»։ Պարլամենտի իրլանդական պատգամաւորները միացած էին «Հողային Լիգայի» հետ։ Մի կողմից նրանք պահանջում էին պարլամենտում՝ ոչնչացնել 1800 թուի միութիւնը («Ունիա») և տալ Իրլանդիային ինքնավարութիւն (Հօմ-Րուլ), միւս կողմից սովորեցնում էին իրլանդացիներին՝ երբէք առանց ոստիկանների կողմից բռնութիւններ գործ դրուելու չը հեռանալ այն հողերից, որ կալուածատէրերը խլում էին նրանցից։ Պարնէլ իրլանդական այս շարժման պարագլուխն էր։

Դրութիւնը այնքան անտանելի դարձաւ, որ իռլանդական 105 խոշոր կալուածատէրեր դիմեցին Իռլանդիայի փոխարքային, խնդրելով պաշտպանել իրանց. գանգատուողները խնդրում էին նոյնպէս, որ իրանց անունը ծածուկ պահուի, որովհետև վախենում էին «Հողային Լիգայի» վրէժխնդրութիւնից։ Գլադստոն վճռեց կռիւ մղել իռլանդական այս նոր տեսակի յեղափոխութեան դէմ։ Պարլամենտը վերացրեց անձնական ազատութեան («Habeas corpus») իրաւունքը Իռլանդիայում։ Պարնէլ դիմադրում էր։ 1881 թուի յունուարի 31-ին, երեկոյեան ժամը 4-ին բացուած պարլամենտական նիստը նա ձգձգեց մինչև փետրվարի 2-ը, առաւօտեան ժամի 9-ը. և եթէ պատգամաւորների ժողովի նախագահը իր իրաւունքով, սակայն առանց օրինական հիմքի, վերջ չը դնէր վիճաբանութիւններին՝ դեռ կլ պիտի երկարէր այդ նիստը։ Շուտով ձերբակալուեց «Հողային Լիգայի» հիմնադիր Դէվիտտ։ Կառավարութիւնը չը կամեցաւ յայտնել այդ ձերբակալութեան պատճառաբանութիւնները, և այդ ժամանակ Պարնէլ առաջարկեց պարլամենտին՝ յայտնել ցանկութիւն, թէ ինքը չէ ուզում լսել առաջին մինիստրի (Գլադստոնի) ճառը։ Նախագահը մերժեց քուէի դնել այս առաջարկը. սակայն Պարնէլ պնդում էր իր ասածի վրայ և այդ պատճառով նրան մի քանի օրուայ ժամանակով զրկեցին պատգամաւորի իրաւունքներից։ Պարնէլի օրինա-

կին հետևեցին և միւս նրա կողմնակից իրլանդացիները, մինչև որ մէկ-մէկ ամենքը հեռացուեցան ժողովից։

Ընդհարումը սուր կերպարանք էր ընդունում։ Գլադստոն հաշտեցնող միջոցների դիմեց, առաջարկելով առանձին դատարաններ կազմել, որոնք կը նշանակեն հողի վարձագին 15 տարուայ համար. Նա մինչև անգամ խոստացաւ գանձարանից նպաստ տալ գիւղացիներին հողեր գնելու համար։ Բայց իրլանդական կուսակցութիւնը կռիւ էր ուզում։ «Հողային Լիգան» ժողովրդից 1200 ներկայացուցիչներ հաւաքեց Դուբլինում, և այս ժողովը յայտարարեց, որ «բոլոր քաղաքական խառնակութիւնների և հասարակական դժբախտութիւնների պատճառը օտարերկրացիների տիրապետութիւնն է» և այս չարիքը վերացնելու միակ միջոցն է վերադարձնել Իրլանդիային ինքնավարութեան իրաւունքը։ Գլադստոն խիստ դատապարտեց «միստր Պարնէլլի բռնակալութիւնը և կողոպտութիւնների նոր աւետարանը», յայտարարելով որ ինքը վճռել է պաշտպանել անգլիական տիրապետութիւնը Իրլանդիայում և սեփականութեան իրաւունքը։ Նա հրամայեց ձերբակալել Պարնէլլին և փակեց «Հողային Լիգան»։ Բայց իրլանդացի կանանց ընկերակցութիւնը, Պարնէլլի քրոջ ղեկավարութեամբ, շարունակեց դիմադրութիւն ցոյց տալ կառավարութեան։

Նօթը ամփոփ չարունակեց այս դրութիւնը. ձերբակալութիւններ, խռովութիւններ, յուզմունքներ անպակաս էին։ Գլադստօն, իբրև մի բարեխիղճ մարդ, որ երբէք ստորութիւն չէ համարում ուշադրութեամբ վերաքերուել իր հակառակորդի առածներին և խոստովանել, թէ ճշմարտութիւնը նրա կողմն է՝ շուտով համկացաւ, որ իրլանդացիների արդար բողոքների դէմ բռունցք և ստրկանութիւն հանելը միանգամայն անօգուտ է և կարող է անխղճութեան հասցնել։ Նա աւելի լաւ համարեց հաշտութիւն կայացնել, և բանտից արձակեց Պարնէլին ու իրլանդական այլ առաջնորդներին։ Իրլանդիայի մինիստր Ֆօրստէր արձակուեց պաշտօնից, իսկ նրա տեղ նշանակուեց Գլադստօնի անձնական բարեկամ Ֆրիդրիխ Կավէնդիշ։ Ասում էին, որ Գլադստօն ինքը պիտի կառավարէ Իրլանդիան, որովհետև Կավէնդիշ վարչական հմտութիւն չունէր։ Եւ իրաւ, Գլադստօն կամենում էր խաղաղացնել Իրլանդիան բարենորոգումների միջոցով. բայց իրլանդացի յեղափոխականները չէին թոյլ տալիս նրան իրագործել այդ ցանկութիւնները։ Նոր մինիստր Կավէնդիշ օր ցերեկով սպանուեց Դուբլինում։ Ամբողջ Անգլիան ցնցուեց այս ոճրագործութիւնից։ Հարկաւոր էր նոր խստութիւններ ձեռք առնել, և Իրլանդիայում հաստատուեց մի դրութիւն, որ շատ հեռու չէր պաշարման դրութիւնից։ Մի քանի ամսուայ մէջ

Կարգն ու խաղաղութիւնը վերականգնուեց Իռլանդիայում։

Իռլանդական դարաւոր վէրքերը բժշկելու այս անաջող փորձերի ժամանակ՝ Գլադստոն անց կացրեց պարլամենտում մի շատ նշանաւոր օրինագիծ, որով բոլորովին կերպարանափոխւում էր Անգլիան։ Մինչև այդ՝ ընտրողական իրաւունք ունէին քաղաքի տանտէրերը. իսկ նոր օրէնքով այդ իրաւունքը ստանում էին և գիւղացի տանտէրերը։ Այդպիսով աւելացան 2,000,000 նոր ընտրողներ։ Ինքը Գլադստոն ասաց, որ այնուհետև ընտրութիւնների ժամանակ գերակշռող ազդեցութիւն ձեռք են բերում բանուորները, հասարակ ժողովուրդը *)։ Անգլիան դարձաւ բուն ռամկավարական երկիր։

---

*) Գլադստոն այսպէս պաշտպանեց իր առաջարկած օրինագիծը. «Մեծ Բրիտանիայի ամբողջ ազգաբնակութիւնը վայելում է խօսքի, մամուլի, ընկերակցութիւնների ազատութիւն, պարլամենտին հանրագիր ներկայացնելու իրաւունք։ Ազգաբնակութեան այս բոլոր արտօնութիւնները մեզանից ոչինչ չեն խլում, այլ, ընդհակառակն, մեր ապահովութեան առհաւատչեան են կազմում։ Ես խնդրում եմ ձեզ՝ շնորհել ազգաբնակութեան նոյն այդ դասակարգերին և մի բարձր արտօնութիւն—իրաւունք ընտրելու իրանց պատգամաւորին պարլամենտի համար, և այն ժամանակ մենք, որ այժմ էլ իբրև ազգ և պետութիւն ուժեղ ենք, աւելի ևս կուժեղանանք։ Կարելի՞ է կասկածել, որ գիւղական ազգաբնակութիւնը բաղկացած է ընդունակ

Արտաքին քաղաքականութեան մէջ Գլադստոնի մինիստրութիւնը ունեցաւ մի քանի աջողութիւններ, բայց անաջողութիւններն էլ պակաս չէին. Բեռլինի դաշնադրութեամբ Չէրնօգօրիան և Յունաստանը պիտի ստանային Թիւրքիայից մի քանի հողեր. Բ. Դուռը, ինչպէս միշտ՝ ձգձգում էր այդ գործը, աշխատում էր խաբել պետութիւնները զանազան խորամանկ միջոցներով։ Բայց Գլադստոնի առաջարկութեամբ միջազգային նաւատորմը ցոյց արաւ Ադրիական ծովում և այդպիսով հարկադրեց Թիւրքերին կատարել իրանց յանձն առած պարտաւորութիւնները։ Եգիպտոսում ծագած ներքին խռովութիւնների պատճառով անգ-

---

մարդկանցից և կարող է օգտուել իր ընտրողական իրաւունքից ինչպէս հարկն է։ Իմ կողմից ես հաստատում եմ, որ կասկած չը կայ։ Ես գիւղացուն առհասարակ համարում եմ փորձուած աշխատաւոր։ Նա կատարում է բազմազան աշխատութիւններ և դրանց թւում այնպիսիները, որոնք նրանից մտաւոր գործունէութիւն են պահանջում։ Եթէ նրա մէջ կայ մի պակասութիւն՝ դա այն է, որ նա գուցէ չափազանց հեշտութեամբ է ենթարկւում իրանից բարձր կանգնածների ազդեցութեան։ Բայց այս պակասութիւնը — հեգնօրէն աւելացնում է ճառախօսը, գիմելով պահպանողականներին — դուք մանաւանդ մի յանցանք չէք համարի։ Իսկ ինչ վերաբերում է մեզ՝ մենք պատրաստ ենք ընդունել գիւղացուն այնպէս՝ ինչպէս նա կայ և նրա համար մատչելի դարձնել մեր հիմնարկութիւնների ամենավերջին և ամենաբարձր արտօնութիւնները»։

լիական նաւատորմը ռմբակոծեց Ալէքսանդրիան. Անգլիան, ստանալով պետութիւնների համաձայնութիւնը՝ ժամանակաւորապէս գրաւեց Եգիպտոսը, այնտեղ կարգ և խաղաղութիւն հաստատելու համար։ Այս արշաւանքներ սկսուեցան Սուդանի անապատներում և բօէրների երկրում. այստեղ անգլիացիները մի շարք անյաջողութիւնների հանդիպեցան։ Բայց ամենակարևոր հարցը այն բարդութիւնն էր, որ առաջ բերեց Աւղանիստանը Ռուսաստանի և Անգլիայի յարաբերութիւնների մէջ։ 1885 թուի մարտի 18-ին գեներալ Կօմարով, Անդրկասպեան երկրի կառավարիչը, յարձակուեց աւղանցիների վրայ և ջարդեց նրանց Կուշկա անունով տեղում։ Ծագեց Աւղանիստանի սահմանների վէճը։ Անգլօ-ռուսական յարաբերութիւնները այնքան սուր կերպարանք ընդունեցին, որ մի ժամանակ պատերազմի երկիւղ էր տիրում։ Բայց Գլադստօն հաշտութեամբ վերջացրեց վէճը. դա էլ մի նոր անյաջողութիւն էր, որ հարկադրեց նըրան հրաժարական տալ։ Թագուհին առաջարկեց նրան կոմսի տիտղոս, բայց նա հրաժարուեց այդ շնորհից։

Լորդ Բիկօնսֆիլդ վախճանուել էր 1881 թուին. Նրա տեղ պահպանողական կուսակցութեան պարագլուխ էր դարձել մարկիզ Սօլսբիւրի, որ և այժմ անցաւ կառավարութեան գլուխը։ Բայց այս անգամ պահպանողականների կառավարու-

թիւնը միայն մի քանի ամիս տեւեց։ Նոյեմբերին նոր ընտրութիւններ էին նշանակուած. ազատամիտ կուսակցութիւնը ընտրողներին ներկայացրեց մի շարք բարեփոխութիւնների ծրագիր։ Ի միջի այլոց խոստացւում էր վերակազմել լօրդերի պալատը. տեղական ինքնավարութիւնը նոր հիմքերի վրայ դնել. օրավարձով ապրող երկրագործներին տալ փոքրիկ հողաբաժիններ, որպէսզի նրանք դառնան սեփականատէր գիւղացիներ։ Ինչ վերաբերում էր Իրլանդիային՝ ազատամիտ կուսակցութիւնը պատրաստ՝ էր տալ նրան այնպիսի ինքնավարութիւն, որ համապատասխան կը լինի պետութեան ամբողջութեան սկզբունքին։ Պարնէլ այժմ ուրիշ միջոցներ էր ընտրել իր դատը վարելու համար։ Իրլանդական պատգամաւորները, թւով 86 հոգի, կազմում էին մի անկախ ոյժ. նրանք կարող էին միանալ կամ ազատամիտների կամ պահպանողականների հետ, նայած թէ այդ կուսակցութիւններից որն է համակրում իրլանդական ինքնավարութեան. իսկ միանալով՝ իրլանդացիները մեծամասնութիւն կը տային այս կամ այն կուսակցութեան և այդպիսով կառավարութեան ղեկը կանցնէր այն կողմին, որի հետ կը միանային իրլանդացիները։ Պարնէլի այս ծրագիրը աջողութիւն ունեցաւ։ 1885 թուի ընտրութիւններից յետոյ իրլանդացիները միացան ազատամիտների հետ և տապալեցին մարկիզ Սօլսբիւրիի մինիստրութիւնը։

1886 թուի յունուարին Գլադստօն դարձեալ առաջին մինիստր էր։

Այնուհետև իրլանդական հարցը երկու կուսակցութիւնների գործունէութեան գլխաւոր առարկան դարձաւ։ Գլադստօն միացաւ իրլանդացիների հետ և պահանջեց ինքնավարութիւն Իրլանդիայի համար։ Ազատամիտ կուսակցութեան մէջ պառակտումներ սկսուեցան։ Մեծամասնութիւնը հաւատարիմ մնաց Գլադստօնին, բայց մի փոքրիկ խումբ բաժանուեց, հեռացաւ կուսակցութիւնից, համարելով իրլանդական ինքնավարութիւնը վնասակար անդամահատութիւն Անգլիայի համար։ Հեռացողների թւում էին մի քանի արիստոկրատ ազատամիտներ, որոնց առաջնորդն էր Հարտինգտօն՝ և արմատականներ, որոնց թւումն էր Չէմբէրլէն։ Չէմբէրլէն մինիստր էր Գլադստօնի կաբինէտում և իսկոյն հրաժարուեց՝ երբ Գլադստօն մինիստրութեանը հաղորդեց իրլանդական ինքնավարութեան ծրագիրը. այնուհետև նա Գլադստօնի ամենախիստ հակառակորդներից մէկը դարձաւ։ Ազատամիտ կուսակցութիւնից բաժանուած այդ հատուածը ստացաւ «ունիօնիստ» անունը. Նա պահանջում էր, որ 1800 թուականի «Ունիան» անխախտ մնայ *)։

---

*) Իրլանդիայի Ուլստէր նահանգը նոյնպէս սաստիկ դէմ էր իրլանդական ինքնավարութեան, բողոքելով մինիստրութեան կազմած ծրագրի դէմ՝ Ուլստէրի բողոքա-

Բայց Գլադստօն, որ սովորութիւն չունէր կանգ առնել ճանապարհի կէսին՝ առաջ տարաւ իր սկսած գործը։ Իրլանդական ինքնավարութեան հարցը տաք վիճաբանութիւններ յարուցեց մամուլի մէջ, իսկ երբ նշանակուեց համայնքների ժողովում քննելու օրը՝ հասարակութեան հետաքրքրութիւնը վերջին ծայրին հասաւ։ Ամենքը գիտէին, որ պարլամենտում իրլանդական ինքնավարութիւնը չի անցնի. բայց ամենքին հետաքրրքրողը այն հսկայական կռիւն էր, որ պիտի վարէր 77-ամեայ մեծ ծերունին իր բազմաթիւ հակառակորդների դէմ։ Ականատեսներից մէկը պատմում է, որ համայնքների ժողովը ներկայացնում էր մի չը տեսնուած տեսարան. ամենքը դիւահարի նման վազվզում էին որ մի տեղ գտնեն։ Պատգամաւորներից մի քանիսը քնել էին պարլամենտում, որպէսզի վաղօրօք իրանց տեղը բռնեն։ Ամբողջ դահլիճը, հանդիսատեսների համար նշանակուած բոլոր տեղերը այնպէս լցուած էին, որ, ինչպէս ասում են՝ ասեղ գցելու տեղ չը կար։ Գլադստօն դանդաղ կերպով մօտեցաւ իր նստարանին և յայտնեց համայնքների ժողովին, որ ինքը կամենում է մի քանի փոքրիկ նկատողութիւններ անել իր-

---

կանները յայտարարեցին, որ իրանք զէնքի ուժով կը դիմադրեն այդ բանին։ Ուլստէրի 30000 կանայք դիմեցին Թագուհուն՝ աղաչելով չը հաստատել օրինագիծը։

լանդական հարցի մասին։ Սկզբում նրա ճառը լը-սում էին լռութեամբ, լարուած ուշադրութեամբ։ Բայց երբ ատենաբանը յիշեց, թէ անհրաժեշտ է ազատել իրլանդական օրէնսդրութիւնը օտարերկրեայ գոյներից և տալ նրան ժողովրդական բնաւորութիւն՝ Իրլանդիայի պատգամաւորների աղմկալի հաւանութիւնները թնդացրին ծայրէ ծայր լի դահլիճը։ Յետոյ, երբ Գլադստոն սկսեց խօսել իրլանդական առանձին պարլամենտի մասին, որ նիստեր կը գումարէ հայրենի հողի վրայ՝ ամեն կողմից բարձրացաւ քրքիջ. ծաղրում էին այդ միտքը։ Բայց ատենաբանը հասաւ ոգևորութեան վերջին ծայրին և իւր պերճախօսութեամբ, իր հանճարով գերեց բոլոր ունկնդիրներին։ Հիացմունքը ընդհանուր էր։ Այժմ հաւանութիւն տալիս էին ոչ միայն իրլանդացիները, այլ և նրանց հակառակորդները։ Բայց և այնպէս՝ մեծ ծերունու պաշտպանած դատը մի փորձաքար էր նոյն-իսկ շատ ազատամիտների համար։ Տատանուողները շատ էին. իրլանդական ինքնավարութիւնը մի անակնկալ բան էր։ Շատերը խորհուրդ էին տուել Գլադստոնին՝ չը դնել այդ հարցը յանկարծակի, այլ դեռ պատրաստել հասարակական կարծիքը, պատգամաւորներին։ Գլադստոն, հակառակ իր սովորական զգուշութեան, չընդունեց այդ խորհուրդը, և ահա այժմ նոյն-իսկ նրա կողմնակիցները վախում էին, չը գիտէին թէ ինչպէս վարուեն։

Հասաւ 1886 թուի յունիսի 7-ը. այդ օրը համայնքների ժողովը պիտի վճռէր իրան առաջարկուած հարցը։ Այս գիշերին 35 րոպէ մնացած՝ Գլադստօն վեր կացաւ իր ճառը արտասանելու։ Նրան, իհարկէ, ընդունեցին ծափահարութիւններով, բայց ոչ ոք չէր սպասում, թէ նրա ճառը մի առանձին տպաւորութիւն կը գործէ, որովհետև նրա ձայնը, եռանդը այլևս առաջուանը չէին կարող ցնցել։ Բայց սխալուած էին այդպէս կարծողները։ Գլադստօն սկսեց մի կրակոտ ճառ և դարձեալ տիրեց ամենքի մտքի վրայ։ Մանաւանդ խոր տպաւորութիւն թողեց նա՝ երբ մի քայլ յետ գնալով՝ նայեց պահպանողականների նստարաններին և ձեռքը ուղղելով դէպի նրանց՝ արտասանեց. «Ձեզ համար հասել է տեղատուութեան ժամանակը, իսկ մեզ տանում է մակընթացութիւնը։» Իր ճառը նա վերջացրեց ժամի մէկին, և վերջին խօսքերը, որոնք արտասանուեցան հաստատ ձայնով, խորին լռութեան մէջ՝ հետևեալն էին. «Նախ քան կը վճռէք մերժել մեր առաջարկութիւնը՝ լաւ մտածեցէք, կշռեցէք հանգամանքները, մտածեցէք ոչ թէ ներկայ րոպէի մասին, այլ մի շարք եկող տարիների մասին»։ Սկսուեց քուէարկութիւնը։ Պատգամաւորների և հանդիսատեսների մէջ տիրում էր անօրինակ յուզմունք։ Իռլանդական ինքնավարութեան ծրագիրը մերժուեց 341 ձայնով ընդդէմ 311-ի։

Գլադստոնն արձակեց պարլամենտը և դիմեց ազգաբնակության, յույս ունենալով թէ. նոր ընտրությունները ապահով մեծամասնություն կը տան իռլանդական ինքնավարությունը անց կացնելու համար։ Բայց այդ յույսը չիրականացաւ։ Ազատամիտ կուսակցությունից հեռացած ունիոնիստները միացան պահպանողականների հետ և այսպիսով այս վերջինները ստացան 116 ձայների մեծամասնություն։ Ընտրողական պայքարը այս անգամ աւելի սաստիկ էր և ներկայացնում էր մի փառահեղ տեսարան։ Գլադստոն, մենակ, չը նայած իր խոր ծերության՝ մի հսկայական կռիւ էր սկսել երեք կուսակցությունների դէմ. այժմ նրա հակառակորդները միայն պահպանողականները չէին. ազատամիտների մի հատուած, Հարտինգտոնի ղեկավարությամբ, և արմատականների մի խումբ, Չեմբէրլէնի առաջնորդությամբ, որոնք դաւաճանել էին ազատամիտների կուսակցության՝ կատաղի պայքար սկսեցին մեծ ծերունու դէմ։ Եւ Գլադստոն չէր յենւում կառավարության ուժի վրայ, որ գտնւում էր նրա ձեռքում, այլ լոկ իր համոզմունքների, իր ժողովրդականության վրայ։ Չեմբէրլէն, Հարտինգտոն, Գոշէն, Ջեօրչիլ և ուրիշ ունիոնիստներ չէին մոռանում, որ Գլադստոնի անց կացրած ընտրողական րէֆորմի շնորհիւ ահագին ազատություն էին ձեռք բերել գիւղացիները, որոնք և պաշտում էին նրան։ Այդ պատճա-

ռով ունիօնիստները սաստիկ ագիտացիա էին ա-
նում Գլադստոնի ժողովրդականութեան դէմ։ Այս-
պէս, Չեօրչիլ յարձակւում էր «ինքնասէր և յամառ
ծերունու» անտանելի բռնակալութեան վրայ, դան-
դատում էր որ նա սիրում է կամայականութիւն,
որ ժողովուրդը կուրօրէն հետեւում է նրան։ Իսկ
Գլադստոն գրում էր. «Մեր հակառակորդները ի-
րանց անուանում են ունիօնիստ։ Ես ասում եմ,
որ նրանք իրաւունք չունին այդ տիտղոսը կրելու։
Մենք ամենքս ենք ունիօնիստ. բայց այն միու-
թիւնը, որ այժմ մեր հակառակորդները չեն ու-
զում բարեկարգել՝ իր ներկայ դրութեան մէջ մի
դաշնակցութիւն է թղթի վրայ, դաշնակցութիւն՝
որ ձեռք է բերուած ուժով և խաբէութեամբ, որ
չէ հաստատուած և չէ ընդունուած իրլանդական
ազգի կողմից»։ Գլադստոն առաջարկում էր ըն-
տրողներին վճռել սկզբունքով՝ պէտք է արդեօք
թոյլ տալ, որ իրլանդացիները իրանք վարեն ի-
րանց գործերը, թէ առաջուայ պէս պէտք է ան-
արդար և աննպատակ կռիւ մղել։ Ընտրողները,
ինչպէս տեսանք, ընդունեցին վերջինը։ Գլադստոն
հեռացաւ, ու պահպանողականների և ունիօ-
նիստների մինիստրութիւնը, մարկիզ Սօլսբիւրիի
ղեկավարութեամբ, կռիւ սկսեց Պարնէլի և նրա
կուսակիցների դէմ։

Նորից դժբախտ կղզին, գահավիժուած յու-
սահատութեան անդունդի մէջ, անկարգութիւննե-

քի բեմ դարձաւ։ «Հողային Լիգան» վերանորոգեց իր գործունէութիւնը. անգլիական ոստիկանները վռնդում էին գիւղացիներին ազնուականների կալուածքներից. սպանութիւնները, բացարձակ դիմադրութիւնը սովորական բաներ դարձան։ Ուլստէրում, ուր բողոքականների մեծ մասը դէմ էր իրլանդական ինքնավարութեան՝ տեղի ունեցան կատարեալ ճակատամարտներ։ Սոլսբիւրիի կառավարութիւնը պատասխանում էր իրլանդացիներին՝ նորանոր խստութիւններ մտցնելով իրլանդական դատարանների և վարչական օրէնքների մէջ։ Իրլանդացի գործիչներին կալանաւորում էին, դատի էին ենթարկում, դատապարտում էին։ 1888 թուին Պարնէլին մեղադրեցին, թէ նա քաղաքական ոճրագործների հետ սերտ կապակցութիւն ունի. «Times» լրագրում տպուեցին նրա նամակների պատճէնները, որոնք ապացուցանում էին այդ մեղադրանքը։ Պարնէլ պահանջեց պարլամենտական քննութիւն։ Քննիչ մասնաժողովի առաջ Սոլսբիւրիի կառավարութիւնը բացարձակ կերպով «Times»-ի կողմնակիցը դարձաւ, և այդ մեղադրանքը հաստատելու համար ամեն ջանք գործ էր դնում նաև ոստիկանութիւնը։ Սակայն քննութեան միջոցին հաստատուեց, որ տպուած նամակները կեղծ են. գտնուեց և այն մարդը, որ կեղծել էր. Նա հարկադրուած եղաւ խոստովանել իր արարքը և անձնասպանութիւն գործեց։ Պարնէլի համար դա մի

նոր և անհաղին յաղթանակ էր. կառավարութիւնը ամօթահար լուռ քաշուեց։ Բայց և այնպէս նա, չը նայած գլադստօնեան կուսակցութեան բողոքներին՝ իռլանդացիների դէմ նոր խստութիւններ էր յարուցանում։

Կառավարութեան բախտից իռլանդական կուսակցութեան մէջ շուտով երկպառակութիւններ սկսուեցան։ Հռոմի պապը դատապարտեց այն միջոցները, որ գործադրում էին իռլանդացի կաթոլիկները հողատէրերի դէմ. այդ պատճառով հոգեւորականութիւնը մի կողմ քաշուեց, և «Հողային Լիգան» թուլացաւ։ Շուտով հասաւ և «Իռլանդիայի անթագակիր թագաւորի» փառքի վերջը։ 1890 թուին կապիտան Օ՛ Շի դատարանում գործ սկսեց իր կնոջից բաժանուելու համար, մեղադրելով թէ նա ապրում է Պարնէլի հետ։ Ո՛չ Պարնէլ և ոչ տիկին Օ՛ Շի դատարան չը գնացին, իսկ վերջինիս ամուսինը բաւական համոզիչ հաստատութիւններ բերեց, և դատարանը վճռեց ապահարզան տալ նըրանց։ Պարնէլի վարմունքը դատարանում շատ տըգեղ կողմից լուսաբանուեց. հաստատուեց որ նա, խաբելով կապիտան Օ՛ Շիին՝ ձեւանում էր նրա բարեկամը, զանազան ծառայութիւններ էր անում նրան, կաշառում էր ծառաներին և այդպիսով արատաւորում էր նրա ընտանեկան պատիւը։ Պարնէլի քաղաքական ասպարէզը ոչնչացած էր։ Գլադստօն յայտնեց, որ անհնարին է շարունակել

չարաբերութիւնները իռլանդական կուսակցութեան հետ, քանի որ նրա առաջնորդն է արտաքսուած Պարնէլ։ Բարեկամները խորհուրդ էին տալիս նրան առ ժամանակ հեռանալ կուսակցութեան պարագլխի պաշտօնից, բայց նա յամառութեամբ պնդում էր, թէ տեղի չի տայ այդ տեսակ պահանջներին։ Երկար վիճաբանութիւններից յետոյ իռլանդական կուսակցութիւնը իր համար նոր պարագլուխ ընտրեց, բայց Պարնէլ չը հպատակուեց մեծամասնութեան վճռին, չը վերադարձրեց կուսակցութեան պատկանող փողերը։ Այն ժամանակ ժողովուրդը երես դարձրեց նրանից. միտինգներում նրան չուացնում էին, ցեխ էին շպրտում նրա վրայ։ Այդ մրցութիւնը, որ շարունակուեց մի քանի ամիս՝ ոչնչացրեց Պարնէլի ուժերը, և նա 1891 թուին մեռաւ տիկին Օ՛Շիի ձեռքերի վրայ, որի հետ պսակուել էր քիչ ժամանակ առաջ։ Մահը ջնջեց ժողովրդական ատելութիւնը. երէկուայ հակառակորդները այժմ մեծ և խոր վիշտ էին արտայայտում։ Հայրենիքի ազատութեան մեծանուն զինուորին թաղեցին մեծ հանդէսով. դագաղի ետևից գնում էին ժողովրդի անհամար խմբեր. թաղման օրը ազգային սուգի օր էր։

Այն պատգամաւորները, որոնք հաւատարիմ էին մնացել Պարնէլին մինչև վերջ՝ կազմեցին մի առանձին խումբ, որ կոչւում էր պարնէլականների

խումբ, իսկ մնացածները կոչուեցին հակապարնէ-լականներ։ Իրլանդական այդ երկու խմբերի մէջ եղած զանազանութիւնն այն էր, որ պարնէլականները պարտաւոր չէին համարում հպատակուել անգլիական ազատամիտ կուսակցութեան, մինչդեռ հակապարնէլականները միշտ գործում էին ազատամիտների հետ։

Է.

Վերջին մինիստրութիւն։—Իրլանդական՝ Հօմ-Րուլ և հըակայական պայքար։—Լորդերի հակառակութիւնը և հրաժարական։—Դարձեալ Արևելեան հարցը. Սասուն։—Հօվարդէնի ճառը։—Միտինգ Չեստէրում։—Լորդ Սօլսբիւրի իր հիւսած ցանցերի մէջ։—Սպառնալիք և Նահանջում։—Լիվըրպուլի ճառը։—Պառակտում ազատամիտների մէջ։—Հիւանդութիւն և մահ։—Համաշխարհային ցաւակցութիւն։—Թաղում։

1892 թուին անգլիական պարլամենտը իր պարապմունքները շարունակեց մինչև յունիսի 28-ը. այնուհետև պիտի կատարուէին նոր ընտրութիւններ։ Գլադստօն իր ճառերի մէջ խիստ քննադատութեան էր ենթարկում կառավարութեան բռնած ուղղութիւնը Իրլանդիայի վերաբերմամբ և ապացուցանում էր, որ լօրդ Սօլսբիւրի ոչ միայն չը կարողացաւ մի արդար լուծում գտնել իրլանդական հարցի համար, այլ, ընդհակառակն, աւելի ևս խճճեց ու մթնացրեց նրան։ Պէտք էր միանգամ ընդ միշտ ազատել Անգլիան այդ ծանր ու աղէտալի հարցից. դա մի նշանաբան էր, որ ազա-

տամիտները դուրս բերին պարլամենտից և տարան ընտրողների առաջ։ Գլադստոնի ծրագրի գըլխաւոր կէտը դարձեալ իրլանդական ինքնավարութիւնն էր։ Պահպանողականները, միացած ունիօնիստների հետ՝ աւելի խիտ խմբուեցան այդ ծրագիրը տապալելու համար։ Լորդ Սօլսբէրի թէ իր արտասանած ճառերի մէջ և թէ այն պաշտօնական յայտարարութեան մէջ, որ ուղղուած էր ընտրողներին՝ ասում էր որ եթէ Իրլանդիային ինքնավարութիւն շնորհուի, Ուլստէրի բողոքականները զէնք կը վերցնեն և երկրի մէջ կը բորբոքուի արիւնահեղ պատերազմ։ Դա սարսափ ազդելու մի միջոց էր, որին երբէք չէր դիմել Գլադստոն։ Նրա համար դժուար չէր ջրել առաջին մինիստրի այդ սպառնալիքները։ Իր յայտարարութեան մէջ Գլադստոն ասում էր. «իմ քաղաքական կեանքի այս վաթսուներորդ տարին ես զգում եմ, որ այժմեան ընտրութիւնները վերջինն են, որոնց առիթով ես դեռ կարող եմ դիմել ընտրողներին. զգում եմ և այն, որ ինձ մնում է մասնակցել մեր առաջ դրած աշխատութեան մի փոքրիկ բաժնին»։

Թէև այդպէս՝ բայց մեծ ծերունին ընտրական պայքար սկսեց մի զարմանալի եռանդով և ինքնազոհութեան հասնող աշխոյժով։ Չէստերում, ուր նա գնացել էր իր կուսակցութեան մի թեկնածուին պաշտպանելու համար՝ մի հարբած կին նրա երեսին խփեց չորացած հացի մի մեծ կտոր,

որ դիպաւ համարեա ուղիղ նրա աչքին. վէրքը սաստիկ ցաւ էր պատճառում, բայց և այնպէս, հինգ րոպէից յետոյ նա կանգնած էր ժողովրդի առաջ և արտասանեց մի երկար ու սրամիտ ճառ։ Դրանից յետոյ միայն նա թոյլ տուեց, որ բժիշկները նայեն աչքի վէրքին և հարկադրուած էր, բժիշկների խորհրդով, երկու օր տանից դուրս չը գալ։

Քիչ առողջանալուն պէս նա իսկոյն ճանապարհուեց Շոտլանդիա, Միդլօտիանի շրջանում իր թեկնածութիւնը դնելու համար, և ճառեր ասաց շատ տեղերում։ Էդինբուրգի ճառի մէջ նա համառօտ կերպով բացատրեց իրլանդական ինքնավարութեան ծրագիրը. անգլիական պարլամենտը կը պահպանէ իր բարձր իշխանութիւնը Իրլանդիայի վրայ. բողոքական փոքրամասնութիւնը պաշտպանուած կը լինի մեծամասնութեան անարդար ոտնձգութիւններից և զեղծումներից. և եթէ Իրլանդիայի այն տեղերը, ուր բողոքականները մեծամասնութիւն են կազմում, կամենան դարձեալ միայն անգլիական պարլամենտի իրաւասութեան տակ՝ այդ ցանկութեանն էլ կարելի է գոհացում տալ։ Բայց Գլադստոն յոյս ունէր, որ Ուլստէրի բողոքականները չեն ցոյց տայ անհաշտ թշնամութիւն կաթոլիկների դէմ և չեն խանգարի իրլանդական ինքնավարութեան գործը։ Գլազգօվ քաղաքում Գլադստոն խօսեց այն մասին, որ լօրդ Սօլսբիւրի զուր է աշխատում կրօնական ատելու-

թիւն առաջացնել Իրլանդիայում, զուր է փորձում վախեցնել ընտրողներին, ասելով թէ կաթոլիկ քահանաները տիրապետող տարր են հանդիսանում։ Նա ճառեր ասաց և բանուորների գրութեան մասին. օրը ութ ժամ բանելու պահանջը նա անօգուտ և աւելորդ էր համարում, բայց ընդունում էր, որ բանուորն էլ պիտի մաս ստանայ այն արդիւնքից, որ նրա կատարած գործը տալիս է դրամատիրոջ։ Դա աւելի արդար և հեշտ իրագործելի պահանջ է, և Գլադստօն յորդորում էր բանուորներին՝ խմբուել միասին և միաբան պահանջ ներկայացնել գործատէրերին։

Նա խօսում էր համարեա ամէն օր, երբեմն և օրը երկու անգամ։ Միդլօտիանում նրա աջողութիւնը այս անգամ էլ փառաւոր էր։ Բանուորները ամէն տեղ հիացման ցոյցեր էին անում. նրանց դրօշակների վրայ գրուած էր. «Կեցցէ Գլադստօն, Աստուծու մարդը»։ Գլադստօն այդ ցոյցերին պատասխանեց մի ճառի մէջ հետևեալ գեղեցիկ խօսքերով. «Մենք առաջ կը գնանք այն բարի գործի ճանապարհով, որը սկսել ենք, և մեր յոյսերը կը դնենք ո՛չ պատգամաւորների և ոչ լօրդերի վրայ, ոչ տիտղոսների և կալուածների վրայ, կամ աւելին—ոչ նոյն իսկ մարդու վրայ, այլ Ամենակարող Աստուծու վրայ. Նա հրամայում է որ իբաւունքի, արդարութեան և ազատութեան գաղա-

փարները առաջնորդեն մեզ և մեր բոլոր գործողութիւններին։

Ընտրութիւնների հետևանքը, չը նայած պահպանողականների և ունիօնիստների եռանդուն ջանքերին, բարեյաջող էր այդ մեծ մարդու համար։ Նրա կուսակցութիւնը 42 ձայների առաւելութիւն ստացաւ։ Անգլիան վերջին անգամ իշխանութեան ղեկը յանձնում էր զառամեալ ծերունուն, թոյլ էր տալիս նրան վերջին անգամ մի հերոսական ճակատամարտ տալ իր բազմաթիւ հակառակորդներին՝ արիւնով ներկուած մի դժբախտ երկրի ազատութեան համար։ Օգոստոսի սկզբում Սօլսբիւրիի մինիստրութիւնը վստահութեան հարց դրեց. վիճաբանութիւնները գլխաւորապէս իրլանդական հարցին էին վերաբերում. Մինիստրները աշխատում էին ապացուցանել, որ իրլանդական ինքնավարութիւնը դժբախտութիւն կը լինի Անգլիայի համար. Գլադստոնի կողմնակիցները մեծամասնութիւն ունէին շնորհիւ իրլանդացի պատգամաւորների՝ որոնք միացել էին ազատամիտների հետ Հօմ-Րուլը անց կացնելու պայմանով։ Եթէ համայնքների ժողովը ընդունում էր, որ իրլանդական ինքնավարութիւնը իսկ-որ վտանգաւոր է և ոչ ցանկալի՝ այն ժամանակ գլադստոնեանների և իրլանդացիների դաշնակցութիւնը ինքն ըստ ինքեան կը քայքայուէր, և մեծամասնութիւնը դարձեալ կը մնար պահպանողականներին, որոնք և

կը շարունակէին կառավարել։ Գլադստոն ասաց. «Իրլանդական հարցը այժմեան ժամանակ ամէն ինչ է ինձ համար. նա է այն միակ օղակը, որ կապում է ինձ հասարակական կեանքի հետ»։ Պահպանողականները չէին թաքցնում, որ իրլանդական հարցը ոչնչացնելու միակ յոյսը լորդերի պալատն է. այդ մասին մարկիզ Սօլսբիւրի բաւական պարզ ակնարկներ էր արել լորդերի պալատում արտասանած իր ճառի մէջ։ Գլադստոնն էլ շատ լաւ գիտէր որ այդպէս է, բայց իր հսկայական գործը առաջ տանելու համար նա այժմ էլ, ինչպէս և շատ անգամ, կանգ չէր առնի տիտղոսաւոր ազնուականների առաջ, որոնք ժողովրդի ընտրըուածները չէին և որոնց իրաւունքները հիմնուած էին հին սովորութիւնների և հասկացողութեան վրայ։ Այս բանն էր նա ուզում հասկացնել, ասելով նոյն ճառի մէջ, որ եթէ իրլանդական օրէնքը, աջողութեամբ անցնելով համայնքների ժողովի մէջ, կը մերժուի լորդերի կողմից՝ այն ժամանակ «ազատամիտ կառավարութեան պարտականութիւնը կը լինի միևնոյն ոյժով շարունակել գործը՝ այս մեծ հարցի լուծումը ձեռք բերելու համար»։ Դա նշանակում էր, որ լորդերի յամառութիւնը կոտրելու համար ձեռք կառնուեն օրինական միջոցներ։ Այսպէս թէ այնպէս՝ լորդ Սօլըսբիւրի հրաժարական տուեց, և սկսուեց Գլադստոնի չորրորդ ու վերջին մինիստրութիւնը։

Մի քանի ամսից յետոյ, 1893 թուի. ձմեռը,

պարլամենտի առաջ դրած էր Իռլանդական հարցը։ Ավելորդ է ասել, որ պահպանողականները և նրանց դաշնակից ունիոնիստները կատաղի եռանդով աշխատում էին տապալել այդ՝ իրանց համար ատելի ծրագիրը, որ երկրորդ անգամ հրապարակ էր բերում Անգլիայի առաջին պետական մարդու ձեռքով։ Վիճաբանությունները ձգձգվում էին անվերջ, ճառերը դիտմամբ երկարացնելը սխտեմ էր դարձել։ Ի՞նչ պիտի լիներ 84 ամեայ ծերունու դրությունը այդ փոթորկալից նիստերի մէջ։ Կորացած տարիների այդ պատկառելի թուի տակ, բայց հոգով ժիր և առոյգ՝ նա հարուածներ էր ընդունում և հարուածներ տալիս։ Բաւականանանք բերելով մի կտոր ականատեսի պատմածից։ Ահա ինչ է գրում նա.

«Նախագահի աջ կողմում, մինիստրական նստարանի վրայ, նստած էր բարձրահասակ ծերունին, սպիտակ մազերով ծածկուած անագին գլխով։ Նրա յոգնած աչքերը խոր էին ընկել։ Արծուի դէմքը իր մեծ քթով գունատ էր, թափանցիկ. Գլադստոն այդ ժամանակ 84 տարեկան էր։ Նա համարեա պառկած էր և ոչ թէ նստած։ Նրա մարմինը կռացել էր գլխի ծանրութեան տակ, ոտները թոյլ ձգուած էին։ Երբեմն նա բռնում էր իր աջ կողմին նստած Մօրլէյի *) ձեռքից և յեն-

*) Ջօն Մօրլէյ, յայտնի գիտնական և արմատական գործիչ, Գլադստոնի մտերիմ բարեկամը և աշխատակիցը։

ուելով նրա ուսին՝ տկարի նման բարձրանում էր։ Երբեմն ձեռքը դնում էր ականջին, որ լաւ լսէ։ Երեւում էր, որ այն ամենը, ինչ խօսում էին համայնքների ժողովի կրտսեր աստուածները՝ վաղուց յայտնի էին նրան։ Ուղիղ նրա դիմաց նստած էր բարակ և գողտրիկ Բալֆուրը։ Փոքրիկ, նիհար դէմք, բարակ, սպիտակ, երկար ձեռքեր, ջղուտ շարժուածքներ—ամեն ինչ ցոյց էր տալիս, որ այդ մարդը հասել է ամեն մի միտք անդամատելու և վերլուծելու բարձր կարողութեան։ Հեգնական ժըպիտը խաղում էր նրա շրթունքների վրայ, և աչխոյժ աչքերը սրածայր նշտրակների նման փայլում էին ակնոցի տակից։ Նայելով այն կտրուած ծերունուն, որ հագած ունէր մոխրագոյն սիւրտուկ, որի կոճկատեղում պնդացրած էր մի կարմիր ծաղիկ, նայելով և մտաւոր սրի այս չքեղ մարմնացման, որ ջղուտ շարժումներ էր անում ծերունու դէմ՝ ես կարծում էի թէ Գլադստօն գործը տանուլ է տուել։ Ինձ թւում էր, թէ զօրապետի ույժը խորտակուած է։ Բալֆուր խօսեց, իռլանդական ինքնավարութիւնը անուանեց մի ծիծաղաշարժ խաբէութիւն։

«Ցանկարծ տեղի ունեցաւ մի օտարոտի բան։ Ամենքս, որ այդ րոպէին գտնւում էինք պատգամաւորների ժողովի դահլիճում՝ մի ցնցում զգացինք, կարծելով մէկը խթեց մեզ, և ամենքս մեր հայեացքները ուղղեցինք դէպի մինիստրական նըս-

տարանը։ Խորտակուած, յոգնած ծերունին այլեւս չէր կար։ Նստարանից դանդաղ կերպով վեր էր կենում բարձրահասակ մարդը՝ այրուող աչքերով։ Նա յենուեց երկաթապատ արկղին, որի մէջ պահւում են համայնքներին շնորհուած հրովարտակները, սիւնացաւ Բալֆուրից բարձր, ձգուեց և սկսեց խօսել մի սրբազան լռութեան մէջ։ Մենք լաւ չէինք լսում թէ ինչ է ասում նա, և մեզ հարկաւոր էլ չէին նրա խօսքերը։ Նրանից գալիս էր խօսքից աւելի խոր մի բան և թափւում էր մեր մէջ. մենք զգում էինք այն՝ ինչ նա էր զգում։ Նա մեր մէջն էր գցում իր ոգու խորհրդաւոր սերմերը, որոնք բռնում էին իրանք իրանց և զարգանում էին մեր հոգու մէջ։ Նրա ձայնը, որ սկըզբում պառաւական էր և խուլ՝ հետզհետէ ուժեղ և քաղցրահնչիւն էր դառնում և լցնում էր ամբողջ բարձր դահլիճը։ Բայց բացի ձայնից՝ դահլիճը լցրել էր մի ինչ-որ ուժ, մեծ հոգու պայթիւնը։ Մարգարէի աչքերը այրւում էին, դէմքը բոցավառուած էր։ Սպիտակ մազերը ցցուած էին անկարգ։ Նա ուժեղ շարժումներ էր գործում իր աջ ձեռքով և ցուցամատը ուղղում էր դէպի Բալֆուրը, որ կուչ էր եկել և անհանգիստ շարժւում էր նստարանի վրայ։ Թւում էր, թէ Գլադստօն հարւածում էր նրան նիզակով։ Յանդիմանութեան փշշացող խօսքերը զարնւում էին նրա դէմքին իբրև մտրակներ։ Եւ ամենքի համար պարզ էր,

որ աստուածայինը, յաւիտենականը ծերունի գօբապետի կողմն է, իսկ մարդկայինը, չարը սողում է այս անարդար գործիչների նստարանների վրայ»:

Այսպիսի մրցութեամբ քայլ առ քայլ առաջ տանելով օրինագիծը, որի իւրաքանչիւր յօդուածը ենթարկւում էր բազմակողմանի և երկարատև քննադատութեան՝ Գլադստօն մի քանի փոփոխութիւններ մտցրեց նրա մէջ երբև զիջողութիւն: Օրինագիծը այդ դրութեան մէջ յուլիսի վերջերում ընդունուեց համայնքների ժողովի կողմից 40 ձայների մեծամասնութեամբ: Բայց աշնանը լօրդերի պալատը մերժեց նրան 419 ձայնով ընդդէմ 41: Այսպէս էլ նախատեսուած էր: Ծերութիւնը, աչքերի հիւանդութիւնը չը թողեցին, որ Գլադստօն շարունակէ կռիւը: 1894 թուի փետրուարի 5-ին նա հրաժարական տուեց և վերջնականապէս թողեց այն ասպարէզը, ուր անուն ու փառք էր ստացել: Նրա վերջին կռիւը իրլանդացիների ազատութեան համար էր: Եւ նա բոլորովին հանգիստ խղճով կարող էր առանձնանալ Հօվարդէնում: Անգլիական ազգի ներկայացուցիչները ընդունել էին իրլանդական ազատութիւնը. ուրեմն նա տարել էր յաղթանակը: Իսկ լօրդերը, որոնք ազգի ներկայացուցիչներ չէին, մերժելով իրլանդական օրինագիծը՝ ցոյց տուին մի բան, թէ արտօնուածների դասակարգը դեռ այնքան ոյժ ունի, որ կարող է բռնանալ ազգի կամքի վրայ: Կռուել այդ բռնա-

կալութեան դէմ—ահա ինչ կտակ թողեց Գլադստօն իր յաջորդին, լորդ Ռօզբէրրիին, որ անցաւ ազատամիտ մինիստրութեան գլուխը։ Լորդ Ռօզբէրրի յայտարարեց, որ Հօմ-Ռուլը չի իրականանայ՝ մինչև որ լորդերի պալատը կամ չը վերացուի, կամ չը բարեփոխուի այնպէս, որ չը կարողանայ բռնանալ համայնքների ժողովի վրայ։

Մինիստրութիւնը կռիւ յայտարարեց ազնուականութեան դէմ։ Եւ այդ կռիւը վաղ թէ ուշ՝ վերջացած կը լինի. քանի որ Անգլիան կը գտնուի արտօնուած տիտղոսաւորների խնամակալութեան տակ՝ ազատամիտ օրէնքները միշտ անհագին դժուարութիւններով կը մտցնուեն և երկրի առաջադիմութեան առաջ միշտ խոչընդոտներ կը լինին դրուած։

Լորդ նշանակում է կալուածատէր, պարոն. դա մի տիտղոս է, որ տրւում է բոլոր ազնուականներին։ Լորդի տիտղոսը շնորհում է թագաւորող անձը, մինիստրութեան միջնորդութեամբ, գլխաւորապէս խոշոր կալուածատէրերին։ Լորդերի պալատում գործելու իրաւունքը անցնում է հօրից մեծ որդուն, որ 21 տարեկան հասակը մըտնելու օրից համարւում է լորդերի պալատի անդամ։ Կան և հոգևորական լորդեր։ Պալատում գըտնւում՝ են 24 եպիսկոպոսներ. այնտեղ են թագաւորական տան բոլոր չափահաս պրինցները։ Լորդերի պալատը կարող է վճիռներ կայացնել՝ երբ նիստին ներկայ են նոյն-իսկ երեք լորդեր։ Բայց

ինչ առանձին իրաւունքների տէր են լօրդերը։ Ազնուականութեան տրուած հին արտօնութիւնները այժմ կորցրել են իրանց նշանակութիւնը, և լօրդը զանազանւում է հասարակ քաղաքացուց միայն նրանով, որ կրում է տիտղոս, ունի զինանշան և նրան դիմելիս՝ ասում են «միլօրդ»։ Լօրդերի առանձին պալատը կազմուել է ԺԴ դարում, այն էլ առանց որոշ օրէնսդրական կարգադրութեան, այնպէս որ նա մինչև այժմ գոյութիւն է պահպանում լոկ ըստ սովորութեան։ Պարզ է ուրեմն, թէ որքան հնացած հիմնարկութիւն է լօրդերի պալատը։ Անգլիայում, ուր ազատութիւնը ծաղկած է աւելի քան որևիցէ մի ուրիշ երկրում, ուր կառավարութիւնը գտնւում է դէմօկրատիայի ձեռքում՝ վերին աստիճանի անարդար մի բան, կատարեալ մի անաքրօնիզմ է երևում այն, որ ամբողջ ազգի ներկայացուցիչների կատարած գործերը պէտք է ներկայացնուեն մի մասնաւոր դասակարգի, մի քանի հարիւր արտօնուածների հաւանութեան։

Բօզբէրիի մինիստրութիւնը այդ դասակարգային բռնապետութեան դէմ կռուելու ճանապարհը ընտրեց և հէնց այդ պատճառով չը կարողացաւ անց կացնել մի շարք արմատական օրէնսդրութիւններ։ Այսպէս, համայնքների ժողովին առաջարկուեցան օրինագծեր, որոնք գործատէրերի վրայ պատասխանատուութիւն էին դնում բանուորների

հետ պատահած դժբախտ դէպքերի համար. վարձատրութիւն էին նշանակում այն պատգամաւորներին, որոնք միջոցներից զուրկ էին. սահմանում էին ընտրութիւնների նոր կարգ (պատգամաւորների ընտրութիւնները պէտք է կատարուէին ամենուրեք մի օրուայ մէջ, կիրակի օրը)։ Բացի դրանից՝ հանքերում աշխատող բանուորների համար օրական ութ ժամի աշխատութիւն էր սահմանւում. Իրլանդիայից դուրս եկած հողագործները պիտի վերադարձնուէին. գործարաններում աշխատող երեխաներին պաշտպանող օրէնք պիտի սահմանուէր։ Այս օրինագծերը, որոնք առաջարկուեցան զանազան ժամանակ՝ կամ մերժուեցին լորդերի կողմից կամ այնպիսի կրճատումների և աղճատումների ենթարկուեցան, որ մինիստրութիւնը ստիպուած էր յետ վերցնել նրանց։ Պահպանողականները, անկարող լինելով դիմադրել համայնքների ժողովում՝ ոչնչացնում էին ազատամիտների գործերը լորդերի պալատի միջոցով։ 1832 թուականից սկսած լորդերը այդպիսի դիրք չէին համարձակուած բռնել. այժմ նրանք ձեռք էին բերել իրանց նախկին ոյժը և դարձել էին երկրի տէրը։ Ռօզբէրրիի մինիստրութիւնը, որ սաստիկ ագիտացիա էր անում ազնուականների դէմ, նշանաբան ընդունելով «փոփոխել կամ վերացնել» սկզբունքը՝ չը կարողացաւ երկար պահել կառավարութեան ղեկը իր ձեռքում և պարտութիւն

կրելով մի մասնաւոր հարցի մէջ՝ հրաժարուեց 1895 թուին։

Գլադստոն իր ընկերակիցների այս պայքարը դիտում էր հեռուից. Հօվարդէնի խաղաղութեան մէջ առանձնացած՝ նա նուիրուած էր իր սիրելի գրքերին։ Բայց շուտով նա էլի դուրս եկաւ այդ առանձնարանից՝ տանջուողների դատը պաշտպանելու համար։

1894 թուի ամառը տեղի ունեցաւ Սասունի կոտորածը։ Ինչպէս և 1876 թուին՝ թիւրքաց գազանութիւնների լուրը շատ ուշ հասաւ Եւրոպային։ Լորդ Րօզբէրրիի առաջարկութեամբ թիւրքական քննիչ յանձնաժողով ուղարկուեց Սասուն՝ իրողութիւնը ստուգելու համար. նրա հետ էին Ռուսաստանի, Ֆրանսիայի և Անգլիայի ներկայացուցիչները։ Տարուայ վերջին մի պատգամաւորութիւն գնաց Հօվարդէն՝ Անգլիայի և Պարիզի հայերի կողմից մի ոսկէզօծ սկիհ նուիրելու Հօվարդէնի եկեղեցուն ի յիշատակ այն համակրութեան, որ Գլադստոն իր կեանքի ընթացքում ցոյց է տուել հայերին։ Ընդունելով պատգամաւորութիւնը՝ մեծ ծերունին շնորհակալութիւն յայտնեց մի ճառով, որի մէջ ասաց հետեւեալը.

«Անգլիայի և Պարիզի հայ գաղթականութիւնների կողմից ինձ արած անսպասելի ցոյցերին ես ոչնչով չեմ արժանացել։ Ես ոչինչ չարեցի ձեզ համար ներկայ շատ դժուար հանգամանքնե-

քում, բայց, համարձակւում եմ ձեզ հաւատացնել, դա իմ անտարբերութիւնից չէր։ Ես կը բացատրեմ այդ մի քանի խօսքերով։ Վերջին ժամանակներս արտասահմանից սկսեցին լուրեր հասնել, որոնք գնալով աճում էին և աւելի ու աւելի ճշմարտութեան բնաւորութիւն էին ստանում,—լուրեր սարսափելի, աննկարագրելի բարբարոսութիւնների մասին Հայաստանում։ Իւրաքանչիւր մարդու առաջին դրդումը այդպիսի դէպքում—զգացմունքների ուժգնութեան ենթարկուելն է. բայց ես համոզուած էի, որ այդպիսի մեծ նշանակութիւն ունեցող գործում իւրաքանչիւր ազգի ամենից լաւ և յուսալի ներկայացուցիչը պէտք է լինի իր կառավարութիւնը, որ ազգի օրգանն է և իրաւունք ունի խօսել ազգի հեղինակաւոր լեզուով»։

«18 տարի առաջ, չարունակեց Գլադստօն, ինձ վիճակուեց—այդպէս է երևի իմ բախտը—եռանդուն մասնակցութիւն ընդունել այն անցքերում, որոնք վերաբերում էին ուրիշ անգթութիւնների,—անգթութիւններ, որոնք հասան մեզ՝ առաջ լուրերի ձևով, իսկ յետոյ չափազանց սարսափելի ճշմարտութեան կերպարանք առան.—ես խօսում եմ բօլգարական գազանութիւնների մասին։ Սակայն ես ոչ մի քայլ չարեցի՝ մինչև որ, նախ և առաջ, անգթութիւնների հաւաստիութիւնը և բնաւորութիւնը չը ճշտուեցին անկասկածելի աղբիւրից և մինչև որ, երկրորդ, ես յոյս չը կտրեցի

այն բանից, որ անգլիական ժողովրդի զգացմունքների պատշաճաւոր արտայայտիչը կարող է լինել կառավարութիւնը։ Սրանից դուք կարող էք տեսնել, որ իմ վարմունքը ներկայ դէպքում չէ հակասում այն բանին, ինչ որ ես արի այն ժամանակ, և չէ ցոյց տալիս, որ խորին ծերութեան պատճառով մեռել է իմ մէջ զգայնութիւնը դէպի այդպիսի սարսափները։

«Ես համոզուած եմ, որ շատ երկրներում, ուր, դժբախտաբար, դեռ չէ քարոզուած Քրիստոսի խօսքը, օրինակ մեր սեփական հպատակների մէջ, Հնդկաստանում, ես համոզուած եմ որ նոյնպէս և Չինաստանի, Եապոնիայի մէջ և միւս ոչ-քրիստոնեայ երկրներում, այդ նոյն վրդովմունքով կը վերաբերուեն այժմ տեղի ունեցած այն զարհուրելի բարբարոսութիւններին, որ կատարում են մարդիկ իրանց նման էակների դէմ, և հէնց վիրաւորուած մարդկութեան այդ միացեալ ձայնի մէջ է մեծ ոյժը։ Ի՞նչ էր պատահել Բուլգարիայում։ Սուլթանը և նրա պաշտօնեաները հերքում էին, պնդելով թէ որևէ անարդարութիւն չէ պատահել։ Այո, բայց այդ հերքումը նսեմացաւ փաստերի առաջ։ Ճշմարտութիւնը յայտնուեց աշխարհին։ Այն ժամանակ օտարոտի էր թւում իմ միտքը՝ երբ ասում էի. «Ժամանակ է որ Թիւրքերը իրանց հետևորդներով, իրանց ունեցած չունեցածով դուրս գան Բուլ-

գարփալխից։ Նրանք Բօլգարիայից դուրս գնացին և հեռու քշուեցին։

«Սակայն եթէ Թիւրքերը մինչև անգամ զուրկ լինէին միանգամայն արդարութեան, ճշմարտութեան կամ մարդկայնութեան զգացմունքներից՝ առողջ խելքը և պարզ մտածողութիւնը պէտք է արգելէին նրանց կրկնել 1876 թուի քստմնելի դէպքերը, որոնց պատճառով Թիւրքիան խայտառակուեց։ Քննութեան հետևանքը մեզ դեռ յայտնի չէ, բայց և այնպէս, ամեն տեսակ հաւանականութիւն կայ ընդունելու, որ 1876 թուի Բօլգարիայի սարսափելի դէպքերը կրկնուել են 1894 թուին Հայաստանում։ Եւ եթէ կապացուցուի, որ այդպէս է՝ ուրեմն ժամանակ է որ մի ընդհանուր անէծքի աղաղակ, այլ և գործի բարձրաձայն անէծք ուղղուի այդ դաժան չարագործութեան դէմ։ Վիրաւորուած մարդկութիւնը պէտք է ձայն բարձրացնէ և հասցնէ այդ ձայնը Թիւրքիայի ականջին և նրան զգացնել տայ, եթէ առհասարակ որևէ բան կարող է նրան զգալուն կացուցանել՝ տեսնելու իր բռնած սոսկալի ընթացքը։

«Պարոններ։ Թիւրքիայի պատմութիւնը տըխուր և չար գործերով լի մի պատմութիւն է։ Այդ ցեղը զուրկ չէ եղել աչքի ընկնող, մինչև անգամ նուրբ յատկութիւններից, բայց շատ տեսակէտներից նա աշխարհի համար եղել է մի պատուհաս, որ ուղարկուած է եղել, անկասկած, իմաստուն նա-

խախնամութիւնից աշխարհիս մեղքերի համար։ Եթէ այդ սպանութիւնների, բռնակալութիւնների և անպատուութիւնների պատմութիւնները ճիշտ են՝ այն ժամանակ այլևս ոչինչ չէ կարող անտես առնուել, աններելի մնալ։ Ես իմ կեանքի ընթացքում ականատես եմ եղել, թէ ինչպէս Թիւրքիան համարեա կիսուել է այն մեծութիւնից, որի մէջ ես տեսայ նրան մանուկ ժամանակս։ Եւ ինչի համար։ Պարզապէս նրա վատ կառավարութեան համար։ Ես համոզուած եմ, որ մեր թագուհու կառավարութիւնը գործ կը դնէ ամեն մի միջոց գործերի գաղտնիքի հիմքը բաց անելու համար։ Եթէ ստացուած լուրերը կամ հերքուեն կամ մեղմանան՝ այն ժամանակ պէտք է շնորհակալ լինինք Աստուծուց. իսկ եթէ, դրա հակառակ, հաստատուեն՝ այն ժամանակ, ասում եմ, այդ անպատուութիւն է քաղաքակրթութեան համար, լայն մտքով — ապտակ մարդկութեանը։ Սա, պարոններ, մի խիստ լեզու է, և խիստ լեզու պէտք է գործ ածել, երբ անխիղճ գործեր են կատարւում, և նա պիտի գործ դրուի այդ տեսակ փաստերի ժամանակ։ Եւ քանի որ ես ձայն ունիմ՝ ես յուսով եմ, որ ամեն ժամանակ այդ ձայնը կը բարձրացնեմ յանուն մարդկութեան, յօգուտ մարդկութեան և ճշմարտութեան»։

Մինչդեռ քննիչ յանձնաժողովը իր գործն էր կատարում, դիւանագիտութիւնը վճռական քայլեր արաւ յօգուտ հայերի։ 1895 թուի մայիսին ռու-

տաց, ֆրանսիական և անգլիական դեսպանները
մշակեցին ռէֆօրմների ծրագիրը և իրանց կառա-
վարութիւնների կողմից առաջարկեցին Բ. Դռան՝
Անատօլիայի վեց հայաբնակ նահանգներում մըտ-
ցնելու համար։ Բ. Դուռը, ինչպէս միշտ՝ սկսեց
ձգձգել հարցը, սակարկութիւններ անել։ Միևնոյն
ժամանակ թէ Եւրոպայում և թէ Ամերիկայում լոյս
տեսան բազմաթիւ յօդուածներ ու բրօշիւրներ, ո-
րոնք հաստատում էին Թիւրք կառավարութեան
հրամանով գործադրուած գազանութիւնները։ Թիւր-
քերը, անցեալի դասերից խրատուած, այս անգամ
աւելի լաւ պատրաստութիւններով հանդէս եկան
քրիստոնեայ աշխարհի առաջ. Նրանք ունէին բազ-
մաթիւ վարձկան լրագիրներ (Աւստրիայում, Գեր-
մանիայում և Ֆրանսիայում), որոնք ամեն ճիգ թա-
փում էին՝ աշխարհին յայտնի դարձած իրողութիւն-
ները աղաւաղելու, ջրելու համար. գովում էին
Թիւրքերին և նրանց կառավարութիւնը, իսկ հայե-
րին դատապարտում էին, անուանելով նրանց ա-
պերախտ, ապստամբ, յեղափոխական և այլն։ Չը
նայած, սակայն, վաճառուած խմբագիրների վայ-
նասունին՝ իրողութիւնը թագցնել անհնարին ե-
ղաւ։ Այդ գործի մէջ մեծ դեր կատարեց դօկտօր
Էմիլ Դիլլօն, որ կարողացաւ մտնել ասիական
Թիւրքիա, իմանալ հայերի դրութիւնը։ Իր տե-
սածն ու իմացածը նա նկարագրեց «Daily Tele-
graph» լրագրի մէջ և մի շարք փաստեր ու ապա-

ցոյցներ տուեց քաղաքակիրթ աշխարհին։ Անգլիայում մի շարք միտինգներ սարքուեցան՝ հրապարակ հանուած իրողութիւնների առիթով բողոք յայտնելու համար։ Դրանցից մէկն էր Չեստէրում հաւաքուած միտինգը, որ կայացաւ յուլիսի 26-ին։ Գլադստոն ընդունեց այդտեղ խօսելու առաջարկութիւնը, բայց պահանջեց որ ժողովը դումարուի փոքրիկ դահլիճում, որպէսզի իր ձայնը լաւ լսելի լինի ամենքին։ Անգլիայի բոլոր կողմերից Չեստէր թափուեցան բազմաթիւ մարդիկ, որոնք կամենում էին լսել մեծ ծերունուն. բայց շատ քչերը կարողացան տեղ գտնել դահլիճում։ Գլադստոն գաւազանի վրայ յենուելով հանդարտ քայլերով ներս մտաւ. ամենքը ոտքի կանգնեցին ու ծափահարութիւններով ողջունեցին նրան։

Ժողովը բացեց Ուէստմինստրի դուքսը մի համառօտ ճառով։ Այնուհետև վեր կացաւ Գլադստոն և իրան յատուկ ոգևորութեամբ ու տաղանդով մի երկար ատենաբանութիւն արաւ, որի մէջ ցոյց տուեց իրերի դրութիւնը և այն ուղղութիւնը, որին պիտի հետևէ քրիստոնեայ աշխարհը։ Հօվարդէնի ճառում նա խորհուրդ էր տուել՝ սպասել անկողմնապահ մարդկանց վկայութիւններին։ Այժմ պակաս չէին այդ վկայութիւնները, և մեծ ծերունին խօսում էր համարձակ, հիմնուելով փաստերի և իրողութիւնների վրայ։ Վառ գոյներով նկարագրելով բարբարոսութիւնները, նրանց հեղինակնե-

րին, ծաղրելով այն հերքումները, որ Թիւրք կառավարութիւնը եռանդով տարածում էր Եւրոպայում՝ Գլադստօն ասաց, որ աւելորդ է լոյս ընծայել, թէ քննիչ յանձնաժողովի և այլ ականատեսների վկայութիւնները կը հարկադրեն Թիւրքերին գտնել չարագործներին ու ասպատակներին և պատժել նրանց։

«Ճիշտ միևնոյն բանը եղաւ 1876-ին, Բօլգարիայի կոտորածներից յետոյ—ասաց ատենաբանը։—Լօնդօնի Թիւրքաց դեսպանը մի յատուկ տեղեկագիր տպել տուեց և ցրուեց Անգլիայում—նրա մի օրինակը ինձ մօտ էլ կայ—որով բոլորովին ուրանում էր Բօլգարիայի մէջ եղած կոտորածները, ասելով թէ բօլգար ժողովուրդը մի քիչ անհնազանդ ժողովուրդ է, որին հարկ էր եղել կարգի-կանոնի բերել, իսկ միւս բոլոր պատմուածները սուտ են։ «Պատմուածը սուտ է» խօսքը Թիւրք կառավարութեան միակ զէնքն է։ Նա այս անգամ էլ գործ ածեց իր այդ զէնքը. բայց պետութիւնները հսկում են, և անկողմնակալ պատուիրակներ ուղարկուեցան Ռուսաստանի, Անգլիայի և Ֆրանսիայի կողմից։ Յայտնի են ձեզ այն վաւերագրերը, որոնք ընդարձակօրէն խօսում են կատարուած բոլոր չարագործութիւնների մասին. բայց երբ այդ սոսկալի բռնաբարութիւնները հրատարակուեցան ու յայտնի դարձան Կ. Պոլսում, ինչ ուզեց անել օսմանեան կառավարութիւնը. միմիայն ու-

զեց ծածկել այդ բռնաբարութիւնները սուտերով, խարդախութեամբ և ձգձգումներով»։

Ի՞նչ պէտք էր անել։ Գլադստոն ցոյց էր տալիս 1856 Թուի դաշնագիրները, որոնք «եւրոպական տէրութիւններին իրաւունք տուին,—իրաւունք, որ այժմ բոլորովին պարզ և անվիճելի է— մտնել Հայաստան և առնել կառավարութիւնը Թիւրքերի ձեռքից, քանի որ սրանք հանդիսաւոր կերպով խոստումներ են տուել Եւրոպային, բայց իրանց յանձն առած պարտաւորութիւնները չեն կատարել»։ Բացի դրանից կար 1878 Թուի դաշնագիրը (Կիպրոսի), «որով Թիւրքիան պարտաւորուեց բարենորոգումներ մտցնել Հայաստանի մէջ»։ Ցիշատակելով, Թէ ինչ իրաւունքներ և պարտաւորութիւններ է ստանձնել Անգլիան Կիպրոսի դաշնագրով՝ Գլադստոն ասաց.

«Այժմ Թոյլ տուէք ինձ յիշեցնել ձեզ, որ այդ դաշնագիրները, տալով մեզ իրաւունքներ՝ դրա հետ դնում են մեզ վրայ և պարտաւորութիւններ։ Երբ Թիւրք կառավարութիւնից վստահութիւն և խոստում էք առնում, Թէ զեղծումները պիտի վերացուեն և քաղաքական ու կրօնական ազատութիւն պիտի հաստատէ նա, և երբ այդ խոստումները չեն կատարում՝ պարտաւոր էք նրանց գործադրութիւնը ապահովելու համար ազդարարել, որ յարգուեն այդ խոստումները, եԹէ ոչ՝ հակառակ դի-

պուածում դուք գործ կը դնէք ձեր սեփական իրաւունքները»։

Վերջացնելով իր խօսքը՝ Գլադստօն երեք առաջարկութիւն արաւ։

«Առաջին առաջարկութիւնը այս է. պէտք է չափաւորէք ձեր պահանջները։ Դուք պիտի պահանջէք այն՝ ինչ որ անհրաժեշտ պէտք է և կարելի եղածին չափ յարմարւում է մեզանից առաջ եղած առաջարկութիւններին։ Չեմ վարանի ասելու, տիկիններ և պարոններ, թէ այս հարցը լուծելու ամենալաւ և ամենապարզ կերպը կը լինէր ասել Թիւրքերին, որ Հայաստանից դուրս գընան։ Նրանք իրաւունք չունին այնտեղ մնալու։ Բայց չէ կարելի հաւատացած լինել, թէ Եւրոպան կամ նոյն-իսկ երեք պետութիւնները համաձայնէին այսպիսի լուծում տալ ու ներկայ բարդութիւններին։ Ուստի ամեն ինչ մի կողմ թողնենք, բացի անպայման անհրաժեշտ բաներից։ Այժմ ես անցնում եմ երկու միւս առաջարկութիւններին, որոնցից առաջինն այն է, որ դուք չը պիտի ընդունէք Թիւրքական խոստումները. դրանք ոչ մի արժէք չունին. դրանք, բացի անարժէք լինելուց այն վատութիւնն էլ ունին, որ կարող են խաբել անտեղեակ կամ անփորձ մարդկանցից շատերին, որոնք ենթադրում են, թէ երբ խոստում կայ՝ նշանակում է որ խոստումը կատարելու դիտաւորութեան պէս մի բան էլ կայ։ Իմացէք,

որ ոչ մի ծրագիր արժանի չէ ուշադրութեան՝ եթէ հիմնուած չէ Թիւրք կառավարութեան խոստումներից որևէ կախում չունեցող երաշխաւորութիւնների վրայ։ Միւս առաջարկութիւնը, որ ես պիտի անեմ՝ հետևեալն է. չը վախէք, եթէ կը լսէք թէ այս հարցը քննելիս գործ կածուի մի խօսք, որը անհատարակ պիտի արտաքսուի դիւանագիտական յարաբերութիւններից. այդ խօսքն է—ճնշում։ Դրան շատ լաւ են հասկանում Կ. Պոլսում և մեծ նշանակութիւն են տալիս։ Դա մի ազդու դեղ է, որ միշտ հասցնում է նպատակին, երբ գործադրւում է Թիւրքաց գործերի վերաբերմամբ։ Պարոններ, այս խօսքը ես չէի գործ ածի՝ եթէ անձամբ այդ բանի մէջ մեծ փորձ չունենայի։ Ես ասում եմ. ամենից առաջ դուք պիտի համոզուէք ձեր գործի ճշմարտութեան մէջ և այն ժամանակ վճռէք, որ ձեր նպատակը պիտի իրագործուի։ Այստեղ պէտք է դիմել և քերականութեան։ Մի մոռանաք, որ «պիտի» խօսքը Կ. Պոլսում ոչ մի նշանակութիւն և ոյժ չունի, իսկ «պարտաւոր է» խօսքը այնտեղ շատ գեղեցիկ կերպով են հասկանում։ Եւրոպայի քարտէզը կանպացուցանէ այն փորձը, որ այդ խօսքի ժամանակին գործ ածելը առանց հետևանքի չէ մնում»։

«Այո, սա սոսկալի պատմութիւն է—այսպէս վերջացրեց Գլադստոն.—և ես քիչ ժամանակ չը գործադրեցի, որ տամ ձեզ այդ պատմութեան նոյն-

ֆակ մի աննշան մասը. բայց ես յոյս ունիմ, որ դուք, լսելով թէ ինչ վճիռ է առաջարկւում այս միտինգի համար՝ կը համաձայնուէք որ այդ վճիռը անհերքելի հաստատութիւններ ունի։ Եթէ ձեր մէջ կենդանի է մարդասիրութեան նոյն-իսկ թոյլ զգացմունք, եթէ մեզ համար թանգ է մեր արժանապատուութիւնը, ուրեմն այն միջոցներից յետոյ, որ ձեռք են առնուել վերջին 12 կամ 18 ամիսների ընթացքում՝ մենք պիտի միջամտենք։ Մենք պիտի դնենք մեր պահանջները անպայման արդար և անհրաժեշտ չափերի մէջ, բայց պիտի վըճռենք, որ այդ արդարացի ու անհրաժեշտ պահանջները պէտք է կատարուեն։

Արևելեան քրիստոնեաների բարօրութեան համար սկսած այս երկրորդ մեծ արշաւանքի ժամանակ Գլադստօն այլևս հարկադրուած չէր մաքառել անգլիական կառավարութեան բռնած ուղղութեան դէմ։ Այժմ փոփոխուել էին հանգամանքները. այժմ Անգլիան թիւրքամոլութիւնը չէր համարում քաղաքական իմաստութիւն։ Մենք տեսանք, թէ ինչպէս Բիկօնսֆիլդ և մարկիզ Սօլսբիւրի պարծենում էին Բերլինի վեհաժողովում իրանց տարած յաղթութիւններով և ինչպէս Գլադստօն բողոքում էր Բերլինի դաշնագրի դէմ։ Անցաւ մի քանի տարի, և ինքը, Սօլսբիւրի, զգաց թէ որքան սխալ էր անգլիական քաղաքականութիւնը 1878 թուին։ Բիկօնսֆիլգ պարծենում էր,

որ Բօլգարիայի մի խոշոր մասը (Արևելեան Ռումելիա) վերադարձրած է Թիւրքիային։ Բայց նրա յաջորդը, Սօլսբիւրի, 1885 թուին ինքն էր խրախուսում բօլգարներին յեղափոխութիւն կատարել և միացնել Արևելեան Ռումելիան Բօլգարիայի հետ։ Երբ սեպտեմբերի 6-ին տեղի ունեցաւ յեղափոխութիւնը, և Ռուսաստանը պահանջեց, որ Բալկանեան թերակղզում վերահաստատուի իրերի նախկին դրութիւնը, այսինքն Ռումելիան նորից վերադարձնուի Թիւրքիային՝ Անգլիան բողոքեց այդ պահանջի դէմ։ Կարո՞ղ էր լօրդ Բիկօնսֆիլդ ենթադրել, թէ իր մահուանից չորս տարի յետոյ իր աշխատակիցը պիտի ոտի տակ տայ Բերլինի դաշնագիրը, որի համար նա այնքան ճիգ էր թափել։ Կարո՞ղ էր նա կարծել, թէ․ դերերը այդպէս շուտ կը փոխուեն։

Զեստէրի միտինգի ժամանակ առաջին մինիստր էր մարկիզ Սօլսբիւրի։ Արևելեան հարցի վերաբերմամբ պահպանողականների պարագլուխը այժմ մի դիրք էր բռնել՝ որ կատարելապէս հակառակ էր լօրդ Բիկօնսֆիլդի քաղաքականութեան։ Աշնանը, իր արտասանած մի ճառի մէջ, Անգլիայի առաջին մինիստրը մի շարք սպառնալիքներ կարդաց Թիւրքիայի հասցէին։ Անգլիան քաւում էր իր մեղքերը․ Ղրիմի պատերազմը, Բիկօնսֆիլդի թիւրքամոլութիւնը մի-մի յանցանքներ էին հրատարակւում. օր օրի վրայ աւելանում

էին ձայներ, որոնք պահանջում էին ձեռք վերցնել Ռուսաստանի դէմ վարած թշնամական քաղաքականութիւնից։ Մարկիզ Սօլսբիւրի եռանդով բանակցութիւններ էր վարում եւրոպական պետութիւնների հետ՝ Թիւրքիայի դէմ խիստ միջոցներ ձեռք առնելու համար։ Բայց այլեւս ուշ էր։ Այն, ինչ 1878 թուին կարելի էր իրագործել առանց դժուարութեան՝ այժմ անհնարին էր դարձել, և լօրդ Սօլսբիւրի, որ Կիպրոսի դաշնագիրը հեղինակելով փակել էր քրիստոնեաների ազատութեան ճանապարհները՝ այժմ կապկապուած էր իր սեփական ստեղծագործութեան ցանցերի մէջ։ Թիւրքիան նրա մեծադղորդ ճառերին պատասխանեց կոտորածների մի երկար շարքով։ Եւրոպան կարծես բթացել էր այդ սարսափներից։ Գլադստօն անդադար աշխատում էր, գրում էր բազմաթիւ նամակներ, յօդուածներ էր տպում, խօսում էր թղթակիցների հետ, բողոքում էր։ Անգլիական կառավարութիւնը կատարելապէս յաղթահարուած էր Եւրոպայի դիմադրութիւնից. նա մենակ էր մնացել, և լօրդ Սօլսբիւրի սկսեց խնամքով նահանջման ճանապարհներ պատրաստել։ Իր ճառերի մէջ նա այժմ սկսեց մեղմացնել իր նախկին յարձակումները Թիւրքիայի դէմ, ասելով որ Անգլիան երբէք պարտաւորութիւններ չէ յանձն առել միայնակ գործելու հայերի օգտին, որ անգլիական նաւերը չեն կարող բարձրանալ Փոքր Ասիայի

սարերի վրայ։ Կամաց-կամաց անգլիական առիւծը լռեց, ցած ընկաւ չորս թաթերի վրայ։

Այդպէս էր դրութիւնը, երբ 1896 թուի օգոստոսի վերջում տեղի ունեցաւ Կ. Պոլսի ահռելի կոտորածը, որին զոհ գնացին 8000 հայեր և որի պատասխանատուութիւնը ամբողջապէս ընկնում էր Թիւրք կառավարութեան վրայ, ինչպէս վկայեցին մեծ պետութիւնների բոլոր դեսպանները Բ. Դռան ներկայացրած յիշատակագրի մէջ։ Այս բարբարոսութիւնը յուզմունք և զայրոյթ տարածեց ամբողջ Անգլիայում. հարիւրաւոր միտինգներ կազմուեցան, որոնք բողոք բարձրացրին և հատուցում պահանջեցին։ Մարկիզ Սօլսբիւրի դարձեալ կրկնեց, որ Անգլիան մենակ ոչինչ չէ կարող անել և եթէ միջամտէ՝ ամբողջ Եւրոպան պատերազմ կը սկսէ նրա դէմ։ Սեպտեմբերի 12-ին մի բազմամարդ միտինգ կայացաւ Լիվըրպուլ քաղաքում։ Գլադստօն յանձն էր առել ճառ խօսել, և այդ պատճառով Անգլիայի բոլոր կողմերից մարդիկ շտապում էին Լիվըրպուլ։ Քաղաքը անհամբեր սպասում էր հռչակաւոր ծերունու գալստեան. պատերին կպցրած էին պատկերներ, որոնց վրայ Գլադստօն ներկայացրուած էր ս. Գէորգի նման, որ կռիւ է անում Թիւրքական հրէշի դէմ։

Ծայրէ ծայր լցուած դահլիճում Գլադստօն վերջին անգամ դուրս եկաւ անգլիացիների առաջ։ Լիվըրպուլի ճառը հռչակաւոր ծերունու վերջին

Հրապարակական խօսքն էր, և այդ խօսքը հնչում էր Թշուառների պաշտպանութեան համար։ Թիւրքաց սուլթանին նա արդէն անուանել էր «մեծ մարդասպան»։ Կ. Պոլսի արիւնահեղութիւնը այնքան ցնցել էր նրան, որ չը բաւականանալով բողոքով ու անէծքով՝ նա առաջարկեց անգլիացիներին դիմել խիստ միջոցների։ Ամենից առաջ նա հերքեց այն կարծիքը, թէ Անգլիայի միջամտութիւնը եւրոպական պատերազմ կը յարուցանէ։

«Ես ասում եմ, որ անխոհեմութիւն կը լինէր անել մի այնպիսի բան, որ եւրոպական պատերազմի դուռ բաց անէր. բայց ես բոլորովին չեմ ընդունում, որ սա նշանակում է, թէ Անգլիան ամեն պարագաների մէջ պարտաւոր է հրաժարուել իր պարտաւորութիւնների ու լիազօրութիւնների վերաբերմամբ վերջնական վճիռ կայացնելու իրաւունքից ու գնալ միւս եւրոպական պետութիւնների կամ նրանցից մի քանիսի կառքի ետևից, այն պետութիւնների, որոնք, գուցէ, ուրիշ հայեացքներ ունին և որոնք այժմեան ժամանակ միանգամայն համամիտ չեն մեզ հետ այս գործում։ Ինչ վերաբերում է պատերազմի գաղափարին՝ ամենամեծ մոլորութիւնը կը լինէր հաստատել, թէ հէնց այդ վախի պատճառով այս մեծ երկիրը չը պէտք է անկախ գործէ։ Մենք պիտի խաղանք մեր դերը ուրիշներից անկախ։ Մենք յաճախ ենք այդպէս արել մեր սեփական շահերի

համար։ Այժմ տեսնենք թէ ինչ պարտաւորութիւններ կան մեզ վրայ, որովհետև, համաձայն լինելով որ մեզ համար վերին աստիճանի կարևոր բան է աշխատել բոլոր միջոցներով, որ միւս պետութիւնների հետ համաձայն լինինք և նրանց էլ քաշենք մեր ետևից՝ ես չեմ կարծում որ գրաւել նրանց մեր կողմը կարելի կը լինի սարկօրէն հըպատակուելով այն մտքին, թէ նրանց խիղճը մեր խղճի չափը պէտք է համարել։

Գլադստօն ոչինչ վտանգ չէր գտնում այն հանգամանքի մէջ, որ Անգլիան մենակ կը միջամտէ։ Նա առաջարկում էր միանգամայն ապահով գործողութեան միջոց։ Դա այն կը լինէր, եթէ Անգլիան հանդիսաւոր կերպով խոստում կը տար, թէ ինքը որևէ շահ չի ստանայ իր համար այդ միջամտութեան ժամանակ։ Անշահասէր քաղաքականութիւն, հիմնուած լոկ գաղափարի վրայ, լոկ քրիստոնէական մարդասիրութեան վրայ—ահա ինչ էր առաջարկում մեծ ծերունին իր վերջին ճառի մէջ։ Նա ասում էր, որ այդ դէպքում եւրոպական ոչ մի պետութիւն, որ հասկանում է իր պատիւը, չի ընդդիմանայ Անգլիային։ Գործողութեան ծրագիրը այսպէս կարելի էր կազմել. Անգլիան հրամայում է Թիւրքիային անյապաղ իրագործել տուած խոստումները, և եթէ այդ հրամանը այս անգամ էլ չը կատարուի՝ պէտք է յետ կանչել անգլիական դեսպանին Կ. Պոլսից և միևնոյն ժամանակ

հրաժարական տալ Լօնդօնի Թիւրքաց դեսպանին։ Այդ քայլը կապացուցանէր գոնէ այն, որ Անգլիան քարեհաճութիւն չունի դէպի Թիւրքիան և պատասխանատու չէ այնտեղ կատարուող անօրէն ոճրագործութիւնների համար։

«Ես չեմ կարծում, որ Եւրոպան կամ Եւրոպայի որևէ մասը սկսէր պատերազմ՝ Թիւրքաց կոտորածը չարունակել տալու համար. բայց եթէ կոտորածը չի չարունակուի և եթէ երաշխաւորութիւն կը տան, թէ նա դադարեցրած կը լինի— մենք ուրիշ բան չենք էլ ցանկանում։ Բայց երաշխաւորութիւնը պէտք է լինի հաստատ, իրական և ոչ թէ ցնորական. նա չը պիտի սահմանափակուի թղթի վրայ արած խոստումներ պահանջելով, որոնցով մենք բաւականացել ենք չափազանց յաճախ և չափազանց երկար ժամանակ»։

Սակայն ոչ Լիվըրպուլի միտինգը, որ ընդունեց մեծ ծերունու առաջարկութիւնը, ոչ նրա նըման անթիւ միւս ժողովները ոչ մի հետևանք չունեցան։ Լօրդ Սօլսբիւրի մնաց խուլ ու անշարժ և դրանով խոստովանեց, որ Անգլիան անզօր է որևէ բան անելու։ Ոչ միայն նա էր, որ անտես արաւ Գլադստօնի առաջարկութիւնը. Լիվըրպուլի ճառը հերձուած առաջացրեց նոյն-իսկ ազատամիտների մէջ։ Լօրդ Րօզըբէրրի հրաժարուեց ազատամիտ կուսակցութեան պարագլխի պաշտօնից, ասելով որ ինքը համաձայն չէ Գլադստօնի հետ։ Այդ միտքը

Նա արծարծեց Էդինբուրգում արտասանած մի ճառի մէջ. Նա պահանջում էր, որ Անգլիան ոչ մի ինքնագլուխ քայլ չանէ, այլ գործէ եւրոպական պետութիւնների հետ միասին։ Ազատամիտ կուսակցութիւնը այդ տարաձայնութեան պատճառով քայքայման վիճակին հասաւ։ Նա թուլացել էր, չունէր համարձակ, անվախ առաջնորդ, որ տանէր նրան դէպի կռիւ և յաղթութիւններ։

Նրա հռչակաւոր առաջնորդը քաշուել էր Հօվարդէն, ընկճուած ծերութիւնից։ Լռեց մեծ մարդասէրի ձայնը, անգլիական ազգը այլևս չը լսեց նրա դառն յանդիմանութիւնները, որոնք կեանքի առօրեայ քաոսի, իրարանցման մէջ յիշեցնում էին բարձրագոյն, վեհ գաղափարները, քրիստոնեայի և քաղաքակրթուած մարդու պարտաւորութիւնները։ Լիվըրպուլի ճառից հազիւ մի տարի անցած՝ Հօվարդէնի ամրոցից սկսեցին լուրեր տարածուել, թէ մեծ մարդու կեանքը մօտենում է իր վախճանին։ Ջուր էր օդափոխութեան համար Կանն գնալը. ո՛չ կլիման, ոչ բժշկական արուեստը չէին կարող դիմադրել բնութեան անողոք պահանջին։ Նորից վերադառնալով իր սիրած բոյնը՝ Գլադստօն սկսեց կամաց-կամաց հալուել։

Հոգեվարքը երկարատև էր։ Անգլիան շընչասպառ, խորին ակնածութեամբ նայում էր Հօվարդէնին։ «Զարմանալի կերպով է մեռնում Գլադստօն, գրում էր ռուսաց մի լրագրի թղթակից։—

Դա մի մեծ նուագածութեան վերջին ձայնն է, որ անհետանում է տարածութեան մէջ։ Այսպէս էր մեռնում Սօկրատը... Գլադստօն իսկապէս չէ մեռնում, այլ, կարծես, հեռանում է կեանքից, գնալով մի ուրիշ, աւելի լաւ աշխարհ։ Նիւթական կեղևը, կարծես, պոկուել է նրանից։ Ֆիզիքական ամբողջ աշխարհը, կարծես, այլևս գոյութիւն չունի նրա համար, և արագ մօտեցող մահուան նա նայում է հանգստութեամբ, նոյն-իսկ ուրախութեամբ, երբեմն յայտնելով ցանկութիւն շուտ բաժանուել իր անցաւոր մարմնից։ Վերջին շաբաթներում նըրան այցելում են շատերը, և դրանցից մէկը գըրում է. «Ես ստացայ հրաժեշտի օրհնութիւնը։ Աւելի հանդիստ և գեղեցիկ բան երևակայել չէ կարելի։ Ես զգում եմ, որ կարծես թէ եղել եմ այլակերպութեան սարի վրայ»։ Եւ ժողովուրդը այժմ ուշի ուշով ականջ է դնում այն ամենին՝ ինչ տեղի ունի Ուէլսի հիւսիսային սահմանների վրայ ընկած գեղեցիկ բլուրների մէջ, Հօվարդէն ամրոցում։ Ամբողջ երկրին տիրել է մի սրբազան հանդարտութիւն. կեանքի զարկը ճնշուած է, առժամանակ կանգ առած. կարծես ամենքը ման են գալիս տների մատների վրայ»։

Մահը վրայ հասաւ 1898 թուի մայիսի 7-ին, հինգշաբթի օր, առաւօտեան ժամի հինգին։ Տիկին Գլադստօն չէր հեռանում իր հռչակաւոր ամուսնու կողքից և բռնած էր նրա ձեռքը։ Մահուան ժա-

մին ներկայ էին Գլադստոնի որդիները—Հերբէրտ, Հէնրի և Ստէֆըն, նոյնպէս և երեք աղջիկները—տիկիններ Դրու և Ուիքիմ և օրիորդ Հէլէն Գլադստոն։ Գլադստոնի արտասանած վերջին խօսքն էր «Ամէն»։ Դրանից առաջ նա մի քանի անգամ արտասանել էր. «Բարութիւն, բարութիւն, բարութիւն, միշտ բարութիւն»։

Հէնց որ տխուր լուրը տարածուեց ամեն կողմ՝ սկսուեցան վշտակցութեան, համակրութեան ցոյցերը։ Գլադստոնի ընտանիքի ցանկութիւնն էր ամփոփել նրա մարմինը Հօվարդէնում։ Բայց անգլիական ազգը այնքան ապերախտ չէր, որ իր մեծ մարդուն չանէր ամենամեծ պատիւը։ Պարլամենտը ընդհատեց իր նիստը ի նշան սգի. դրօշակները կիսով չափ իջեցրին, թագուհու պալատում նշանակուած բոլոր հանդէսները, ինչպէս նաև հասարակական ճաշկերոյթները, ճառախօսութիւնները յետաձգուեցան։ Վճռուած էր Գլադստոնին թաղել պետութեան հաշուով Ուէստմինստրի աբբայութեան մէջ, այնտեղ, ուր հանգչում են Անգլիայի նշանաւոր գործիչները։ Այս առաջարկութիւնը Սօլսբիւրիի մինիստրութեան կողմից մտցրուեց պարլամենտ։ Համայնքների ժողովում առաջարկողն էր Բալֆուր. յուզուած, դողդոջուն ձայնով նա մի ճառ ասաց։ Պահպանողական մինիստրը, որ իր պարտքն էր համարել մաքառել մեծ ծերունու ծրագիրների դէմ՝ այժմ նոյնպիսի պարտք էր համարում

անկեղծ սրտով դրուատել իր հռչակաւոր հակառակորդին։ Կարելի է քաղաքական հակառակորդ լինել, կարելի է չը հաւանել հակառակորդի մտքերին, վնասակար համարել և կռուել նրանց դէմ. բայց անկարելի է ուրանալ հակառակորդի մեծութիւնը, նրա մատուցած ծառայութիւնները և կատարած գործերը։ «Այստեղ ամեն մարդ զգում է, որ Գլադստոնի ասպարէզը հիմա պատմութեան է պատկանում,—ասաց Բալֆուր.—ամեն մարդ այս պահուն հեշտ պիտի մոռանայ այն կողմերը, որոնք կարող են հակաճառութեան նիւթ տալ Գլադստոնի գործունէութեան վերաբերմամբ։ Այս դարը չը պիտի տեսնէ մի ուրիշ Գլադստոն,—մի քաղաքագէտ, որ նրանից աւել կամ նոյն-իսկ նրա չափ բարձրացնէ մեր այս ժողովի խորհրդակցութիւնների արժանապատւութիւնը և հեղինակութիւնը։ Նա համայնքների ժողովը մեծացրեց հասարակաց կարծիքի աչքի առաջ, և գուցէ այս է նրա արած ծառայութիւնների մէջ ամենից անգնահատելին»։

Ապա Բալֆուր կարդաց այն ուղերձը, որ պիտի մատուցուէր թագուհուն պարլամենտի կողմից և որի մէջ անգլիական ազգի ներկայացուցիչները խնդրում էին, որ «Նորին մեծութիւնը ամենաողորմածաբար բարեհաճէ անել անհրաժեշտ կարգադրութիւններ՝ որ Ուիլլիամ Էվարտ Գլադստոն թաղուի պետական հաշուով և նրա համար արձանգրուի Ուէստմինստրի ս. Պետրոս եկեղեցում»։ Ա-

զատամիտների կողմից խօսեց սըր Ուիլիամ Հարկորտ, Գլադստոնի անփոփոխ բարեկամը և աշխատակիցը երկար տարիների ընթացքում։ Նա ասաց. «Ես այստեղ կանգնած եմ Գլադստոնի քաղաքական հակառակորդների մէջ, որոնք մեծամասնութիւն են կազմում, բայց որոնք մեծահոգութեամբ արժանի յարգանք են մատուցանում նրա յիշատակին։ Դուք ինձանից և մի հատ խօսք չէք լսի՝ որ կարողանար դիպչել այդ հակառակորդներին. բայց ես չեմ կարող չը յիշատակել հանգուցեալի այն յատկութիւնները, որոնք ընդհանուր սէր և յարգանք էին առաջացնում։ Գլադստոն գործում էր՝ անյողդողդ և անկեղծ հաւատ ունենալով դէպի այն ամենը, ինչ նա օգտակար էր համարում իր հայրենիքի համար»։ Յուզուած, փղձկած Հարկորտ չը կարողացաւ շարունակել իր ճառը, գովել «այն մեծ մարդուն, որ իր կենդանութեան ժամանակ մերժեց բոլոր պատիւները և որին ազգը պարտաւոր է պատուել այժմ, մեռնելուց յետոյ, իր սքանչացման ամենաբարձր նշանը շնորհելով նրան»։

Համայնքների ժողովը, որ ծայրէ ծայր լիքն էր պատգամաւորներով և բազմաթիւ հանդիսականներով՝ խորին լռութեան մէջ, առանց վիճաբանութիւնների, միաձայն ընդունեց Բալֆուրի առաջարկը։ Միևնոյն կերպով վերաբերուեց դէպի հանգուցեալի յիշատակը և լորդերի պալատը։ Այդտեղ ուղերձի առաջարկութիւնն արաւ ինքն լորդ

Սօլսբիւրի։ Պահպանողականների առաջնորդը մի հիանալի ճառ արտասանեց յուզուած ձայնով և վերին աստիճանի վեհ տպաւորութիւն թողեց ունկնդիրների վրայ։ Նա գովաբանեց Գլադստոնի բարոյական բարձրութիւնը և նրա գործունէութեան մեծութիւնը. դրուատեց այն հրաշալի օրինակը, որ թողնում էր մի անարատ կեանք, որ միշտ առաջնորդւում էր անշահախնդիր և ազնիւ շարժառիթներից և ձգտում էր դէպի բարոյական գիտակցութեան բարձր իդէալը. դա մի մեծ մարդու և մեծ քրիստոնէի կեանք էր։ Լորդերի ժողովն էլ միաձայն, առանց հակաճառութիւնների, ընդունեց Սօլսբիւրիի առաջարկութիւնը։

Այսպիսի միահամուռ վճիռ պարլամենտը դեռ չէր կայացրել անգլիական ոչ մի պետական մարդու թաղման մասին։ Գլադստոնի ընտանիքը, որքան էլ կամենար Հօվարդէնում ամփոփել թանգագին նշխարները՝ չընդդիմացաւ ազգի միաբան ցանկութեան, և համաձայնութիւն տուեց, որ դիակը փոխադրուի Լօնդօն, բայց միևնոյն ժամանակ խնդրեց յարգել հանգուցեալի վերջին կամքը, այն է՝ որ թաղումը լինի համեստ և ծաղիկներ չը դրուեն դագաղի վրայ։

Գլադստոնի մահուան լուրը տարածուելուն պէս՝ աշխարհի բոլոր կողմերից հեռագիրներ թափուեցան, որոնք վկայում էին, թէ ինչ ցաւ է պատճառել մեծ մարդասէրի կորուստը ամեն տեղ։ Ա-

մենից առաջ Վիկտորիա Թագուհին մի յատուկ սուրհանդակի ձեռքով հետևեալ նամակն ուղարկեց օրիորդ Հելէն Գլադստոնին.

«Վինձօր, կէս գիշեր 35։—Վշտագին լուրը առնելով՝ խորապէս տրտմած եմ։ Բէատրիչ և ես փափագում ենք մեր ջերմագին ցաւակցութիւնը յայտնել ձեր սիրելի մօր և բոլոր ձերայիններին։ Վիկտորիա»։

Դրսից եկած ցաւակցական հեռագիրների մէջ ամենից սրտագինը Թագաւոր-Կայսր Նիկոլայ Բ-ի հեռագիրն էր, ուղղած տիկին Գլադստոնին։ Ահա այդ հեռագիրը.

«Այս րոպէին ստացայ Գլադստոնի մահուան ցաւալի լուրը, և Իմ պարտքն եմ համարում արտայայտել ձեզ Իմ ամենաանկեղծ ցաւակցութիւնը ձեր կրած անփոխարինելի կորստի համար, ինչպէս և խորին ափսոսանքս՝ տխրալի դէպքի առիթով։ Ամբողջ քաղաքակիրթ մարդկութիւնը պէտք է ողբայ պետական այդ մեծ գործիչի կորուստը, որի քաղաքական հայեացքները այնքան լայն, այնքան մարդասէր, այնքան խաղաղասէր էին։ ՆԻԿՕԼԱՅ»։

Ֆրանսիական հանրապետութեան նախագահը հեռագրեց. «Ես իմացայ ձեր կրած մեծ կորուստը, և կամենում եմ ձեր վշտին միացողների մէջ առաջիններից մէկը լինել։ Միստըր Գլադստոն ազատութեան մասին ունեցած իր վեհ հասկացողութեամբ և իր քաղաքական իդէալի ազնուութեամբ՝

ամենամեծ ծառայութիւններ է մատուցել իր հայ-
րենիքին և մարդկութեան»։ Ամերիկայի Միացեալ
Նահանգների նախագահ Մակ-Կինլէյ ուղարկեց
հետևեալ հեռագիրը. «Յայտնում եմ ձեզ ամերիկա-
կան ժողովրդի համակրութիւնը և վիշտը այն կո-
րստի համար, որ ունեցաք ի դէմս այն անձի, որ
ժամանակակից պետական նաւի ամենանշանաւոր
ղեկավարներից մէկն է հանդիսանում»։ Բելգիական
Թագաւորի հեռագիրը. «Թագուհին և ես ցանկա-
նում ենք յայտնել ձեզ, թէ որքան վշտացանք,
լսելով միստր Գլադստոնի մահուան լուրը։ Մենք
գիտենք այն զգացումները, որ տածում էր հռչա-
կաւոր հանգուցեալը դէպի բելգիական ազգը, և այն
համակրութիւնը, որ նա միշտ ցոյց էր տալիս։
Դուք կասկած չէք ունենալ, թէ որքան խոր կեր-
պով սգում ենք ձեր մեծ կորուստը և մասնակցում
ենք ձեր ընտանիքի դժբախտութեան։ Լէօպօլ՚դ»։
Յունաց Թագաւորի հեռագիրը. «Հասնելով այսօր
այստեղ (Պատրոս կղզին) ես լսեցի պատկառելի
միստր Գլադստոնի մահուան ողբալի լուրը. հա-
ճեցէք ընդունել իմ խորին համակրութեան ար-
տայայտութիւնը դէպի ձեր մեծ վիշտը։ Յունաս-
տանը յաւիտեան պիտի յիշէ անկեղծ երախտագի-
տութեամբ այն մեծ պետական մարդուն, որի հը-
զօր ձայնը այնքան յաճախ պաշտպանում էր ազ-
գերի ձգտումները։ Նրա յիշատակը յաւիտեան թան-
գագին պէտք է մնայ Յունաստանի համար։ Թող

Աստուած օգնէ ձեզ ձեր մեծ ցաւի մէջ»։ Չերնոգորիայի իշխանի հեռագիրը. «Ինձ սաստիկ խոցեց Անգլիայի մեծագոյն և ազնուագոյն պետական անձերից մէկի մահուան տխուր՝ բայց ոչ անսպասելի լուրը։ Ձեր լուսամիտ ամուսնու մահով Չերնոգորիան կորցրեց մի ճշմարիտ, ուժեղ և համակրող բարեկամի, որի անունը դրոշմուած է չերնոգորցիների սրտում։ Տէրը օգնէ ձեզ ձեր վշտերի մէջ»։

Հեռագիրներ ուղարկեցին նաև Գերմանիայի Վիլհել՛մ կայսրը, այրի Թագուհի Վիկտորիա (Վիլհել՛մի մայրը), Տրանսվաալի հանրապետութեան նախագահը։

Բացի վեհապետներից, համաշխարհային ցաւակցութեան մասնակցեցին և զանազան երկիրների կառավարութիւնները, դեսպանները, այլև ժողովրդական ներկայացուցիչները։

Լոնդոնի ռուսաց դեսպան Ստաալ՝ երկու հեռագիր ուղարկեց, մէկը իր կողմից, միւսը ռուսաց արտաքին գործերի մինիստր կոմս Մուրավեօվի կողմից։ Իտալական Սենատը հեռագրեց. «Ձեր հռչակաւոր ամուսնու մահը պիտի ողբայ ամբողջ քաղաքակիրթ աշխարհը։ Իտալիան երբէք չը պիտի մոռանայ ազատութեան դատին նրա մատուցած մեծ և իրական աջակցութիւնը և նրա մղած պատերազմը բռնապետութեան, հարստահարութեան և աստուածուրացութեան դէմ։ Մեր անկեղծ ցաւակցութիւնը ձեր ընտանիքին և բրիտանական

ազնիւ ազգին։ Ֆրանսիական կառավարութեան
հեռագիրը. «Ֆրանսիական ամբողջ կառավարու-
թիւնը յանձնարարեց ինձ ներկայացնել ձեզ և ձեր
բարեկամներին իր համակրութեան, սքանչացման
և յարգանքի արտայայտութիւնը՝ որով նա վերա-
բերում է նշանաւոր հանգուցեալի յիշատակին»։
Սպանիական առաջին մինիստր Սագաստա հեռա-
գրեց. «Առաջին մինիստրը իր անունից և սպա-
նիական կաբինէտի միւս անդամների անունից յայ-
տնում է խորին վիշտ սքանչելի Գլադստոնի կո-
րուստի առիթով, Գլադստոնի, որ ժամանակակից
քաղաքացիների մէջ առաջինն էր, որի քաղաքա-
կան լայն գաղափարները և մարդասիրական ջան-
քերը ձգտում էին դարձնել արդարութիւնը և ան-
ձնուիրութիւնը կառավարիչ օրէնք»։ Ռումինիայի
ազգային ժողովի հեռագիրը. «Պատգամաւորների
ժողովը, տեղեկանալով Անգլիայի պետական մեծ
մարդու, Գլադստոնի, մահուան մասին, այն մար-
դու, որ միշտ պաշտպան էր Ռումինիայի իրա-
ւունքներին և ստացել էր Ռումինիայի քաղաքա-
ցու տիտղոսը՝ յարգանքով դիմելով ձեզ, խնդրում
է ընդունել վշտի և ցաւակցութեան ջերմագին ար-
տայայտութիւնները»։ Յօնիական կղզիների ազգա-
բնակութեան կողմից ուղարկուած է հետևեալ հե-
ռագիրը. «Արգօստօլիի խորհուրդը ինձ յանձնարա-
րել է յայտնել խորին ցաւակցութեան զգացմունք
Գլադստոնի մահուան առիթով։ Այն համակրու-

թիւնը, որ ցոյց տուեց պետական նշանաւոր մարդը Յօնիական կղզիների միացման խնդրում՝ ամրապնդել են առ միշտ յաւիտենական շնորհակալութեան զգացմունք իմ համաքաղաքացիների մէջ։ —Քաղաքագլուխ Լիւկատօ»։ Բօլգարական կառավարութիւնը հեռագրեց. «Բօլգարական իշխանութեան կառավարութիւնը ուղարկում է ձեզ իր վշտակցութեան արտայայտութիւնը մեծ մարդասէրի և Բօլգարիայի բարեկամի կորստի համար։—Նախագահ Ստոյիլօվ»։ Կրետէի ազգաբնակութեան կողմից. «Այն ազգերի և երկիրների ահագին շարքում, որոնք այսօր ողբում են ձեզ հետ՝ խնդրում եմ դնել և Կրետէի անունը։ Մենք ողբում ենք միստըր Գլադստօնի մահը՝ իբրև մարդկութեան անդամներ, իբրև հելլէն ցեղի մի մասը, որի ազատութեան համար նա աշխատում էր»։ Մակեդօնական յանձնաժողովի հեռագիրը. «Մենք, քրիստոնեայ Մակեդօնիայի զաւակներս, մասնակցում ենք անգլիական ազգի ընդհանուր ողբին, այն ազգի, որ յարգանքով ու սքանչացումով պիտի աւանդէ սերնդից սերունդ հանգուցեալ մեծ պետական մարդու, Ուիլիամ Գլադստօնի, հարստահարուածների պաշտպանի, մարդկութեան պաշտպանի անունը»։

Նօրվեգիայի, Պօրտուգալիայի, Նոր-Զելանդիայի կառավարութիւնները, չինական դեսպանը, Ալբանիայի քրիստոնեաները, Պարիզի հայերը և այլ բազմաթիւ հիմնարկութիւններ, քաղաքական կլուբներ, ընկերակցութիւններ նոյնպէս ցաւակ-

ցական հեռագիրներ ուղարկեցին. համաշխարհային վշտի այդ ցոյցերը անգլիական լրագիրների ամբողջ սիւնակներ են գրաւում։

Գլադստօնի դիակը Հօվարդէնից փոխադրեցին Լօնդօն, Ուէստմինստրեան աբբայութիւնը։ Այնտեղ, այն ահագին դահլիճում, ուր մի ժամանակ կատարւում էր անգլիական թագաւորների թագադրութիւնը՝ սեների և խորհրդաւոր կիսամթութեան մէջ դրած էր մեծ մարդու դագաղը։ Նա հասարակ էր, անպաճոյճ։ Երկու ջահեր լուսաւորում էին մութ դահլիճը, և մի հաստ բրօնզեայ խաչ կար դրած դագաղի գլխատեղի ետեւում. Նրա վրայ մակագրուած էր. «Ուիլիամ Էվարտ Գլադստօն, ծնուեց 1809 թուի դեկտեմբերի 17-ին, վախճանուեց 1898 թուի մայիսի 7-ին»։ Անդադար գալիս էին խումբ-խումբ մարդիկ, որոնք իրանց պարտքն էին համարում երկրպագել հռչակաւոր ծերունու դիակին. և խորին լռութեան մէջ, պահպանելով խիստ կարգապահութիւն՝ բաց գլուխների երկար շարքերը անցնում էին դագաղի մօտով։ Մոռացուել էին դասակարգային խտրութիւնները. հասարակ բանուորը գնում էր առաջնակարգ ազնուականի հետ կողքէ կողք և դուրս գալով շինութիւնից, նրանք միմեանց հաղորդում էին իրանց ստացած տպաւորութիւնները։

Թաղումը տեղի ունեցաւ մայիսի 16-ին։ Տխուր յուղարկաւորութիւնը կատարուեց շատ հա-

մեստ կարգով, ինչպէս կտակել էր հանգուցեալը։ Բացի Էդինբուրգի և Դուբլինի քաղաքապետներից՝ միացած բոլոր հանդիսականները սև հագուստով էին։ Ուէլսի պրինցը, Եօրկի դուքսը, մարկիզ Սօլսբիւրի, Բալֆուր, լորդ Րօզբէրրի, լորդ Կիմբըրլէյ, սըր Հարկորտ կանգնած էին դագաղակիր կառքի անկիւններում և բռնել էին նրա ծոպերը։ Վիկտորիա Թագուհու ներկայացուցիչների ետևից գալիս էր Ռուսաստանի ներկայացուցիչ բարօն Ստաալ’, ապա Իտալիայի, Դանիայի, Շվեդիայի, Բելգիայի թագաւորների և Հօլլանդիայի թագուհու ներկայացուցիչները։ Դագաղի աջ կողմին կանգնած էին լորդերի պալատի անդամները, ձախ կողմին — համայնքների ժողովի անդամները։ Երաժշտութիւնը նուագում էր Բեթհօվէնի և Շուբէրտի թաղման քայլերգը։ Ապա երգուեց լատինական մի օրհներգ, որը հեղինակել էր Գլադստօն։ Ժամասացութիւնը կատարում էին Քէնտրբէրիի արքեպիսկոպոսը և Ուէստմինստրի աբբահայրը։ Ամենքը խորապէս յուզուած էին, և երբ հասաւ հրաժեշտի ժամը՝ շատերը չը կարողացան արտասունքը պահել։ Տաք արտասունք էր թափում մարկիզ Սօլսբիւրի, որը հազիւ էր կարողանում ոտքի վրայ մնալ։ Լաց էին լինում նաև Բալֆուր, Հարկորտ և Րօզբէրրի։ Թէ հակառակորդների և թէ կողմնակիցների վիշտը անկեղծ էր, սրտագին։ Անգլիական ազգը իր մեծ մարդու գերեզմանի առաջ ցոյց էր

տալիս իր հոգու ազնուութիւնը, մեծութիւնը. և խուրաքանչիւր ազգ, որ չը գիտէ պատկառանքով գլուխ իջեցնել իր երախտաւորների առաջ, մոռանալով կուսակցական հաշիւներ, նախանձ ու չարակամութիւն՝ պիտի ասէր, նայելով Գլադստոնի թաղման. «Ո՛րքան նախանձելի և մեծ ազգ է անգլիական ազգը»։ Այդ վեհ տեսարանի մէջ խոր տպաւորութիւն էր թողնում և տիկին Գլադստօն, որ մարմնացնում էր անսահման վիշտ՝ բայց լի քաջութեամբ. նա մի հատ արտասունք էլ չը կաթեցրեց, մեծ ջանքով զսպում էր դժնդակ վշտի զգացումները։ Ուէստմինստրեան աբբայութեան կամարների տակ թագաւորում էր խորին լռութիւն։ Փողոցներում ամենքը սգազգեստ էին, պատուհանները և դռները սևով էին ծածկուած։

Գերեզմանը բացուեց, և նրա մէջ իջաւ մեր ժամանակի վ ե ր ջ ի ն մ ե ծ մ ա ր դ ը։

Ը.

Գլադստոնի անձնաւորութիւնը։—Ժողովրդական Ուիլեամ։—Անեկդոտներ։—Կրօնասիրութիւնը։—Ի՞նչ է ասում ինքը Գլադստոն։

Այժմ մի քանի խօսք ասենք Գլադստոնի մասնաւոր կեանքի մասին, որպէսզի ամբողջացրած լինինք այդ հսկայ անձնաւորութեան նկարագիրը։

Գլադստոնի երկարատև կեանքը ամբողջապէս նուիրուած էր աշխատութեան։ Թէ տանը և թէ պաշտօնի մէջ նա մի րոպէ անգամ զուր չէր կորցնում. գիշերուայ ժամի 11—12-ից առաջ նա չէր քնում, իսկ առաւօտները, ժամի 7—8-ին արդէն ոտքի վրայ էր և պատրաստ։ Երբ լինում էր Հօվարդէնում՝ ամեն օր, առաւօտեան, չը նայած թէ դրսում ինչ տեսակ եղանակ է՝ գնում էր եկեղեցի, ուր նրա որդիներից մէկը քահանայ է։ Կեանքի կանոնաւորութիւնը այն աստիճանին էր հասնում, որ Գլադստոն որոշ ժամերին պարապում էր իր առանձնասենեակում, որոշ ժամերին զբօսնում էր ֆիզիքական աշխատանք էր կատարում. մա-

Նաւանդ շատ էր սիրում նա վերցնել կացինը և
ծառեր կամ ճիւղեր կտրել իր այգում։ Նրա զար-
մանալի աշխատասիրութիւնը, որ այնքան աչքի
ընկնող էր դպրոցում՝ մինչև խորին ծերութիւնը
հրաշքներ էր գործում։ Երբ նա յանձն էր առնում
ֆինանսների մինիստրի պաշտօնը՝ ամեն անգամ
զարմանալի արագութեամբ էր պատրաստում պե-
տական նախահաշիւները, որ վերին աստիճանի
բարդ աշխատութիւն է։ Արագ վերջացնում էր նա
և գրական աշխատութիւնները, որոնք մեծ մա-
սամբ վերաբերւում էին հին կլասիկներին և աստ-
ուածաբանութեան։ Ամեն անգամ, երբ իր գործու-
նէութեան ասպարէզում անաջողութիւնները, խոչ-
ընդոտները կարծես պատրաստ էին կոտրել նրա
հսկայական եռանդը՝ նա դիմում էր Հոմերոսին,
Դանտէին, Շէքսպիրին և նրանց մէջ էր գտնում
ոգեւորութեան անսպառ աղբիւրներ։ Իրլանդական
ինքնավարութեան մասին եղած փոթորկալից վի-
ճաբանութիւնների ժամանակ, Գլադստօն, տեսնե-
լով, որ տանուլ է տալիս իր պաշտպանած դատը՝
դուրս եկաւ դահլիճից և պարլամենտի գրադարա-
նում խորասուզուեց Վալտէր-Սկօտտի ընթերցա-
նութեան մէջ։

Պարտաճանաչութիւնը միշտ նրան ղեկավա-
րող սկզբունքներից գլխաւորն է եղել։ Պատգա-
մաւորների ժողովում նա աւելի երկար էր մնում,
քան շատ երիտասարդ պատգամաւորներ։ Վիճա-

բանութիւնների ժամանակ էլ նա անգործ չէր մընում. մինչդեռ ուրիշները խօսում էին՝ նա մի գիրք էր դնում ծնկների վրայ և նամակներ էր գրում, երբեմն շատ երկար նամակներ։ Բայց դուք կը կարծէք մի որևէ ճառախօս, թէ Գլադստոն իրան չէ լսում. հէնց որ խօսողը ծուռ վկայութիւն էր բերում նրա խօսքերից կամ աղաւաղում էր նրա միտքը՝ Գլադստոնը բացասական շարժումներ էր գործում գլխով և ակնոցի միջով հարցական հայեացք էր գցում խօսողի վրայ։ Երբեմն նա այնքան էր ինքն իրան մոռանում վիճաբանութիւնների մէջ, որ տիկին Գլադստոն հարկադրուած էր լինում տանել նրան պարլամենտից տուն և յիշեցնել, որ պէտք է քիչ էլ հանգստութեան մասին մտածել։ Տիկին Գլադստոն իր հռչակաւոր ամուսնու պահապան հրեշտակն էր և խնամում էր նրան իբրև մի գորովագութ դայեակ։

Գլադստոն սաստիկ գրամոլ էր։ Նա ասում էր, որ իր կեանքում 35 հազար գիրք է կարդացել։ Գրքեր գնելը նրա սիրած զբաղմունքներից մէկն էր։ Մի անգամ նա Պարիզ էր գնացել։ Մինչդեռ փողոցներում ամեն մէկը կանգ էր առնում, որ տեսնէ պետական մեծ մարդուն՝ նա հին գրքեր վաճառողների խանութներն էր մտնում և սկսում էր քրքրել գրքերի կոյտերը։ Նա ահագին գրադարան ունէր։ Եւ դրսի մարդկանց, մանաւանդ ուսանողներին ընթերցանութեան քաղցրութիւնից

չը գրկելու համար՝ նա Հօվարդէնում իր հաշուով կառուցեց հասարակական գրադարան, որին իր սեփական գրքերից նուիրեց 30 հազար հատոր։ Այս գրքերից մեծ մասի լուսանցքների վրայ կան Գլադստօնի ձեռքով գրած նկատողութիւնները, որոնք ղեկավարում են ընթերցողներին։

Չը պէտք է կարծել, թէ Գլադստօն շատ հարուստ էր։ Հօվարդէնի ամրոցը պատկանում էր նրա երեխաներին. իսկ ինքը, ծերունին, ապրում էր իր թոշակով։ Գրական աշխատութիւնների համար ստացած վարձը բոլորովին աւելորդ բան չէր նրա համար. դա էլ կարևոր մի օգնութիւն էր. նա շատ յօդուածներ էր գրում և, ի հարկէ, ստանում էր խոշոր վարձատրութիւն։ Մի անգամ նա յայտարարեց, որ իր միջոցները չեն ներում փակ նամակներով պատասխանել իրան դիմողներին, ուստի միանգամայն ընդ միշտ ներողութիւն էր խընդրում, որ այնուհետև պիտի գրէ բաց նամակներ։ Գլադստօնեան բաց նամակները Անգլիայում մեծ հռչակ ստացան և ողողում էին երկրի ամեն կողմերը,—այնքան շատ նամակներ էին գրում նրան։ Գլադստօն պատասխանում էր իրան գրած ամեն մի նամակին։ Եղել են դէպքեր, որ նոյն-իսկ ըլ-պրոցական աշակերտներ նամակ են գրել նրան և պատասխան ստացել։ Մի աշակերտ ցոյց տուեց նրան, որ Հոմերոսի մասին նրա գրած աշխատութեան մէջ սխալ է մտել Հոմերոսից բերած մի

կտորում. Գլադստօն իսկոյն պատասխանեց և խոստովանեց իր սխալը։

Ի՞նչ ասել կուզէ, որ ժողովրդական Ուլիամին տեսնելու համար Անգլիայի բոլոր կողմերից խմբերով մարդիկ էին գնում Հօվարդէն։ Այդ այցելութիւնների մասին կան զանազան անեկդօտներ։ Մի անգամ մի գաւառացի, հանդիպելով Հօվարդէնում ֆլանէլի շապիկ հագած և թեւքերը յետ ծալած փայտահատին՝ սկսում է կոպիտ նկատողութիւններ անել նրա կատարած գործի և օրուայ եղանակի մասին և ապա հարցնում է, թէ ինչ է կարծում փայտահատը, կարելի՞ է տեսնել մինիստր Գլադստօնին. նա չէր իմանում, որ իր առջև կանգնած փայտահատը ինքն Գլադստօնն էր։ Պատմում են և այն, որ Գլադստօն մի անգամ պատահում է մի սայլապանի, որ վարում էր երկաթով լի սայլը։ Մօտենալով ծերունուն՝ սայլապանը խնդրում է օգնել, որ սայլը դէպի սարը բարձրացնեն։ Երբ Գլադստօն կատարում է այդ խնդիրը՝ սայլապանը առաջարկում է ծերունկին գնալ մօտիկ գինետունը և մի-մի բաժակ գարեջուր խմել, բայց մերժողական պատասխան է ստանում։ Այնուհետև իմանալով գինետանը, որ իրան օգնողը Գլադստօնն է եղել՝ սայլապանը վերադառնում է Հօվարդէն և ներողութիւն է խնդրում, բայց Գլադստօն հանգստացնում է նրան, ասելով որ ներելու բան չը կայ։ Մի աղքատ լուսանկար խնդրում է

նրան թոյլ տալ նկարել նրան փայտահատի հա-
գուստում։ Գլադստոն թոյլ է տալիս, և աղքատ մարդը մի քանի հարյար ռուբլի է վաստակում, վաճառելով այդ պատկերներից անագին քանակութիւն։

Գլադստոն, ինչպէս գիտենք՝ շատ կրօնասէր մարդ էր։ Նա սիրում էր աղօթքներ շարադրել, աստուածաբանական վէճերին մասնակցել. գերմանական հռչակաւոր աստուածաբան Դեօլինգեր համարում էր նրան Անգլիայի ամենալաւ աստուածաբանը։ Եկեղեցում Գլադստոն սիրում էր կարդալ աւետարանը, երգում էր։ Ի՞նչպէս էր, որ նա, լինելով այդքան կրօնասէր՝ հետեւում էր ազատամիտ, նոյն-իսկ արմատական գաղափարներին և շատ անգամ գործում էր եկեղեցու շահերի դէմ։— Կրօնը նա արգելք չէր համարում ժամանակակից լուսաւոր գաղափարներին հետեւելու համար։ Նա սիրում էր կրօնի էութիւնը, հաւատում էր նրա ներքին բարոյական մեծ ույժին։ Անց կացնել կրօնի գաղափարները քաղաքականութեան մէջ—ահա նրա կեանքի նշանաբանը։ Անգլիական ներքին գործերի մէջ նա լիուլի ապացուցեց, որ դա անիրագործելի բան չէ։ Իսկ արտաքին քաղաքականութեան մէջ նրան վիճակուած չէր գործով ցոյց տալ այն՝ ինչ քարոզում էր խօսքով։ Ի՞նչ կանէր նա, եթէ 1876 և 1894—1896 թուականներին, արևելեան աղէտների ժամանակ, առաջին մինիստըր լինէր։ Այդ մասին կարելի է միայն ենթա-

դրութիւններ անել, հիմնուելով այն խոր և ջերմեռանդ հաւատի վրայ, որ կար նրա մէջ, որ ասում էր նրան, թէ մի բարձր, անհասանելի հասկացողութիւն կայ, որ մարդկանցից բարի և գեղեցիկ գործեր է պահանջում։

Գլադստոնի կեանքի ամենախոշոր, ամենահետաքրքրական երևոյթը այն դանդաղ փոփոխութիւնն էր, որ տարիների ընթացքում տեղի էր ունենում նրա հայեացքների մէջ։ Աշխարհի կարգ է առհասարակ, որ մարդիկ իրանց երիտասարդութեան ժամանակ են խնկարկում առաջադիմական մտքերին և ապա կամաց-կամաց թողնում են իրանց կուռքերը, մինչև որ ծերութեան հասակում դառնում են իրանց նախկին պաշտամունքի կատաղի թշնամիներ։ Գլադստոն բոլորովին հակառակ երևոյթ է ներկայացնում. երիտասարդութեան ժամանակ ծայրայեղ յետադիմական, իսկ 77 տարեկան հասակում այնքան առաջ գնացած, որ նոյնիսկ Չէմբէրլէնի պէս արմատականները փախան նրանից, չափազանց վտանգաւոր համարելով նրա բռնած ուղղութիւնը (1886-ին)։

Շատերն են փորձել լուսաբանել այս հակասական փոփոխութեան միտքը, հանգամանքները. խօսել են, առաջ են բերել զանազան հայեցակէտեր, որոնք Գլադստոնի համար թէ նպաստաւոր են եղել, թէ աննպաստ։ Մենք դիմենք իրան, Գլադստոնին և հարցնենք նրա կարծիքը։

Նա ասել է. «իմ մէջ տեղի ունեցած փոփոխութիւնները հասկանալու համար՝ պէտք է նկատի առնել հետեւեալը.—ինձ կրթութիւն տուողները զարգացրին իմ մէջ այն հասկացողութիւնը, թէ ազատութիւնը չարիք է. իսկ ես կամաց-կամաց հասկացայ, որ ազատութիւնը բարիք է»։

Բացատրութիւնները աւելորդ են. .



Գլադստոնի կենսագրութեան և նրա հետ կապուած պատմութեան համար օգտուել ենք հետևեալ աղբիւրներից.

1. Каменскій. Гладстонъ. Спб. 1892.
2. Сеньебосъ. Политическая Исторія Современной Европы, 2 т. Спб. 1897.
3. Гринъ. Исторія Англійскаго народа, томы III, IV. M. 1892—1893.
4. Шашковъ. Сочиненія. т. II. Спб. 1998.
5. Луи Бланъ. Письма объ Англіи. Спб. 1866—1870.
6. Реклю Э. Современные политическіе дѣятели. Спб. 1876.
7. Жигаревъ. Русская политика въ Восточномъ вопросѣ. M. 1896
8. Добролюбовъ. Сочиненія, т. IV. Спб. 1896.
9. Веберъ. Всеобщая Исторія, т. XVI, M. 1889.
10. Покровскій. Очерки изъ Новѣйшей Исторіи („Отечественн. Записки" *ամսագրից*).
11. Макъ-Коль. Султанъ и Державы. Спб. 1897.
12. Фалькнеръ. Славянская борьба 1875—1876 гг. Спб. 1877.
13. Макъ-Гаханъ. Звѣрства въ Болгаріи. Спб. 1877.
14. Роленъ-Жекменъ. Арменія, армяне и трактаты. („Положеніе армянъ въ Турціи" *ժողովածուի մէջ*).
15. *Նուրիխան. Պատմութիւն ժամանակակից. Հատ Բ. Վենետիկ,* 1896.

Բացի այս աշխատութիւններից, տեղեկութիւններ հանել ենք նաև „Отечественныя Записки", „Дѣло", „Историческій Вѣстникъ", „Русская Мысль", „Книжки Недѣли" *և մանաւանդ* „Вѣстникъ Европы" (1885—1886, 1892—1 *ամսագրերից։ Իսկ լրագրներից ձեռքի տակ ունեցել «Մշակ»։*

ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

1879 թ.	1	[illegible] (սպառ.), թարգման. [illegible] Ն.	—	40
1880 թ.	2	[illegible] } Տ. [illegible]	—	30
	3	Մանկական երգեր, [illegible]	—	15
	4	[illegible] թարգմ. [illegible] Տ.-Մ.	—	45
	5	[illegible] (սպառ.) [illegible] Տ. Բ	—	10
	6	[illegible]	—	10
1881 թ.	7	Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց (սպ.)	—	80
	8	Փոքրիկ ձեռնարկ գործնական անասնաբուժութեան	—	50
	9	[illegible] (սպառ.)	—	50
	10	[illegible] պատմութիւն, թարգմ. Գ. Ք. Ա.	—	60
1882 թ.	11	[illegible] (սպառուած)	—	75
	12	[illegible] թարգմ. [illegible]	—	25
	13	[illegible] երգեր	. —	5
	14	[illegible] պատմութիւնը	. —	10
	15	[illegible] պատմութիւն.	. 1	—
1883 թ.	16	Գիւղական [illegible], Ա. Արծրունեանի.	—	50
1885 թ.	17	[illegible]	. —	75
	18	[illegible]	. —	20
	19	[illegible] (սպառ.)	. 1	—
	20	[illegible] Տէր [illegible]	. 2	—
1886 թ.	21	[illegible] Գ. Տ.-[illegible]	. 1	50
1887 թ.	22	[illegible] պատմագիր	. 2	—
1888 թ.	23	[illegible] պատմութիւն (սպառ.) } Մ. Ք. Սա-	—	30
	24	Դասագիրք [illegible] } հակեանի.	1	75
1889 թ.	25	[illegible], թարգմ. [illegible] (սպառ.).	—	10
1890 թ.	26	Պատմութիւն Հայոց, [illegible] (սպառ.) .	1	50
	27	[illegible] գործնական [illegible] Կ. Մ. [illegible]	. —	40
1891 թ.	28	Ժամանակագրութիւն Հայոց, [illegible]	. 1	25
	29	[illegible], թարգմ. [illegible]	. —	10
	30	[illegible]	. —	20
	31	[illegible] (սպառ.)	—	7
	32	[illegible]	. —	10
	33	[illegible]	. —	25
	34	[illegible] ի գիրս պատմութ. [illegible]	. —	20
	35	[illegible], թարգմ. [illegible]	—	15
	36	[illegible], թարգմ. [illegible]	. —	15
	37	Մեծապատիւ մուրացկաններ Յ. Պ. (սպառ.)	. —	40
	38	Ազգային ջոջեր, Յ. Պարոնեանի (սպառ.).	. 1	—

125 Դաւիթ Կոպերֆիլդ, Չարլս Դիկկէնսի, թ. Գ. Գ. 1 —
126 Դասընկերները, Ամենատեսյան թ. Կ. Պիլինեան. — 50
127 Խմուտները պրոֆ. Մ. Յօգզ. թ. Լ. Մ.-Աղամ. — 50
128 Ընտիր պատմուածքներ, Ալ'ֆ. Դօդէի, թ. Վ. Փափ. — 40
129 Հօր կինը, Ա. Ահարոնեանի . . . — 40
130 Կեանքի տեսարաններ, Բաւմի . — 50
131 Ոսկի չինողներ, Ցշօկկէ, թ. Խ. Մալխասեանի. — 50
132 Գուլլիվէրի ճանապարհորդ., թ. Դ. Ալաջեան. — 50
133 Թռչունների աշնանային տեղափոխութիւնը — 5
134 Վենետիկի վաճառականը, Շէկսպ., թ. Ս. Խ.-Մառ. — 40
135 Երկրաչափ. և հասարակ. ընտնեպ., Լունկևիչի. . — 15
136 Վհուկները և գողերը, Պիպ Մայնա, թ. Հ. Ա. 1 —
137 Բաղդ..., կազմ Մա. Մ. . . — 20
138 Երկրի և երկնքի մասին, Վ. Լունկևիչի . . — 10
139 Կոնֆուցիոս, կազմ Գ. Բաքր. . . — 20
1898 թ. 140 Այգեանքային ազգագրութիւն, Ց. Գևորգեանի — 40
141 Վերադարձ..., մերկն. և գործ. Լ. Խան-Ազեանի. — 50
142 Կենդանիների աշխարհում, Լունկևիչի. . — 30
143 Արքայ Լիր, Շէկսպ. թ. անգ. Ա. Խան-Մասեհեանի. — 50
144 Ծո' երկրում, Անդերսոնի. թ. ... Ա. Լիսիցեան 1 40
145 Ինչ է Արդարութիւնը, Լաւ-Մուդ..., թ. Դ. Ա. — 10
146 Մարդ եմ, կերպարի, թ. գերմ. Ս. Մալխասեանց. 1 —
147 Օրը և կեանքը, թ. Ն. Տէր-Աւետիսեանց. . — 10
148 Խորհրդ... Սիէնկևիչի. թ. Գ. Գարագաշեանց. — 10
149 Ազգիների լորդը, Վալտեր Սկոտի, թ. Ց. Զ. Մերդ. 1 —
150 Վահան... (մամուլի տակ) . — —
151 Հանրիէտա, Ն. Կողակի, թ. փրանս. Լ. Խ. . — 25
152 ..., թ. Գ. Բաքր . . . . . — 20

Վաճառւում են Ընկերութեան գրասենեակում, նոյնպէս և բոլոր գրավաճառանոցներում

Ընկերութեան հասցէն—Тифлисъ. Тифлисское Общество Изданія Армянскихъ книгъ.